

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
Երևանի գենդերային հետազոտությունների կենտրոն

Լիլիթ Չաքարյան
Անահիտ Հարությունյան

Գենդեր և լրագրություն

Ուսումնական ձեռնարկ

Երևան
2010



Միավորված Ազգերի
Զարգացման Ժրագիր



Համալսարանական
կրթությամբ կանանց
ասոցիացիա

«Գեները և լրագրություն»

ուսումնական շեռնարկը պրեդժվել է

«Գեներային իրազեկությունը՝ զուգակշռված ժողովրդավարության նախադրյալ» ծրագրի
շրջանակներում՝ ԵԱՀԿ Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների
գրասենյակի (Վարչակազմ) աջակցությամբ

և

յրպագրվում է

*Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի և Նորվեգիայի կառավարության
աջակցությամբ:*

«Գեները և լրագրություն» աշխատությունը

ՀՀ կրթության և գիտության նախարարության 24.11.2008 թ. թիվ 1067-Ա/Ֆ հրամանով
հաստատված է որպես բուհական հատուկ դասընթացի ուսումնական ձեռնարկ:

*Սույն գրքում արտահայտված տեսակետները պարկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ
ներկայացնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կամ Նորվեգիայի կառավարության տեսակետները:*

Լիլիթ Զաքարյան, Անահիտ Հարությունյան

Գեները և լրագրություն. ուսումնական ձեռնարկ, Համալսարանական կրթությամբ
կանանց ասոցիացիա: Երևանի գեներային հետազոտությունների կենտրոն: - Եր.:
Աստղիկ, 2010, 210 էջ:

Մասնագիտական խմբագիր՝ Չեմմա Հասրաթյան

*Ուսումնական շեռնարկում ներկայացվում են լրագրության մեջ գեներային բաղադրիչի
ներառման գործընթացի տեսական հիմքերը, բացահայտվում է զանգվածային լրատվամիջոցների
դերը գեներային կարծրատիպերի հաղթահարման և հասարակական կարծիքի դրական
փոփոխման գործում: Չեռնարկը նախատեսված է բուհերի ուսանողների, դասախոսների, լրագրողնե-
րի, ինչպես նաև գեներային հիմնախնդիրներով հետաքրքրվող ընթերցողների համար:*

© Լիլիթ Զաքարյան, Անահիտ Հարությունյան, 2010

© Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2010

**Armenian Association of Women with University Education
Center for Gender Studies**

**Lilit Zakaryan
Anahit Harutiunyan**

Gender and Journalism

Textbook

Yerevan
2010



United Nations
Development Programme



Armenian Association
of Women with
University Education

Gender and Journalism

textbook was developed within the framework of
the ***Gender Awareness as a Prerequisite of Parity Democracy Project***
with support from the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (Warsaw)
and published
with support from the UNDP Armenia Office and from the Government of Norway.

Gender and Journalism

publication was approved on 24 November 2008 by the RoA Ministry of Education &
Science
(Order # 1067 A/F) as a textbook for a special course in higher education institutions

The views presented in this publication are solely of the authors and do not necessarily reflect the views of UNDP Armenia Office or the Government of Norway.

Lilit Zakaryan and Anahit Harutiunyan
Gender and Journalism textbook. Armenian Association of Women with
University Education. Yerevan Center for Gender Studies. Yerevan: Asoghik
Publishers, 2010. - 210 p.

The textbook presents theoretical and methodological foundations of the process of integration of a gender component into journalism and expounds the role of mass media in combating gender stereotypes and in effecting positive changes in public opinion.

The textbook is intended for higher education institutions' students and instructors and for journalists as well as for all those who are interested in gender issues.

© Lilit Zakaryan and Anahit Harutiunyan, 2010

© Armenian Association of Women with University Education, 2010

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	7
----------------	---

Գլուխ I

ԳԵՆԴԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱՅՈՒՅՑ

1.1. Գենդերային տեսության հիմնական հասկացությունները	9
1.2. Հասարակության գենդերային կազմակերպման տեսակները	14
1.3. Գենդերային սոցիալականացում կամ ինչպես են «արարվում» կանայք և տղամարդիկ	18
Գրականություն	24
1.4. Գենդերային տեսության առաջացման տեսական և հասարակական-քաղաքական նախադրյալները	25
Գրականություն	47
Հավելված I	48

Գլուխ II

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԱՆ ԱՎԱՆԳԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ XIX-XX ԴԱՐԵՐԻ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ

2.1. Կանանց հարցի արծարծումը XIX դարի և XX դարասկզբի մամուլի էջերում	51
2.2. Կանանց մամուլի սկզբնավորումը	67
2.3. Կանանց հարցը խորհրդային ՉԼՄ-ներում	77
Գրականություն	83

Գլուխ III

ԽՈՍՔԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՉԱՏՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

3.1. Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում՝ որպես ժողովրդավարական ՉԼՄ-ների հիմնախնդիր	85
3.2. ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի հանձնարարականները	

Գեները և լրագրություն

ՁԼՄ-ներում հասարակության գեներային հիմնախնդիրների լուսարանման մասին	98
3.3. Գեներայնորեն զգայուն լրագրությունը որպես խոսքի ազատության հիմնախնդիր	105
Գրականություն	115

Գլուխ IV

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ

4.1. Քաղաքականություն, իշխանություն և գեները	117
4.2. Քաղաքական մասնակցության գեներային հիմնախնդիրները	123
4.3. Քաղաքականության գեներային հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում	126
4.4. Գեներային հիմնախնդիրների լուսարանումը կանանց և տղամարդկանց պարբերականներում	131
4.5. Գեներային հիմնախնդիրների լուսարանումը արդի հասարակական-քաղաքական ՁԼՄ-ներում	138
4.6. Կանանց հասարակական շարժման արտացոլումը ՁԼՄ-ներում. պարունություն և արդիականություն	148
Գրականություն	154
Հավելված 2	157

Գլուխ V

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ

5.1. Գեներային խորականությունը և խորագարումը աշխարանքի շուկայում և զբաղվածության ոլորտում	167
5.2. Աշխարանքի ոչ ֆորմալ ոլորտը, տնային տնտեսությունը և կրկնակի ծանրաբեռնվածությունը	174
5.3. Սոցիալ-տնտեսական ոլորտի գեներային հիմնախնդիրների լուսարանումը մամուլում	178
Գրականություն	183
Հավելված 3	185
Գեներային հասկացությունների	196

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժամանակակից ժողովրդավարությունը հնարավոր չէ պատկերացնել առանց սեռերի հավասարության: Այդ են վկայում ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և միջազգային այլ կառույցների փաստաթղթերը, որոնք ուղղված են գենդերային հավասարության գաղափարի հաստատմանը: Իսկ ցանկացած գաղափարի տարածման ու արմատավորման խնդրում անփոխարինելի դեր ունեն ՉԼՄ-ները:

Առաջադեմ ու զարգացման միտված միջազգային հանրությունը վաղուց է հանգել այն համոզման, որ սեռերի հավասարության նպատակի ճանապարհին ընկած ամենադժվարին խոչընդոտը մարդկանց մտածելակերպում արմատացած կաղապարներն են՝ գենդերային կարծրատիպերը, որոնք գալիս են դարերի խորքից և մարդկանց մեջ սերմանվում վաղ մանկությունից: Դրանք արմատախիլ անելը չափազանց բարդ խնդիր է, ուստի ամենօրյա ու տևական ջանքեր է պահանջում: Եվ այդ գործում թերևս գլխավոր դերակատարը ՉԼՄ-ներն են, որոնք մարդու ոգու ու մտքի վրա ազդելու ասի-նելի հնարավորություններ ունեն:

ՉԼՄ-ները կարող են խթանել գենդերային կարծրատիպերի հաղթահարումը, տղամարդկանց և կանանց իրավական իրազեկության բարձրացումը, գենդերային գիտելիքների տարածումը, ճշգրիտ արտացոլել գենդերային իրավիճակը, տեղեկատվությունը դարձնել գենդերայնորեն զգայուն և այդպիսով նպաստել զուգակշռված ժողովրդավարության զարգացմանը: Մինչդեռ լրագրության ոլորտում դեռևս պահպանվում են հասարակության զարգացման ժամանակակից պահանջներին անհարիր և հայրիշխանական հարաբերությունների պահպանմանը նպաստող գենդերային կարծրատիպերն ու աշխատանքի մեթոդները:

Պատահական չէ, որ այդ հիմնախնդիրը բարձրացնում են շատ միջազգային կազմակերպություններ, այդ մասին խոսվում է ամենաբարձր մակարդակներում:

Ժամանակակից ՉԼՄ-ներն այդ հիմնախնդիրը լուծելու համար գենդերային տեսությանը և տեղեկատվության գենդերային վերլուծության մեխանիզմներին տիրապետող կադրերի պակաս ունեն: Այդ իսկ պատճառով հատուկ կարևորություն է ստանում գենդերային գիտելիքների հաղորդումը բուհերի լրագրության բաժինների ուսանողներին՝ ապագա լրագրողներին:

Գեները և լրագրություն

«Գեները և լրագրություն» ուսումնական ձեռնարկը նախատեսված է բուհերի լրագրության բաժինների բակալավրիատի ավագ լսարանների, ինչպես նաև մագիստրատուրայի լրագրության բաժինների ուսանողների համար:

Ձեռնարկը նպատակ ունի անհրաժեշտ գիտելիքներ հաղորդել ուսանողներին և դրանց շնորհիվ գեներային զգայունություն ձևավորել նրանց մեջ, փաստերն ու իրողությունները գեներային տեսանկյունից դիտելու և վերլուծելու նախաձախնդրություն ու հմտություն սերմանել, ինչն էլ կնպաստի լրատվամիջոցների արտադրանքի որակական փոփոխությանը:

Ձեռնարկի հեղինակները խնդիր են դրել ծանոթացնել ուսանողներին ժամանակակից գեներային տեսության հասկացություններին, բացահայտել գեներային կարծրատիպերի հիմքում ընկած մեխանիզմները, գեներային խտրականության հաղթահարման ուղիները, գեների՝ որպես սոցիալ-մշակութային կառույցի դերը լրագրողական կարծիքի արտահայտման և հասարակական կարծիքի փոփոխման գործում:

Ձեռնարկը նախատեսված է ինտերակտիվ մեթոդներով դասավանդման համար: Ուստի առանձնակի նշանակություն է տրված ուսանողների ինքնուրույն աշխատանքին՝ ՋԼՄ-ների արտադրանքի վերլուծությանն ու քննարկմանը:

Ներկայացվող ձեռնարկը լրագրության մեջ գեներային բաղադրիչը ներմուծելու առաջին փորձն է, ուստի հեղինակները հավակնություն չունեն այն կատարյալ համարելու և երախտագիտությամբ կընդունեն բոլոր դիտողություններն ու առաջարկությունները:



ԳԼՈՒԽ I

Գլուխ I

ԳԵՆԴԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱՅՈՒՅՑ

- 1.1. Գենդերային տեսության հիմնական հասկացությունները
- 1.2. Հասարակության գենդերային կազմակերպման տեսակները
- 1.3. Գենդերային սոցիալականացում կամ ինչպես են «արարվում» կանայք և տղամարդիկ
- 1.4. Գենդերային տեսության առաջացման տեսական և հասարակական-քաղաքական նախադրյալները

1.1. Գենդերային տեսության հիմնական հասկացությունները

«Գենդեր» և «սեռ» հասկացությունների տարբերությունը: Գենդերային տեսության հիմնական հասկացությունները. գենդերային կարծրատիպեր, գենդերային նորմեր, գենդերային նույնականություն, գենդերային դերեր, գենդերային համակարգ:

«Գենդեր» տերմինը վերաբերում է կանանց և տղամարդկանց սոցիալական, հոգեբանական և մշակութային բնութագրերին ու առանձնահատկություններին, հասարակության մեջ նրանց զբաղեցրած դիրքին և նրանցից ակնկալվող վարքի նորմերին: Այդ իսկ պատճառով այն հաճախ ներկայացվում է որպես «սոցիալական սեռ»՝ հուշելով, որ բացի կենսաբանական սեռից, հասարակական կյանքում կան բազմաթիվ երևույթներ, որոնք վերագրվում են տղամարդկանց կամ կանանց՝ իրականում կապ չունենալով նրանց

Գենդեր և լրագրություն

բնական գործառույթների հետ: «Գենդեր»¹ տերմինը 1968թ. առաջարկել է Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Ստոլլերը: Երկարատև հետազոտությունների արդյունքում նա եկել է այն եզրակացության, որ ավելի հեշտ է վիրաբուժական միջամտությամբ փոխել մարդու կենսաբանական սեռը, քան հոգեբուժության միջոցով նպաստել մարդու նույնականության վերափոխմանը:

Գենդերը սոցիալ-մշակութային նորմերի համակցություն է, որ հասարակությունը պարտադրում է մարդկանց՝ նրանց սեռին համապատասխան: Միաժամանակ այն չի նույնանում սեռի հետ: Դրանում արտահայտվում ու հատուկ նշանակություն են ձեռք բերում այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ սոցիալական խավերը, տարիքային խմբերը, ռասան, էթնոսը և հատկապես՝ իշխանության և հպատակության հարաբերությունները: Գենդերը բացահայտում է ոչ թե սեռերի կենսաբանական և ֆիզիոլոգիական, այլ սոցիալական դերերի և կարգավիճակների, գործունեության ձևերի, վարքի և զգայական բնութագրերի տարբերությունները:

Հասարակության մեջ առավել տարածված պատկերացումների համաձայն՝ երեխայի ծնված օրվանից սկսվում է նրա գենդերի կերտման ուրույն գործընթաց: Մարդը ոչ միայն ծնվում է որպես իգական կամ արական սեռի ներկայացուցիչ, այլև իր ամբողջ կյանքի ընթացքում կրում է տվյալ հասարակության ազդեցությունը, «կերտվում» որպես կին կամ տղամարդ²: Հետևաբար գենդերը սոցիալական հարացույց է, այն արարվում և կառուցվում է սոցիալական գործունեության ընթացքում՝ ներառելով յուրաքանչյուր հասարակությանը հատուկ սոցիալական և մշակութային նորմերը, որոնք պարտադրվում են կանանց և տղամարդկանց, ստիպում նրանց կատարել որոշակի գենդերային դերեր: Այսինքն՝ *գենդերային դերերը* հասարակության կողմից կենսաբանական սեռին թելադրվող վարքի որոշակի մոդելներ են: Կատարել այս կամ այն գենդերային դերը, նշանակում է ունենալ տղամարդուն կամ կնոջը համապատասխան արտաքին տեսք, հագնվելու ոճ, շարժում, խոսք, ստանձնել հասարակության մեջ այդ գենդերին հատկացված գործառույթ, ունենալ որոշակի սոցիալական կարգավիճակ և այլն: Հետևաբար լինել կին կամ տղամարդ նշանակում է խաղալ հասարակու-

1 Անգլերեն “gender” նշանակում է քերականական սեռ: Այս տերմինը հայ իրականությունում մուտք գործեց ռուսական գրականության միջոցով, ռուսերենում “г” հնչյունը չի ներկայացնում պատճառով «ջենդերը» դարձել է «գենդեր»:

2 Գենդերի կերտման գործընթացն ավելի մանրամասն կներկայացնենք հաջորդ բաժնում:

թյան կողմից նախապես կանխորոշված որոշակի դեր: Այդ է պատճառը, որ հաճախ ասում են. «Անատոմիան ճակատագիր է»³:

Մարդու սեռը նաև մշակութային-խորհրդանշական մեկնաբանություն ունի, քանի որ սեռի հետ որևէ կապ չունեցող շատ հասկացություններ և երևույթներ (բնություն, տարերք, գույն, բարություն, չարություն և այլն) նույնացվում են տղամարդկայինի/առնականի կամ կանացիի/իգականի հետ: Օրինակ՝ հայրիշխանության պայմաններում տղամարդկայինը նույնացվում է աստվածայինի, լույսի, ուժի, կարգուկանոնի, ստեղծագործության, ակտիվության, բանականության և համանման այլ երևույթների հետ: Կանացին հաճախ աղերսվում է տրամագծորեն հակառակ երևույթների ու հասկացությունների հետ՝ բնություն, դատարկություն, թուլություն, քառս, կրավորականություն և այլն:

Գենդերը ներառում է հետևյալ հասկացությունները.

1. կենսաբանական սեռ («sex»),
2. գենդերային կարծրատիպեր,
3. գենդերային նորմեր,
4. գենդերային նույնականություն:

Կենսաբանական սեռը անատոմիական, ֆիզիոլոգիական, բիոքիմիական և գենետիկական բնութագրերի ամբողջությունն է, իգական և արական սեռի ներկայացուցիչների օրգանիզմների տարբերակման հիմքը: Սեռերի կենսաբանական տարբերությունները, կախված հասարակությունում տիրապետող գաղափարախոսությունից, կարող են չափազանց ընդգծվել կամ ընդհանրապես անտեսվել: Դա կախված է ժամանակաշրջանից, մշակույթից, քաղաքականությունից: Այսինքն՝ կենսաբանական սեռը գաղափարախոսության ներգործությամբ է ձևավորվում որպես գենդեր: Հետևաբար կարելի է ասել, որ գենդերը նաև գաղափարախոսության արդյունք է:

Գենդերային կարծրատիպերը կամ սրերեոտիպերը մշակույթում ընդհանրացված բավական կայուն պատկերացումներ են կանանց և տղամարդկանց և համապատասխանաբար նրանց վարքի վերաբերյալ: Գենդերային կարծրատիպերը տարբեր հասարակություններում, տարբեր մշակույթներում կարող են տարբեր լինել և տարբեր ժամանակներում ու պայմաններում փոփոխվել անգամ նույն մշակույթի սահմաններում: Դրանք պատմական փոփոխությունների օբյեկտ են: Գենդերային կարծրատիպե-

3 Այս գաղափարն առաջինը շրջանառության մեջ է դրել Նապոլեոնը, սակայն տեսական հիմնավորումը տվել է Ջ. Ֆրոյդը:

Գենդեր և լրագրություն

րը, որպես կանոն, հենվում են բևեռային հակադրությունների վրա. ակտիվություն - պասիվություն, ուժ - թուլություն, իշխանություն - ենթակայություն, տրամաբանություն - ինտուիցիա, անկախություն - կախվածություն: Ընդ որում, առաջինները վերագրվում են տղամարդկանց, մյուսները՝ կանանց: Գենդերային կարծրատիպերը կերտվում և վերարտադրվում են քարոզչության, գովազդի, սոցիալ-քաղաքական տարբեր գաղափարների ներգործությամբ: Դրանք խոր հետք են թողել փիլիսոփայական, հոգեբանական, մշակութաբանական տեսությունների վրա, որոնց կանոնադաշտնանք հաջորդ բաժնում:

Գենդերային կարծրատիպերի ներգործությամբ մշակվում են կենսակերպի չափորոշիչներ՝ *գենդերային նորմեր*: Դրանք վարքի որոշակի կանոններ են, որոնք պարտադրվում են մարդուն՝ կախված նրա կենսաբանական սեռից: Այսինքն՝ թելադրվում են հասարակության կողմից տվյալ ժամանակաշրջանում «իսկական տղամարդու» և «իսկական կնոջ» վերաբերյալ իշխող պատկերացումներին համապատասխան: Գենդերային նորմերը սերմանվում են մանկուց, իսկ հետագայում ամրապնդվում զանազան սոցիալական և մշակութային մեխանիզմների միջոցով: Մարդը գենդերային նորմերը խախտելու համար կարող է այլևայլ «պիտակներ» ստանալ շրջապատի կողմից: Օրինակ՝ կնոջ դեպքում կարող են ասել, որ նա գուրկ է կանացիությունից, իսկ տղամարդու դեպքում՝ կանացի որակել: Այդպիսի «մեղադրանքները» հատկապես ցավ են պատճառում տղամարդկանց և կարող են անգամ հոգեբանական լուրջ հետևանքներ ունենալ:

Գենդերային նույնականությունը մարդուն բնութագրում է այս կամ այն սեռին պատկանելության տեսանկյունից և ելնելով այն հանգամանքից, թե ինչպես է իրեն զգում մարդը որպես կին կամ տղամարդ տվյալ հասարակության մեջ: Գենդերային նույնականության համար նշանակություն ունի անհատի սոցիալականացման փորձը: Երեխան վաղ հասակից է յուրացնում, թե ինչ է նշանակում լինել կին կամ տղամարդ, ինքնորոշվում է որպես կին կամ տղամարդ և փորձում համապատասխանեցնել իր վարքը հասարակության գենդերային կարծրատիպերին ու նորմերին: Նա, ով չի համակերպվում հասարակության կողմից պարտադրվող գենդերային դերին, կարող է լուրջ խնդիրներ ունենալ:

«Գենդերը» հասկանալու համար կարևոր է նաև ծանոթանալ *գենդերային համակարգ* հասկացությանը, որը միջսեռային և ներսեռային հարաբերությունների ամբողջությունն է: Դա ներառում է մասնավոր ու հասարակական ոլորտների գենդերային չափումը, գենդերային աստիճանակարգը

(հիերարխիան) հարաբերում է սոցիալական այլ աստիճանակարգերի հետ և ընդգրկում գենդերային տեխնոլոգիաներն իրականացնող սոցիալական ինստիտուտները: Գենդերային համակարգը տարբեր հասարակություններում տարբեր է, բայց մեծ մասում տղամարդկային/առնականը (բնավորության գծերը, վարքի մոդելները, «տղամարդկային» մասնագիտությունները և այլն) համարվում է առաջնային, գերիշխող և արժեքավոր, իսկ կանացի/իգականը՝ երկրորդական, ստորադաս և ոչ այնքան արժեքավոր: **Ներկայիս հասարակությունների մեծ մասում գենդերային համակարգը սեռի սկզբունքով սոցիալապես կառուցված անհավասարության՝ իշխանության և հպատակության համակարգ է:**

Հիմնական հասկացություններ.

կենսաբանական սեռ, գենդեր, գենդերային կարծրատիպեր, գենդերային նորմեր, գենդերային նույնականություն, գենդերային դերեր, գենդերային համակարգ:

Հարցեր կրկնության համար.

1. Ի՞նչ է նշանակում «գենդեր»:
2. Ինչու՞ է գենդերը համարվում սոցիալ-մշակութային հարացույց:
3. Որո՞նք են գենդերային տեսության հիմնական հասկացությունները:

Ինտերակտիվ պարապմունք. «Գենդերային կարծրատիպերի հայտնաբերում»:

Ինտերակտիվ պարապմունք. Ավարտել հետևյալ միտքը՝ «Լինել կին/տղամարդ նշանակում է...»:

1.2. Հասարակության գեներային կազմակերպման տեսակները

Հասարակության գեներային կազմակերպման մոդելները. մայրիշխանություն, հայրիշխանություն: Պատկերացում գեներային խորականության մասին:

Հասկանալու համար, թե սոցիալական իմաստով ինչպես են կառուցավորվում կանայք և տղամարդիկ, անդրադառնանք պատմությանը և հետևենք, թե ինչու և ինչպես առաջացավ ներկայիս գեներային համակարգը:

Հայտնի է հասարակության գեներային կազմակերպման երկու տիպ (մոդել)՝ մայրիշխանություն և հայրիշխանություն: *Մայրիշխանությունը* մարդկության պատմության ամենավաղ փուլն է: Չնավորվել է մոտավորապես մեզոլիթի դարաշրջանում (Ք.ա. XII-VII հազարամյակ): Այդ շրջանում տղամարդիկ, զբաղվելով հիմնականում որսորդությամբ, շաբաթներով բացակայում էին: Հետևաբար տոհմի պահպանման հիմնական ծանրությունը կանանց վրա էր, նրանք չափազանց մեծ դեր ունեին նախնադարյան տնտեսության գրեթե բոլոր բնագավառներում (երեխաների խնամք, կրակի պահպանում, տնտեսության վարում, ցեղին սննդով ապահովում): Դեռևս գոյություն չունեին ընտանիքի կազմակերպման ժամանակակից տիպերը, և տոհմական պատկանելությունը նույնպես որոշվում էր մայրական գծով: Մայրիշխանության դարաշրջանում էր, որ տեղի ունեցան կարևորագույն հայտնագործությունները. կենսական բարիքների վերարտադրության փորձ կուտակվեց, սկսվեց բույսերի մշակումն ու կենդանիների ընտելացումը: Պայմաններ ստեղծվեցին մարդկության հետագա զարգացման համար:

Նախնադարյան համայնական կարգերի քայքայման և արտադրողական ուժերի վերելքի հետ մեկտեղ փոխվում էր նաև սեռերի դերակատարությունը: Հողագործությունը, անասնապահությունը, մետաղագործությունը դառնում են տղամարդկային գործ: Տղամարդու դերը աճում է հատկապես այն ժամանակ, երբ սովորական երևույթ են դառնում պատերազմները, և տղամարդը վտանգում է իր կյանքը՝ տոհմի, ցեղի պաշտպանության կամ կենսական խնդիրների լուծման համար: Ինչպես նշում է Սիմոնա դը Բովուարը (1908-1986)⁴, մարդն սկսում էր առանձնանալ կենդանական աշխարհից ոչ թե կյանք տալով,

4 Ֆրանսիացի փիլիսոփա, էկզիստենցիալիստ, արմատական ֆեմինիզմի հիմնադիրներից մեկը:

այլ իր կյանքը վտանգելով: Այդ պատճառով մարդկությունը սկսում է գերադասել ոչ թե ծնող, այլ սպանող սեռը⁵: Կնոջ աշխատանքն աստիճանաբար սահմանափակվում էր տնային տնտեսությամբ: Մոտավորապես Բ.ա. III-II հազարամյակներում (բրոնզե դարաշրջան) հասարակական կյանքի բոլոր ոլորտներում անցում էր կատարվում *հայրիշխանության*: Հայրիշխանություն տերմինը հասկացվում է որպես տղամարդու իշխանություն կնոջ նկատմամբ: Հասարակությունների մեծ մասն այժմ հայրիշխանական է, բայց այդ իշխանության չափի և բնույթի տարբերություններ կան: Հայրիշխանական համակարգում տղամարդը հանդես է գալիս որպես իշխանական հարաբերությունների սուբյեկտ, կինը՝ օբյեկտ: Սակայն դեռ պահպանվում են մայրիշխանության շատ սովորույթներ: Հայրիշխանությունը դժվար է ճանաչվում, և շատ ցեղերում ձևավորվել են ծեսեր, որոնք կարծես խորհրդանշում են այդ անցումը. օրինակ՝ կովադայի՝ «տղամարդու ծննդաբերության» սովորույթը, որի մասին վկայել է Օրբենյին XIX դարի առաջին կեսին Ամազոնիայի հնդիկների մոտ լինելուց հետո: Նա նշում է, որ ծննդաբերությունից անմիջապես հետո մայրը երեխայի հետ մտնում է ջուրը և հաջորդ օրը գնում աշխատելու: Իսկ ամուսինը, վատառողջ ձևանալով, պառկում է ճոճացանցում և տնքում: Հարևանները գալիս են նրան տեսակցելու, շնորհավորում նրա «բարի ազատումը», ցանկանում, որ նա շուտ ապաքինվի: Եվ հայրն այդ ամենը լրջորեն լսում է, կարծես իրոք քաշել է երկունքի բոլոր ցավերը⁶: Այս ծեսը փաստորեն ամրապնդում էր հայրության իրավունքը, հաստատում, որ հայրը նույնպես ծնող է:

Անցումը իշխանական այլ համակարգի հեշտ չի ընթացել և երբեմն վերածվել է արյունալի պայքարի: Որոշ ցեղերում դեռ վաղ շրջանում առաջացել են այսպես կոչված «տղամարդկային տներ», որտեղ տեղի էր ունենում երիտասարդների սոցիալականացումը: Ավելի ուշ դրանք վերածվեցին տղամարդկանց գաղտնի միությունների: Միություններն ունեին իրենց առաջնորդները, սրբերը, կրոնական ծեսերը, երգերը, պարերը, «լեզուն»: Տղամարդկանց միությունները պաշտպանում էին իրենց անդամներին, նրանց սեփականությունը, ապահովում նրանց ազդեցության ընդլայնումը⁷: Հայրիշխանությանն անցնելուն զուգահեռ ստեղծվում էին նոր համակարգի հենասյուները: Դրանցից մեկն ընտանիքն էր: Հայրիշխանական ընտանիքի

5 Хрестоматия по курсу «Основы гендерных исследований», Московский центр гендерных исследований, М., 2000, стр 30.

6 А.И.Першиц, А.Л.Монгайт, В.П.Алексеев, История первобытного общества, М., 1982, стр.174.

7 Նույն տեղում:

Գեները և լրագրություն

առաջին տիպը նահապետական ընտանիքն էր, որը միավորում էր հայրական գծով ազգականների 3-4 սերունդ: Կնոջ միակ նշանակալի գործառույթը համարվեց մայրությունը, երեխաների դաստիարակությունը, տնային տնտեսության վարումը: Տղամարդը հանդես էր գալիս որպես բնության նվաճող, ընտանիքի գոյատևումն ապահովող, կյանքի հովանավոր:

Սեռերի միջև աշխատանքի հստակ բաժանում էր տեղի ունենում նաև հասարակական ոլորտում: Աստիճանաբար առաջանում էին կանանց և տղամարդկանց գործունեության ոլորտներ: Կնոջ ընտանեկան և հասարակական դրությունը հետզհետե վատանում էր: Ընտանիքում հորը, ի տարբերություն կնոջ և երեխաների, անսահմանափակ իրավունք էր վերապահվում: Հասարակությունների մեծ մասում կնոջ դավաճանությունը պատժվում էր առանձնահատուկ դաժանությամբ, իսկ տղամարդու դավաճանությունն ընդունվում էր որպես օրինաչափ երևույթ: Ամենուրեք տղամարդը գրավում էր առավել բարձր հեղինակություն ապահովող ոլորտներ:

Կենցաղային սովորույթները կնոջ վրա սոցիալական վերահսկողության միջոց էին դառնում: Շատ ժողովուրդների մեջ ի հայտ եկան նաև այնպիսի ավանդույթներ և սովորույթներ, որոնց միջոցով հոգեբանական ու ֆիզիկական բռնություն էր իրականացվում կանանց և աղջիկների նկատմամբ (օրինակ՝ «ոսկե լոտոսի» սովորույթը Չինաստանում, ոչ պիտանի դուստրերից «ազատվելը» անտիկ Հունաստանում, կույսերի գոհաբերումը Հին Հռոմում, ամուսնու դիակի հետ կնոջ այրելը Հնդկաստանում և այլն): Տարբեր էին նաև տղաների և աղջիկների սոցիալականացման ծիսակարգերը: Տղաներին մարզում, պատրաստում էին որսորդության և զինվորության, ակտիվ կենսակերպի (դրանով ընդգծվում էր նրանց հասարակական դերը): Աղջիկները չափահաս էին դառնում սեռական հասունացման հետ մեկտեղ (ընդգծվում էր կնոջ բնական գործառույթը): Ընդհանրապես ծիսակարգում և կենցաղում հաստատվում էին երկակի չափանիշներ, որոնց մի մասը պահպանվում է մինչ օրս՝ կնոջը հնազանդեցնելով տղամարդուն: Սովորույթներով էր կարգավորվում նաև կանանց և տղամարդկանց հագուստը, ընդ որում, որպես կանոն, տղամարդկանց հանդերձանքը միշտ ավելի հարմարավետ էր ու ազատ, կանանցը՝ գեղեցիկ ու կաշկանդող: Կանանց և տղամարդկանց անհավասարությունը սկզբում ամրագրվում էր սովորութային մակարդակով, ապա իրավական:

Իրավունքը դառնում էր հայրիշխանության մյուս կարևոր սյունը և միջոցը կնոջը տղամարդուն ենթարկեցնելու համար: Աստիճանաբար գեներային անհավասարությունը դառնում էր կյանքի նորմ, սովորույթ և ձևակերպվում իրավաբանորեն, խորանում էր խտրականությունը: Ընդհանրապես, *խորակա-*

նությունը բնորոշվում է որպես գործողությունների կամ պատկերացումների մի ամբողջ համակարգ, որը մարդկանց որևէ խմբի համար անհասանելի է դարձնում այլ խմբերին հասանելի ռեսուրսները կամ եկամտի աղբյուրները: Խտրականությունը կարող է լինել ռասայական, ազգային, տարիքային և այլն: Խտրականության շատ տարածված տեսակ է սեռի հատկանիշով խտրականությունը կամ գենդերային խտրականությունը: Գենդերային խտրականության դեպքում մի սեռին մյուսի համեմատությամբ առավելություններ է տրվում: Ընդ որում, այդ առավելությունները կարող են ամրագրված լինել օրենքում, և այդ դեպքում խոսքը վերաբերում է իրավական խտրականությանը: Այսօր երկրների մեծ մասում հաստատվել է գենդերային իրավահավասարություն, սակայն խտրական գործելակերպը և մոտեցումները պահպանվել են: Գենդերային խտրականությունը կարող է լինել բացահայտ և թաքնված: Գենդերային խտրականությունը, ինչպես նաև դրա հաղթահարման մեխանիզմներն ավելի մանրամասն կներկայացվեն հաջորդ թեմաներում: Այստեղ միայն, թեման ամփոփելով, հիշեցնենք, որ հայրիշխանության ձևավորման գործոններ դարձան սեռի հատկանիշով աշխատանքի բաժանումը, մասնավոր սեփականության և ավանդական ընտանիքի առաջացումը՝ ուղեկցվելով խտրականության վրա հիմնված համապատասխան սովորույթների և իրավունքի ձևավորմամբ: Հայրիշխանության հաստատումը ամրագրվեց Աստվածաշնչում: Ամերիկյան նշանավոր հոգեբան Էրիկ Ֆրոմի ձևակերպմամբ՝ տղամարդը կին ծնեց (Ադամի կողից արարվեց Եվան): Դա հայրիշխանության սկիզբն էր:

Հիմնական հասկացություններ

մայրիշխանություն, հայրիշխանություն, գենդերային խտրականություն:

Հարցեր կրկնության համար.

1. Բնութագրեք մայրիշխանությունը:
2. Բնութագրեք հայրիշխանությունը:
3. Ինչպե՞ս եք հասկանում «խտրականություն» հասկացությունը:

Ինտերակտիվ պարապմունք. «Հայ հասարակության արժեքային կողմնորոշումները»:

Ինտերակտիվ պարապմունք. «Հովսեփեի աղյուսակի միջոցով հասարակության մեջ տիրապետող արժեքների պարզում»:

1.3. Գենդերային սոցիալականացում կամ ինչպես են «արարվում» կանայք և տղամարդիկ

Անձի սոցիալականացման փուլերը: Գենդերային սոցիալականացման ինստիտուտներ, տեխնոլոգիաներ և գործակալներ: «Գենդերային ռեժիմ» և «գենդերային կոնֆլիկտ» հասկացությունները:

Գենդերն արարվում է հասարակական կյանքում՝ սոցիալականացման արդյունքում: *Սոցիալականացումն* այն բոլոր սոցիալական գործընթացների ամբողջությունն է, որոնց շնորհիվ անձը, յուրացնելով որոշակի նորմերի և արժեքների համակարգը, դառնում է հասարակության լիիրավ անդամ: Սոցիալականացումն անձի ձևավորման գործընթաց է, որը սկիզբ է առնում ծննդյան պահից: Սոցիալականացման ընթացքում առանձնանում է երկու փուլ: Առաջին փուլում անձը յուրացնում է նորմերն ու հարմարվում միջավայրին, երկրորդում՝ արդեն գիտակցական մակարդակով յուրացնում դրանք՝ ներառելով իր «ես»-ի մեջ:

Սոցիալականացումը տեղի է ունենում *սոցիալականացման ինստիտուտների* միջոցով. ընտանիք, նախադպրոցական հիմնարկներ, հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններ, շրջապատ, աշխատանքային կոլեկտիվ, կրոնական կազմակերպություններ, ՁԼՄ-ներ: Սոցիալականացման բոլոր փուլերում հասարակության ներգործությունն անձի վրա տեղի է ունենում կա՛մ անմիջականորեն, կա՛մ հատուկ խմբերի՝ սոցիալականացման *գործակալների* միջոցով (ծնողներ կամ ընտանիքի մյուս անդամներ, ուսուցիչներ, լրագրողներ և այլն):

Գենդերային սոցիալականացումը հասարակության գենդերային մշակույթի յուրացումն է անձի կողմից և սեռերի տարբերությունների սոցիալական կառուցավորումը: Գենդերային սոցիալականացման ընթացքում անձը յուրացնում է տղամարդկային և կանացի վարքի ձևերը, հարաբերությունները, նորմերը, արժեքները և գենդերային կարծրատիպերը: Յուրաքանչյուր հասարակություն «տղամարդկայինի» և «կանացիի» վերաբերյալ յուրահատուկ չափորոշիչներ ունի, որոնց համապատասխան էլ սոցիալականացման ինստիտուտներում արարվում, կառուցավորվում, կերտվում են տղամարդիկ և կանայք: Կարևոր է նաև գենդերային սոցիալականացման *տեխնոլոգիաների*, այսինքն՝ գենդերի ձևավորման մեխանիզմների, միջոցների, ուղիների իմացությունը: Գենդերային տեխնոլոգիաներն են լեզուն, կրոնը, արվեստը, կրթությունը, դաստիարակությունը: Այսօր այդ ավանդա-

կան տեխնոլոգիաներն իրենց տեղը զիջում են տեսալսողական այնպիսի տեխնոլոգիաների, ինչպիսիք են կինոն և հեռուստատեսությունը՝ իր գովազդային և հոլովակային մշակույթով: Գենդերային սոցիալականացումն առավել եռանդուն է ընթանում մանկության և պատանեկության տարիներին, հատկապես այնպիսի գործակալների միջոցով, ինչպիսիք են՝ ծնողները, դաստիարակները, ուսուցիչները, հասակակիցները:

Գենդերային սոցիալականացման ընթացքում նույնպես առանձնացվում է երկու փուլ: Հատկապես մեծ կարևորություն ունի *գենդերային ադապտացիան* կամ հասարակության մեջ տիրապետող գենդերային հարաբերություններին, նորմերին, դերերին հարմարվելը: Գենդերային ադապտացիան կարող է լինել կամավոր և ստիպողական: Կամավոր ադապտացիան մարդու ներաշխարհին գենդերային նորմերի և արժեքների միահյուսվելու սահուն, անկոնֆլիկտ գործընթաց է: Ստիպողական ադապտացիան երևակում է այն բախումը, որն առաջանում է անձի անհատականության և հասարակության կամ սոցիալական խմբի կողմից ընդունված նորմերի և արժեքների միջև: Օրինակ՝ տղաների համար կոնֆլիկտի այդպիսի միջավայր կարող է լինել բանակը, աղջիկների համար՝ ամուսնու ընտանիքը: Գրա պատճառները վեր հանելու համար անհրաժեշտ է ծանոթանալ ևս մեկ հասկացության՝ *գենդերային ռեժիմին*: Այն հասարակական ինստիտուտների ներսում հաստատված գենդերային կարգուկանոնն է, որ հիմնվում է աշխատանքի բաժանման, իշխանական հիերարխիայի, սեքսուալության, սոցիալական կառուցավորման վրա: Օրինակ՝ բանակի, բանտի, կուսակցությունների, ընտանիքների և այլ սոցիալական ինստիտուտների գենդերային ռեժիմներն ունեն իրենց առանձնահատկությունները և կարող են էապես տարբերվել միմյանցից:

Ինչպես վերը նշվեց, սոցիալականացման հաջորդ՝ ինտերիորիզացիայի փուլում տեղի է ունենում գենդերային դերերի, նորմերի և արժեքների յուրացում, դրանք միահյուսվում են անձի էությանը:

Գենդերային սոցիալականացման կարևոր ինստիտուտներից է ընտանիքը: Այստեղ է երեխան ստանում միջսեռային փոխազդեցության առաջին փորձը: Ընդ որում, ընտանիքում գենդերային սոցիալականացումը տեղի է ունենում ինչպես նպատակաուղղված դաստիարակության, այնպես էլ սոցիալական ուսուցման մեխանիզմի միջոցով: Սոցիալական ուսուցման մեխանիզմի միջոցով երեխան իր եղբայրների և քույրերի հետ շփման ընթացքում, ծնողների հարաբերությունները դիտարկելով՝ յուրացնում է հասարակության կողմից իր գենդերային դերին պարտադրվող չափորոշիչները: Այդ չափորոշիչների շնորհիվ է, որ տղաները հակվում են ակտիվության, ինքնու-

Գենդեր և լրագրություն

րույնության, մրցակցության և կարիերայի, իսկ աղջիկները՝ պասիվության, զիջողության, պատասխանատվության, կախվածության:

Գենդերային սոցիալականացման համար մեծ նշանակություն ունի ընտանիքի գենդերային ռեժիմը: Ընտանիքի գենդերային ռեժիմի վրա ազդում է ընտանիքի կառուցվածքը՝ ընդլայնված (մեկ ընտանեկան տնտեսության մեջ, բացի ծնողներից և երեխաներից, միավորված են տատիկը, պապիկը և այլ անդամներ) և միջուկային կամ նուկլեար (ծնողներ և երեխաներ), որը կարող է լինել լրիվ և ոչ լրիվ (ձևախախտված): Ոչ լրիվ ընտանիքում ձևախախտումը (դեֆորմացիան) կարող է լինել երկու տեսակի՝ զուտ կառուցվածքային և հոգեբանական: Օրինակ, եթե ընտանիքում հայրը բացակայում է, դա բացասաբար է անդրադառնում հատկապես տղաների սոցիալականացման վրա: Բայց բացասական հետևանքներից կարելի է խուսափել, եթե մորը հաջողվի ընտանիքում կայուն հոգեբանական մթնոլորտ ապահովել: Ի դեպ, երեխաների վրա բացասաբար է անդրադառնում նաև ընտանիքի անառողջ մթնոլորտը: Եթե ծնողներն անընդհատ վիճում են, երեխան հոգեբանական կամ ֆիզիկական բռնության ակնատես է, ապա դա խիստ բացասաբար է անդրադառնում և՛ տղաների, և՛ աղջիկների սոցիալականացման վրա: Տարիքի հետ սոցիալականացման կենտրոնը ընտանիքից տեղափոխվում է հասակակիցների խումբ, և թուլանում է ծնողների հետ զգացմունքային կապը (այդ երևույթն ավելի ընդգծված է արտահայտվում տղա երեխաների դեպքում): Սկսվում է վարքային մի փուլ, որն անվանում են «*էմանսիպացիայի (ազատագրման) ռեակցիա*»։ Երեխան ամեն առիթով փորձում է հաստատել իր անկախությունը: Տղաներն այդ դեպքում, հակվելով հասակակիցների շրջապատին, յուրացնում են վարքի կոշտ կանոններ: Նա, ով չի համապատասխանում այդ չափորոշիչներին, ծաղրուծանակի, երբեմն էլ կոպիտ ճնշման է ենթարկվում շրջապատի կողմից: Ընդ որում, հասարակությունը տղաներին ավելի խիստ պահանջներ է ներկայացնում, քան աղջիկներին: Տղաների «կանացի վարքագիծը» ավելի մեծ պարսավանքի է արժանանում, քան աղջիկների «առնական լինելը»:

Գենդերային սոցիալականացման կարևոր ինստիտուտներից է կրթական համակարգն՝ իր հաստատություններով: Ընդ որում, գենդերային սոցիալականացման վրա ազդում է ոչ միայն կրթության բովանդակությունը, այլև դասավանդման մեթոդիկան և ուսումնական հաստատության գենդերային կառուցվածքը: Հաճախ հենց այդ ինստիտուտներում է առաջանում գենդերային անհավասարությունը: Դպրոցում դա ավելի շատ կապված է դասագրքերի բովանդակության և ուսուցիչների գենդերային կարծրատի-

պերի հետ: Այսպես օրինակ՝ «Հայոց պատմության» դասագրքերում խիստ ընդգծված անհավասարակշռություն կա կին և տղամարդ պատմական դեմքերի ներկայացման հարցում: Գերակշռում են տղամարդիկ կամ տղամարդկային զբաղմունքների խորհրդանիշները: Կանայք, հայտնվելով պատմության ստվերում, դուրս են մնում նաև քաղաքականությունից, և երեխաների գիտակցության մեջ ամրագրվում է այն թյուր պատկերացումը, թե այդ ոլորտում դեր ունեն միայն տղամարդիկ: Փաստորեն քաղաքական սոցիալականացման առաջին փուլում արդեն տեղի է ունենում կանանց միտումնավոր դուրսնում այդ ոլորտից: Սովորողների գիտակցության մեջ ձևավորվում է ակտիվ, նվաճող, պաշտպանող, ստեղծագործող տղամարդու կերպարը: Կանայք օտարվում են ոչ միայն պատմությունից և քաղաքականությունից, այլև հասարակական մյուս ոլորտներից: Նույնիսկ կարծիք է ձևավորվում, թե կանայք մշակույթում որևէ ներդրում չունեն և չեն ունեցել:

ՁԼՄ-ներն իրենց լայն լսարանի և դրա վրա ներգործման մեծաթիվ մեխանիզմների շնորհիվ նաև գենդերային սոցիալականացման գործուն ինստիտուտ են: ՁԼՄ-ները կարևոր ազդեցություն կարող են ունենալ գենդերային կարծրատիպերի վրա, առավել ևս, որ լրագրությունը՝ որպես մշակույթի և զանգվածային գիտակցության արտահայտման միջոց, հնարավոր չէ առանց կարծրատիպային պատկերացումների: Հայտնի է, որ կարծրատիպերը մշակվել են դարերի ընթացքում կրոնի, բանահյուսության, առասպելաբանության և պատմական փորձի ներգործությամբ: Դրա հետ մեկտեղ կարծրատիպերը կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում: Այդ փոփոխման գործում կարևոր դեր կարող է խաղալ հատկապես հեռուստատեսությունը, քանի որ արդի փուլում անհատը չափազանց շատ է ենթարկվում տեսալսողական մշակույթի ազդեցությանը: Էկրանային տեխնոլոգիաների միջոցով (հեռուստատեսություն, ինտերնետ) տեղի է ունենում զանգվածային գիտակցության փոխակերպում: Հեռուստատեսությունը կարծես դարձել է ժամանակակից մարդու կյանքի անբաժանելի մասը և հնարավորություն ունի ազդելու անձի նկարագրի և վարքի վրա, ինչպես նաև վերարտադրելու կամ հաղթահարելու գենդերային կարծրատիպերը:

ՁԼՄ-ները, վերարտադրելով ավանդական գենդերային կարծրատիպերը, հասարակական գիտակցության մեջ ամրապնդում են կնոջ և տղամարդու իդեալի, կնոջ և տղամարդու հասարակական դերի մասին առկա պատկերացումները, ընդ որում, հաճախ կատարելով այս կամ այն գերիշխող քաղաքական ուժի պատվերը, կախված այն հանգամանքից, թե որ քաղաքական ուժն է տվյալ պահին գտնվում իշխանության դեկին՝ պահպանողական արժեքներ

Գենդեր և լրագրություն

դավանող որևէ կուսակցություն, ազատական բարեփոխումներ իրագործող կուսակցություն, սոցիալ-դեմոկրատներ թե կոմունիստներ: Օրինակ՝ ՁԼՄ-ները ազգային կամ պետական գաղափարախոսության ազդեցությամբ կարող են իդեալականացնել տնային տնտեսությամբ զբաղվող լավ տանտիկնոջը, մորը և ամուսնուն կամ աշխատավոր կնոջը, սոցիալիստական մրցության հերոսուհուն և այլն: Նույնը վերաբերում է նաև տղամարդկանց: ՁԼՄ-ների միջոցով կերտված տղամարդու իդեալական կերպարը կարող է լինել, օրինակ, պատերազմի կամ աշխատանքի հերոսը, հաջողակ ձեռնարկատերը, մարզիկը կամ, ասենք, քրեական աշխարհի ներկայացուցիչը: Հաճախ ՁԼՄ-ների կերտած կերպարն ի սկզբանե անհասանելի է և՛ կանանց, և՛ տղամարդկանց, և հաճախ լուրջ հոգեբանական հիմնախնդիրների, անլիարժեքության բարդույթի, անհիմաստ և ուժերի գերլարում պահանջող մրցակցության պատճառ է դառնում: Օրինակ, ՁԼՄ-ներում կանանց որպես սեքսի օբյեկտ պատկերումը բացասաբար է ազդում երիտասարդ աղջիկների մտավոր և հոգևոր զարգացման վրա: Արտաքին գեղեցկության չափազանց շեշտադրումը, գեղեցկության սեքսուալացումը, հատուկ չափորոշիչների գովազդումը բարդույթներ են առաջացնում աղջիկների մեջ, ընկճվածության, աղետաանոքսային տրակտի հիվանդությունների պատճառ դառնում, բացասաբար ազդում սեռական զարգացման վրա՝ ամբողջ կյանքի ընթացքում դարձնելով տարբեր սննդակարգերի գերի և կոսմետիկ վերափոխումների միտված անձ: Ֆիզիկապես ուժեղ, հարուստ, կյանքի բոլոր հաճույքները վայելող, «կանանց տիրակալ» կամ քաղաքական մեծ կշիռ ունեցող տղամարդու կերպարը, որը գովազդվում է ՁԼՄ-ներում, համանման բարդույթներ է առաջացնում պատանիների և տղամարդկանց մեջ և երբեմն լուրջ հոգեբանական ցնցումների պատճառ դառնում: Գենդերային սոցիալականացման տեսանկյունից բացասաբար է անդրադառնում նաև սեքսի՝ որպես սովորական ժամանցի, քարոզը: Փաստորեն անտեսվում է սիրո ֆենոմենը: Հեռուստատեսության սիրված թեմա են հանցագործությունները, որոնց նվիրված հաղորդումների և ֆիլմերի պարբերական հեռարձակումը դեռահասների համար սովորական է դարձնում հասարակական նորմերի անտեսումը, օրենքի խախտումը, հայհոյանքը, նվիրական հասկացությունների ոտնահարումը: Ընդ որում, այդ ամենը մատուցվում է այնպիսի անտարբերությամբ, որ երբեմն դեռահասի համար դժվար է կողմնորոշվել՝ ինչն է լավ, ինչը՝ վատ: Գենդերային սոցիալականացման տեսանկյունից մերժելի է նաև ժամանցի վայրերի՝ զանազան գիշերային ակումբների, խաղատների, կասկածելի հեղինակությամբ օբյեկտների գովազդումը: Այդ ամենը հասարակական գիտակցության մեջ ավելի է ամ-

րապնդում հայրիշխանության երեք հենասյունները՝ փող («ամեն ինչ կարելի է գնել», նաև՝ կանանց), ուժ (օրինականացնելով ագրեսիան), իշխանություն (կատաղի մրցավազք ավելի բարձր դիրք գրավելու համար): Իհարկե, խոսքի ազատությունը մեծ արժեք է, բայց դա ՉԼՄ-ներին բացարձակապես չի ազատում հասարակության առջև պատասխանատվությունից: ՉԼՄ-ների դիրքորոշումը մեծապես կախված է պետության գենդերային քաղաքականությունից: Այս հիմնախնդիրները ավելի մանրամասն կքննարկվեն 3-րդ գլխում, իսկ առաջիմ ուղղակի նշենք, որ ժողովրդավարության պայմաններում գոնե հանրային ՉԼՄ-ները պետք է կերտեն կերպարներ, որոնք ընդգծում են յուրաքանչյուր անհատի, լինի կին թե տղամարդ, յուրահատկությունը, անկրկնելիությունն ու բացառիկությունը: Միայն այդ դեպքում կարելի է հուսալ, որ հասարակությունը ներդաշնակ և կայուն կզարգանա:

Հասունացման հետ աճում է անձի ընտրության հնարավորությունը, նա կարողանում է վերանայել իրեն ներկայացվող պահանջները, նույնիսկ շեղվել հասարակության կողմից «հաստատված» չափորոշիչներից, այսինքն՝ *ապասոցիալականացում* ապրել: Բայց անգամ հասուն տարիքում շատ դժվար է ձեռքազատվել գենդերային կարծրատիպերից, գենդերային նորմերից և այն զսպաշապիկից, որն ընդունված է անվանել սեռին հարիր պահվածք:

Հիմնական հասկացություններ.

գենդերային սոցիալականացում, գենդերային ռեժիմ, սոցիալականացման ինստիտուտներ, տեխնոլոգիաներ, գործակալներ, գենդերային ադապտացիա, գենդերային կոնֆլիկտ, ինտերիորիզացիա, էմանսիպացիայի ռեակցիա, ապասոցիալականացում:

Հարցեր կրկնության համար.

1. Ի՞նչ է նշանակում «գենդերային սոցիալականացում»:
2. Ի՞նչ է նշանակում «գենդերային ռեժիմ»:
3. Ի՞նչ է նշանակում «գենդերային կոնֆլիկտ»: Բերել գենդերային կոնֆլիկտի օրինակներ:
4. Ի՞նչ է նշանակում «գենդերային ապասոցիալականացում»:

Ավարտել միտքը. «Երբ ես փոքր էի, ինձ արգելվում էր...»:

Բանավեճ-քննարկում. «Կարո՞ղ են արդյոք ՉԼՄ-ները փոփոխել գենդերային կարծրատիպերը»:

1. Բաբայան Ս., Գենդերը և խտրականությունը: Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2002.-136 էջ:
2. Բազեյան Կ., Գենդերի էթնոմշակութային առումները / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2002.- 86 էջ:
3. Չաքարյան Լ., Գենդերային գիտելիքների հիմունքներ (միջառարկայական դասընթաց) / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2003.- 118 էջ:
4. Չղրավոմիսլովա Ե., Տյոմկինա Ա., Գենդերի սոցիալական կառուցավորումը և գենդերային համակարգը Ռուսաստանում // Գենդերային հետազոտություններ, պր. 1 / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2001, էջ 64-78:
5. Կոնֆլիկտաբանություն, գենդեր և խաղաղարարություն / Միավորված ազգերի կազմակերպության Չարգացման ծրագիր.- Եր., 2003.- 320 էջ:
6. Մխիթարյան Ա., Գենդերային տեսության ներածություն / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2002.- 112 էջ:
7. Վարդանյան Ե., Գենդերային հետազոտությունների ներածություն (միջառարկայական դասընթաց) / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2002.- 150 էջ:
8. Ֆեմինիզմի տեսություն և պատմություն (ուսումնական ձեռնարկ) / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 1999.- 400 էջ:
9. Першиц А.И., Монгайт А.Л., Алексеев В.П., История первобытного общества, Москва, 1982.

1.4. Գենդերային տեսության առաջացման տեսական և հասարակական- քաղաքական նախադրյալները

- 1.4.1. *Տեսական նախադրյալներ: Մարդուն միայն փղամարդու հետ նույնացնելու ավանդույթի սկզբնավորումը*
- 1.4.2. *Ֆեմինիզմի առաջին ալիքը*
- 1.4.3. *Գենդերային դերերի մասին պատկերացումների փոփոխությունները սեռի հոգեբանական և սոցիոլոգիական տեսությունների ազդեցությամբ*
- 1.4.4. *Ֆեմինիզմի երկրորդ ալիքը: Ֆեմինիզմի հարացույցի փոխարինումը գենդերի հարացույցով*

1.4.1.Տեսական նախադրյալներ: Մարդուն միայն փղամարդու հետ նույնացնելու ավանդույթի սկզբնավորումը

Կանացիի և առնականի բևեռացման ավանդույթի սկզբնավորումը արևմտաեվրոպական փիլիսոփայության մեջ: Առնականությամբ կանացիության ճնշման համակարգումը արևմտյան մշակույթում: Լուսավորության դարաշրջանի փիլիսոփայությունը: Գերմանական դասական փիլիսոփայություն: Կատարյալ մարդու` իբրև արական սեռի էակի մասին պատկերացումը:

Կանանց և տղամարդկանց փոխհարաբերությունների, հասարակության համար նրանց տեղի ու դերի որոշման հիմնահարցը մտածողների ուշադրությունը գրավել է հնագույն շրջանից: Հայրիշխանության պայմաններում արևմտաեվրոպական փիլիսոփայության մեջ ձևավորվել է առնականի և կանացիի բևեռացման ավանդույթը: Դարեր շարունակ կանացին դիտվում էր հակաբանական, տղամարդկայինը` ռացիոնալ, բանական: Աստիճանաբար արևմտյան փիլիսոփայության մեջ ձևավորվում էր մարդուն միայն տղամարդու հետ նույնացնելու ավանդույթը, որը խտրականություն էր առաջացնում կանանց նկատմամբ ոչ միայն տեսության մեջ, այլև գործնական կյանքում:

Դեռևս Պյութագորասը (Ք.ա.VI-V դդ.) գտնում էր, որ չպետք է խորհրդակցել երեխաների, կանանց և ժողովրդի հետ: Սոկրատեսը (Ք.ա. V դարի վերջ) կենդանի էակի համար երջանկություն էր համարում երեք հանգա-

Գեները և լրագրություն

մանք. որ մարդ է և ոչ թե անասուն, որ հույն է, **որ տղամարդ է և ոչ թե կին:** Այդ նույն ժամանակ Հունաստանում լայնորեն տարածված էր «Ծեծել է պետք ընկույզը, ավանակը և կնոջը» ասացվածքը:

Առաջինը *Պլատոնն* էր (Ք.ա. 428-348թթ.), որ իր աշխատություններում առաջադրեց հոգու և մարմնի, բանականի և զգայականի հարացույցը՝ արտահայտելով նյութի ու իդեայի երկվությունը, որը տիրապետող դարձավ արևմտյան ավանդական փիլիսոփայության մեջ: Նյութը, ըստ Պլատոնի, որակներից զուրկ սուբստրակտ է, որից կարելի է ստեղծել ցանկացած մարմին: Գաղափարների աշխարհը ակտիվ, տղամարդկային նախասկիզբ ունի, նյութը պասիվ է և կանացի նախասկիզբ ունի: «Խնջույքում» Պլատոնը բնութագրում է զգայականության բարձրագույն տեսակը՝ որպես «հոգեկան», «երկնային», տղամարդկային էրոս, որի արտահայտության ոլորտն է փիլիսոփայությունը: «Ալլասերված», կանացի էրոսը, զգայականի ցածր աստիճանն է, որտեղ զգայականը ենթարկված չէ մտքին, նրանում գերակշռում է պատահական եսասիրական ցանկությունը: Կին սուբյեկտը նրա մոտ հեռացված է փիլիսոփայությունից: «Արդար» հասարակության մեջ նա նախատեսում է կանանց հանրայնացման ինստիտուտ, որը հնարավորություն կտա չեզոքացնելու պետության վրա առավել բացասաբար ազդող մասնավորը/կանացին: Նրա կարծիքով, իշխանավորները ազահ են դառնում և սեփականատիրական մղումներ են ունենում իրենց երեխաների և կանանց պատճառով: Կանայք մեղավոր են, ըստ Պլատոնի, պետությունում հակահասարակական միտումների համար:

Արիստոտելն (Ք. ա. 384-322թթ.) իր փիլիսոփայական աշխատություններում ավելի սրեց սեռերի հակադրությունը՝ կանացին/իզականը նույնացնելով պասիվ, իներտ նյութի հետ, իսկ տղամարդկայինը/արականը՝ ակտիվ, արտադրող ձևի: Նա ճանաչողությունն ու բանականությունը նույնականացնում էր արականի էության հետ, իսկ քառասյին նյութը՝ որպես ստորին հիմք, անփոփոխ էություն, սուբստանց՝ պասիվ իզականի: «Կենդանիների առաջացման մասին» գրքում Արիստոտելը նշում է, որ իսկական ծնողը միայն հայրն է: Պասիվ նյութի բեղմնավորման ընթացքում նա է որոշում ապագա մարդկային էակի ակտիվ ձևը: Կինն ընդամենը պասիվ անոթ է, ստորակարգ էակ, «իմպոտենտ տղամարդ», «բնական արատից տառապող»: Նա գտնում էր, որ մարդկությունն իր էությանը փչացած է, բարոյականությունն էլ մարդկանց մեջ բաշխված է ոչ հավասարապես: Ստրկությունը, ըստ նրա, հավերժ և անհրաժեշտ երևույթ է: Այն պետք է դրվի նաև ընտանեկան հարաբերությունների հիմքում, ընդ որում, տերը պետք է լինի տղամարդը, ստրուկը՝ կինն ու

երեխաները: Պետական իշխանությունն ընտանեկան իշխանության շարունակությունն է: Նա ընդունում է, որ կինը կարող է օգտակար լինել միայն այն դեպքում, երբ վերահսկվում է և ստրուկի կարգավիճակում է տղամարդու նկատմամբ: Կինը չի կարող ունենալ սեփական շահեր և այնպիսի բնութագրեր, որոնք կապված չեն տղամարդու հետ: Կնոջ կյանքը պետք է խստորեն կարգավորված լինի, նա պետք է զբաղվի միայն տնային տնտեսությամբ, ամուսնանա և երեխաներ ծնի:

Արիստոտելի հայացքները մեծ ազդեցություն ունեցան միջնադարյան փիլիսոփայության վրա: **Այսպիսով, անտիկ փիլիսոփայության մեջ առաջացավ հայրիշխանական ֆալոսակենտրոնության միտումը: Տղամարդկայինը սկսեց դիտվել կատարյալ, հաստատուն, բանական, կանացին՝ թերի, անկանխատեսելի, զգայական:**

Այդ տարբերությունն ավելի խորացավ միջնադարում, ավատատիրության զարգացման և քրիստոնեության տարածման պայմաններում: Սկզբնական շրջանում, երբ քրիստոնեությունը նոր էր տարածվում և հետապնդվում էր իշխանությունների կողմից, այն բացասական վերաբերմունք չէր դրսևորում կանանց նկատմամբ, քանի որ հավատարիմ հետևորդների մեջ մեծ էր կանանց թիվը: Սակայն հետագայում, երբ այն վերածվեց պետական կրոնի, որոշ ձևափոխման ենթարկվեց. կրոնական փիլիսոփայության մեջ խիստ բացասական վերաբերմունք ձևավորվեց կանանց նկատմամբ: Կանացին սկսեց նույնականացվել այլասերված զգայականի և մեղքի հետ: Միջնադարյան եվրոպական հոգևոր այրերից մեկի՝ *Ավգուստինի* կարծիքով, մեղքից պաշտպանվելու ամենաարդյունավետ ուղին կուսությունն է և ամուսնությունից հրաժարվելը: Բայց քանի որ հնարավոր չէ լրիվ հրաժարվել ամուսնությունից, որը նույնպես Աստծո ստեղծածն է, սեռական հարաբերությունները պետք է հետապնդեն միայն մեկ նպատակ՝ սերնդի շարունակություն: Ըստ մեկ այլ հեղինակի՝ *Ամբրոսիոսի*՝ կինը պատկանում է չարի տեսակին, նա կարող է փրկվել միայն այն դեպքում, եթե իրեն նվիրաբերի Քրիստոսին և հրաժարվի մարմնականից, դադարի կին լինելուց: Ըստ *Թովմա Արվիևացու*՝ տղամարդը ստեղծվել է Աստծո կերպարով, իսկ կինը լոկ միջոց է մարդկությունը շարունակելու համար, որը ինքնուրույն նշանակություն չունի: Միտլաստիկ փիլիսոփայության մեջ կինը դառնում է իր, աշխատանքային գործիք, որը տղամարդը կարող է տնօրինել իր հայեցողությամբ:

Ըստ *Փիլոն Աղեքսանդրացու* (Ք.ա. 25 թ. - Ք. հ. 50 թ.)՝ տղամարդը նույնականացվում է գիտակցականի, բանականի, աստվածայինի հետ, իսկ կի-

նը՝ կեղտոտ մարմնական աշխարհի հետ: Բարոյական առաջընթացը կապվում է հոգևորի կողմից զգայական, մարմնական կրքերի ազդեցությունից ձերբազատվելու հետ: Ըստ նրա՝ զարգանալ նշանակում է շարժվել կանացիից դեպի տղամարդկայինը: Հետևաբար տղամարդը «լավագույնն» է, կինը՝ «վատագույնը»: Առաջանում է կանացին/իգականը՝ տղամարդու (հոգու) համար ամենամեծ գայթակղությունը հաղթահարելու անհրաժեշտության փիլիսոփայությունը. մարդը նույնականացվում էր միայն տղամարդու հետ: Նման մտածողությունը ոչ միայն վտանգավոր էր կանանց համար, այլև կործանարար: Հիշենք 585թ. Մակեդոնյան տիեզերական ժողովում բարձրացված հարցը՝ կարելի՞ է կնոջը մարդ համարել: *Յու. Շարենկերի և Հ. Մինյրիտորիսի* տխրահռչակ գիրքը՝ «Վիուկների կռանը» (1487թ.), կանանց ֆիզիկական ոչնչացումն ու ճնշումն արդարացնում էր նրանց սկզբնական «մեղսականությամբ»: Կանայք չարի կրողն ու պատճառն են: Այստեղից առաջացավ «վիուկների որսը», որի զոհը դարձան հազարավոր կանայք:

Նոր ժամանակաշրջանում տղամարդիկ և կանայք ոչ միայն տարբերակվում են, այլև հակադրվում, բևեռացվում: Հակադրվում են հոգևորն ու մարմնականը, բանականն ու բնականը: Կնոջ ճնշումը տղամարդու կողմից դառնում է համակարգաստեղծ:

XVII դ. ձևավորվում է ճանաչողության այլ հայեցակարգ: Անտիկ շրջանում բանականության խնդիրը աշխարհի մասին մտորումն էր, XVII դարում *Ֆրենսիս Բեկոնի* համար բանականությունը բնությունն ուսումնասիրելու, հետազոտելու, ենթարկելու գործիք է: Անտիկ մտածողների համար բնությունը կենդանի օրգանիզմ էր, Ֆրենսիս Բեկոնի համար՝ մեխանիզմ: Ըստ նրա, բնությունը «she» («ОНА») է, գիտելիքը, բանականությունը, գիտությունը՝ «he» («ОН»): Նա քննադատում է Արիստոտելին, որի փիլիսոփայության մեջ բնությունն անաղարտ էր մնացել, և օրինականացնում է իմացության ու բնության ամուսնությունը, որտեղ ճանաչող սուբյեկտը՝ տղամարդը, իրեն է ենթարկում բնությունը (կնոջը): Անտիկ շրջանում գիտելիքը բարօրություն էր, Ֆրենսիս Բեկոնի համար «գիտելիքը ուժ էր»: Ըստ նոր աշխարհաճանաչողության տեսության՝ բնությունը դառնում էր անշունչ, մեռած մեխանիզմ, որի հետ ճանաչող սուբյեկտը կարող էր անել այն ամենը, ինչ կցանկանար. փոխել, վերահսկել, ենթարկել, հաստատել իր ուժը: Բնության կոշտ տիրապետումը հանգեցրեց բնապահպանական աղետների, գիտությունը ապահումանիզացվեց:

Այդ գաղափարը շարունակեց *Դեկարտը*: Բնականի, նյութականի, մարմնականի ճնշման միտումը XVI-XVII դարերում ուղեկցվում էր կանանց զանգվածային ոչնչացմամբ: «Վիուկների որսը» նոր թափ առավ: Հաճախ վիուկները հեքիմներն ու տատմերերն էին, որոնք ժողովրդական միջոցներով օգնում էին կանանց կարգավորել ծնելիությունը, թեթևացնում էին ծննդաբերության ցավերը: Շուտով ծնելիության նկատմամբ ժողովրդական մեթոդներով վերահսկողությունը փոխվեց «գիտական մեթոդներով» վերահսկողության, որը սկզբնական շրջանում իրականացնում էին միայն մասնագետ տղամարդիկ:

Լուսավորության դարաշրջանում զգայականը սկսեց օրինականացվել: *Ժան Ժակ Ռուսոյի* համար կանացին օժտված է մի շարք դրական որակներով, որոնք բացակայում են տղամարդկանց մոտ և դրական ներգործություն են ունենում տղամարդու ձևավորման վրա: Ըստ Ռուսոյի՝ կանացիի հիմնական դերը տղամարդուն գրավելն է՝ նրա մեջ լավագույն զգացմունքների՝ սիրո, խղճահարության, հոգատարության արթնացման, նրա կոպտությունը մեղմելու, ճաշակը զարգացնելու համար: Սակայն նա կնոջը վերագրում էր անզուսպ ցանկասիրություն, կինը նույնացվում էր բնության հետ և բարոյապես տղամարդուց ցածր էր համարվում: Նրա կարծիքով, կնոջ զգացմունքների զսպման միակ միջոցը ամոթխածությունն է, որն այնքան էլ հուսալի չէ: Ինքնավերահսկման ավելի արդյունավետ միջոց է բարձրագույն կամքը, որը բացակայում է կնոջ մեջ նրա թուլության պատճառով: Քանի որ կինը ընդունակ չէ ինքնավերահսկման, նա պետք է որևէ տղամարդու (հոր, ամուսնու) մշտական հսկողության տակ լինի:

Միայն տղամարդը, ըստ Ռուսոյի, իր բանականության միջոցով կարող է մտավոր կատարելության հասնել («Էմիլ»): Կիրքը (կինը) վտանգավոր է քաղաքացիական հասարակության համար: Լավ քաղաքացին չպետք է խոչընդոտի նույնիսկ իր զավակի սպանությունը, եթե դա օգտակար է հասարակությանը: Կինը չի կարող լավ քաղաքացի լինել, քանի որ մայր է և միշտ դեմ կլինի զավակի սպանությանը: Դժվար է լինել միաժամանակ և՛ լավ քաղաքացի, և՛ լավ ընտանիքավոր: Հետևաբար անհրաժեշտ է բաժանել մասնավորը հանրայինից և կնոջը հեռացնել քաղաքացիական հասարակությունից ու «տեղավորել» մասնավոր ոլորտում (ընտանիքում):

Կանյորը հաստատեց կանանց ավելի ցածր մենթալ ընդունակությունները, բայց գտնում էր, որ դրանք անհրաժեշտ են հասարակությանը: Վերացական մտածողության բացակայությունը հնարավորություն է տալիս կնոջը

Գեները և լրագրություն

զարգացնելու ճաշակը, «գեղեցիկի զգացողությունը», զգայականն ու գործնականը: Ընտանիքում տղամարդը լրացնում է կնոջ թերությունները, և ստեղծվում է հավասարակշիռ զույգ:

Հեզելը նույնպես կնոջը հեռացնում էր քաղաքացիական հասարակությունից և բարոյականությունից: Նա ընտանիքը դիտում էր քաղաքացիական հասարակության ամենացածր աստիճան, քանի որ այստեղ ազգակիցների հարաբերություններ են, ոչ թե քաղաքացիների: Այդ «ստորին աշխարհը» կանանց համար է, քանի որ նրանք քաղաքացի չեն: Կինը միայն մասնավոր ոլորտում է, տղամարդն ունի նաև լրացուցիչ ոլորտ՝ հասարակականը, որն ավելի բազմակողմանի ու բարոյական է: Կինը հասարակական ոլորտ անցնելու համար պետք է զոհի մասնավորը, իսկ դա բախում կառաջացնի տղամարդկայինի և կանացիի միջև, հետևաբար՝ կնոջը պետք է թողնել մասնավոր հատվածում: **Կինը տարբերվում է տղամարդուց, ինչպես բույսը կենդանուց:**

Միաժամանակ կանացի ստորին աշխարհը քաղաքացիական հասարակության անհրաժեշտ տարրն է, քանի որ հնարավորություն է տալիս տղամարդկանց զարգանալու որպես ինքնագիտակից էակներ: Դրա համար ուղղակի պետք է ճնշել կանացին և պահել այն մասնավոր (ստորին) ոլորտում:

Այսպիսով, հայրիշխանության պայմաններում ձևավորվեց մշակութային այնպիսի ավանդույթ, որը նույնացնում էր համամարդկայինը և տղամարդկայինը: Տղամարդկային պատկերացումներն ու կյանքի մոդելները սկսեցին նույնացվել համամարդկային սոցիալական նորմերի հետ, իսկ կանացի որակները մարգինալացվելով համարվեցին շեղում նորմից: Արևմտյան ավանդական մշակույթի հիմնական կողմերից է գեղեցիկային անհամաչափությունը (ասիմետրիան), որի հետևանքով կանայք օտարվեցին քաղաքական գործընթացներից, հաստավեցին հայրիշխանական բարոյականությունն ու լեզուն: Հայրիշխանության հաղթանակը հանգեցրեց բնության նվաճմանը և բնապահպանական գերխնդիրների առաջացմանը, ամբողջ ազգերի ոչնչացմանը, համաշխարհային երկու պատերազմներին, կոշտ մրցակցությանը և թշնամանքին՝ մարդկությանը կանգնեցնելով ոչնչացման վտանգի առջև: Հաստատվեց մի մշակույթ, որը հավասարություն էր դնում ուժի և իրավունքի միջև: Այն ծնեց կոշտ հիերարխիա, որի գոհը դարձավ ոչ միայն կինը, այլև տղամարդը:

1.4.2. Ֆեմինիզմի առաջին ալիքը

Ֆեմինիզմը որպես ավանդական փիլիսոփայությունը վերանայող տեսություն և հասարակական շարժում: Կանանց իրավունքների քաղաքական հայեցակարգի առաջացումը:

Ի հակադրություն վերը նշված տեսությունների՝ առաջացավ սոցիալ-մշակութային զարգացման այլընտրանքային փիլիսոփայական հայեցակարգ՝ ֆեմինիզմը: Ֆեմինիզմը իր գոյությամբ պարտական է համատարած կնատյացությանը և անդրոկենտրոնությանը: Ֆեմինիզմի առաջացման համար կային պատմական, գաղափարական և սոցիալ-տնտեսական նախադրյալներ:

Պատմական նախադրյալը բուրժուական հարաբերությունների զարգացումն էր, որը նպաստավոր սոցիալ-տնտեսական պայմաններ ստեղծեց կանանց ակտիվացման համար: Չարգացող կապիտալիստական արտադրաձևը էժան աշխատուժի կարիք ուներ: Կանայք՝ որպես վարձու աշխատողներ, սկսեցին ներգրավվել արտադրության մեջ: Կինը հնարավորություն ստացավ վաճառելու իր աշխատուժը, դարձավ իր աշխատուժի սեփականատերը: Դա նաև կանանց մասնագիտական և կրթական մակարդակի բարձրացման պահանջ առաջացրեց:

Միաժամանակ առաջացել էին ֆեմինիզմի *գաղափարական նախադրյալները*՝ XVIII դարից սկիզբ առած զանազան տեսություններ, մարդու իրավունքների փիլիսոփայությունը, Ֆուկոյի և Դեբիդայի ժամանակակից հետմոդեռնիստական հայեցակարգերը:

Ֆեմինիստական առաջին գաղափարները ծագեցին Վերածննդի շրջանում, որն իր հետ բերեց մարդու պաշտամունք: Հումանիստները առաջինը ուշադրություն դարձրին հասարակության իրավագուրկ կեսի հիմնախնդիրներին և փորձեցին նրանց հանել պատմության ստվերից: Անտիկ շրջանի 104 նշանավոր կանանց առաջին ցուցակը կազմեց մեծ հումանիստ *Ջ.Բոկասչոն* («Հայտնի կանանց մասին» գրքում»): Հետագայում հայտնվեցին կին հեղինակների աշխատություններ: Այսպես, *Քրիստին Պիզայացին* («Գիրք կանանց քաղաքի մասին») քննադատեց տղամարդկանց անհարգալից վերաբերմունքը կանանց նկատմամբ՝ ներկայացնելով հայտնի կանանց ցուցակը: Ի տարբերություն Բոկասչոյի՝ նա իր ցուցակում ներկայացրեց միայն առաքինի, խելացի և հերոսուհի կանանց: Նա համարձակություն ունեցավ հենց քրիստոնեական կրոնի տեսանկյունից քննադատելու հոգևոր հայրերի

ժխտողական վերաբերմունքը կանանց նկատմամբ: *Կորնելիոս Ագրիպան* («Ճառ կանանց սեռի ազնվաբարոյության և տղամարդկանց սեռի նկատմամբ նրա գերազանցության մասին», XVII դար) տրակտատ գրեց հասարակության կողմից կնոջ հանդեպ անարդար վերաբերմունքի և նրա անձի ճնշման մասին: Ինչպես երևում է վերնագրից, այս աշխատության մեջ արդեն խոսվում էր մի սեռի գերազանցության մասին մյուսի նկատմամբ: Եվ դա բնական էր. դարեր շարունակ մոլեգնող տղամարդկային շովինիզմն ու կնատյացությունը ուշ, թե շուտ պետք է առաջացնեին հակադիր տեսություն և աշխարհայացք:

Այդ գաղափարների զարգացման համար պարարտ հող դարձավ Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունը, որն առաջ քաշեց բոլոր մարդկանց հավասարության, եղբայրության և ազատության գաղափարները: Կանայք ակտիվորեն մասնակցեցին հեղափոխական շարժումներին, սակայն «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը», որը ճանաչեց մարդու բնական իրավունքները, փաստորեն վերաբերում էր միայն տղամարդկանց: Ի պատասխան դրան՝ 1792թ. *Օլիմպիա դը Գուժը* գրեց «Կնոջ և քաղաքացու իրավունքների հռչակագիրը», որում պահանջեց կանանց տալ քաղաքացիական և ընտրական իրավունքներ, ինչպես նաև պետական պաշտոններ զբաղեցնելու հնարավորություն: Առաջացան կանանց առաջին կազմակերպություններն ու ակումբները, որոնք շուտով արգելվեցին Կոնվենտի կողմից, իսկ *Օլիմպիա դը Գուժը* մահապատժի ենթարկվեց:

Նույն 1792թ. *Մերի Ռոլասոնկրաֆոր* Անգլիայում հրատարակեց «Կանանց իրավունքների պաշտպանություն» գիրքը, որը կանանց անկատարությունը բացատրեց ոչ թե բնական արատով, այլ կրթության իրավունքի բացակայությամբ, իսկ Գերմանիայում լույս տեսավ *Թեոդորու ֆոն Գիլիելի* «Կանանց քաղաքացիական դրության բարելավման մասին» աշխատությունը:

Ֆեմինիստական գաղափարների զարգացմանը նպաստեցին նաև *Ջոն Լոքի*, *Շ.Շ.Ռուսոյի*, *Ջոն Սպյուարտ Միլի* մարդու իրավունքների տեսության հիմունքները բովանդակող փիլիսոփայական հայեցակարգերը: 1851թ. փիլիսոփա և տնտեսագետ Ջ.Ս.Միլը և նրա կինը՝ *Հարիետ Թեյլորը* հրատարակեցին «Կնոջ կախյալությունը» գիրքը, որում առաջ էին քաշում կանանց և տղամարդկանց իրավահավասարության գաղափարը: Սակայն Եվրոպայում հավասարության գաղափարը տարածվեց միայն հարկերը վճարելու պարտականության վրա: Մեծ ազդեցություն ունեցան ուտոպիստ-սո-

ցիալիստներ Շարլ Ֆուրիեի, Մեն-Սիմոնի, Ռոբերտ Օուենի հայացքները: Նշենք նաև, որ հենց Շ.Ֆուրիեն է պատկանում «ֆեմինիզմ» տերմինի և «կանանց սոցիալական դրությունը հասարակական առաջադիմության չափանիշն է» գաղափարի հղացման պատիվը:

Ֆեմինիզմը զարգացման նոր թափ ստացավ ձախ արմատական հայացքների ազդեցության տակ: Մշակութային իդեալ էր դառնում իզականի և արականի վերամիավորումը, սոցիալական նորմ՝ հասարակությունում տղամարդկանց ու կանանց իրավահավասարությունը: Այդ հայացքները նոր զարգացում ստացան մարքսիստական փիլիսոփայությունում: Հաշվի առնելով, որ կնոջը միշտ նույնացրել են նյութականի հետ, իսկ տղամարդուն՝ հոգևորի, կարելի է եզրակացնել, որ մարքսիզմը, որը առաջնային էր համարում նյութը, պետք է հատուկ տեղ հատկացներ կնոջը: Իրականում դա այդպես չէր: *Կ.Մարքսը* իր փիլիսոփայական հայեցակարգում գենդերային հիմնախնդիրները առանձին չի քննարկել: Նա կանանց ազատագրման կողմնակից էր, սակայն այդ հարցին մեծ նշանակություն չէր տալիս: Կանանց նկատմամբ խտրականությունը նա համարում էր ավելի համընդհանուր՝ դասակարգային շերտադասության (ստրատիֆիկացիայի) արտահայտություն: Դրան առավել մեծ նշանակություն տվեց *Ֆ.Էնգելսն* իր «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագման մասին» աշխատության մեջ: Ըստ նրա, կինը ստորադասված է եղել, որովհետև տղամարդու ձեռքում է եղել սեփականությունը: Հետևաբար կինը կազատագրվի միայն սոցիալիստական հեղափոխության շնորհիվ, երբ կվերանա մասնավոր սեփականությունը: Նա, հենվելով ազգագրագետներ Մորգանի և Բաքովենի աշխատությունների վրա, որոնք ուսումնասիրում էին նախնադարյան հասարակությունը, նշում էր, որ սեռերի միջև աշխատանքի բաժանման հետևանքով և մասնավոր սեփականության ի հայտ գալու պատճառով առաջանում է հայր-իշխանական մոնոգամ ընտանիքը, որի հետևանքն է «կանանց սեռի համաշխարհային պատմական պարտությունը»: Մարքսիստների հետազոտություններում երևաց, որ իշխանության և մասնավոր սեփականության հարաբերություններն ունեն ոչ միայն դասակարգային, այլև գենդերային բնույթ: Սակայն մարքսիստները չխորացրին իրենց հետազոտություններն այդ ուղղությամբ:

XIX դարի կեսերը Եվրոպայում բուրժուական հեղափոխությունների շրջան էր, որն ակտիվացրեց կանանց պայքարն իրենց իրավունքների համար, թեպետ հիմնականում առաջ էին քաշվում միայն աշխատանքի իրա-

Գենդեր և լրագրություն

վունքի և տղամարդկանց հետ հավասար վարձատրության հարցերը: XIX դարի վերջում առաջացավ *սուֆրաժիստուիզմի* շարժումը, որը պայքարում էր կանանց ընտրական իրավունքների համար: Այդ շարժումը հատկապես սուր բնույթ կրեց Մեծ Բրիտանիայում:

Հասարակությունը սկզբնական շրջանում պասիվ կամ բացասաբար վերաբերվեց այդ գաղափարին: Դա սուֆրաժիստուիզմներին դրդեց ծայրահեղ միջոցների: Սակայն, ի վերջո, երկարամյա պայքարը տվեց իր արդյունքը. XX դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում Եվրոպայի ու Հյուսիսային Ամերիկայի շատ երկրներում կանայք ընտրական իրավունքներ ստացան:

1.4.3. Գենդերային դերերի մասին պատկերացումների փոփոխությունները սեռի հոգեբանական և սոցիոլոգիական տեսությունների ազդեցությամբ

Ձ.Ֆրոյդի հոգեվերլուծությունը և դրա ազդեցությունը հոգեբանության գիտության զարգացման վրա:

Գ. Յունգ: Կարեն Հորնի: Մարգարետ Միդ և նրա «Խառնվածքն ընդդեմ սեռի» բացահայտումը, Նենսի Չոդորոու:

Սեռադերային հիմնահիմնդիրները սոցիոլոգիական տեսություններում: Էմիլ Դյուրքեյմ: Թ. Փարսոնս: ՈՒ. Գուդ: Ա. Նայ: Վ. Հոֆման: Կենսաբանական դերերմիևիզմ: Թայգեր, Ֆոքս, Վիլսոն, Դևիդ Բերեշ: Վ. Գյոդակյան: Հոգեվերլուծական ուղղություն: Էրիկ Էրիկսոն: Կուլերգ:

Ֆեմինիզմի առաջին ալիքի հետևանքով կանայք շատ երկրներում քաղաքական իրավունքներ ստացան, սակայն դա չի նշանակում, որ կնոջ նկատմամբ վերաբերմունքը տեսական առումով խորը փոփոխություններ կրեց: Գիտական տարբեր հայեցակարգերում շարունակում էր իշխել կանացիի և առնականի հակադրության գաղափարը:

Կանանց և տղամարդկանց սեքսուալության վերաբերյալ պատկերացումների զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցավ *Ջիզմունդ Ֆրոյդի* տեսությունը: Այդ ազդեցությունը կրեց ոչ միայն հոգեբանությունը, այլև XX դարի ամբողջ սոցիալական և հումանիտար գիտությունը: Ֆրոյդի կարծիքով՝ սեքսուալությունը ծնվում է երեխայի հետ: Հասուն մարդու հետագա

կյանքը կապված է նրա մանկության շրջանում վերապրած հոգեւեքտուալ փուլերի հետ: Եվ, եթե տղան կամ աղջիկն իրենց սեքսուալ հասունացումը նորմալ են ապրում, տղան նորմալ առնական տղամարդ է դառնում, աղջիկը՝ կանացի կին:

Ըստ Ֆրոյդի՝ որոշակի տարիքում որդին բնագործն խանդում է հորը մոր հանդեպ: Բայց հետագայում պարզելով, որ մայրը չունի առնանդամ, հետևություն է անում, որ նա պատժված է: Նրա մոտ առաջանում է ներքինացման վախ, որի հետևանքով նրա սերն անցնում է հորը: Հայրը տղայի համար հեղինակություն և օրինակ է դառնում, հանդես է գալիս որպես հասարակական նորմերի կրող: Ես-ը (էգոն), տղամարդու սեքսուալությունը սուբլիմացնելով ստեղծագործության մեջ, դառնում է տղամարդու անհատականության ամբողջականացնող (ինտեգրացնող) մասը:

Նապոլեոնից հետո Ֆրոյդը հայտարարեց. «Անատոմիան ճակատագիր է»: Նա փորձեց բացատրել նաև աղջիկ երեխայի հասունացման մեխանիզմը: Ըստ նրա՝ աղջիկը պատժված է համարում իրեն և մորը: Նա սկսում է ատել մորը և սիրում է տղամարդկանց: Ամբողջ կյանքում նա նախանձում է տղամարդկանց: Կնոջ հոգեկանը, ըստ Ֆրոյդի, ունի զարգացման երեք տարբերակ.

1. սեքսուալ պոռնկումների ճնշում, որի հետևանքը ներզնգներն են,
2. տղամարդկային վարքի յուրացում (ստեղծագործության ձգտում, ակտիվություն),
3. նորմալ կանացիություն, երբ կինը փորձում է ձեռք բերել այն, ինչ չունի, այդպիսով ցանկանում է ամուսնանալ և տղա ծնել: Նորմալ կանացիությունը, ըստ Ֆրոյդի, պասիվությունն է, արդարության զգացումի բացակայությունը, ստեղծագործելու անկարողությունը, թույլ սոցիալական հետաքրքրությունները: Կնոջ էգոն չի կարող ունենալ մույն ուժը, ինչ տղամարդունը: Կինը բարոյապես լիարժեք չէ, քանի որ առնանդամ չունի:

Չ.Ֆրոյդի հոգեվերլուծությունը խոր հետք թողեց ամբողջ XX դարի հոգեբանական գիտության վրա: Մյուս բոլոր տեսությունները կա՛մ հաստատում էին ֆրոյդյան տեսությունը, կա՛մ ժխտում այն⁸:

Մարդու կյանքում սեքսուալության դերի գերազանահատումը ժխտեց

8 Ուշագրավ է, որ 1932 թ. 70-ամյա Ֆրոյդը «Կանացիություն» գրքում խոստովանեց, որ իրեն չհաջողվեց բացահայտել կանացիության էությունը, ինքը կանանց մասին գրել է ոչ լրիվ, մասնակի և ոչ բարյացակամ:

Գեները և լրագրություն

Գուսարավ Յունգր: Նա գտնում էր, որ մարդու կյանքը չի կարելի կապել միայն մանկության շրջանում սեռական հասունացման փուլերի վերապրման հետ: Ըստ նրա՝ մարդու հոգեբանության վրա ազդում է ոչ միայն ընտանիքը, այլև հասարակությունը, մշակույթը, ամբողջ մարդկությունը: Յուրաքանչյուր անհատի հոգեկանում կա չգիտակցվող մաս՝ **սուվեր:** Ընդ որում, կնոջ սուվերի մեջ կան դուրս մղված տղամարդկային գծեր, իսկ տղամարդու սուվերի՝ կանացի: Դա համապատասխանում է **Անիմա** և **Անիմուս** հասկացություններին: Ըստ Յունգի, Անիման (լատիներեն anima՝ հոգի) տղամարդու հոգեկանի մեջ փոխարինում է մոր նախատիպը: Նա տղամարդուն բնութագրում է որպես զսպված, բանական էակ, որից դուրս է մղված հուզականը (կանացին): Անիմայի հետ են կապվում ամեն կարգի կրոնական զգացումները: Դա տղամարդու դուրս մղված հուզաշխարհն է՝ «փոքրիկ թուլություններից» և «քնքուշ» հարաբերություններից մինչև ցասում, կատաղություն, աֆեկտներ, որոնք կարող են հասցնել նույնիսկ ինքնասպանության: Միաժամանակ Անիման «իդեալական» կնոջ տիպ է: Յունգը տղամարդու հոգեկանի չգիտակցվող մասի կանացիության պատճառներից է համարում նաև այն, որ կինը տղամարդու ամենամոտ «օտարն» է դառնում՝ փոխարինելով ծնողներին: Կինը կարող է նկատել այն, ինչ տղամարդու համար անհասանելի է: Ահա ինչու. «Տղամարդու ամբողջ էությունը ենթադրում է կնոջը՝ ինչպես մարմնով, այնպես էլ հոգով»: Նա նշում է, որ կինը տղամարդու համար անհասանելի տեղեկատվության աղբյուր է:

Նույնպիսի չգիտակցվող մաս կա և կնոջ հոգեկանում: Դա Անիմուսն է, որը Անիմայի հակադրությունն է: Յունգը նշում է, որ շատ դժվար է պարզել, թե ինչպես է տղամարդկայինը ներկայացված կանանց հոգեկանում: Եվ նա նկարագրում է Անիմուսը՝ որպես Անիմայի գծերի հակադրություն: Այսպես, եթե Անիման առաջացնում է ոչ բանական տրամադրություններ, ապա Անիմուսը՝ ոչ բանական դատողություններ և կարծիքներ: Կնոջ համար դրանք ավարտուն են, անվիճելի, կասկածից դուրս: Կինը, ըստ Յունգի, ընդունակ չէ լուրջ բանավեճ վարելու, նա կարող է ուշադրություն դարձնել երկրորդական հանգամանքների վրա և խճճել ամեն ինչ: Եթե Անիման միօրինակ է, և դա տղամարդուն ստիպում է փոխել կանանց, ապա Անիմուսը բազմաձև է, որի պատճառով կինը կողմնորոշված է դեպի մեկ և միակ տղամարդը: Անիմուս-Լոգոսով կլանված կինը կորցնում է իր կանացիությունը, իսկ Անիմա-Էրոսով տարված տղամարդը՝ առնականությունը: Յունգն իր ուշադրության կենտրոնում էր պահում սեռերի հոգեբանական

տարբերությունները, սակայն այդպես էլ չհեռացավ դրանց ավանդական բնութագրերից:

Մեռային հոգեբանությանն անդրադարձել է նաև *Կարեն Հորնին*: Նա իր առաջին՝ «Կանանց ներքինացման բարդույթի ծագման մասին» աշխատության մեջ փորձեց այլ լույսի ներքո ներկայացնել կնոջ հոգեբանությունը: Հորնին ջանում է ապացուցել, որ հոգեվերլուծությունն իրականում հետազոտել է միայն տղամարդու գիտակցությունը՝ համեմատելով տղայի պատկերացումները գիտական հոգեվերլուծության հետ: Նա ցույց տվեց, որ կնոջ զարգացման վրա բացասաբար է ազդում նրա նկատմամբ կիրառվող խտրականությունը: «Հեռացում կանացիությունից» հողվածում Հորնին մայրության ձգտումը բացատրեց ոչ միայն Էդիպյան բարդույթով, այլև սկզբնական բնագրի առկայությամբ: Կանանց ֆրիգիդությունը («Արգելված կանացիություն» հողվածում) նա համարեց կնոջ տղամարդ լինելու ցանկությամբ, կանացիությունից հրաժարումով, սեքսուալ անբավարարվածությունը՝ մշակութային գործոններով: Հորնին ընդգծում է այն փաստը, որ աղջիկը մեծանում է՝ ձեռք բերելով տղամարդու հոգևոր և մարդկային առումով ավելի «արժեքավոր» լինելու գիտակցությունը:

Հորնին վերլուծեց նաև երկու սեռերի էրոտիկության առանձնահատկությունները: Ըստ նրա՝ տղամարդու սերը, որպես կանոն, տրոհվում է «սեքսի» և «ռոմանտիկայի»: Կնոջ մեջ այդ երկուսը միաձուլված են, ուստի նա չի կարողանում ընդունել տղամարդկային կողմնորոշումներից և ոչ մեկը: Կնոջ սեքսուալության վրա ազդում են ավանդույթներն ու դաստիարակությունը, որոնք գործում են ընդդեմ կնոջ: Մինչդեռ տղամարդն իր գերիշխող դիրքի շնորհիվ կարող է սեր և ճանաչում ստանալ նաև սեքսուալ ոլորտից դուրս:

«Միտր վերագնահատում» հողվածում Հորնին ավելի մանրամասն անդրադարձավ կնոջ հոգեբանությանը: Հասարակությունը մանկուց կնոջ վզին է փաթաթում նահապետական կատարելատիպը՝ սիրել և սիրված լինել տղամարդու կողմից, սպասարկել նրան, հիանալ նրանով: Դա վնասում է կանանց ինքնագնահատմանը և հետագայում նրա փառասիրության հետ բախվելով՝ կաթվածահար է անում այն: Այստեղից էլ՝ կյանքից անբավարարվածությունը և բարդույթները: Դուրս մղվելով գործունեության գլխավոր ասպարեզներից՝ կինը երջանկություն է փնտրում սիրո մեջ, «մինչդեռ մնալով այնպիսին, ինչպիսին որ կա, նա ընդունակ չէ սիրո» և ոչ մի բանի, քանի որ չի վստահում իր ընդունակություններից: Հորնին ժխտեց կնոջ կենսաբանական գործառույթների և մագոխիզմի փոխկա-

Գենդեր և լրագրություն

պակցվածությունը՝ ընդգծելով, որ մագոխիզմի առաջացման պատճառները անատոմիական-հոգեբանական են: Նա, օգտագործելով հոգեվերլուծության ապարատը, կնոջ հոգեկանը վերլուծեց դրականորեն: Նա նշեց, որ հոգեվերլուծությունը գերազնահատում է կնոջ նախանձը առնանդամի նկատմամբ, բայց թերագնահատում տղամարդու նախանձը մայրության նկատմամբ: Մինչդեռ հենց այդ նախանձն է, որ տղամարդուն դրդում է ստեղծել մշակութային արժեքներ, քանի որ նրա սուբլիմացիայի հնարավորությունն ավելի մեծ է: Հորնին նպաստեց կանանց մասին պատկերացումների ընդլայնմանը:

Մարգարեպ Միդի դերը շատ բարձր գնահատեց ազատական ֆեմինիզմի հիմնադիրներից մեկը՝ *Բեյրի Ֆրիդանը* իր «Կանացիության առեղծվածը» գրքում: Նա նշեց, որ Միդը՝ որպես գիտնական և կին, հարված հասցրեց կանանց նկատմամբ տարածված մոլորություններին: Մ.Միդի հետազոտություններն օգնեցին հասկանալ, որ չկան սեռերի բնածին կամ ի վերուստ տրված տարբերություններ, դրանք իրականում սոցիալ-մշակութային են: 1935 թ. «Սեռն ու խառնվածքը երեք պրիմիտիվ հասարակություններում» գրքում անտրոպոլոգ *Մարգարեպ Միդը* նկարագրեց Նոր Գվինեայի երեք ցեղերի հասարակության կազմակերպման գենդերային մոդելները.

1. Արապեշների ցեղը, որի անդամները ագրեսիվ չեն, տղամարդիկ և կանայք աշխատանքները միասին են կատարում: Գենդերային դերերը հստակ բաժանված չեն: Տղամարդիկ, մեզանում տարածված կարծրատիպերի համաձայն, «կանացի» են:

2. Մունդուգունուր ցեղում և՛ կանայք, և՛ տղամարդիկ ագրեսիվ են:

3. Տչամբուլի ցեղում տղամարդիկ ենթարկվում են կանանց:

«Տղամարդկայինը և կանացին» գրքում նա ապացուցեց, որ բոլոր մշակույթներում սեռերի միակ տարբերությունը վերարտադրողական գործառույթն է, մյուս բոլոր հարցերում բոլորն էլ մարդիկ են՝ անհատական տարբերություններով և տարբեր խառնվածքներով: Նա, ելնելով այն իրողությունից, որ տարբեր ժողովուրդների մեջ գենդերային դերերը տարբեր են, կարողացավ ապացուցել, որ դրանք սոցիալական կառույց են և արարվում են սոցիալական պրակտիկայի ընթացքում՝ գենդերային սոցիալականացման միջոցով:

Այնուհետև կանանց առկա վիճակի պատճառներն ուսումնասիրեցին ֆեմինիստական կողմնորոշում ունեցող հետազոտողները: *Նենսի Չոդդոուն* իր «Մայրության վերարտադրություն, հոգեվերլուծություն և գենդերի սոցիոլո-

զիա» գրքում վերանայեց Ֆրոյդի ուսմունքը: Նա ուսումնասիրեց նաև ներընտանեկան դաստիարակության ազդեցությունը սեռերի վրա:

Երեխաների հիմնական դաստիարակը մայրն է, բայց աղջիկներն ու տղաները տարբեր ձևով են վերապրում բաժանման/տարբերակման գործընթացը: Տղաներն ավելի շուտ են վերապրում Էդիպյան փուլը, ավելի շուտ են հեռանում մորից և նույնանում հոր հետ: Եվ հնարավոր է, որ հենց այդ պատճառով էլ տղամարդիկ զգայունակության անբավարարություն են զգում, դա նրանց դրդում է գայրույթի, բռնկման, անհանդուրժողության: Աղջիկների նախաէդիպյան փուլն ավելի երկար է տևում, նրանք ավելի երկար են պահպանում հուզական կապը մոր հետ և նույնանում նրա հետ: ՌԻստի նրանց հուզականությունն ավելի զարգացած է: Դրա շնորհիվ է նաև, որ աղջիկների մեջ զարգանում է մայրության ցանկությունը և երեխաներին դաստիարակելու կարողությունը: Ի տարբերություն Հորնիի՝ նա գտնում էր, որ մայրության ցանկությունը ոչ թե բնագոյային է, այլ սոցիալականացման, հոգեբանական հատուկ գործընթացի արդյունք: Նա առաջադրեց երեխաների դաստիարակության գործում տղամարդկանց ու կանանց ավելի համաչափ մասնակցության հարցը: Դա կհավասարեցներ տղաների և աղջիկների զարգացումը, կընդլայներ նրանց ինքնադրսևորման հնարավորությունները և միմյանց ավելի հասկանալի կդարձներ:

Հոգեբանական հետազոտությունները շարունակվում են, և ամեն մի նոր ուսումնասիրությունն օգնում է ներթափանցել հոգեկանի խորքերը, հասկանալ հոգեկանում սեռային տարբերությունների ձեռքբերովի բնույթը: Փոխվում են հասարակությունը, պետության քաղաքականությունը, և փոփոխություն է առաջանում կարծրատիպերում: Օրինակ՝ այն պետություններում, որտեղ փորձ է արվում հաստատել հայրության ինստիտուտը, ավելի հաճախ են երևում երեխաների հանդեպ «մայրություն» անող հայրերը: ՉԼՄ-ներում պատկերվում է, օրինակ, մանկասայլակով պարապմունքի եկած ասպիրանտը կամ բիզնեսով զբաղվող կինը: Այդ ամենը նպաստում է կնոջ և տղամարդու իդեալների փոփոխմանը, տարբերությունների մեղմացմանը:

Սեռադերային բաժանման ուղղությամբ հետազոտություններ են արել նաև սոցիոլոգները: *Էմիլ Դյուրքհեյմը* դեռևս XIX դարի վերջին իր հետազոտություններում («Հասարակական աշխատանքի բաժանման մասին», «Ինքնասպանություն») անդրադարձել է սեռերի հիմնախնդիրներին և սեռային դերերին: Նա առաջինն է նկատել, որ չամուսնացած կամ բաժան-

ված տղամարդկանց շրջանում ինքնասպանությունը շատ ավելի տարածված է, քան նույն կարգավիճակի կանանց շրջանում:

Կանանց և տղամարդկանց դերերի կառուցվածքի մասին առաջին հիմնարար տեսությունը մշակեց Թ. Փարսոնսը: Նա հասարակությունը համարում է կայունությանը և զարգացմանը միտված համակարգ, իսկ բախումներն ու հակասությունները՝ հիվանդություն: Դրանք առաջացնող պատճառները նա անվանում է դիսֆունկցիոնալ երևույթներ: Ըստ նրա՝ սոցիոլոգիան կոչված է թերապիայի դեր կատարել՝ գտնելով հասարակությունը կայունացնող սոցիալական մեխանիզմները:

Ուսումնասիրելով XIX դարի երկրորդ կեսի ամերիկյան հասարակությունը՝ նա առանձնացնում է հետևյալ փոփոխությունները. նուկլեար ընտանիքի մեկուսացումը ազգակցական համակարգից և որոշ գործառույթների անցումն այլ սոցիալական ինստիտուտների: Նա ընտանիքի հիմնարար և չվերացող գործառույթ է համարում երեխաների սոցիալականացումն ու ընտանիքի հասուն անդամների անձի կայունացումը: Ըստ նրա՝ ցանկացած սոցիալական համակարգի կայունության ապահովման համար կա հատուկ մեխանիզմ, որը նախատեսում է դերերի տարաբաժանում ինստրումենտալ (գործիքային) և էքսպրեսիվ (արտահայտչական) գործառույթների: Ինստրումենտալն ապահովում է համակարգի (այս դեպքում՝ ընտանիքի) հարաբերություններն արտաքին աշխարհի հետ, ապահովում է գոյության միջոցները: Էքսպրեսիվն ապահովում է ընտանիքի անդամների միասնությունը, որոշում նրանց հարաբերությունների մոդելը, կարգավորում լարվածության մակարդակը: Առաջին գործառույթի համար պահանջվում է իշխանատենչություն և դաժանություն, երկրորդի համար՝ մեղմություն, կոնֆլիկտը մարելու ունակություն: Մի մարդը չի կարող կատարել երկու գործառույթն էլ, հետևաբար դերերը բաժանվում են, և ինստրումենտալ դերը կատարում է տղամարդը, իսկ էքսպրեսիվը՝ կինը:

Փարսոնսը դա բացատրում էր կնոջ կենսաբանական առանձնահատկությամբ, մայր դառնալու կարողությամբ: Տղամարդը, հեռացված կենսաբանական գործառույթներից, մասնագիտանում է ինստրումենտալ գործառույթներում: Նրա հիմնական գործառույթը ընտանիք պահելն է: Իսկական տղամարդը պետք է հեղինակավոր աշխատանք ունենա և փող աշխատի: Դրանից է կախված ոչ միայն ընտանիքի բարեկեցությունը, այլև սոցիալական կարգավիճակը, հեղինակությունը, ապրելու ոճը: Կնոջ դերն է կին լինել ամուսնու համար, մայր՝ երեխաների համար և տնային տնտեսություն վարել:

Գերերի բաժանումը կանխում է մրցակցությունն ամուսինների միջև իշխանության, հեղինակության և կարգավիճակի համար: Ամուսնացած կնոջ աշխատանքը չի խաթարում ընտանիքի կայունությունը միայն այն դեպքում, երբ դա «կարիերա» չէ, այլ ուղղակի «զբաղվածություն», եթե ամուսնուց քիչ է փող ստանում, չի մրցում ամուսնու հետ, չի սասանում նրա ինքնահարգման տնտեսական հիմքերը: Բայց նույնիսկ այդ դեպքում ընտանիքի կայունությունը վտանգված է: Փարսոնը Ֆրոյդի տեսության մեջ (արյունապղծության արգելք և Էդիպի բարդույթ) տեսնում է տղա երեխաների սոցիալականացման ունիվերսալ մեխանիզմ: Նա գտնում է, որ դերերի բաժանումը նույն նպատակին է ծառայում: Մոր կապվածությունը որդու հետ խոչընդոտ է նրա առնականացման համար, մինչդեռ հոր հեղինակության ճանաչման միջոցով որդին յուրացնում է սոցիալական նորմերը և կատարում իր ինստրումենտալ գործառույթները: Հետևաբար մայրը որդու համար պետք է ընդամենը դայակի դեր կատարի:

Փարսոնսի կառուցվածքագործառութային վերլուծության տեսությունը տիրապետող էր ԱՄՆ-ում մինչև XX դարի 70-ական թթ.: Այլ հետազոտությունները, օրինակ՝ *Ուիլյամ Գուդի* «Համաշխարհային հեղափոխությունը և ընտանիքի մոդելները», որում հակառակ տեսակետն էր հայտնում, այն ժամանակ ճանաչում չգտան: Ըստ Գուդի՝ կնոջ հասարակական աշխատանքը չի խաթարում ընտանիքի ամրությունը, այլ կնոջը տնտեսական անկախություն է տալիս, բարձրացնում նրա հեղինակությունը ընտանիքում: Նա չի մրցում ամուսնու հետ, որովհետև ընտանիքում նրանց գործառույթները չեն փոխվում:

Ա.Նայր և *Վ.Հոֆմանը* «Աշխատող մայրը Ամերիկայում» գրքում նշում էին, որ ընդհակառակը՝ կնոջ հասարակական աշխատանքն ամրապնդում է ընտանիքը, իսկ Առոնոֆը և Քրեյնոն իրենց ուսումնասիրությունների արդյունքում (1975թ.) եկան այն եզրակացության, որ սեռերի միջև դերերի ունիվերսալ և հստակ բաժանում գոյություն չունի:

Սոցիոլոգիայում ստեղծվեց հատուկ ուղղություն՝ *կենսաբանական (բիոլոգոցիստրական)*, որի հետևորդները՝ *Թայգերը*, *Ֆոքսը*, *Վիլսոնը*, *Դևիդ Բերեշը* ամեն ինչ դրեցին կենսաբանական հիմքի վրա՝ բացառելով մշակույթի ազդեցությունը մարդու վրա: Քանի որ որձն ամենուրեք իշխում է, տղամարդու իշխելն օրինաչափ է: Բանը հասավ նրան, որ Բերեշը բռնաբարությունը բացատրեց տղամարդու բնական ագրեսիվությամբ՝ մոռանալով, որ կենդանական աշխարհում այդպիսի երևույթ չկա:

1980-ական թթ. ԽՍՀՄ-ում հետաքրքրություն առաջացրեց *Վ.Գյոդակյա-*

Գենդեր և լրագրություն

նի տեսությունը (թեպետ այն տարածվում էր գաղտնի): Դրա համաձայն՝ կինը կուտակում, պահպանում և սերունդներին է փոխանցում տեղեկատվությունը, իսկ տղամարդը որոնում և գտնում է նորը: Տղամարդը ստեղծագործող է, կինը՝ պահպանողական: Կինը չպետք է ձգտի փոփոխել իր բնական էությունը:

Մյուս ուղղությունը հոգեբանականն ու հոգեվերլուծականն էր, որի համաձայն՝ հոգեբանական հատկություններն ի ծնե որոշում են սեռի դերը: *Էրիկ Էրիկսոնը*, հետևելով աղջիկների և տղաների խաղին, նկատել էր, որ աղջիկները տնակները կառուցում են ներսից (կահավորում, դասավորում), տղաները կառուցում են աշտարակներ և ձևավորում դրսից: Սրանից նա հետևություն է անում, որ կինը միտված է ներս, տղամարդը՝ դուրս: Տղամարդը ռազմատենչ է, կինը՝ խաղաղասեր, հետևաբար կինը փրկիչ է: Ինչպես տեսնում ենք, այս տեսության մեջ նույնպես որոշիչը կենսաբանական սեռն է:

Կոլբերգը զարգացրեց այն տեսակետը, ըստ որի՝ դերային տարբերությունները բնածին չեն, այլ առաջանում են ճանաչողության ընթացքում: Սեռադերային տարբերությունների յուրացումը նա համարում էր հենց աշխարհին տիրելու գործընթաց: Տղամարդու դերը նույնականացվում է իշխանության և հեղինակության հետ, կնոջը՝ հաճելի արտաքինի ու մեղմության հետ:

Այսպիսով, սեռի ավանդական սոցիոլոգիան տղամարդու և կնոջ սոցիալական դերերի տարբերությունը բացատրում էր կենսաբանական տարբերություններով:

1.4.4. Ֆեմինիզմի երկրորդ ալիքը: Ֆեմինիզմի հարացույցի փոխարինումը գենդերի հարացույցով

Անցում հավասար իրավունքներից հավասար հնարավորությունների: Ֆեմինիզմի երկրորդ ալիքը և ուղղությունները. ազգայական, արմատական, սոցիալիստական, հոգեվերլուծական, հեղինակախոսական: Ֆեմինիզմի հարացույցի փոխարինումը գենդերի հարացույցով:

Ֆեմինիզմի առաջին ալիքի շնորհիվ դեռևս XIX դարի վերջին և XX դարի սկզբին շատ երկրներում (նույնիսկ այն երկրներում, որտեղ ֆեմինիստա-

կան շարժում չձավալվեց) կանայք քաղաքական իրավունքներ ստացան: Այսպես, կանայք ընտրական իրավունքներ ստացան⁹

- գ 1893թ.՝ Նոր Ձելանդիայում,
- գ 1902թ.՝ Ավստրալիայում,
- գ 1906թ.՝ Ֆինլանդիայում,
- գ 1913թ.՝ Նորվեգիայում,
- գ 1915թ.՝ Դանիայում, Իսլանդիայում,
- գ 1917թ.՝ Ռուսաստանում,
- գ 1918թ.՝ Կանադայում,
- գ 1919թ.՝ Հայաստանում, Ավստրիայում, Գերմանիայում, Նիդեռլանդներում, Լեհաստանում, Շվեդիայում, Լյուքսեմբուրգում, Չեխոսլովակիայում,
- գ 1920թ.՝ ԱՄՆ-ում,
- գ 1922թ.՝ Իռլանդիայում,
- գ 1928թ.՝ Մեծ Բրիտանիայում¹⁰,
- գ 1944թ.՝ Ֆրանսիայում,
- գ 1945թ.՝ Իտալիայում,
- գ 1948թ.՝ Բելգիայում և այլն:

Թվում էր՝ կանանց հարցը ստացավ իր արդարացի լուծումը, սակայն որոշ ժամանակ անց պարզվեց, որ խտրականությունը կանանց հանդեպ չի վերացել: Կանայք, ստանալով հավասար իրավունքներ, քաղաքական ոլորտում այդպես էլ հավասար հնարավորություններ չունեցան: Դրա հետևանքով XX դարի 60-ական թթ. բարձրացավ ֆեմինիզմի նոր ալիք: 1960-ական թվականներին ձևավորվեցին ֆեմինիզմի ազատական, արմատական, սոցիալիստական, հոգեվերլուծական, հետմոդեռնիստական և այլ ուղղություններ:

Ազատական ֆեմինիզմի վերածնունդը սկսվեց *Բեթի Ֆրիդանի* «Կանացիության առեղծվածը» գրքով (1963 թ.): Ազատական ֆեմինիզմը հնարավոր է համարում գենդերային հավասարության հասնել բարեփոխումների միջոցով: Սկզբնական փուլում շեշտելով սեռերի՝ որպես ռացիոնալ էակների, նույնությունը և հավասարությունը՝ ազատական ֆեմինիզմը դնում էր

9 Гендерная реконструкция политических систем, Санкт-Петербург, 2004г., стр. 82-83.

10 Կանայք Մեծ Բրիտանիայում ընտրական իրավունք էին ստացել 1919 թ., սակայն գոյություն ունեին սեռի սկզբունքով տարիքային խտրականություն՝ տղամարդիկ այդ իրավունքը ստանում էին 21 տարեկանից, կանայք՝ 30: 1928 թ. խտրականությունը վերացվեց:

իզական կրթության, երեխաների դաստիարակության գործում պետական աջակցության, իշխանական տարբեր մակարդակներում կանանց ընտրվելու հարցերը: Այսօր դրվում է հավասար հնարավորությունների, այսինքն՝ տղամարդկանց և կանանց համար հավասար պայմանների հարցը: Ազատական ֆեմինիզմը հասարակության փոփոխման հարց չի առաջադրում, այլ ցանկանում է կանանց առաջ մղել հասարակական համակարգերում: Ազատական ֆեմինիզմը մեծ արդյունքի չհասավ, բայց հենց սա էր, որ նշանավորեց ֆեմինիզմի առաջին ալիքը:

Արմատական ֆեմինիզմը փորձում է բացահայտել կանանց ճնշման խորքային պատճառները: Արմատական ֆեմինիզմի հիմքը դրեց *Միսոնս դը Բովուարը* իր «Երկրորդ սեռ» գրքով (1949 թ.): Ըստ նրա՝ հասարակությունն արականն ընդունում է որպես դրական մշակույթ, իզականը՝ ուրիշ, բացասական: Իզականը համարվում է շեղում և հետևաբար չպետք է հավասար իրավունքներ ունենա նորմի՝ արականի հետ: Այդ մշակութային նորմը կանայք յուրացնում են սոցիալականացման միջոցով: Մինչդեռ կին լինելը լավ է, և անհրաժեշտ է, որ կանայք հասկանան դա:

Սոցիալիստական ֆեմինիզմը սոցիալիստական և ֆեմինիստական աշխարհայացքների սինթեզ է: Այն առաջացել է XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Հիմնադիրներն էին *Ա Կոլոնյայը*, *Կլարա Յեյկինը* և *Ալգուսյր Բեքելը*: Սոցիալիստական ֆեմինիզմը գենդերային հավասարության հիմնախնդրի լուծումը տեսնում էր մասնավոր սեփականության վերացման և սոցիալիստական հեղափոխության իրականացման մեջ: Ֆեմինիզմի այս ուղղությունը ճգնաժամ ապրեց XX դարի 90-ական թթ., երբ պարզվեց, որ սոցիալիստական երկրներում նույնպես պահպանվել է գենդերային խտրականությունը:

Հոգեվերլուծական ֆեմինիզմը քննադատեց Ֆրոյդին կենսաբանությունը շեշտադրելու համար, որի միջոցով արդարացվում է կանանց պասիվությունը և կանանց ճնշումը: Միաժամանակ այդ ուղղությունը հոգեվերլուծությունը օգտագործեց հոգեկանի խորքերն ուսումնասիրելու և հասկանալու համար: Կանայք կազատվեն իրենց ճնշող պատճառներից, եթե հասկանան՝ ինչ է կատարվում իրենց ենթագիտակցության մեջ: Ֆրոյդի տեսությունը նրանք վերափոխեցին՝ հայրիշխանությունն ուսումնասիրելու համար:

Հեյմոդեռնիստական ֆեմինիզմի համաձայն՝ հնարավոր չէ մեկ տեսությամբ արտահայտել բոլոր կանանց պահանջները: Հետմոդեռնիզմը հերքում է ճշմարտության և իրականության ավանդական դրույթները: Հետմոդեռնիստական ֆեմինիզմը, ընդունելով հանդերձ կնոջ «ուրիշ» լինելը, գտնում է, որ դավատ չէ և ունի իր առավելությունները: Դա կանանց հնարավորություն է տալիս

քննադատելու այն դրույթները, արժեքները և գործունեությունը, որոնք պարտադրում է հայրիշխանությունը: Կնոջ ճնշումը, նվաստացումը կենցաղ է, մտածողություն և խոսք: Լինել «ուրիշ», նշանակում է լինել բացառված, ոչ արտոնյալ, ժխտված, անցանկալի, մարզինալ: Հետմոդեռնիստներն անօգուտ են համարում հետևյալ հակադրությունները. միտք - զգացմունք, գեղեցկություն - տգեղություն, ես - ուրիշ: Քննադատում են արվեստի, գիտության, հոգեբանության, կենսաբանության դրույթները: Հետմոդեռնիստական ֆեմինիզմն առաջարկեց կանանց ազատել մտքի ճնշումից:

Այդ շրջանի ֆեմինիզմի փիլիսոփայությունը հեղաշրջում առաջացրեց հասարակական մտածողության մեջ՝ հիմնավորելով բոլորի համար իրավահավասարության անհրաժեշտությունը, նպաստեց հասարակական կյանքում թափանցիկ, ոչ աստիճանակարգված, ժողովրդավարական հասարակության իդեալի ստեղծմանը:

Արևմուտքում դեռևս չկա ֆեմինիզմի բոլոր ուղղությունները միավորող գաղափարական դրույթ, սակայն գրեթե բոլոր ուղղություններում կնոջ ենթարկումը տղամարդուն բացատրվում է սոցիալ-տնտեսական և ոչ թե կենսաբանական պատճառներով: Այսօր էլ ֆեմինիզմը հզոր սոցիալական շարժում է և հատկապես մեծ հաջողությունների է հասել մշակույթի ասպարեզում: Ֆեմինիզմի տեսաբանները ցույց տվեցին, որ արևմտյան ավանդական տեսություններն ամենևին էլ օբյեկտիվ և չեզոք չեն ու հիմնականում արտահայտում են հայրիշխանական կառույցի շահերը, ուղղված են status quo-ի պահպանմանը: Ֆեմինիզմն անցում կատարեց «կանանց վերաբերյալ հետազոտություններից», որոնք գոյություն են ունեցել բոլոր ժամանակներում, բոլոր մշակույթներում (և որպես կանոն, հետազոտողները տղամարդիկ էին) «կանանց հետազոտությունների», որոնց շնորհիվ ընդգրկվեց կանանց փորձը: Սակայն պարզվեց, որ «կանանց հետազոտություններն» էլ ունեն իրենց սահմանը. հնարավոր չէ լուծել կանանց հիմնահարցերը՝ առանձնացնելով դրանք տղամարդկանց հիմնահարցերից: Այդ իսկ պատճառով 1980-ական թվականներին առավել մեծ ակտիվություն դրսևորվեց գենդերային հետազոտությունների ասպարեզում: Գենդերային հետազոտությունները ֆեմինիստական սուր քննադատության փոխարեն փորձում են բացահայտել գենդերային համակարգի կառուցավորման և վերարտադրության գործընթացները: Գենդերային հետազոտությունները ներառեցին նաև այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են դասակարգը, տարիքային խումբը, իշխանությունը և այլն: «Կանանց հետազոտությունների» կողքին առաջացան «տղամարդկանց հետազոտությունները»: Ֆեմինիզմի հարացույցին փոխարինելու եկած գենդերի հարա-

Գենդեր և լրագրություն

ցույցը հետազոտությունները նպատակաուղղեց տղամարդկանց ու կանանց փոխհարաբերություններում առաջացող սոցիալական հիմնախնդիրների վերլուծությանը և ստեղծված իրավիճակում ելքի որոնմանը, ընդլայնեց նաև հետազոտությունների աշխարհագրական սահմանները:

Ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության զարգացման հիմնախնդիրները հրամայական են դարձրել հայ հասարակության գենդերային հետազոտությունները և գենդերային կրթության՝ որպես քաղաքացիական կրթության, ինստիտուցիոնալացումը:

Հիմնական հասկացություններ.

անդրոկենտրոնություն, կնադաստիություն, ֆիզիկականություն, Անիմա, Անիմոս, ֆեմինիզմ՝ ազատական, արմատական, հետրոդոքսիստական, հոգեվերլուծական, սոցիալիստական:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ նախադրյալներ կային գենդերային տեսության առաջացման համար:
2. Ե՞րբ և ինչպե՞ս առաջացավ կատարյալ մարդու՝ որպես արական սեռի ներկայացուցչի մասին պատկերացումը:
3. Ինչպե՞ս դա ազդեց քաղաքական գործընթացներից կանանց օտարման և հասարակության հայրիշխանական բարոյականության ձևավորման վրա:
4. Որո՞նք են ֆեմինիզմի առաջացման սոցիալ-տնտեսական, քաղաքական և տեսական նախադրյալները:
5. Հայ հասարակությունում գոյություն ունի՞ր գենդերային խտրականություն:

Ինտերակտիվ պարապմունք. «Ֆեմինիստուհու կերպարը իմ պատկերացմամբ»:

Տնային առաջադրանք. «Ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրների հետ՝ վերլուծել հետևյալ արտահայտությունը (տե՛ս հավելված 1-ը):

Աշխատանք խմբերում. «Ի՞նչ կպատասխանեիր Չ.Ֆրոյդի «Անատոմիան ճակատագիր է» արտահայտությանը»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարսյան Ս., Գենդերը և խտրականությունը: Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2002.-136 էջ:
2. Չաքարյան Լ., Գենդերային գիտելիքների հիմունքներ (միջառարկայական դասընթաց) / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2003.- 118 էջ:
3. Էլիոտ Պ., Մենդել Ն., Ֆեմինիզմի սահմանումները // Գենդերային հետազոտություններ, պր. 1 / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2001, էջ 8-51:
4. Էնգելս Ֆ., Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը.- Եր., 1965:
5. Կոնֆլիկտաբանություն, գենդեր և խաղաղարարություն / Միավորված ազգերի կազմակերպության Չարգացման ծրագիր.- Եր., 2003.- 320 էջ:
6. Մխիթարյան Ա., Գենդերային տեսության ներածություն / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2002.- 112 էջ:
7. Տյոմկինա Ա., Կանանց շարժումը որպես հասարակական շարժում. պատմություն և տեսություն // Գենդերային հետազոտություններ, պր. 2 / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2001.-էջ 11-75:
8. Ֆեմինիզմի տեսություն և պատմություն (ուսումնական ձեռնարկ), /Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն, Երևան, 1999.- 400 էջ:
9. Аристотель. Сочинения, т. 4, Политика.- М., 1983.
10. Основы гендерных исследований. Хрестоматия.- М.,2000.-396 с.
11. Платон. Сочинения, т.3, Пир.- М., 1993.
12. Платон, Сочинения, т.3, Государство.- М., 1994.
13. Теория и методология гендерных исследований. Курс лекций.- М., 2001.-416 с.

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Պլատոն (Ք.ա. 427-347 թթ.)

«Այս կամ այն սեռի կենդանի էակների մեջ հանդիպում են միևնույն բնական հատկությունները, և իրենց բնությով թե՛ կինը, թե՛ տղամարդը կարող են մասնակցել բոլոր գործերին»:

Արիստոտել (Ք.ա. 384-322 թթ.)

«...Կանացիությունը հարկ է համարել բնության թերություն... Առաջինն իր բնությով բարձր է, երկրորդը՝ ցածր, և ահա առաջինը իշխում է, երկրորդը՝ հպատակվում»:

Ժ.Ժ. Ռուսո (1712-1778 թթ.)

«Տղամարդիկ և կանայք տարբեր առաքինություններ ունեն. կինը պետք է ամոթխած, խորամանկ, սեթևեթ լինի, տղամարդը՝ անկեղծ, ուղղամիտ, բարեխիղճ: Տղամարդը պետք է հենվի միայն իր սեփական դատողությունների վրա, կինը պարտավոր է հաշվի առնել ուրիշ մարդկանց կարծիքը, տղամարդը չպետք է ստի, իսկ կինը պարտավոր է ձևանալ»:

Մերի Ռոլատոնկրաֆտ, «Ի պաշտպանություն կանանց իրավունքների» (1792 թ.)

«Եթե կանայք ունակ են իրականության մեջ վարվելու իբրև բանական էակներ, ապա չի կարելի նրանց իբրև ստրուկների կամ ընտանի կենդանիների, մարդու բարեկամների կամ բանականությամբ ցածր էակների վերաբերվել: Ոչ, պետք է զարգացնել կանանց միտքը՝ տոգորելով նրանց առողջ և վեհ կենսական սկզբունքներով, և թող կանայք, արժանիքներ ձեռք բերելով, կախված լինեն միայն Աստծուց... Կարող են ասել, որ այս ամենը ուտոպիական երազանք է: Օրինյալ է նա, ով ներշնչել է դրանք ինձ և համարձակություն տվել իմ մտքին, այնպես որ կարող եմ, լուկ Նրա մեջ աջակցություն գտնելով իմ բոլոր գործերում, ասել իմ կարծիքը, քանի գոյություն ունեն զայրացուցիչ նախապաշարումներ, իմ սեռի ստրկացած ներկայացուցիչներ»:

«Սկսած վաղ մանկությունից՝ կանանց սովորեցնում են, նրանք էլ իրենց մայրերի օրինակով տեսնում են, որ մարդկային թուլությունների սահմանափակ գիտելիքը, հաջողությամբ կիրառված խորամանկությունը, ցուցադրական հնագանդությունը, բնավորության մեղմությունը և երեխայական ոճի

բարեխիղճ պահպանումը կհանգեցնեն նրան, որ տղամարդիկ կհովանավորեն իրենց»:

Օլիմպիա դը Գուժ, «Կնոջ և քաղաքացուի ու իրավունքների հռչակագիր» (1792)

«Եթե կինը իրավունք ունի բարձրանալու կառավարան, ապա իրավունք ունի նաև բարձրանալու ամբիոն»:

Վ.Վ. Ստասով, նկարիչ, Պետերբուրգի Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ, (1899)

«Կանանց մտքին, ունակություններին և կամքին միշտ արվել է այն, ինչ միշտ արել են չինացի կանանց ոտքերին. ծնվելու առաջին իսկ պահից նրանց ոտքերին ամուր կաղապարներ են հագրել...»:

Սիմոնա դը Բովուար, «Երկրորդ սեռ» (1949)

«Ինձ կարող են առարկել, թե այս բոլոր դատողությունները ուտոպիական են, քանի որ «կնոջը կերպարանափոխելու» համար հասարակությունը պետք է նրա համար իրապես տղամարդուն հավասար պայմանների մեջ դնի, տղամարդուն հավասար դարձնի: Էհ, պահպանողականները երբեք առիթը բաց չեն թողել ընդգծելու, թե սա այն հարցերից է, որոնք վերադառնում են ի շրջանս յուր: Բարեբախտաբար պատմությունը շրջանաձև չի շարժվում: Անվիճելի է, եթե հասարակության մի մասը պահես նվաստացած վիճակում, այն հենց նվաստ ու անլիարժեք կլինի: Սակայն ազատությունը կարող է խզել այդ արատավոր շրջանը: Ընտրելու իրավունք տվեք նեգրերին, և նրանք արժանի կլինեն այդ իրավունքին, թույլ տվեք կանանց պատասխանատվություն կրել հասարակության կյանքի համար, և նրանք գլուխ կհանեն դրանից: Բայց խնդիրն այն է, որ միանգամայն անհմաստ է ճնշողներից կամավոր շռայլություն ու մեծահոգություն սպասել: Մինչդեռ ճնշվողների ընդվզումը, ինչպես նաև արտոնյալ կաստայի ներսում տեղի ունեցող փոփոխությունները նոր իրավիճակ են ստեղծում: Չէ՞ որ տղամարդիկ ստիպված եղան, սեփական շահերից ելնելով, մասամբ ազատագրել կնոջը: Կանայք ուղղակի պետք է շարունակեն իրենց վերելքը, դրան կնպաստեն ձեռք բերված հաջողությունները: Գրեթե ակնբախ է, որ որոշ ժամանակ անց նրանք կհասնեն տնտեսական ու սոցիալական իսկական հավասարության, իսկ դրան կհետևի և նրանց ներքին կերպարանափոխումը»:

Ֆ. Նիցշե (XIX դար)

«Իրավունքների համար մրցակցելով՝ կիևը կորցնում է իր ամոթը... Նա դադարում է տղամարդուց վախենալուց... Կիևն աշղպիսով ալլասերվում է»:

Յ. Վեյնինգեր (XIX դար)

«Չէ՞ որ ոչ որ չի կասկածում, որ երեխաները, տխեղծներն ու հանցագործները օտարվում են հասարակության գործերի վրա ամենայն ներգործությունից... Նմանապես և հարկ է կանանց հեռու պահել այն ամենից, ինչը կարող է վնաս կրել հենց միայն կնոջ ձեռքի հպումից»:



ԳԼՈՒԽ II

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ XIX-XX ԴԱՐԵՐԻ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ

- 2.1. Կանանց հարցի արժարժումը XIX դարի և XX դարասկզբի մամուլի էջերում
- 2.2. Կանանց մամուլի սկզբնավորումը
- 2.3. Կանանց հարցը խորհրդային ՉԼՄ-ներում

2.1. Կանանց հարցի արժարժումը XIX դարի և XX դարասկզբի մամուլի էջերում

2.1.1. «Կանանց հարցի» ծագումը հայ իրականության մեջ և դրա արժարժումը արևելահայ և արևմտահայ մամուլում

Կանանց հարցի առաջացման պատմական նախադրյալները հայ իրականության մեջ: «Կանանց հարցի» բովանդակությունը, քննարկված հիմնահարցերը XIX դարի հայ մամուլում: Ավ. Արասխանյան. կանանց հարցի դիրարկումը մարդու իրավունքների տեսանկյունից:

Պատմական ճակատագրի բերումով հայ լրագրությունը սկզբնավորվեց

մայր հայրենիքից դուրս՝ հնդկահայ գաղութում¹¹: Այնուհետև այն բոլոր երկրներում, որտեղ հայկական համայնքներ էին գոյանում, ստեղծվում էր նաև պարբերական մամուլ: XIX դարից սկսած՝ հայ մամուլը կարևորագույն դեր է ունեցել ազգապահպանման, հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում: Մամուլն էր այն հարթակը, որտեղ բանավեճեր էին ծավալվում ազգի ներկայի և ապագայի վերաբերյալ, որտեղ խմորվում ու բյուրեղանում էր հասարակական միտքը: Բնականաբար, զարգանալով տարբեր երկրներում, հայ մամուլը նաև կրում էր այդ երկրների ազդեցությունը, այնտեղ ծավալվող քաղաքական գործընթացների կնիքը: XIX դարի երկրորդ կեսին մամուլի միջոցով հայ իրականության մեջ մեծ տարածում են գտնում լուսավորական գաղափարները, որոնց համատեքստում էլ բարձրացվում է կանանց հարցը:

«Կանանց հարցը» հրապարակ հանվեց հայ տղամարդ մտավորականների կողմից՝ որպես ազգային շարժման, ազգային ընդհանուր նպատակների թելադրանք, որպես ազգի ապագայի կերտման պատասխանատվության ըմբռնում, հետևաբար և կանանց կրթության, աշխատանքի, հասարակական կյանքին մասնակցելու իրավունքների ճանաչման հիմնախնդիր:

XIX դարի կեսին եվրոպական մի շարք երկրներում անցած բուրժուական հեղափոխությունների ալիքն ազատականացրեց մարդկանց կյանքն ու պատկերացումները ոչ միայն Եվրոպայում, այլև մյուս մայրցամաքներում: Այդ շրջանում հայ ժողովուրդը Օսմանյան Թուրքիայի և Ռուսական կայսրության տիրապետության տակ էր: Թուրքիայում դեռ դարասկզբին մեծ տերությունների ճնշման տակ սկսված թանգիմաթի (բարեփոխումների) շրջանը ժողովրդավարական շարժում էր առաջացրել հպատակ ժողովուրդների, նաև հայերի շրջանում: Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացումը, սկսված լիբերալ բարեփոխումները մեծ տեղաշարժեր էին առաջացրել նաև հասարակական գիտակցության մեջ:

Այս ամենը լայն արձագանք էր գտնում հայ իրականության մեջ, առաջադրում ազգային, տնտեսական և սոցիալ-քաղաքական նոր հիմնախնդիրներ: Զննադատության էր ենթարկվում այն ամենը, ինչ մինչ այդ նվիրական ու անձեռնմխելի էր. հայկական ավանդույթները, նիստուկացը, կենցաղը, դասային հարաբերությունները, եկեղեցին, ընտանիքը: Մյուս կողմից՝ հայությունը ինքնության պահպանման և ազատագրման գերխնդիր ուներ, ուստի յուրաքանչ-

11 Առաջին հայ պարբերականը՝ «Ազդարարը», լույս է տեսել 1794 թ. հոկտեմբերի 16-ին Հնդկաստանի Մադրաս քաղաքում:

յուր նոր գաղափար պետք է խարսխվեր ազգի հարատևությունը պայմանավորող հոգևոր և բարոյական արժեքների վրա և արդարացվեր ապագա անկախ պետության հաստատումով: Ազատագրական պայքարի հաղթանակի նախապայման էր դիտվում համախմբումը, որը հանգեցնում էր ազգային ինքնագիտակցության բարձրացման, հետևաբար և համընդհանուր լուսավորության գաղափարին: Իսկ լուսավորության խնդրի իրականացման գրավական ու առաջնահերթություն էր դիտվում կանանց կրթությունը և հասարակական ասպարեզ մտնելը:

XIX դարի կեսերից սկսած՝ հայ մամուլում արծարծվում էին հետևյալ հիմնախնդիրները.

1. աղջիկների կրթության անհրաժեշտությունը,
2. քաղաքաբնակ և գյուղաբնակ կանանց սոցիալական դրության վերհանումը,
3. կանանց աշխատելու իրավունքի պաշտպանությունը (որոշ մասնագիտությունների գծով), աշխատանքի հավասար վարձատրությունը՝ անկախ սեռից,
4. կանանց հասարակական գործունեության խթանումը,
5. կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը,
6. արևմուտքի կանանց շարժման ձեռքբերումների և կանանց հարցի ուսումնասիրությունների լուսաբանումը:

Իգական կրթության անհրաժեշտությունն ընդունում էին բոլոր հասարակական հոսանքների գրեթե բոլոր գործիչները, քանի որ առանց դրա այլևս հնարավոր չէր ապահովել ոչ միայն ազգի առաջընթացն ու զարգացումը, այլև առհասարակ գոյատևումը: Դա քարոզչական մեծ ջանքեր էր պահանջում, հարկ էր կոտրել արմատացած նախապաշարումներն ու կարծրատիպերը, հասարակական գիտակցության մեջ արմատավորել իգական սեռի կրթության իրավունքի ճանաչումը, դրա իրականացման անհրաժեշտությունն ու կարևորությունը: Եվ XIX դարում դժվար է գտնել որևէ պարբերական, որևէ հասարակական գործիչ, որ արծարծած չլինի այդ խնդիրը:

Իգական կրթության կողմնակից էին Ստ.Նազարյանցը, Մ.Նալբանդյանը, Ռ.Պատկանյանը, Պ.Պռոշյանը, Բաֆֆին և շատ ուրիշներ: Առաջիններից մեկը, որ խոսեց այդ մասին, **Մեսրոպ Թաղիադյանն էր՝ «Ազգասեր»** (1845-1848 թթ.) և **«Ազգասեր Արարատյան»**¹² (1848-1852 թթ.) թերթերի խմբագիրը: Նա իր «Ճառ դաստիարակության օրիորդաց» աշխատության

12 Թերթերը լույս էին տեսնում Կալկաթայում:

մեջ, որ հատվածաբար տպագրվեց «Ազգասերում», հիմնավորեց իզական կրթության անհրաժեշտությունը՝ մատնանշելով հայրենիքի անկախության համար մարտնչող քաղաքացիներ դաստիարակելու խնդրում ուսյալ մայրերի անփոխարինելի դերը:

«Կովկաս»¹³ (1846-1847թթ.) թերթում մանկավարժ **Կ. Քելախանյանցը** իզական կրթությամբ էր պայմանավորում ազգային լեզվի պահպանումը, հեղինակության բարձրացումն ու զարգացումը¹⁴:

Հ. Հիսարյանը, որը «**Բանասերի**»¹⁵ (1851-1852թթ.) խմբագիրն էր, գտնում էր, որ «մայրերն են միայն, որ մարդիկ կշինեն», որ երեխայի համար կրթված մորից լավ դաստիարակ չկա, իսկ տղամարդու համար՝ ընկեր: Իր ամսագրի հենց առաջին համարում նա անդրադարձավ կանանց հարցին՝ զարմանք հայտնելով, որ կան մարդիկ, ովքեր կարող են արհամարհել կնոջ ունակությունները: Նա ամոթ էր համարում, որ հասարակությունն անփույթ է կանանց կրթության հարցում, քանի որ կանանց ձեռքին են մարդկության ապագան և դեկը¹⁶:

Հ. Աբեյանը նշում էր, որ կրթության միջոցով կինը կազատվի նաև անբարոյականությունից, որին դրդում է կարիքը: Նա համոզված էր, որ դա կնպաստի նաև ընտանիքի բարոյական ներդաշնակությանը, քանզի չի կարող երջանիկ լինել այն ընտանիքը, որտեղ մեկը տեր է, իսկ մյուսը՝ ծառա¹⁷:

Այսպիսով, իզական կրթության անհրաժեշտությունը հիմնավորվում էր սերնդի դաստիարակման գործում կնոջ ունեցած անփոխարինելի դերով և հայ ընտանիքի ամրապնդմամբ, որոնք սրբագործված հասկացություններ էին: Այդ էր պատճառը, որ ամենատարբեր ուղղությունների գործիչների կարծիքը իզական կրթության հարցում համընկնում էր:

Ինչ վերաբերում է կնոջ մյուս իրավունքներին, ապա այս հարցում կարծիքները խիստ տարբերվում էին: Եթե լիբերալ և դեմոկրատական ուղղությունների ներկայացուցիչները, որոնք անվերապահորեն պաշտպանում էին նոր բուրժուական հարաբերությունների հաստատումը, խոսում և դնում էին նաև իրավահավասարության, աշխատելու հնարավորության հարցը,

13 Թերթը լույս էր տեսնում Թիֆլիսում:

14 Հայ պարբերական մամուլի պատմություն, XVIII-XIX դարեր, հ.1, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ.- Կահիրե, 2006 թ., էջ 95:

15 Թերթը լույս էր տեսնում Կ.Պոլսում:

16 «Բանասեր», 1851, թիվ 1:

17 «Մշակ», 1872., թիվ 29:

ապա մյուսները դեմ էին դրան: Այսպես, ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչը տազնապում էր, որ կնոջը շատ իրավունքներ տալը կարող է խաթարել հայ ընտանիքը՝ ազգության հիմքը: Իրավական անհավասարությունն արդարացվում էր բնական անհավասարությամբ¹⁸: Շատերը գտնում էին, որ կնոջը չպետք է թույլ տալ՝ կյանքի բոլոր բնագավառներում հավասարվի տղամարդուն: Կոչ էին անում պայքարել դրա դեմ, քանի որ *«կանանց խմբովին չգտելը դեպի հասարակական կյանք միշտ մշան է դարի հիվանդոտ դատողության»*¹⁹: Կինը չպետք է մոռանա *«իր բնությունից սրացած դրությունը և ներքին պաշտոնը և ցանկանա հասարակական կյանքի բոլոր երևույթների մեջ իրեն տղամարդուն հավասարեցնել»*²⁰:

Մինչդեռ Մ. Նալբանդյանն ու նրա կողմնակիցներն իրենց քննության առարկան չէին սահմանափակում կնոջ դաստիարակչական ու ընտանեկան գործառույթներով և ծանրանում էին կանանց իրավահավասարության, հասարակության լիիրավ անդամ ու ազատագրական պայքարի գործուն մասնակից լինելու հարցերի վրա: *«Հյուսիսափայլի»* էջերում, դիմելով իր հայրենակցուհիներին, Նալբանդյանը փորձում էր նրանց ոգուն ու մտքին հասցնել այն ճշմարտությունը, որ եկել է նոր դարաշրջան, երբ մարդկությունը կնոջը ստրուկ չի համարում. *«...Այս մարդասեր դարում լուսավորյալ աշխարհը նայում է կանանց վերա, որպես մարդու վերա: Նա ճանաչել է այժմ այն մեծ և խորախորհուրդ պաշտոնը, որ վիճակել էր աստված կանանց ազգին լցուցանելու»*²¹:

XIX դարի 50-ական թթ. Կ.Պոլսում ասպարեզ իջավ *«Ընտանի իմաստասեր»* պարբերականը (1854-1855 թթ.), որի *«հիմնական նպատակն էր ներշնչել կնոջը և դեռահաս աղջիկներին լիարժեքության, ազգային արժանապատվության, հասարակական գործերում իրենց կարևորության զգացում, վանել նրանցից տղամարդու կցորդը և ընդհանրապես ու կյանքում երկրորդական դեմք լինելու վրանգավոր և ստորացուցիչ մտայնությունը»*²²: Պարբերականի հրատարակումը նախապատրաստված էր արևմտահայ լուսավորիչների՝ Ն.Ջորայանի և Սերվիչենի ելույթներով: Այն

18 Նույն տեղում:

19 Նույն տեղում:

20 «Մշակ», 1877թ., թիվ 9:

21 Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու: Հտ. 1.- Եր., 1945, էջ 457:

22 Հայ պարբերական մամուլի պատմություն, 18-19-րդ դարեր, հ.1, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Կահիրե, 2006թ., էջ 150:

Գեները և լրագրություն

հրատարակվում էր Ազգասիրական ընկերության կողմից, հրատարակիչն էր Վ.Սոֆյայանը:

Առհասարակ հայ իրականության մեջ կանանց իրավունքների ու հնարավորությունների քննարկմանը, կանանց հիմնախնդիրների արծարծմանն ու դրանց լուծման որոնումներին երբեք այնքան ճիգ ու ջանք չի նվիրվել, որքան XIX դարի երկրորդ կեսին և XX դարասկզբին:

Հայ մտավորականության հայացքը սևեռվեց հասարակության տարբեր խավեր, տարբեր բնակավայրեր ներկայացնող կանանց կյանքի ու ներաշխարհի վրա, կինը դարձավ ազգագրագետների, պատմաբանների, տնտեսագետների, հոգեբանների և գավառական թղթակիցների ուսումնասիրության առարկա: Ժամանակի մամուլի քրոնիկոններում պարտադիր դարձան կանանց կյանքին առնչվող տարբեր բնույթի լրատվություններն ու ռեպորտաժները, հրապարակախոսության բաժիններում՝ կանանց առնչվող հիմնախնդիրների խոր և ծավալուն քննարկումները:

Կանանց հիմնավոր, ազգային արժեքների վրա հիմնված կրթության ու զարգացման խնդիրը մտահոգում էր նաև Ստեփան Ոսկանին: Նա իր «Արևմուտք»²³ հանդեսում ահազանգ էր հնչեցնում, թե առանց հիմնավոր կրթության չի կարելի ընդունել Եվրոպայից եկող ազդեցությունները, չի կարելի ընդունել դրանց արտաքին փայլը՝ առանց գիտակցելու դրանց խորհուրդը: Նա հայ կանանց հորդորում էր «ոսկին կապարին հետ չփոխել», չտարվել Եվրոպայի արտաքին փայլով, այլ հասու լինել Եվրոպայի «ազնիվ տիկիների» սրտին ու մտքին և օրինակ ունենալ «*նախ Եղիշեի նկարագրած արի տիկիները և հետո օրարագգի պեպեկները...*»: Նա համարում էր, որ առանց կանանց գրագիտության անկարելի է ժողովրդի լուսավորությունը. «*Կիներու սրտին մեջ է հայրենիք, և երբ այս սիրտը դատարկ կգրնվի (ինչպես շատ հայ տիկիներու քով...), անկարելի է, որ հայրենասիրությունը, ճշմարիտ հայրենասիրությունը ծլի, ծաղկի, արդյունավորվի և բազմություն մի կանգուն պահե ազատության դրոշին փակ... Կիներու փափուկ ձեռքով կպատրասարվին այն ինքնությունը, որ մարդու նշան է, և այն բարոյական զենքերը, որք զերության արմատը կկոտրեն: Վերջապես հավատքն անգամ կիներու ազդումով փարսածվեր է շատ տեղ և շատ ազգերու մեջ»²⁴:*

23 Թերթը լույս էր տեսնում Փարիզում:

24 «Արևմուտք», 1859, էջ 141:

Խնդիր էր դրված, ուրեմն, դուռ բացել եվրոպական առաջադեմ գաղափարների համար, սակայն փոխառնել այն, ինչ կարող էր աճել հայկական հողում՝ պատվաստվելով ազգային ավանդույթներին: Այս հրամայականով է բացատրվում ժամանակի մամուլի և հասարակական գործիչների նախանձախնդրությունը եվրոպական կանանց շարժմանը հետևելու և դրա գաղափարախոսությունը տարածելու հարցում: Ամենայն ուշադրությամբ ու արագությամբ ուսումնասիրվում էր դրաի գրականությունը, գնահատվում, քննարկվում ու թարգմանվում, և այդ ամենը հրապարակվում էր ոչ միայն մամուլում, այլև լույս էր տեսնում առանձին գրքերով ու սնունդ տալիս ինքնուրույն աշխատությունների²⁵: Եվրոպայի կանանց առաջխաղացման գրեթե ոչ մի տեղեկատվություն դուրս չէր մնում հայկական մամուլի քրոնիկոններից, որոնք բավական վարպետորեն գործածվում էին իբրև քարոզչության գործիք:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության գաղափարների տարածման տեսանկյունից իր բավական ճշգրիտ շեշտադրումներով և գորեղ կովաններով չափազանց ուշագրավ է «Մուրճ»²⁶ ամսագրի խմբագիր Ավետիք Արասխանյանի «Կինը հասարակության մեջ» հոդվածը²⁷: Նա առաջիններից մեկն էր, որ կանանց հարցը տեղափոխեց մարդու իրավունքների հարթություն: Նա ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ շատերը, կամա թե ակամա, հարցը պարզաբանելու համար ավելի են բարդացնում ու խճճում այն, և կանանց հարցի կողմնակիցները թերևս նույնքան սխալ են գործում, որքան հակառակորդները: Ըստ նրա՝

25 Տես օրինակ՝ Ամատունի Հ., Մոլորյան մը զոհերը: Կ.Պոլիս, 1880 թ.: Մաղլեն Է., Դաստիարակություն մարց կամ քաղաքակրթություն մարդկան ի ձեռն կանանց: Կ.Պոլիս, 1884 թ.: Բյուխներ Լ., Կնոջ կոչումը և դաստիարակությունը, Թիֆլիս, 1884 թ.: Մեքլեյան Ա., Ճշմարիտ կինը. հետևողությամբ Ուիլյամ Թեյլրի, Կ.Պոլիս, 1894 թ.: Բոկլի Հ., Կանանց ազդեցությունը գիտության առաջադիմության վրա, Թիֆլիս, 1895 թ.: Լեբեդինսկի Պ., Ամուսնացած կնոջ ներկա դրությունը, Թիֆլիս, 1897 թ.: Ղարազյոզյան Հ., Կնոջ կոչումը և դրությունը հասարակության մեջ, Թիֆլիս, 1891 թ.: Բեգրբազով Պ., Կանանց ներկա դրության մասին, Բաքու, 1900 թ.: Գրենքե Հ., Կինն իբրև օրիորդ, Կ.Պոլիս, 1901 թ.: Բուդուլյան Ա., Կինը և տղամարդը, Ս.Պետերբուրգ, 1902 թ.: Արծրունի Վ., Աղջիկ, Թիֆլիս, 1903 թ.: Յետկին Ա., Կինը և նրա տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1905 թ.: Ազբելով Ն., Կանանց հարցը Յապոնիայում, Թիֆլիս, 1905 թ.: Դանիելբեգյան Ս., Կանանց հարցը և նրա ծագելու պատճառները, Թիֆլիս, 1906 թ.: Մարիոն Հ., Կնոջ հոգեբանությունը, Կ.Պոլիս, 1907 և այլն:

26 Թերթը լույս էր տեսնում Թիֆլիսում:

27 «Մուրճ», 1891, թիվ 6, էջ 677-687:

սա իրավունքի խնդիր է և չպետք է շփոթել կանանց և տղամարդկանց հավասար կամ անհավասար մտավոր ունակությունների հետ. «...**Իրավունքը պահանջվում է ոչ թե փղամարդուն անպարճառ հավասարվելու համար, այլ իրավունքը պահանջվում է միայն որպես մի պայման, առանց որի կինը, նման փղամարդուն, չի կարող յուր ուժերը կանոնավոր և ազատ կերպով զարգացնել, ուրեմն և ընդհանրապես, հասարակությանը, պետությանը այն ծառայությունը մատուցանել, ինչին նա միայն ընդունակ է: Այն իրավունքները, որ դարերի ընթացքում չենք են բերված փղամարդկանց համար, նորա, այդ իրավունքները, խոն միայն փղամարդու պահանջների համեմատ չեն ստեղծված, այլ առհասարակ մարդկային անհատի»²⁸:**

Երկրորդ կարևոր հարցադրումն այն է, որ նա կանանց զարգացման խնդիրը համարեց կենսական պայման առհասարակ ազգի, պետության, հասարակության և մարդկության զարգացման համար: Պատահական չէ, ասում էր նա, որ կանանց հարցը սուր է դրված ոչ թե այն երկրներում, որտեղ կանայք ուժեղ են, այլ այն երկրներում, որտեղ «**պեղական և ազգային զարգացման գաղափարը ամենից վառ է, ամենից արթուն և ընդհանրության գիտակցության մեջ խորը արմատներ գցած**»²⁹: Սա շատ ուշագրավ հարցադրում է: Ավ. Արասխանյանի հայացքով՝ հիմքը երկրի զարգացումն է, ոչ թե կանանց ներուժի առկայությունը կամ նրանց պայքարի արդյունավետությունը: Եթե երկիրն ու հասարակությունն ապագա ունեն, եթե առաջ են նայում, եթե զարգացման խնդիր են դրել իրենց առջև, ապա ինքնաբերաբար վեր կհանվի կանանց ներուժը՝ նրանց գործունեությանն ասպարեզ տալով ու ճանաչելով նրանց իրավունքները:

Ըստ Ավ. Արասխանյանի՝ հարցը ճիշտ հունից շեղվել է այն պահից, երբ շրջանառության մեջ է մտել *կանանց կոչում* հասկացությունը, որը, ըստ նրա, հրապարակ են հանել կանանց խնդրի հակառակորդները: Կանանց կոչումը բացատրելով մայր լինելու նախասահմանվածությամբ, չափազանց հեշտ էր նրա իրավունքները սահմանափակել ամուսնության, տան տնտեսության և մայրական խնամքի շրջանակներով: «**Կինը զոհ է գնացել նույն այդ անքննադատ ուղղության, - ասում է նա: - Նախասահմանումն են տեսել այն բանի մեջ, ինչ կնոջը հարույ է իբրև կնոջ, իբրև սեռի, բոլորովին**

28 Նույն տեղում, էջ 679-680:

29 Նույն տեղում, էջ 678:

անպես առնելով այն բոլորը, ինչ կնոջը հապուկ է իբրև անհասարակ առհասարակ: Բնական է, որ կինը ենթակա է այն բոլոր պահանջներին, ինչ պահանջներ որ ունի մարդս իբր անհասարակության անդամ, հասարակության, որը, ինչպես պատմությունն է ցույց տալիս, պատմական ամեն կարգի փոփոխություններ է կրում ժամանակվա ընթացքում՝ նայած թե որոշ ժամանակում մի ազգի կամ պետության շահերը ինչ են պահանջում»³⁰:

2.1.2. Գր. Արծրունու և «Մշակ» թերթի ավանդը կանանց հարցի լուսաբանման հարցում: Սրբուհի Տյուսաբի «Կանանց ազատագրման» հայեցակարգը

Կանանց կրթության և ազատագրման, քաղաքականության և հասարակական գործունեության մյուս ոլորտներում նրանց մասնակցության խնդիրները «Մշակի» էջերում: Գր.Արծրունու և Բաֆֆու մտպեցումները հիմնախնդիրն: Կանանց առաջին հոդվածները «Մշակում»: Կանանց հարցի արծարծումը արևմտահայ իրականության մեջ: Սրբուհի Տյուսաբ:

XIX դարում կանանց հարցի արծարծման տեսանկյունից նշանակալի հետք են թողել Գրիգոր Արծրունին և իր «Մշակ» թերթը: Թե՛ առաջիններից մեկը լինելու հանգամանքով, թե՛ նյութերի քանակով, թե՛ բովանդակությամբ, թե՛ խնդրի արծարծման հիմնավորությամբ ու համակողմանիությամբ, թե՛ հարցը առաջ տանելու հետևողականությամբ հայ մամուլի պատմության մեջ «Մշակը» մնում է չգերազանցված: **«40-ամյա գոյության ընթացքում «Մշակը» բազմաթիվ ազդու առաջնորդողներով, իմաստալից հոդվածներով և գեղեցիկ բանասիրականներով առաջինը զարթեցրեց հայ կնոջ մեջ ինքնաճանաչության զգացմունքը և լայնացրեց նրա աշխարհայացքը: Նա հանդիսացավ իրավագուրի հայ կնոջ պաշտպանը: Նա առաջինը ծանոթացրեց հայ կնոջը լուսավորյալ ազգերի կանանց գործունեության հեյտ: Նա դուրս հանեց հայ կնոջը ընդհանրական նեղ շրջանից՝ հրավիրելով նրան հասարակական գործունեության լայն ասպարեզ»**, - գրում էին

30 Նույն տեղում, էջ 683:

«Հայ կինը» ժողովածուի հրատարակիչները, որ լույս ընծայեցին թերթի 40-ամյա հոբելյանի առթիվ:

Կանանց հարցի վրա Գրիգոր Արծրունին ծանրացավ իր առաջին իսկ գրական քայլերն անելիս, երբ դեռ ուսանող ժամանակ Պետերբուրգից թղթակցում էր «Մեղու» լրագրին և «Հայկական աշխարհ» հանդեսին: Միանգամայն իրավացի է Լեոն, երբ վավերացնում է. **«Այսպես իր առաջին իսկ քայլից Արծրունին հանդիսանում է կանանց հարցի ջերմ, պերճախոս պաշտպան: Կինը իբրև լիակատար իրավունքներով մարդ, կինը իբրև հասարակական գործիչ, ահա Արծրունու իդեալը այն օրից, երբ նա առաջին անգամ գրիչ վերցրեց իր ձեռքը»**³¹: Իր անդրանիկ հոդվածում³² Արծրունին քննադատական սլաքն ուղղեց ժամանակի դաստիարակության համակարգի՝ դպրոցի և ընտանիքի դեմ: Եվ քննության առարկա դարձնելով ժամանակի ընտանիքը՝ իր խոցելի կողմերով, նկատեց կնոջ իրավագուրկ վիճակը: Առաջին իսկ պահանջը, որ առաջ քաշեց նա, կնոջ կրթության իրավունքի ապահովումն է³³:

Հետագայում արդեն, Եվրոպայից թղթակցելով «Հայկական աշխարհին», Արծրունին շարունակում էր արծարծել կանանց հարցը: Այս շարքում ուշագրավ է «Բարոյականության արտոնություն»³⁴ հոդվածը, որում նա վեր է հանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քրիստոնեական արմատները: Հեղինակը քրիստոնեությանը հակադրում է գիտությունը, թեպետ «եվրոպական գիտությունը քրիստոնեության պտուղն է»: Գիտությունը, գիտության քահանաները, այսինքն՝ գիտնականները, ըստ նրա, արդարությունն այնպես չեն հասկացել, ինչպես քրիստոնեությունը, քանի որ միայն տղամարդկանց են իրավունք տվել օգտվելու գիտության լույսից, մարդկության մյուս կեսին՝ կանանց, զրկելով այդ իրավունքից: **«Քիստոնեությունը ճշմարտություն է, և նա բացարձակ հայրնեց յուր ուսումը մարդին և կնոջ հավասարապես: Գիտությունը ճշմարտություն է, բայց նա աշխարհեց զարգացնել միայն տղամարդին և արհամարհեց կնոջը»**:

«Մշակում» պարբերաբար լույս էին տեսնում կանանց հարցին նվիրված առաջնորդողներ, հրապարակախոսական հոդվածներ, կանանց վիճակը

31 Լեո, Երկերի ժողովածու, հտ. 6.- Եր., 1987, էջ 283:

32 Բնական գիտությունների նշանակությունը դաստիարակության մեջ.- Մեղու, 1865, թիվ 13-14:

33 Երկու խոսք աղջկերանց կրթության վերա.- Մեղու, 1865, թիվ 23:

34 «Հայկական աշխարհ», 1869, թիվ 6, էջ 203-209:

նկարագրող թղթակցություններ տարբեր գավառներից, տեղեկություններ, արևմտյան երկրների կանանց շարժանը վերաբերող ճանաչողական բնույթի նյութեր, արտատպություններ ռուսաստանյան և եվրոպական մամուլից, գրքերի տեսություններ, օտարազգի գիտնականների և ճանապարհորդների՝ հայ կնոջը նվիրված ուսումնասիրությունների թարգմանություններ և այլն: Գրիգոր Արծրունու շնորհիվ «Մշակի» շուրջը համախմբվեցին կանանց հարցերով հետաքրքրվող մտավորականներ, նրա հորդորներով արվեցին լուրջ ու ծավալուն ուսումնասիրություններ, և, որ առավել ուշագրավ է, «Մշակի» էջերում սկսեցին հայտնվել հայ կանանց գրչին պատկանող թղթակցություններ: Վերջապես, թերթելով «Մշակը», կարելի է հետևել ու հստակ գաղափար կազմել, թե ինչ առաջխաղացում ունեցավ հայ կինը տվյալ ժամանակահատվածում:

Կանանց կրթության խնդիրները, կինը և քաղաքականությունը, կնոջ ազատագրումը, կանանց իրավունքները, կնոջ հասարակական գործունեության ոլորտները, կնոջ ազդեցությունը լուսավորության վրա, կանանց աշխատանքի հարցը. ահա այն հարցերը, որոնք մշտապես ներկա էին «Մշակի» էջերում: Ե՛վ Արծրունին, և՛ «Մշակի» հրապարակախոսներն ու թղթակիցները կանանց ազատագրության առաջին նախապայմանը լուսավորությունն էին համարում և շարունակ հանդես էին գալիս նրանց հիմնավոր կրթության, տարբեր ոլորտներում մասնագիտացման, արտասահմանյան համալսարաններում սովորելու անհրաժեշտության փաստարկումներով: Կանանց առաջադիմության և հասարակության մեջ արժանապատիվ տեղ գրավելու մյուս գրավականը մշակականները համարում էին ինքնուրույն աշխատանքով ապրելը, նյութական անկախությունը և կազմակերպություններ, միություններ ստեղծելը:

«Ձեզ ենք դիմում, հայ կանայք և կրկնում ենք, որ մենք չեզանհից ենք սպասում հայության բարոյական և մտավոր վերանորոգության գործի առաջ փանելը... Առանց չեզ մենք ոչինչ ենք: Ձեզանհից ենք սպասում մեր վերանորոգությունը: ...Այն թույլից սկսած, երբ հայ կինը կմեկնի մեզ օգնության չեքքը, կրկին կվերադառնա հայությանը, մենք կկարողանանք մեզ փրկված ասել և ժողովրդի մտավոր և բարոյական վերանորոգության գործը աջողված համարել»³⁵: Արծրունու այս կոչը, կարելի է ասել, նաև բոլոր մշակականների համոզմունքն էր: Արծրունու խոսքը շատ վարակիչ էր: Եվ նա ոչ միայն հորդորում էր, խթանում, խրախուսում, այլև գոհունակությամբ ար-

35 Նույն տեղում:

Գեները և լրագրություն

ձանագրում էր հայ կանանց հաջողությունները, նրանց առաջխաղացումը: Իր «Մեր կանանց առաջին քայլերը» հոդվածում նշելով, թե ինչ գործունեություն ծավալեցին կանայք պատերազմի ժամանակ հոգուտ գաղթականների և կարոտյալների, նա գրում է. «**Չէ կարելի չորսիսանայ, որ վերջապես հայ կինը սկսում է հասկանալ իր պարտավորությունները...**»³⁶: Իսկ «Հայ կինը» հոդվածում արձանագրում է. «**Կրավորական, րզեպ, կամքից զուրկ էակից նա հեպզհեպե դառնում է ինքնաճանաչ, իր իրավունքներն ու պարտականությունները ճանաչող անձնավորություն, իրավագուրկ էակից նա հեպզհեպե դառնում է ինքնին իրան հարգող, ինքնասեր, իր մարդկային արժանավորությունը պաշտպանող, իր մարդկային իրավունքների համար բողոքող ընդհանրի գիտակցական անդամ, հասարակության գիտակցական քաղաքացի...**»³⁷:

Կանանց նվիրված նյութերի շարքում իր համակողմանիությամբ, խորությամբ, քննախույզ ու մանրակրկիտ դիտարկումներով և խորաթափանց ընդհանրացումներով առանձնանում է **Բաֆֆու «Հայ կինը»** ուսումնասիրությունը, որ շարունակաբար լույս տեսավ «Մշակ» թերթում (1879, թիվ 34-39, 42-43):

Բաֆֆին հետազոտեց գյուղի, գավառական քաղաքների և Թիֆլիսի բոլոր խավերի կանանց կյանքը, նկարագրեց նրանց բոլոր տիպերն՝ իրենց կենցաղով, սովորություններով, հոգեբանությամբ ու մտավոր զարգացումով և վեր հանեց այն ազգային-ավանդական ու սոցիալ-տնտեսական արմատները, որոնք պայմանավորում էին կնոջ անմխիթար վիճակը: Այդ իրավիճակը փոխելու համար, ըստ Բաֆֆու, կինը պետք է դուրս գար իր բնատարկյալ վիճակից, սակայն հասարակական ասպարեզ մտնելու համար անհրաժեշտ էր նախապատրաստել նրան. «**Այս հարցին ես շատ անգամ եմ պարտասխանել իմ տեղում, իմ հեպզգոպության մեջ, թե պեպք է նախքան կնոջն աշխարհ հանելը, նրան նախապարտապել աշխարհի համար, և դրա մեջ պեպք է լինի կնոջ կրթության բուն խորհուրդը: ...Կնոջ ազպություն, կնոջ անկախություն (эмансипация), կնոջ հավասարություն, դրանք շատ գեղեցիկ բառեր են, բայց դեռ լուսավոր ազգերի մեջ ես կենսական անվճիռ հարցերի կարգումն են գրնվում**»³⁸:

36 Նույն տեղում, 1880, թիվ 69:

37 Նույն տեղում, 1890, թիվ 17:

38 Նույն տեղում, էջ 157:

Ի դեպ, այդ նախապատրաստական փուլը, ըստ Բաֆֆու, նույնքան անհրաժեշտ է նաև հասարակության մյուս կեսի՝ տղամարդկանց համար: Խոսելով կանանց գրական սալոնների մասին, որտեղ հավաքվում էր մտավոր հասարակայնությունը, նա նշում է. **«Մեր զարգացած կանայք կարող են ունենալ միայն գրականական սալոններ, բայց մեր գրականությանը պարսպող երկրասարդությունը դեռևս այն սաստիճան անկիրթ է, որ հազիվ թե իր պարիվը հասկացող մի փրկյին կցանկանար նրանց առջև բաց անել իր դռները»³⁹:**

Բաֆֆին ավստասանքով է խոսում բարձր դասի կանանց մասին, որոնք չեն կատարում այն ազդեցիկ դերը հասարակության մեջ, որ կարող էին կատարել, մինչդեռ մեծ հույսեր է կապում մնացած խավերի հետ: **«Գրությունը բոլորովին հուսահատական չէ,- ասում է նա,- կանացի ամբոխը պահպանել է իր անարատությունը իր կատարյալ մաքրության մեջ. դա, թեև աննշակ, բայց չափազանց արգավանդ հող է, որ հմուտ երկրագործի ջեռքում կարող է հրաշալի պտուղներ ընծայել»⁴⁰:**

«Մշակի» շնորհիվ ասպարեզ մտան կին թղթակիցներ, որոնք հաջողությամբ շարունակեցին սկսված բանավեճը: **«Գերերը փոխվում են, հավասարվում են,- գրում էին նրանք,- միայն մենք չենք սպասում տղամարդի օգնության, տղամարդն էլ սպասում է մեր օգնության: Նա մեզնից սպասում է սրանալ մայրեր, դաստիարակուհիներ, ուսուցչուհիներ, ընկերուհիներ... Կարելի է շատ հեռու չէ այն ժամանակը, երբ տղամարդի հեղ ջեռք ջեռքի փված հառաջ փանում կլիներ հասարակական զարգացման գործը և միասին կրում կլիներ այդ գործին կից բոլոր ծանրացող բեռները...»⁴¹:**

Բայց եթե արևելահայ իրականության մեջ կանայք դեռևս արձագանքողի դերում էին, դեռևս երկյուղածություն կար նրանց ելույթների մեջ, արևմտահայ իրականությունում Սրբուհի Տյուսաբն ինքն էր բանավեճ հրահրում ու կրքեր բորբոքում: Այստեղ թուրքական կառավարության պայմաններում ազատախոհությունն ու կանանց ազատագրման խնդիրները տեղ չունեին, մանավանդ շատ ավելի մեծ էր պահպանողականների դիմադրությունը: Ուխտի կնոջ բերանով կնոջ ազատության հարցեր բարձրացնելն այստեղ շատ մեծ համարձակություն էր պահանջում:

39 Նույն տեղում, էջ 158:
 40 Նույն տեղում, էջ 156:
 41 Նույն տեղում, 1877, թիվ 46:

Սկզբնական շրջանում նա, ինչպես և մյուս մտածողները, կանանց հարցերը քննարկում էր ամբողջ ազգի առաջադիմության համատեքստում՝ սահմանափակվելով աշխարհաբարի տարածման ու կանանց դաստիարակության, կանանց լուսավորության հարցերի արծարծումով⁴²: Սակայն հետագայում նրա հրապարակախոսության, ինչպես նաև գրականության առանցքը դարձավ կանանց աշխատանքի իրավունքը, աշխատանքի իրավունքի իրականացմամբ էր նա պայմանավորում կնոջ անկախության, նրա մյուս իրավունքների իրացումը: «Քանի մը խոսք կանանց անգործության մասին» հոդվածով⁴³, Մ. Մամուրյանի խոսքերով, նա «*դասն ճշմարտություն ասելու բարոյական արիություն ունեցավ՝ մայրը դնելով ազգային ծանր վերքի վրա*»: Նա կոչ էր անում հայ կանանց փշրել նախապաշարումները, անցնել աշխատանքի և այդպիսով, նախ, փրկել իրենց ընտանիքները աղքատությունից ու կործանումից, և երկրորդ, ապրել արժանապատիվ, անկախ, սեփական բարոյական ու մտավոր կարողությունները լիուլի գործի դնելով:

Ողջունելով Տյուսաբի գաղափարը և իր հանդեսում՝ «Արևելյան մամուլում» արտատպելով հոդվածը՝ Մ. Մամուրյանը միաժամանակ խնդրում էր Տյուսաբին որոշակիացնել իր մտքերը, մանրամասնել, թե ինչպես է պատկերացնում կանանց աշխատանքը, ցույց տալ այն ոլորտները, որտեղ կանայք կարող են զբաղմունք գտնել: Անսալով Մ.Մամուրյանի խնդրանքին, Տյուսաբը գրեց «Կանանց աշխատության սկզբունքը» հոդվածը⁴⁴: Այստեղ հեղինակը կանանց բաժանեց երեք դասի. աղքատ դասը՝ զրկանքների ու տվայտանքների մեջ, որ աշխատում է բնագոյով, սոսկ գոյությունը պահպանելու համար, ոչ թե աշխատանքի «սկզբունքին ծառայելու մտք», միջին դասը՝ գոռոզ ու աշխատանքի թշնամի, և «մեծափարթամ» կանանց դասը, որը հարստության ու զեխության մեջ արհամարհում է աշխատանքը: Տյուսաբը առաջ է քաշում այն գաղափարը, որ աշխատանքը պետք է ընկալվի որպես սկզբունք, որպես հասարակության մեջ արժանի տեղ գրավելու միջոց: Այստեղ նա ավելի մարտական ու լայնախոհ է՝ համարե-

42 Տե՛ս Աշխարհաբար հայ լեզուն, Կ.Պոլիս, 1880 թ., 15 էջ: Կանանց դաստիարակությունը, Մասիս, 1880, թիվ 2587-2588 (ըստ՝ Շարուրյան Ա., Սրբոհի Տյուսաբ, Եր., 1963, էջ 62):

43 Այն լույս տեսավ «Թերճեմանը էֆքյար» լրագրում, ապա արտատպվեց «Արևելյան մամուլում» (Զմյուռնիա, 1881, էջ 345-350) և «Մեղու Հայաստանի» լրագրում (Թիֆլիս, 1882, թիվ 16):

44 «Արևելյան մամուլ», 1881, էջ 452-458:

լով, որ կինը հասարակության գոհն է, որ նրա ստրկական վիճակը պայմանավորված է օրենքներով, կրոնով, նախապաշարմունքներով ու սովորություններով: Այնուամենայնիվ, նա չի կարողանում պատասխանել Մ. Մամուրյանի հարցին: Եվ չէր կարող, քանի որ կանանց համար աշխատատեղերի ստեղծման հնարավորությունը ենթադրում էր տվյալ պետության կարգերի ու տնտեսության փոփոխություն: Այն, ինչ հնարավոր չէր իրականության մեջ, հնարավոր էր գրողի երևակայությամբ: Կնոջ դատի պաշտպանությունը դարձավ Տյուսաբի գրական ստեղծագործության առանցքը, իր գաղափարները նա հետագայում մարմնավորեց «Մայտա», «Սիրանույշ», «Արաքսյա կամ վարժուհին» վեպերում, որոնցով նա՝ իբրև առաջին վիպասանուհի, առանձնահատուկ տեղ գրավեց հայ գրականության պատմության մեջ:

Տյուսաբը գրական անդաստան բերեց սեռերի իրավահավասարության հարցը: Հավասարություն ասելով՝ նա հասկանում էր իրավունքի և պատասխանատվության, աշխատանքի և վարձատրության, հնարավորությունների հավասարություն: Նա գտնում էր, որ հասարակությունը կազմված է ընտանիքներից, և որքան ներդաշնակ լինի ընտանիքը, այնքան իդեալական կլինի հասարակությունը: Բավարար չէ կնոջ կրթությունը, անհրաժեշտ է ստեղծել պայմաններ, որ նա պիտանի լինի հասարակությանը, գործունեության ասպարեզ և կարողությունները դրսևորելու հնարավորություն ստանա: «Մայտայի» հրապարակումից հետո մեծ աղմուկ բարձրացավ, նրան մեղադրեցին հայ ընտանիքի բարոյական հիմքերը խարխլելու մեջ: Սակայն պաշտպանեցին առաջադեմ գործիչները՝ Մ. Մամուրյանը, Ա. Արփիարյանը, Հր. Ասատուրը և ուրիշներ: Տյուսաբը գտնում էր, որ կնոջ առաջին թշնամին հենց ինքը՝ կինն է: Եթե կանայք միավորվեն, գորավոր ուժ կկազմեն և կկարողանան պաշտպանել իրենց իրավունքները: Տունը չպետք է դառնա կնոջ բանտը, կնոջ տգիտությունն ու ստրկությունը վտանգում են «բոլոր ընկերական շենքին հասարակությունը»⁴⁵: Նա սուր կերպով դրեց նաև չամուսնացած, ամուլ և այրի կանանց հարցը: Նա ցավով էր նշում, որ կնոջ առջև փակվում են բոլոր ճամփաները, որ դա արդարացնելու համար պատճառ են բռնում կնոջ կարողությունների սահմանափակությունը:

Այսպիսով, եթե XIX դ. 40-50-ական թվականներին մամուլում առաջ էր քաշվում միայն իգական կրթության անհրաժեշտության հիմնահարցը,

45 «Մուրճ», 1901, թիվ 6:

իսկ կնոջ առաքելությունը համարվում էր ամուսնությունը, մայրությունը, իրեն զոհելը «ամուսնու ուրախության և կյանքի համար», սիրո մեջ սպառվելը⁴⁶, ապա 70-80-ական թվականներին դրվում էր կնոջը հասարակության լիարժեք անդամ դարձնելու հարցը: Այսպես, Երևանում լույս տեսնող «Պսակ» (1880-1883թթ.) թերթում բարձրացվեց կանանց հասարակական ակտիվության հարցը: Հովհաննես Հեթումի «Ի՞նչ ենք պատրաստում մենք մեր աղջիկներից» հոդվածում նա պահանջում էր հարստացնել իգական կրթության բովանդակությունը, աղջիկներին սովորեցնել ասեղնագործություն, կարուձև, շերամապահություն, թռչնապահություն, զինել հասարակական վեհ գաղափարներով, որոնք նրանց համար **«ավելի բարձր, ավելի թանկ պեղք է լինեն, քան կնությունը, մայրությունը, զավակներ մեծացնելը»**⁴⁷: Նույն շրջանում Կ.Պոլսում լույս տեսնող «Արևելքում» (1884-1896թթ.) տպագրվում էին հոդվածներ, որոնք նվիրված էին կնոջ իրավահավասարությանը, հասարակության մեջ նրա ունեցած դերին, ընտանիքի ամրության խնդիրներին: «Արևելքը» ընթերցողներին պարբերաբար ծանոթացնում էր Կ.Պոլսի արժանավոր հայ կանանց գործունեությանը (Եղիսաբեթ Յուսուֆյան, Նազլը Վահան (Ս.Տյուսաբի մայրը) և ուրիշներ)⁴⁸:

XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի հայ մամուլի միջոցով հասարակական գիտակցության մեջ աստիճանաբար արմատավորվում էր սեռերի իրավահավասարության հիմնահարցը, դանդաղորեն փոփոխվում էին ընտանիքում ու հասարակության մեջ կնոջ դերի մասին կարծրատիպերը:

46 «Մշակ», 1877, թիվ 9:

47 Հայ պարբերական մամուլի պատմություն, 18-19-րդ դարեր, հ.1, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Կահիրե, 2006թ., էջ 458:

48 Նույն տեղում, էջ 515:

2.2. Կանանց մամուլի սկզբնավորումը

Կանանց հասցեագրված առաջին պարբերականները՝ «Հավերժահարս», «Կիթառ», «Տոմար ընտանեկան»: Ֆեմինիզմի և հայ կանանց հիմնահարցերի քննարկումը «Արտեմիսում»: Հայկանուշ Մառքի «Ծաղիկ» և «Հայ կին» հանդեսները:

Ինչպես տեսանք, ժամանակի մամուլն ու հասարակական գործիչները տեղ ու ժամանակ չէին խնայում կանանց հարցի արծարծման համար: Տեսանք նաև, թե ինչպես ուսյալ կանանց առաջին իսկ սերունդը ներքաշվեց այդ բանավեճի մեջ և սկսեց կանանց իրավունքների համարձակ հարցադրումներ անել: Իրենց ձայնը բարձրացնելու համար նրանք լրագրային մակերեսի սղոթյան խնդիր չունեին: Այն նրանց ընձեռվում էր առատորեն: Այնուամենայնիվ, չեն դադարել հատուկ կանանց մամուլի, այսինքն՝ զուտ կանանց վերաբերյալ և կանանց հասցեագրված պարբերականների ստեղծման փորձերը: XIX դարի 60-ական թվականներին, երբ Ազգային սահմանադրության շուրջ առաջացած շարժման և Ձեյթունի հերոսամարտի բերած ոգևորության ալիքի վրա ասպարեզ էին իջնում նոր պարբերականներ, հասարակական կազմակերպություններ, թատերախմբեր, կրթօջախներ, երևան եկան կանանց հասցեագրված առաջին պարբերականները:

1861 թ. հուլիսի 29-ին Չմյուռնիայում տարածվեց «**Հավերժահարս**» թերթի ծրագրային հայտարարությունը՝ Սարգիս Փափազյանի և Թ. Ավետիսի ստորագրությամբ, որով հռչակվեց այն «հայ տիկնանց և օրիորդաց նվիրելու» նպատակը: Հայտարարության հեղինակները հավաստում էին, որ հրատարակվելիք հանդեսը չի ներքաշվելու բանավեճերի մեջ, ինչը հատուկ է ժամանակի պարբերականներին, այլ իր խնդիրն է համարելու գրել հայ կանանց և օրիորդներին հետաքրքրող ու ցանկալի նյութերի մասին, ներկայացնել Փարիզի նորաձևությունը՝ պատկերներով ու մեկնաբանություններով, հրատարակել սիրավեպեր, նամակներ ու սիրային բանաստեղծություններ: Բացի դրանից, ըստ հայտարարության հեղինակների, հանդեսը ներկայացնելու էր այն, ինչ հետաքրքրում է արհեստավորին, վաճառականին, խանութպանին, հրապարակելու էր քաղաքական լուրեր, ծանուցումներ ծնվողների, մեռնողների, նշանվողների ու կարգվողների մասին, «**որպեսզի խաթունների**

համար բամբասանքի նյութ չմնա»⁴⁹: «Հավերժահարսի» (Հանդես ամսօրյա, վիպասանական, արվեստաց և գիտությանց, նորելուկի և զվարճալյաց) առաջին համարի «Հառաջաբանը», որի հեղինակը հանդեսի տնօրեն և խմբագիր Սարգիս Փափագյանն է, ցույց է տալիս, որ ծրագիրը վերանայվել է՝ ընդգրկելով ավելի լայն նպատակներ, մասնավորապես ազգային առաջադիմության խնդիրներ: Միաժամանակ Ս. Փափագյանը ընդգծում է, որ հանդեսը հավատարիմ է մնալու իր անվանը, ձգտելու է մարգել, հղկել իզական սեռի ճաշակը, կենցաղը, տղամարդկանց հետ ունեցած հանրային և ընտանեկան հարաբերությունները:

Այսուհանդերձ, ելնելով հանդեսի բովանդակությունից, այն մեծ վերապահությամբ կարելի է կանանց պարբերական համարել: Եթե զանց առնենք նորածնության գունավոր ներդիրները (որոնք, ի դեպ, բավական բարձր որակի են, պատվիրվում էին Փարիզում), ապա բոլոր նյութերը՝ թե՛ տեղեկատվական, թե՛ գիտաճանաչողական, թե՛ գրական-գեղարվեստական, հավասարապես օգտակար և հետաքրքրական են և՛ տղամարդկանց, և՛ կանանց համար: Ավելին, հանդեսում տեղ չեն գտել կանանց հարցերին նվիրված առանձին նյութեր, որոնք, ինչպես տեսանք, բավական հաճախ էին երևում ժամանակի ուրիշ պարբերականներում: Թերևս բացառություն է 1862 թ. մարտի 15-ի համարում զետեղված մի լրատվություն, որով ուշադրություն է հրավիրվում տեղի մի քանի կանանց բարեսիրական նախաձեռնության վրա և դրվատանքի խոսք ասվում նրանց հասցեին:

Այսպիսով, «Հավերժահարսն» է առաջին պարբերականը, որ պաշտոնապես հասցեագրվել է իզական սեռի ընթերցողներին, թեև իր բնույթով ու բովանդակությամբ այն վերապահությամբ կարող է դասվել կանանց պարբերականների շարքը:

«Կիթառը» (Հանդես ամսօրյա, հրավեր հայկազն օրիորդաց) առաջինն է, որ հրատարակվեց կնոջ կողմից, հասցեագրվեց կանանց և գրեց կանանց մասին⁵⁰: Ե.Կ.Տ. Հայկուհի ստորագրող տնօրեն-խմբագիր Էլյախ Կեսարացյանը, առաջին համարի առաջաբանում նկարագրելով իր ժամանակները, երբ բոլորը եռանդ չեն խնայում ազգին նպաստ բերելու համար, հայտնում է, որ տվյալ հանդեսը հրատարակելով՝ ինքն էլ ցանկանում է «հայրենի տան շինության համար փոքր-ինչ ձեռնտվություն» անել և

49 Տե՛ս Հակոբյան Մ., Չմյուռնահայ պարբերական մամուլը (1861-1880), Եր., 1987, էջ 241-242:

50 Հրատարակվել է Կ.Պոլսում, 1862 թ. օգոստոսի 1-ից մինչև 1863 թ. փետրվարի 1-ը, լույս է տեսել ընդամենը 7 համար:

նպատակ ունի հայ օրիորդների ու տիկիհների մեջ արթնացնել ազգասիրություն, ուսման սեր, քաղաքավարություն ու համարձակություն, մատուցել օրիորդների դաստիարակության, բարոյական ու բանասիրական, հայրենասիրական հողվածներ, ազգային երգեր, ոտանավորներ ու առակներ: «Կիթառի» առաջին համարը նման է մենախոսության, քանզի Է.Կեսարացյանն է բոլոր հողվածների հեղինակը: «Իրավունքը ի գործ դնելը հանդգնություն չէ» հողվածում արված ակնարկներից հստակ երևում է, որ հանդեսը մինչև լույս տեսնելը ունեցել է հակառակորդներ, որոնք մեղադրել են Կեսարացյանին «ազգին մեջ դեռ չերևցած գործի մը առաջինն ըլլալու» հանդգնության մեջ, նաև մտավախություններ են հայտնվել, թե հանդեսը հայ օրիորդների համար գայթակղությունների աղբյուր կարող է դառնալ: Բերելով իր փաստարկները՝ Կեսարացյանը գրում է. «...Մեր պաշտոնը օրիորդաց գայթակղություն չէ և չկարեր ըլլալ. հանդգնություն չէ, քանի որ յուր նպատակն է ընկերասիրություն: Անպատեհ չէ, քանի որ պարկեշտության և ուղղության դեմ չէ, ավելորդ չէ, երբոր սեռիս հառաջադիմության նպատակն է միջոց մը կարե ըլլալ»: «Կիթառի» խմբագրուհին հրապարակախոսության ու լրագրության ասպարեզ ոտք դնելու իր հանդգնության համար բանավեճի առիթ է տվել նաև այն ժամանակ, երբ հանդեսը վաղուց արդեն հեռացել էր ասպարեզից: Բանն այն է, որ «Կիթառի» առաջին համարը Փարիզի «Արևմուտք» երկշաբաթաթերթի խմբագիր Ստեփան Ոսկանին է հասնում 1864 թ.: Եվ նա, որ հաճախ էր ահազանգ հնչեցնում Արևմուտքի արտաքին փայլի ու պերճանքների գայթակղության դեմ, չափազանց բուռն է արձագանքում «Կիթառի» երևույթին՝ գայրացկոտ տողեր գետեղելով նրա խմբագրի հասցեին: Տեսեք, ասում է, գործվածքը ծալել է, ասեղը մի կողմ դրել, թելը կծկել, մատնոցը հանել, թուղթ է փռել իր առջև և գրիչով գրահավորված՝ նետվել աշխարհի ամենափշոտ դաշտը: «...Օրիորդի գիրգ մատներու չը վայելեր Հայկին աղեղը կիթառ աղիք ընել և զայն պրկելով ազգային սեր երգեր», - ասում է նա՝ խորհուրդ տալով նորելուկ խմբագրուհուն «բոլորովին թողնել հրապարակը»⁵¹: Ամենայն հավանականությամբ Ստ.Ոսկանը հանդիմանության խիստ խոսքերի է արժանացել իր այս անգուսպ տողերի համար, այդ է պատճառը, որ «Արևմուտքի» հաջորդ իսկ համարում գրում է. «...Օրիորդներու կրթության թշնամի չենք... Մեզի համար կրթությունը, մանավանդ օրիորդի կրթությունը, արտաքին զարդ չէ, ավելի մտքի և սրտի

51 «Արևմուտք», Փարիզ, 1864, թիվ 2, էջ 10-13:

կը վերաբերի, քան թե մորթի... Փոխ առնունք ուրեմն Եվրոպայեն լույս և ոչ սևգույր»⁵²:

«Կիթառը» նաև կողմնակիցներ ու ջերմ պաշտպաններ ունեցավ, նրա հասցեին դրվատանքի ու հարատևության բարեմաղթանքի խոսքեր հնչեցին «Մասիս», «Մեղու» և այլ լրագրերում: «**Հին գլուխներու համար գուցե հանդգնություն համարվի օրհորդի մը գրական կրկեսը նեպվիլը, բայց ինչպես կ'ըսես նույն ինքն մեր պաշտոնակից Հայկազն օրհորդը, եթե խորհիլը և հրապարակավ խոսիլը «իրավունք է, զայն ի գործ դնելը հանդգնություն չէ»:** Ոչ միայն հանդգնություն չէ, այլ նաև անհրաժեշտ պարզավորություն», - գրում է Գ.ր. Չիլինկիրյանը⁵³: Այսպես թե այնպես, «Կիթառը» երկար կյանք չունեցավ. պատճառն, անկասկած, բաժանորդների անբավարարությունն էր:

XIX դարում՝ 1874 թ., կանանց հասցեագրված պարբերական հրատարակելու մի փորձ էլ արեց Սրբուհի Երիցյանը՝ լույս ընծայելով «**Տոմար ընտանեկան**» վիճակագրական տարեգիրքը: Թեև այն վիճակագրական տեղեկատու էր առհասարակ հայերի մասին թե՛ բուն հայրենիքում, թե՛ գաղութներում, տիտղոսաթերթի վրա նշված էր. «Առաջին նվեր հայ տիկնանց»: Եվ զետեղված էին հայ կանանց պատկերներ Կարինի, Թիֆլիսի և Պոլսի տարազներով⁵⁴: Սակայն այս հիանալի ձեռնարկումը շարունակություն չունեցավ, առաջին տարեգիրքը նաև վերջինը եղավ:

Կանանց մամուլի ստեղծման առավել տևական և ուշագրավ փորձերը երևան եկան միայն XX դարասկզբին՝ «Կիթառից» մոտ չորս տասնամյակ անց, ի դեմս Մառի Պեյլերյանի «Արտեմիսի» և Հայկանուշ Մառքի «Ծաղիկի»:

«**Արտեմիսը**»⁵⁵ (Ամսահանդես ընտանեկան և գրական, օրգան քսաներորդ դարու հայ կանանց) ընթերցողի սեղանին դրվեց 1902 թվականին, որի առաջին համարում զետեղված էին ծրագրային հոդվածներ: Մ. Պեյլերյանի «Թե ինչո՞ւ այս թերթն ալ» առաջնորդողում արծարծվում են տվյալ հանդեսի հրատարակության անհրաժեշտության, նախադրյալների, նպատակների ու խնդիրների հարցերը: Պարզվում է, որ կանանց հա-

52 Նույն տեղում, թիվ 3, էջ 17:

53 «Ծաղիկ», Չմյուռնիա, 1862, թիվ 43, էջ 360:

54 Մենք այս տարեգիրքը տեսնելու հնարավորություն չենք ունեցել և նրա մասին տեղեկությունները զետեղում ենք ըստ Ե. Պողոսյանի («Հայ խմբագրուհիներ», Վիեննա, 1953 թ., էջ 24):

55 Լույս է տեսել Կահիրեում և Ալեքսանդրիայում:

մար պարբերականի՝ «հայ իգական սեռին համար անկախ թերթի, իրեն ազատ ձայնի» հրատարակումը եղել է Պեյլերյանի նվիրական երազանքը դեռևս աշակերտական տարիներից: Դրանով, ըստ նրա, հայ կինը պիտի ցույց տար, որ ինքն էլ մտավոր կարողություններ ունի՝ ըմբռնելու «հանրային կարևոր հարցերը», որոնք կապ ունեն իր պարտականությունների, իրավունքների և պահանջմունքների հետ և տակավին լուսաբանման կարիք ունեն:

Խմբագրուհին շտապում է կանխել այն հնարավոր թյուր կարծիքը, թե նորընձա հանդեսը «*իգական սեռին խնկարկուն պիտի ըլլա, անոր առավելություններուն և հասկություններուն օվասանան պիտի կարդա միայն*»: Ընդհակառակը, «Արտեմիսը» անաչառ կերպով վեր էր հանելու նրա թերությունները, այն բոլոր երևույթները, որոնք կարող էին կնոջ անկումի պատճառ դառնալ: Հանդեսի հիմնական նպատակներից մեկն էր նաև ներկայացնել գավառի կնոջ տխուր պատկերը, արթնացնել նրա՝ նախապաշարումներով թմրած հոգին: Եվ ամենակարևորը՝ «Արտեմիսը» բնավ նպատակ չուներ քարոզելու կնոջ «սանձարձակ ազատությունը»: Մ.Պեյլերյանի համոզմամբ, կնոջը վայել տեղը ընտանիքն է, և այդ նեղ շրջանակի մեջ է, որ նա իր բարձրության վրա է, քանի որ այդտեղ է, որ նա կատարում է իր երկնային դերը, բնությամբ տրված կոչումը: Իսկ «Մեր ուղեգիծը» հողվածի հեղինակը (հավանաբար Ավո Նագաշյանը, ստորագրում է՝ Ավո) հստակ ասում է, որ իրենք ֆեմինիստական գաղափարների ջատագովներ չեն: Ավելին, «Եվրոպացի կանանց շուրջը» հողվածի հեղինակն էլ (ստորագր.՝ Ս...Վարդ) հայտարարում է. «*Ֆեմինիզմը՝ կինը ընդհանրական հարկեն իբր դուրս վարարող դրություն մը, վրանգավոր է: Բոլոր այն ազգերը, որ կանանց համար շուկայական և հրապարակային ամեն աշխատանքի հեղինակու սկզբունքը առավել կամ նվազ չափով ազատ հռչակեցին, անոնք հանեցին կինը իր ընդհանրական սրբարանեն և դրին այն ահավոր ճամբուն վրա, որ դեպի անկում կը տանի կինը*»⁵⁶:

Հաջորդ համարում Մ.Պեյլերյանը վերստին անդրադառնում է այս հարցերին և փորձում է մեկնաբանել իր սկզբունքներն ու կողմնորոշումը՝ հստակ ձևակերպելով, որ ֆեմինիզմը վնասակար է հայ կնոջ համար, քանի որ կնոջ ոտնահարված իրավունքները վերականգնելուց առավել միտված է «այր մարդեն վրեժ լուծելու»: Ֆեմինիզմը, ըստ նրա, միայն կնոջ և

56 «Արտեմիս», 1902, թիվ 1, էջ 8:

տղամարդու ֆիզիկական տարբերություններն է տեսնում, բայց դժվար է ասել՝ «*իր այդ չգտումներուն լիակատար հաղթանակը օգտակա՞ր ազդեցություն պիտի ունենա ապագա մարդկության վրա, թե վնասակար*»⁵⁷: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «Արտեմիսի» նպատակն էր փակել դռները ֆեմինիզմի առաջ, այն համարվում էր կորստաբեր հայ իրականության համար: Ըստ նրա՝ հայ կնոջ նպատակը բնավ տղամարդուն հավասար ազատություններ վայելելը չպիտի լինի, դա առնվազն եսասիրություն է դիտվում, քանի դեռ օրակարգում են ազգային խնդիրները, ազգային ինքնության պահպանումը: Ի վերջո, հեղինակն այսպես է ձևակերպում հայ կնոջ ազատությունների ու իրավունքների սահմանները. «*Իրավունք ունենանք ազատ խոսելու և համաչակ կարծիք հայտնելու այն ամեն խնդիրներու մասին, որոնք կը շոշափեն հասարակական կյանքը, և պահանջենք, որ մեր ալ կարծիքները նկատողության առնվին ու գաղափարները հարգվին: Ազատ ըլլանք մեր ընդհանրական կյանքին մեջ, ազատ և անկախ մեր գործելու ու մտածելու եղանակին մեջ, ազատ հեղինակելու ունէ պաշտօնաժ գաղափարի կամ մեզի համար սիրելի մի նպատակի, մեկ խոսքով ազատ այն ամեն բանի մեջ, որը մարտը և նախապաշարումներն բոլորովին ազատ բարոյական մը կը թույլատրեն ու ունէ կերպով չի վնասեր սերունդի ազնվացման գործին: Այս սահմանեն անդին չանցնինք...*»⁵⁸:

Հանդեսի հետագա բոլոր համարները լի են այսպիսի հակասություններով: Եթե առաջին համարում կնոջ դիրքը սահմանափակվում էր ընտանիքով, դերը՝ սերնդի շարունակությամբ, ապա 5-6-րդ համարում արդեն կարդում ենք. «*Ճանչնալ հայ կինը առանց այլևայլության, իբրև հայ հասարակության բացարձակ հավասար մեկ անդամը, ընդհանրական հարկին և ազգային կամ հասարակական բոլոր երևույթներուն առաջ, ընդունելով, որ անոր փած անհատական օգուտը հավասար է այր մարդու փած անհատական օգուտին: Եվ ուրեմն ճանչնալ հայ այր և կինը հավասարներ իրենց ուրույն դերերուն մեջ*»⁵⁹: Հանդեսի հեղինակների՝ կանանց ազատագրության եվրոպական գաղափարների թյուր պատկերացումները, հայ իրականության մեջ ֆեմինիզմի արմատավորման մտավախությունը, որ նախապաշարումի է հասնում, փակուղի չի

57 «Արտեմիս», 1902, թիվ 2, էջ 34:

58 Նույն տեղում, էջ 37:

59 Ավո. Բարեշրջության զգալի պետքը ունի հայ կինը: - Արտեմիս, 1902, թիվ 5-6, էջ 137:

տանում: Նրանք կամա թե ակամա հանգում են ճիշտ եզրահանգումների՝ չխոստովանելով, սակայն, կամ չտեսնելու տալով, որ հակասում են իրենց:

«Արտեմիան» ինքնատիպ է նաև նրանով, որ փորձում էր ներկայացնել հայ կնոջ վիճակը ամենուրեք՝ տպագրելով թղթակցություններ Թիֆլիսից և տարբեր գաղութներից: Այս ուշագրավ փորձը, սակայն, երկու տարվա կյանք ունեցավ: «Արտեմիան» տպագրվեց երկու տարի:

Կանանց հասցեագրված հանդես տպագրելու փորձ արվեց նաև Ալեքսանդրապոլում: Խոսքը Նվարդ Ափինյանի «Ախուրյանի» մասին է (Կանանց սեղանի օրացույց), որի առաջին համարը նաև վերջինը եղավ:

Կանանց հասցեագրված պարբերականների շարքում լավագույն փորձերն իրավացիորեն վերագրվում են Հայկանուշ Մառքին, որի խմբագրած «Ծաղիկ» և «Հայ կին» հանդեսները իրենց որակով ու լրագրողական պատշաճ մակարդակով մինչև օրս մնացել են չգերազանցված:

«Ծաղիկը» (Կանանց հատուկ պատկերագարող շաբաթաթերթ, գրական, գեղարվեստական, առտնին տնտեսության, նորույթի, ձեռական աշխատությանց, կանացի հարցերու և աշխարհիկ իրերու) հրատարակվեց Կ.Պոլսում մոտ երկու տարի՝ 1905-1907 թթ.՝ իր շուրջը համախմբելով ժամանակի գրագետ և հասարակական գործունեություն ծավալող գրեթե բոլոր կանանց: Շաբաթաթերթի անդրանիկ համարում՝ ընթերցողներին հասցեագրված ուղերձում, խմբագիրը գրում է. **«Երկար տարիներ ի վեր բաղձալի եղած էր մեզ ուրույն հանդեսի մը մեջ ամփոփված տեսնել մեր գրագետ կիները, նման մեզ եղբայրակից թուրք և եվրոպացի ազգերու: Ավելորդ է փնտրել նպատակը այս փափագին մեջ, որ գլխավորաբար երկուք է. նախ՝ կանացի գրական ուժերն բաղկացած թերթ մը ունենալու պատիվը մեր սեռին, և երկրորդ՝ արծարծելու այդպիսով գրելու տեսնելու կարգ մը թարուն փառանդներու և մանավանդ նորահաս կին սերունդին մեջ»:** Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «Ծաղիկը» ոչ միայն հասցեագրված էր կանանց, այլև մի պարբերական էր, որ տեղ էր տալու միայն կին հեղինակներին: Հետագայում խմբագրուհին ժպիտով էր հիշելու իր այս ձգտումը: **«Միայն, այն պահին երիտասարդական խոյանքներուս անսայով՝ ուղեցի գոնե հեռավոր գիծ մը պահել «Լա ֆրոնս»-ին հեպ: Այսինքն՝ «Ծաղիկը» միայն կիներով և կիներուն համար: Արդարև, ծիծաղելի էր սահկա, բայց քսաներկու**

դարեկան էի այն արեան»⁶⁰: «Ծաղիկը» հռչակեց «միայն կիներով» սկզբունքը և ինքն էլ իր օրինակով ցույց տվեց, որ դա գործնականում անհնարին է: Բավական է հիշել, որ այն լույս չէր տեսնի առանց խմբագրի ամուսնու՝ Վահան Թռչիկյանի աջակցության: Տարիներ հետո միայն Մառքը բացում է գաղտնիքը՝ ասելով, որ «Ծաղիկին» աշխատակցել են նաև տղամարդ հրապարակախոսներ, սակայն կանանց անվան տակ՝ «կանացի տարագով»: Առհասարակ, համեմատելով «Կիթառի» և «Ծաղիկի» ժամանակներն ու պայմանները՝ Մառքը գուեղանակությամբ է արձանագրում, որ վերջինս անհամեմատ բարենպաստ պայմաններում է տպագրվել: Մառքը ոչ միայն դժվարությունների չի հանդիպել, այլև ամեն կողմից խրախույս և աջակցություն է ստացել: «Ծաղիկին» աշխատակցել են ժամանակի գրեթե բոլոր օժտված կին մտավորականները՝ Սիպիլը, Ջ. Գալեմբյարյանը, Արշակունիի Թեոդիկը, Ջապել Եսայանը և այլք: Իսկ Սիպիլը առաջին համարում հանդես եկավ ողջույնի ջերմ խոսքով. **«Մեր մեջենն ո՞վ չէ երագած կանացի քերթ մը ունենալ, մեզի հարուկ կալվածք մը, ուր կարենանք համարչակ խոսիլ կնոջական շար մը հարցերու վրա, որոնք քերես նշանակություն չունին արանց աչքին, և սակայն կենսական կարևորություն պիտի ունենային մեզի համար, եթե պարզեինք զանոնք մեր ըմբռնումին համեմատագրում էր նա: - Դուք՝ մեր կին գրողներուն ամենեն ծաղկահասակը, կապացուցանեք, թե ամենեն եռանդունն ալ եք: Չեր չեռնարկը չեզի կուրա իրավունքը ամենուս աջակցության և երախտագիտության»:**

Հետևելով «Ծաղիկի» էջերին՝ կարելի էր հարուստ տեղեկություններ քաղել ինչպես Արևմտահայաստանի տարբեր գավառների կանանց կացության, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների կանանց շարժման մասին, որոնք մատուցվում էին հայ իրականության մեջ ողջամիտ ֆեմինիզմի գաղափարները արմատավորելու համար: Օրինակ բերելով արտասահմանյան գործընկերների արդյունավետ փորձերը՝ Մառքը մշտապես գործնական քայլերի էր կոչում հայ կանանց՝ հանուն իրենց իրավունքների: Իսկ իր առաջնորդողներով փորձում էր փակել ֆեմինիզմի թյուր ընկալումներն ու մեկնաբանությունները: **«Նաև փարօրինակ իրողություն մըն է այն ըմբռնումը, որ զակավ կհասունացնեն իրենց մեջ գավառի կիները ֆեմինիզմի նկատմամբ, բոլորովին ու հիմնովին խե-**

60 Հայկանուշ Մառք (Կյանքն ու գործը), Նախաձեռնությամբ հիսնամյա հոբելյանի տիկնանց հանձնախմբի, Իսթանպուլ, 1954 թ., էջ 42:

դաքյուրելով զայն, որպես թե այդ բառը այր սեռին դեմ դնելու սահմանված ըլլար, և մենք պայքարել ուզեինք անոնց դեմ,- գրում էր Մառքը իր «Կանացի դիրք, գավառիկ կիներ» առաջնորդողում:- Այս սկզբունքով և հեղինակությամբ պեպք չէ մեր նպատակը ըլլա սեռական խտրություն մը ըմբռնել բարոյական կյանքի մեջ. ապիկա անհամերաշխության և սխալ պարտաճանաչության շողշողուն ազդակ մը պիտի ըլլա միշտ, թյուր կարծիքներու և հիվանդ ունակությանց տեղի փոխում»⁶¹:

«Ծաղիկը», որ ընդհատվել էր դեպքերի բերումով, խմբագրի տեղափոխության պատճառով, լուրջ հայտ էր: 22-ամյա Հայկանուշ Մառքը համարից համար ավելի ու ավելի էր ամրապնդում այն կարծիքը, որ օժտված հրապարակախոս ու կազմակերպիչ է, բարձր մակարդակի լրագրող: Այնպես որ, տարիներ անց՝ 1919-ին, «Հայ կին» հանդեսի շլացուցիչ մուտքը անակնկալ չէր մտավոր հասարակայնության համար, այլ վաղուց սպասված վայելք: Ինչպես և «Ծաղիկի» դեպքում, «Հայ կինի» շուրջը հավաքվեցին ժամանակի գրեթե բոլոր նշանավոր կին մտավորականները՝ Սիպիլը, Անայիսը, Չ. Գալեմբյարյանը, Չ. Պահրին, Ա. Թեոդիկը, Մ. Պերպերյանը, Վ. Քալանթարը և այլք: Հանդեսը թղթակիցներ ուներ նաև Փարիզում ու Միացյալ Նահանգներում:

Հայկանուշ Մառքը «Հայ կինը» հրատարակեց հասուն տարիքում, «Ծաղիկի» փորձն ունենալով, նրա տված դասերի հիման վրա: «Հայ կինը» այս անգամ «Ծաղիկի» մենամոլությունեն սրբագրված էր և համոզված՝ երկսեռ ուժերուն անհրաժեշտության,- խոստովանում է Մառքը իր հուշերում: - *Այս անգամ իմ ֆեմինիստ չգրումներս արմատական ըլլալով հանդերձ ավելի խոհական և պարագայական էին*⁶²: Բավական է միայն թվարկել նրա մի քանի խմբագրականները, որպեսզի ակնհայտ լինի, թե ամեն անգամ ինչ խորաթափանցությամբ ու արվեստով էր կարողանում նորովի մոտենալ կանանց հարցին՝ երևան հանելով հարցի նորանոր նիստեր. «Պատասխանատվության գիտակցությունը», «Ո՞րք դնել մոլորած կինը», «Կինը կնոջ հանդեպ», «ՈՒղեղով՝ այր, սրտով՝ կին», «Մեր այրերը և մենք», «Աշխատող կիներու բարոյական դրությունը», «Հայ կնոջ պարտականությունը հանդեպ հայ բանակին», «Կանացի առաքինությունը» և այլն: Մինչև օրս չի կորցրել

61 «Ծաղիկ», 1906, թիվ 22, էջ 546-547:

62 Հայկանուշ Մառք (Կյանքն ու գործը), էջ 57:

իր այժմեականությունը նրա «Կնոջ դատը» ընդգրկուն վերլուծությունը⁶³:

«Հայ կինը» ձգում էր ոչ միայն իր հրապարակախոսությամբ, այլև լրագրական ինքնատիպ հնարքներով: Օրինակ՝ առողջ և գեղեցիկ մանուկների մրցույթը, որոնց լուսանկարները տպագրվում էին յուրաքանչյուր համարում: Այս մրցույթը հրապուրեց ու հարյուրավոր բաժանորդներ բերեց հանդեսին: Հանդեսը կաշառող էր նաև իր անկախությամբ և ամբողջ գոյության ընթացքում երբեք որևէ կուսակցության կամ քաղաքական հոսանքի տուրք չտվեց: Տարիներ անց Հ. Մառքը ցավով է հիշում, որ ստիպված է եղել մերժելու նաև Հովհ. Թումանյանին՝ ասելով. **«Չեմ կրնար. արդեն ասկե առաջ ուրիշներն ալ մերժեցի: Եթե կա դրոշ մը, որուն ներքև պիտի ասարի «Հայ կինը», բացարձակապես կնոջական դրոշն է ան, զերծ ամեն ազդակե և մղումե»**⁶⁴: Այս սկզբունքայնության շնորհիվ էր, որ «Հայ կինը» դիմացավ ժամանակի փորձություններին ու հարատևեց 13 տարի: Այն սիրելի գրուցակից դարձավ և հայ կնոջ ձայնը լսելի դարձրեց աշխարհի բոլոր կողմերում:

63 «Հայ կին», 1922, թիվ 3-8:

64 Հայկանուշ Մառք (Կյանքն ու գործը), էջ 58:

2.3. Կանանց հարցը խորհրդային ՉԼՄ-ներում

Խորհրդային քաղաքականությունը կանանց նկատմամբ և դրաներկայացումը մամուլում: Կանանց թերթիկների ստեղծումը պարբերականներում: «Հայաստանի աշխատավորուհի» պարբերականը:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո մամուլը կանանց հարցի առնչությամբ սկսեց արտահայտել «պետական ֆեմինիզմի» քաղաքականությունը: Կանայք դիտվում էին որպես քաղաքացիների հատուկ կատեգորիա: Նոր գաղափարախոսությունը հնարավոր չէր տարածել առանց կանանց աջակցության, իսկ այդ աջակցությունը հնարավոր չէր ստանալ, քանի դեռ ընտանիքում պահպանվում էին ավանդական գենդերային դերերը: Ուստի անհրաժեշտ էր վերափոխել կնոջը, տնտեսապես անկախ դարձնել: «Կենցաղի հեղափոխությունը» (սնունդը՝ հասարակական ճաշարաններում, լվացքը՝ լվացքատանը, երեխաների դաստիարակությունը մանկապարտեզներում և դպրոցներում) պետք է ազատեր կնոջը տնային հոգսերից և ներգրավեր հասարակական ոլորտում: Մեծ փոփոխություններ տեղի ունեցան ամուսնաընտանեկան ոլորտում. հաստատվեց քաղաքացիական ամուսնությունը (եկեղեցական պսակը իրավաբանական հետևանքներ չէր առաջացնում), թույլատրվեց ապահարգանք, օրինականացվեցին արտամուսնական երեխաները, օրինականացվեց նաև աբորտը, բայց հարցը լուծում էին ոչ թե ընտանիքը, այլ կինբաժնի, կոլեկտիվի և սոցապահովության բաժնի ներկայացուցիչները:

Կոմունիստական կուսակցության կողմից նախանշված նպատակներին հասնելու համար մամուլը սկսեց կերտել աշխատավոր կնոջ կերպարը: Խորհրդային բոլոր պարբերականներում ստեղծվեցին կանանց թերթիկներ, որոնք լրացնում էին կանանց պարբերականների պակասը:

Խորհրդային Հայաստանի բոլոր գավառներում անցկացվեցին անկուսակցական կանանց համագումարներ, որոնք լայնորեն լուսաբանվում էին մամուլում: Ինչպես նշվում էր «Խորհրդային Հայաստան» թերթում, դա խիստ անսովոր երևույթ էր, քանի որ հայ կինը «**չէր փեսեյ, որ իրեն մարդու փեղ դնեն**», «**լսեն իր մտածումները և կանչեն իրեն մասնակցելու ընդհանուր աշխատավորության կյանքին**»⁶⁵: Կանանց ժողովների

65 «Խորհրդային Հայաստան», 1921, 2 հունիսի:

և կոնֆերանսների կազմակերպումը բացատրվում էր անկաշկանդ մտավոր մթնոլորտ ստեղծելու անհրաժեշտությամբ և կանխատեսվում էր, որ մոտ ապագայում այլևս դրանց կարիքը չի զգացվի:

Կանանց կոչ էր արվում մտնել հասարակական ոլորտ, բառացիորեն հայտարարվում էր, թե ժամանակը չէ, որ կինը զբաղվի իր ընտանիքով ու երեխաներով: Բայց կար նաև այն ըմբռնումը, որ դարերով արմատավորված կարծրատիպերը դժվար է վերացնել, ուստի բերվում էր հետևյալ հիմնավորումը. գործիր հասարակական ոլորտում և կլուծես ընտանիքիդ հիմնախնդիրները, որքան էլ պտտվես ընտանիքի, երեխաների շուրջը, միևնույն է, քանի դեռ ամբողջ երկրում դրությունը չբարելավվի, ոչինչ չի ստացվի⁶⁶:

1921թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, որին մասնակցեցին նաև կանայք, Կոմունիստ կանանց միջազգային 2-րդ կոնֆերանսը որոշում ընդունեց, որով Կենտկոմին, հեղկոմներին, գավկոմներին կից հատուկ պատասխանատու մարմիններ էին ստեղծվելու՝ կանանց հետ աշխատելու համար: Նշվում էր, որ կանանց հետամնացությունը հաճախ նրանց **«զենք է դարձնում բանվոր դասակարգի թշնամիների ձեռքին, որոնք, օգտվելով նրանց հեղամնացությունից, նրանց մղում են բանվորա-գյուղացիական իշխանության դեմ»**⁶⁷:

Պետական քաղաքականությունն ուղղված էր կանանց «մշակելուն», նրանց դաշնակից դարձնելուն, որպեսզի դառնային «պրոլետարիատի շահերի պաշտպանման ուժեղ բանակ»⁶⁸: «Խորհրդային Հայաստան» թերթը մեծ ոգևորությամբ տեղյակ էր պահում, որ Երևանի Արմավյան (Աստաֆյան) փողոցի N 33 տանը ստեղծվել է բանվորուհիների սենյակ: Դա նախկին ապահովված կանանց ընթերցարանն էր: Այժմ դարձել էր մի սենյակ, որտեղ աշխատավոր կանայք կարող էին կարդալ, սովորել, հանգստանալ և պաշտպանել «իրենց խախտված իրավունքները»: Աշխատավոր կնոջ սենյակի պատերին փակցված էին հետևյալ կարգախոսները. «Աշխատավոր կին, մտի՛ր քո սենյակը կարդալու», «Ժամանակը ոսկի է, իզուր մի՛ վատնիր ազատ ժամերդ, զբաղվի՛ր ինքնակրթությամբ»:

Խորհրդանշական է «Խորհրդային Հայաստան» թերթում զետեղված հետևյալ քառյակը, որ նվիրված է 1921թ. հունիսին Երևանում գումարված կանանց համագումարին.

66 «Խորհրդային Հայաստան», 1921, 2 հուլիսի:

67 «Խորհրդային Հայաստան», 1921, 6 սեպտ.:

68 Նույն տեղում:

**... Շարժիր քեերդ, պարտիր եքերը
Եվ թոիր անվախ բարձունքը մարքի,
Հասել է ժամը քո ազատության,
Մոդ է վախճանը կնոջ «գերություն»⁶⁹:**

Չնայած կանանց հարցը մշտապես խորհրդային մամուլի ուշադրության կենտրոնում էր, մշակութային փոփոխությունները խիստ դանդաղում էին: Պատահական չէ, որ որոշվեց կանանց շրջանում աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար ստեղծել կանանց պարբերականներ: 1924 թ. մարտից սկսեց հրատարակվել «**Հայաստանի աշխատավորուհի**» հանդեսը (ՀԿ(Բ)Կ Կենտկոմի կինբաժնի օրգան, խմբագիր Ֆլորա Վարդանյան): Այն մեծ դեր խաղաց կանանց իրավական իրազեկման և ինքնագիտակցության բարձրացման համար: Հետաքրքրական է ականավոր մտավորական և հասարակական գործիչ Չապել Եսայանի կարծիքը այս պարբերականի մասին. «**Ֆեմինիստական քերթ մը չէ, այլ ազատ օրկանը բանվորուհիներու և գեղջկուհիներու, և որուն նպատակն է օժանդակել ամեն միջոցով մշակութային և կենցաղային բարձրացման Հայաստանի քաղաքացի աշխատավորուհիներուն, որպեսզի անոնք ի վիճակի ըլլան իրենց բաժին ինկած դերը կատարել առավելագույն միջոցներով**»⁷⁰: «Երևան» պարբերականում, որը լույս էր տեսնում Փարիզում, Չապել Եսայանը նաև հետաքրքիր համեմատություն է անում կապիտալիստական երկրների կանանց դրության հետ, նշելով. «**Մինչդեռ առաջինները պեպր է պարտաստիկի իրենց պարտավորությունները իբրև ազատ քաղաքացի լրիվ կատարելու համար, պուրժուական երկիրներու կիները դեռ ստիպված են ոգի ի բռին պայքարիլ, չեռք բերելու համար իրավունքներ, որոնք բնական իրավունքներն են ամեն մարդկային արարածի**»⁷¹: Չնայած դրան՝ խորհրդային մամուլում շարունակ մտահոգություն էր հայտնվում կանանց հետ մնալու կապակցությամբ: Այսպես, «Կոմունիստի» 1925 թ. համարներից մեկում կարդում ենք. «**Մեր կին ընկերները քաղաքականապես դեռ հեպ են տղամարդկանցից, սակայն այս ամենն ունի իր սոցիալական պարճառները: Խորհրդային շրջանում կիսն իր աշխատանքի դիմաց ստանում է այնքան, որքան տղամարդը: Հեպեաբար կարելի է սսել, որ կիներ նյութական և իրավական տեսանկյունից հավասար է**

69 «Խորհրդային Հայաստան», 1921, 2 հունիսի:

70 Ֆելեքյան Հ.Հ., Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում.- Եր., 1970, էջ 442:

71 Նույն տեղում:

*տղամարդուն, միայն մնում է, որ նա կուլտուրայով և քաղաքականապես հասնի տղամարդուն: Մի հանգամանք, որի հեղեանքով նա ավելի շուտ կազապովի ընտանեկան, կենցաղային կապանքներից: Այս ամենի համար անհրաժեշտ է, որ կոմբոյիջներում հապուկ ուշադրություն դարձվի կանանց վրա՝ նրանց առաջ քաշելու և սկսելով աշխատանքի լծելու: Այս ամենը մենք նշում ենք, որովհետև շատ բոյիջներում կանանց սպորին մասսան դեռ պասիվ է»⁷²: Մամուլը ցավով էր արձանագրում, որ կանանց կրթական մակարդակը ցածր է, կանանց անգրագիտության վերացման գործընթացը դանդաղ է ընթանում: Սակավ էին նաև կին թղթակիցները: Մամուլում հրապարակվում էին հոդվածներ, որոնցում բարձրացվում էին կանանց մասնագիտական առաջընթացի հիմնահարցերը: Այսպես, թերթերից մեկում մեջբերվում էր Վ. Լենինի հետևյալ միտքը. «**Ծիծաղելի է սոցիալիզմի մասին մտածել՝ ունենալով բազմամիլիոն հեղամնաց, մութ մասսաներ: Մենք դեռ կատարում ենք նախապարաստական աշխատանքներ սոցիալիզմի համար: Այդ պատճառով էլ ամեն ինչից առաջ հարկավոր է վերացնել բոլոր աշխատավորուհիների անգրագիտությունը: Սոցիալիզմը սկսվում է հենց անգրագիտության լիկվիդացիայից: Եվ բավական չէ, որ կնոջն ընտրում են այս կամ այն կազմակերպության մեջ. մի բան, որ արվում է հենց այնպես, չնի համար»⁷³:***

Մամուլում կանանց թեման աշխուժանում էր Մարտի 8-ի կապակցությամբ: Բերվում էր այդ օրվա առթիվ կազմակերպվող օրինակելի միջոցառումների ծրագիր, օրինակ,

1. գեկուցում կանանց օրվա մասին,
2. սպորտխմբակի աշխատանքների ներկայացում,
3. գրական-երաժշտական երեկոյի կազմակերպում,
4. կանանց անկյունի ստեղծում,
5. պատի թերթի հատուկ համարի թողարկում,
6. ժամանակավոր մանկական մտուրի բացում⁷⁴:

Մամուլում տպագրվել է Կանանց միջազգային օրվա առթիվ Ի. Ստալինի ելույթը, որում նա նշում է, որ մարդկության պատմության մեջ կեղեքվածների ոչ մի շարժում տեղի չի ունեցել առանց աշխատավոր կանանց մասնակցության⁷⁵:

72 «Կոմունիստ», 1925, թիվ 39:
 73 «Կոմունիստ», 1925, թիվ 46:
 74 «Կոմունիստ», 1925, թիվ 52:
 75 «Կոմունիստ», 1925, թիվ 54:

Թերթերում լուսաբանվում էին հանրապետության կյանքի՝ առաջին հայացքից աննշան իրադարձություններ, բայց նյութն այնպես էր ներկայացվում, որ դրանք կարևոր նշանակություն էին ձեռք բերում, նոր հնչեղություն ստանում: Մամուլը խրախուսում էր կանանց ակտիվությունը, պարսավանքի ենթարկում նրանց, ուժեր խոչընդոտում էին այն: Օրինակ՝ 1925 թ. մարտի 20-ին Ջաքաթալայում բացվել է անկուսակցական կանանց երկրորդ կոնֆերանսը, որին մասնակցել է 50 պատվիրակ՝ բանվորուհիներ և գեղջկուհիներ: Այս կապակցությամբ թերթը մանրամասն ներկայացնում էր գեղջկուհիների պատմածը, թե ինչպես են իրենք գյուղից մեկնելիս ծաղրուծանակի ենթարկվել. ոմանց ամուսիններն արգելել են իրենց կանանց մասնակցել կոնֆերանսին: Կանայք գանգատվում են, որ նույնիսկ գյուղական իշխանությունները ծաղրով են վերաբերվել իրենց և ոչ մի աջակցություն ցույց չեն տվել: Մի ուրիշ օրինակ. թերթերում լուսաբանվում էին 1925 թ. հուլիսի 8-ին Գիշի գյուղում կայացած գեղջկուհիների ընդհանուր ժողովի աշխատանքները՝ նշելով, որ այնտեղ բարձրացվել են հետևյալ հիմնահարցերը.

1. կանանց իրավունքների մասին. պայքարել այն ամենի դեմ, ինչը խոչընդոտում է դրանց իրագործումը,
2. հատուկ տուրքային քաղաքականություն,
3. անգրագիտության վերացում:

Խորհրդային առաջին տարիներին կանանց հասարակական ոլորտում ընդգրկելու պետական պատվեր կար, և մամուլի խնդիրն էր քարոզել դա, ձևավորել նաև դրա սոցիալական պատվերը:

Հետագայում փոխվում է պետական քաղաքականությունը, և փոխվում է նաև մամուլի դիրքորոշումը: Օրինակ՝ կանանց ներգրավումը հասարակական ոլորտում հանգեցրեց ծնելիության անկման: Իսկ 1930-ական թվականների լարված միջազգային դրության հետևանքով խորհրդային երկրին զինվորներ էին հարկավոր: 1936 թ. հունիսի 27-ի ՍՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտեի և Ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշմամբ աբորտն արգելվեց: Միաժամանակ մամուլը սկսեց ձևավորել բազմազավակ մոր կերպարը և խրախուսել խորհրդային ամուր ընտանիքը: Ընդունվեց Ստալինյան Սահմանադրությունը, որում ընդգծվեց սեռերի իրավահավասարությունը կյանքի բոլոր բնագավառներում: Սակայն իրական կյանքում նկատվեցին որոշ շեղումներ: Այսպես, ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944թ. հուլիսի 8-ի հրամանագրի համաձայն, միայն գրանցված ամուսնության դեպքում էին ճանաչվում ամու-

սինների իրավունքները և պարտականությունները: Չգրանցված ընտանիքներին պետությունը օգնություն չէր ցուցաբերում, դրանից տուժում էին կանայք և երեխաները: Շուտով ընդունվեցին այլ հրամանագրեր, որոնք խիստ դժվարացրին ամուսնալուծությունը: Ամուսնալուծությունը համարվեց քաղաքացու «բարոյական անկայունության» նշան: Դրա համար կարող էին հեռացնել կուսակցությունից, որ նշանակում էր կարիերայի ավարտ:

1943 թ. դպրոցական կրթության բարեփոխմամբ տղաների և աղջիկների ուսուցումն առանձնացվեց: Դա արվում էր կրթությունը յուրաքանչյուր սեռի «բնական» դերին համապատասխանեցնելու համար: Այդ նոր հարացույցով տղան պետք է «մարտիկի» դեր կատարեր ճակատում և թիկունքում, իսկ աղջիկը՝ «մոր», «գիտակից դաստիարակի»: Համապատասխան դիրքորոշում էին որդեգրել նաև մամուլն ու ռադիոն:

Հետպատերազմյան տարիներին տնտեսության վերականգման խնդիր կար, և ՉԼՄ-ներում կարևորվեց կանանց մասնակցությունը հասարակական կյանքին: Սկսեց ձևավորվել խորհրդային *պարտերևալիզմի* քաղաքականությունը, ստեղծվեց արտոնյալ օրենսդրություն: Երբ 1979 թ. ՄԱԿ-ը ընդունեց Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, խորհրդային լրատվամիջոցները նշեցին, որ ԽՍՀՄ-ում դա վաղուց իրականություն է դարձել: Այդ շրջանում Հայաստանի մամուլն ուղղակի հեղեղված էր հայ կնոջ ձեռքբերումների մասին նյութերով:

Ընդունվեց քվոտաների մի յուրահատուկ համակարգ, որի շնորհիվ կանայք հնարավորություն ստացան ներգրավվելու նաև իշխանության մեջ: Տեղական խորհուրդների համար սահմանվել էր 40-50% քվոտա, ԳԽ-ի համար՝ մոտ 30%:

Նոր հասկացություններ


Պեղական ֆեմինիզմի քաղաքականություն - Պեղության հատուկ քաղաքականություն կանանց նկատմամբ, որի սահմաններում իրականացվում էր խորհրդային կանանց էմանսիպացիան:

«Կենցաղի հեղափոխություն» - Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո առաջին տարիներին Ռուսաստանում արժարժվող զաղափար, որը նախատեսում էր կնոջ ազատագրում տղային աշխատանքից սպասարկման ոլորտի զարգացման միջոցով (սնունդը՝ հասարակական ճաշարաններում, լվացքը՝ լվացքատներում, երեխաների խնամքը՝ մտուր-մանկապարտեզներում և այլն):

Պատերնալիզմ - Կանանց նկատմամբ պեղծական քաղաքականություն չունեցող, որի դեպքում պեղծությունը կանանց հարցում վարում է հովանավորչական քաղաքականություն: Ծանաչվում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, կանայք լայնորեն մասնակցում են հասարակական կյանքին:

Հարցեր քննարկման համար.

1. Ինչպե՞ս է գենդերային գաղափարախոսությունը ներագրում կանանց և տղամարդկանց ամսագրերի վրա:
2. Ինչպե՞ս հաղթահարել հետևյալ արատավոր շրջանը.



Տնային առաջադրանք. Գտնել գենդերային կարծրատիպերի օրինակներ նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային մամուլում:

Քանավեճի հիմնախնդիր. «Գենդերային կարծրատիպերի փոփոխումը և դրանց արտացոլումը մամուլում. պատմություն և արդիականություն»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Չաքարյան Լ., Գենդերային գիտելիքների հիմունքներ (միջառարկայական դասընթաց) / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2003.-118 էջ:
2. Հակոբյան Մ., Չնյունահայ պարբերական մամուլը (1861-1880).- Եր., 1987.- 362 էջ:

3. Հայ պարբերական մամուլի պատմություն, XVIII-XIX դարեր, հ.1 / ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ.- Կահիրե, 2006:
4. Հարությունյան Ա., Երևելի տիկնանց դարը: Հայ կանանց հասարակական գործունեությունը XIX դարում և XX դարասկզբին.- Եր., 2005.- 160 էջ:
5. Նիկողոսյան Ա., Գենդերային փոխակերպումները հայոց պատմության մեջ: Ուսումնական ձեռնարկ / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2005.- 150 էջ:
6. Նիկողոսյան Ա., Պատմության գենդերային դիսկուրսը / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2003.- 98 էջ:
7. Պողոսյան Ե., Հայ խմբագրուհիները.- Վիեննա, 1953.- 64 էջ:
8. Стайс Р., Женское освободительное движение в России. Феминизм, нигилизм и большевизм (1860-1930).- Москва, 2004.



Գ Լ ՈՒ Խ III

ԽՈՍՔԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

- 3.1. Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում՝ որպես ժողովրդավարական ՉԼՄ-ների հիմնախնդիր
- 3.2. ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի հանձնարարականները ՉԼՄ-ներում հասարակության գեղեցիկ հիմնախնդիրների լուսաբանման մասին
- 3.3. Գեղեցիկներին զգայուն լրագրությունը որպես խոսքի ազատության հիմնախնդիր

3.1. Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում՝ որպես ժողովրդավարական ՉԼՄ-ների հիմնախնդիր

Խոսքի և տեղեկատվության ազատության միջազգային չափորոշիչները: Կանանց և տղամարդկանց հավասարությունը որպես ներկայացուցչական ժողովրդավարության հիմնախնդիր: Կանանց իրավունքների հայեցակարգից սեռերի հավասարության հայեցակարգին անցնելու գործելակերպը միջազգային փաստաթղթերում:

Մեր ժամանակներում արտահայտման կամ խոսքի և տեղեկատվության ազատությունները դասվում են մարդու իրավունքների համակարգի, հետևաբար և ժողովրդավարական հասարակության հիմնաքարերի շարքը, համարվում նաև՝ այդ հասարակության և յուրաքանչյուր անհատի

զարգացման հիմնական նախապայմանը: Այդ ազատություններն առանցքային տեղ ունեն մարդու իրավունքների համակարգում, քանի որ անհատը չի կարող իրականացնել իր մյուս իրավունքները, եթե չի ապահովվում տեղյակ լինելու իրավունքը. չիմացությունը հավասար է չունենալուն:

Անցած դարի երկրորդ կեսին մշակվել և ընդունվել են բազմաթիվ միջազգային ու ազգային օրենքներ, որոնք ապահովում են ոչ միայն նշված ազատությունները, այլև մամուլի կամ մյուս զանգվածային լրատվամիջոցների ազատությունը, այսինքն՝ դրանց ազատությունը գրաքննությունից կամ պետության միջամտությունից:

Սակայն խոսքի և տեղեկատվության ազատություններն անսահմանափակ չեն, քանի որ կարող են հանգեցնել այլ իրավունքների կամ այլոց իրավունքների խախտման: Մեկի ազատությունները վերջանում են այնտեղ, որտեղ սկսվում են ուրիշի ազատությունները: Ուստի, եթե ժողովրդավարական երկրներում ձգտում են հասնել մամուլի լիակատար ազատության գրաքննությունից, այսինքն՝ պետության և որևէ ուժի թելադրանքից, նախնական համաձայնության պարտադրանքից մինչև հաղորդագրության հրապարակումը, ապա սահմանվում են տարբեր իրավական և բարոյական սահմանափակումներ, որոնց միջոցով լրատվամիջոցը կամ լրագրողը օրենքի և հանրության առջև պատասխան է տալիս իր հրապարակման մեջ տեղ գտած կարծիքների, արտահայտությունների կամ տեղեկության համար:

Այսպիսով, այս կամ այն հասարակության ժողովրդավարության աստիճանի մասին կարելի է դատել ըստ այնմ, թե որքանով են այդ հասարակության մեջ օրենսդրորեն ապահովված ու կարգավորված խոսքի, տեղակատվության և լրատվամիջոցների ազատությունները:

Խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքն ամրագրված է **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀՀ)** 19-րդ հոդվածում, **Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի** 19-րդ հոդվածում, **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի (ՄԵԿ)** 10-րդ հոդվածում:

Սրանք համընդհանուր միջազգային չափորոշիչներ են: Առաջնորդվելով այդ չափանիշներով՝ ժողովրդավարական պետությունները, ելնելով իրենց պատմական, մշակութային ու տնտեսական առանձնահատկություններից, յուրովի՝ իրենց սահմանադրություններով ու օրենքներով են

լուծում խոսքի, տեղեկատվության ու մամուլի ազատությունների ապահովման ու կարգավորման հարցերը. մի կողմից երաշխավորում են տեղեկատվության ձեռքբերման, լրատվամիջոցների ազատությունը, լրագրողի աշխատանքի պաշտպանությունը, մյուս կողմից՝ սահմանափակում դրանք հասարակության այլ կառույցների ու խմբերի ազատությունները չխախտելու նպատակով, սակայն ձգտում են հնարավորինս հավասարակշռություն պահպանել երաշխավորվող ազատությունների ու սահմանափակումների միջև, չիջեցնել այն նշածողը, որը սահմանվել է համընդհանուր միջազգային չափորոշիչներով:

Ժողովրդավարության տեսությունն ու գործելակերպը անընդհատ զարգացման մեջ են: Արդի ժողովրդավարությունը բազմաթիվ հիմնախնդիրներ է առաջադրում հասարակությանը, որոնցից մեկն էլ կանանց և տղամարդկանց հավասարությունն է: Ընդ որում, հավասարություն հասկացությունն էապես ընդլայնվել է: Ըստ այդմ, հռչակել իրավահավասարություն, դեռ չի նշանակում ապահովել դրա փաստացի իրականացումը: Վերապահվող իրավունքներն անհրաժեշտ պայման են, բայց ոչ բավարար: Իրավահավասարությունը սոսկ հավասարությանը հասնելու միջոցներից է: Փաստացի հավասարությունը չափվում է ձեռք բերվող արդյունքներով, որոնք ենթադրում են ոչ միայն հավասար իրավունքների հռչակում, այլև հավասար հնարավորությունների ընձեռում և պաշարների հավասար մատչելիություն: Բացի դրանից, ներկայացուցչական ժողովրդավարությունը թելադրում է հասարակության բոլոր սոցիալական խմբերի և խավերի հավասար մասնակցություն պետության կառավարմանը: Իսկ տղամարդկանց և կանանց հավասար մասնակցության ապահովումը դիտվում է ժողովրդավարացման գործընթացի անբաժանելի մաս: Սեռերի հավասարությունը կարևոր է նաև մարդու իրավունքների պաշտպանության և սոցիալական արդարության ապահովման տեսանկյունից, որոնք ժողովրդավարության հիմնաքարերն են:

Այդ է պատճառը, որ վերը նշված միջազգային հիմնարար փաստաթղթերը խարսխված են ևս մի կարևոր սկզբունքի վրա՝ հավասարություն կամ անխտրականություն: Եթե Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով խոսքի և տեղեկատվության ազատությունները երաշխավորվում են առանց որևէ խտրականության, լինի դա սեռական, ռասայական, լեզվական, կրոնական թե այլ հատկանիշով, ապա Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը հատուկ դրույթ է բովան-

դակում (3-րդ հոդված) տղամարդկանց ու կանանց իրավունքների հավասարության վերաբերյալ. «Սույն դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց ու կանանց համար ապահովել սույն դաշնագրով նախատեսված քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունք»:

Այստեղ ահա բախվում են խոսքի ազատության և կանանց իրավունքների խնդիրները: Եթե Մարդու իրավունքների համընդհանուր փաստաթղթերում սոսկ շեշտվում է սեռի հատկանիշով խտրականության մերժման սկզբունքը, ապա կանանց իրավունքներին նվիրված փաստաթղթերում բավական մեծ տեղ է հատկացվում զանգվածային լրատվամիջոցներում կանանց հիմնախնդիրների արծարծման ու լուսաբանման հարցերին:

Նախ՝ հարկ է հասկանալ, թե ինչու է միջազգային հանրությունը անխտրականության և սեռերի իրավահավասարության սկզբունքին հավատարիմ մնալու հավաստիացումների հետ մեկտեղ առանձնացնում և առաջ մղում սեռերից մեկի խնդիրները:

Բանն այն է, որ չնայած Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը, որում հստակ նշված է, թե կազմակերպության առաքելություններից մեկը տղամարդու և կնոջ հավասար իրավունքների նկատմամբ հավատի վերահաստատումն է, չնայած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, որը, ինչպես տեսանք, հռչակում է սեռերի իրավահավասարության հիմնարար սկզբունքը, չնայած հետագայում ընդունված մարդու իրավունքների մասին միջազգային դաշնագրերին ու կանանց աշխատանքային ու քաղաքական իրավունքներին նվիրված առանձին կոնվենցիաներին, գործնական կյանքում շատ քիչ բան է փոխվել: Պարզվում է, որ իրական հավասարության հասնելու համար կանայք առանձնահատուկ պաշտպանության և արմատական ձեռնարկումների կարիք ունեն, ակնառու է կանանց նկատմամբ խտրականությունը ամենուրեք և ամեն ոլորտում, որը էապես խոչընդոտում է նրանց՝ իրականացնելու այն իրավունքները, որոնք առհասարակ վերապահվում են մարդուն: 1967 թ. Միավորված ազգերի կազմակերպությունը ընդունեց **Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին հռչակագիրը**, որով համոզմունք հայտնվեց, որ բովանդակ աշխարհի լիակատար զարգացումը, բարեկեցությունը և խաղաղության հաստատումը պահանջում են բոլոր ոլորտներում կանանց առավելագույն՝ տղամարդկանց հավասար մասնակցություն, իսկ կանանց նկատմամբ խտրականությունը, դրա հետևանքով տղամարդկանց հետ նրանց հավասարության մերժումը կամ

սահմանափակումը որակվեց «անարդարություն իր հիմքում և հանցագործություն մարդկային արժանապատվության դեմ»: Ըստ այդմ, նախանշվեցին անդամ պետությունների կառավարությունների և հասարակությունների հետագա անելիքները:

Իր ստեղծման օրից ի վեր ՄԱԿ-ը տասնյակ փաստաթղթեր է ընդունել՝ ուղղված սեռերի իրավահավասարության ապահովմանը⁷⁶, սակայն դրանց շարքում ամենահամապարփակը, հիմնարարն ու բեկումնայինը 1979 թ. ընդունված **Կանանց նկատմամբ խտրականության բոլոր չևերի վերացման մասին կոնվենցիան** է, որը առաջին անգամ ձևակերպեց կանանց մարդու իրավունքների կամ կանանց իրավունքների՝ որպես մարդու իրավունքների անկապտելի մասի գաղափարը: Կանանց իրավունքների իրականացման հիմք ընդունվեց նրանց նկատմամբ խտրականության խստառ վերացումը, որը կոնվենցիայի հենց 1-ին հոդվածում ձևակերպվեց այսպես. «Սույն Կոնվենցիայի նպատակների համար «կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը նշանակում է սեռի հիմքով ցանկացած փարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, փնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, փղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգրվելը»:

Այս սահմանման շնորհիվ ի հայտ եկավ ևս մի կարևոր սկզբունք, որը հետագայում ուղենիշ դարձավ իրավահավասարության մեխանիզմների զարգացման ճանապարհին. խտրականություն հասկացությունը վերաբերում է կանանց և տղամարդկանց ոչ միայն իրավական հավասարությանը, այլև փաստացի դրությանը: Այդ սկզբունքը ամրագրված է նաև 2-րդ հոդվածում. «Ձեռնարկել բոլոր համապատասխան, ներառյալ օրենսդրական միջոցները՝ փոխելու կամ վերացնելու համար այն գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, սովորույթներն ու սրակրիկան, որոնք ներկայացնում են խտրականություն կանանց նկատմամբ»: Ի լրումն՝ կոնվենցիայի 5-րդ և 10-րդ հոդվածներում նշվում է, որ

76 Տե՛ս Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն: Միջազգային իրավական փաստաթղթերի և ՀՀ օրենքների ժողովածու: Ե., 2006: 348 էջ:

մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները, որպեսզի փոխվեն կանանց ու տղամարդկանց վարքագծի՝ այս կամ այն սեռի ստորադասության կամ առավելության, նախապաշարումների կամ սովորույթների վրա հիմնված սոցիալական և մշակութային մոդելները:

Այս կոնվենցիայով ամրագրվեց նաև կանանց և տղամարդկանց կարգավիճակի փաստացի հավասարության հասնելու նպատակով կանանց համար ժամանակավոր հատուկ միջոցների թույլատրելիությունը՝ հաստատելով, որ դրանք չպետք է դիտվեն խտրականություն: Միաժամանակ ընդգծվեց, որ դրանք ոչ մի դեպքում չպետք է հանգեցնեն անհավասար կամ տարբերակված չափորոշիչների. «...**Այդ միջոցները կվերացվեն, երբ հնարավորությունների և վերաբերմունքի հավասարության նպատակներն իրականություն դառնան**» (4-րդ հոդվ.):

Անցած դարի 50-60-ական թվականներին ՄԱԿ-ում, բացի օրենսդրական գործունեությունից, հսկայածավալ հետազոտական աշխատանքներ էին տարվում, կանանց դրության մասին տեղեկություններ էին հավաքվում աշխարհի բոլոր ծայրերից, որոնց վերլուծությունը ցույց էր տալիս՝ միայն օրենքները բավարար չեն կանանց և տղամարդկանց հավասարության հասնելու համար: Այնուհետ էր համաշխարհային հանրության ուշադրությունը կանանց հարցերի վրա սևեռելու արդյունավետ ձևեր գտնելու և գործնական ձեռնարկումների ռազմավարություն մշակելու անհրաժեշտությունը: Ահա և սեռերի հավասարության գաղափարախոսության երկրորդ փուլը նշանավորվեց ՄԱԿ-ի նախաձեռնած համաշխարհային խորհրդաժողովներով՝ նվիրված կանանց դրության հիմնահարցերի քննարկմանը:

Առաջին խորհրդաժողովը գումարվեց Մեխիկոյում 1975 թվականին, որը հռչակվեց Կանանց միջազգային տարի: Այնուհետև ՄԱԿ-ը հայտարարեց Կանանց տասնամյակ: Աշխարհի տարբեր ծագերում ծայր առանուսումնասիրություններ, բանավեճեր, քննարկումներ, բանակցություններ: Մեխիկոյի համաժողովը նշանավորվեց նաև նրանով, որ այստեղ սահմանվեց ՄԱԿ-ի աշխատանքների երեք առանցքային ուղղություն. ա) լիակատար գեներային հավասարություն և սեռի հատկանիշով խտրականության վերացում, բ) կանանց լիակատար ներգրավում զարգացման գործընթացներում, գ) կանանց դերի մեծացում խաղաղության ամրապնդման գործում: Ընդունվեց մինչև 1980 թ. Գործողությունների ծրագիր, որի հիմնական խնդիրն էր հավասար մատչելիության հասնել կանանց հա-

մար կրթության, զբաղվածության, քաղաքականության, առողջապահության, բնակարանային ապահովման, սննդի և ընտանիքի պլանավորման ոլորտներում: Հետևելով Մեխիկոյի խորհրդատողովի կոչին՝ ՄԱԿ-ի անդամ 127 երկրներ տասը տարի անց ստեղծեցին կանանց դրության բարելավման ազգային մեխանիզմներ: Մեխիկոյի խորհրդատողովի առաջարկությամբ է, որ 1976 թ. ՄԱԿ-ի համակարգում, ի լրումն **Կանանց կարգավիճակի հարցերի հանձնաժողովի**, որը հիմնադրվել էր դեռևս 1946 թ., ստեղծվեցին **Կանանց առաջխաղացման միջազգային ուսումնական և գիտահետազոտական ինստիտուտը** և **Կանանց զարգացման հիմնադրամը** (UNIFEM):

Երկրորդ համաշխարհային խորհրդատողվում (Կոպենհագեն, 1980 թ.) որոշակի առաջընթաց արձանագրվեց, բարձր գնահատվեց հատկապես Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի՝ որպես կանանց հավասարության խնդրի լուծման ամենակարևոր գործիքի, ընդունումը⁷⁷: Բայց և ընդունված Գործողությունների ծրագրում արձանագրվեցին կանանց իրավունքների և հնարավորությունների անհամապատասխանությանը նպաստող այնպիսի գործոններ, ինչպիսիք են տղամարդկանց անբավարար մասնակցությունը հասարակության մեջ կանանց դերի բարձրացման գործին, քաղաքական կամքի բացակայությունը, հասարակության զարգացման մեջ կանանց ավանդի թերագնահատումը և այլն:

1985 թ. Նայրոբիում կայացած երրորդ համաշխարհային խորհրդատողվը, որ նվիրված էր Կանանց տասնամյակի արդյունքների ամփոփմանը, ընթացավ «Հավասարություն, զարգացում և խաղաղություն» կարգախոսով և հավաստի ու մեծածավալ տեղեկատվության համակողմանի վերլուծության հիման վրա արձանագրեց, որ Կանանց տասնամյակի երկրորդ կեսի նպատակները չեն կենսագործվել: Բանավեճերի ու քննարկումների արդյունքում ձևավորվեց այն մոտեցումը, որ կանանց իրավահավասարությունը անմիջականորեն առնչվում է մարդկային գործունեության բոլոր ոլորտներին, հնարավոր չէ լուծել այդ խնդիրը՝ առանց այդ ոլորտների համապատասխան վերափոխումների: Այդ մոտեցման

77 Կոնվենցիայի մասնակից 165 երկրներ չորս տարին մեկ զեկույց են ներկայացնում ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին կոնվենցիայի դրույթների կատարման համար իրենց ձեռնարկած օրենսդրական, վարչական և այլ միջոցների, ունեցած առաջընթացի և դժվարությունների վերաբերյալ: Այդ երկրների շարքում է նաև Հայաստանը, քանի որ միացել է կոնվենցիային 1993 թ.:

հիման վրա էլ մշակվեցին **Նայրոբիի հեռանկարային ռազմավարությունները**, որոնք ուղենիշ դարձան մինչև XX հարյուրամյակի ավարտի գործողությունների համար:

Կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման պայքարում նոր մայրուղի բացեց **1995 թ. Պեկինում կայացած չորրորդ համաշխարհային խորհրդաժողովը**: Մրա կարևոր ձեռքբերումը կանանց իրավունքների հայեցակարգից սեռերի հավասարության հայեցակարգին անցնելու գիտակցումն էր, այն ըմբռնումը, որ անհրաժեշտ է վերագնահատել հասարակության ողջ կառուցվածքը և դրա ներսում կանանց և տղամարդկանց բոլոր փոխհարաբերությունները: Այդպիսով վերահաստատվում էր, որ կանանց իրավունքները մարդու իրավունքներ են, և հետևություն էր արվում, որ սեռերի հավասարությունը համընդհանուր հիմնախնդիր է, որի լուծումով են պայմանավորված համայն մարդկության զարգացումն ու բարգավաճումը: *«Կանանց դրության բարելավումը և տղամարդկանց ու կանանց իրավահավասարության ապահովումը մարդու իրավունքների հարց է, սոցիալական արդարության ապահովման պայման և չպեղք է քննարկվի առանձին՝ որպես կանանց առնչվող հարց: Դա կայուն, արդար և զարգացած հասարակության կառուցման միակ միջոցն է: Կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը և կանանց ու տղամարդկանց իրավահավասարության ապահովումը ժողովուրդների հարաբերություններում քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և բնապահպանական անվտանգության հասնելու նախադրյալներ են»*, - ասվում է Պեկինի գործողությունների ծրագրում (գլուխ III, կետ 41):

Պեկինի խորհրդաժողովի ներկայացուցչականությունն ու արձագանքն աննախադեպ էին: Բավական է ասել, որ ներկա էին 189 երկրների 17 հազար պատվիրակներ, իսկ ոչ կառավարական համաժողովին՝ 47 հազար մասնակիցներ: Նրա ընդունած Հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը, որ, ի դեպ, ստորագրել է նաև Հայաստանը, դարձան XXI դարում կանանց առաջընթացի օրակարգը: Ընդունելով Պեկինի գործողությունների ծրագիրը՝ պետությունները պարտավորվեցին գեներային բաղադրիչը ներառել իրենց բոլոր պետական հաստատություններում, ռազմավարություններում ու ծրագրերում:

Սեռերի իրավահավասարության խնդրին մվիրված փաստաթղթերի շարքում շրջադարձային նշանակություն ունի Վիեննայի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը, որ ընդունվել է 1993 թ., Մարդու իրավունք-

ների երկրորդ համաշխարհային խորհրդածողովում: Այստեղ էր, որ ճանաչվեցին այսպես կոչված կոլեկտիվ կամ երրորդ սերնդի իրավունքները⁷⁸, այն է՝ *խաղաղության իրավունքը, ինքնորոշման իրավունքը, առողջ շրջակա միջավայրի իրավունքը, սեռի, ազգության կամ փարիքի հատկանիշով խորականությունից ազատ լինելու իրավունքը*: Այսպիսով, ճանաչվեցին կանանց իրավունքները՝ որպես մարդու իրավունքների անքակտելի բաղկացուցիչ. «**Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդածողովը հաստատեց հռչակում է կանանց բոլոր մարդու իրավունքների լիակատար գոյությունը և դա համարում է կառավարությունների ու Միավորված ազգերի կազմակերպության առաջնահերթ խնդիրներից մեկը**» (36-րդ կետ):

Սեռերի հավասարության խնդիրը նաև Եվրոպայի խորհրդի գործունեության առանցքային ուղղություններից մեկն է: Նրա մարմինները՝ Խորհրդարանական վեհաժողովը, Նախարարների կոմիտեն և Եվրոպայի տեղական ու տարածքային իշխանությունների կոնգրեսը հրապարակել են բազմաթիվ հռչակագրեր, հանձնարարականներ ու բանաձևեր, որոնք հստակ ցույց են տալիս կանանց ազատությունը և մարդկային արժանապատվությունը պաշտպանելու, սեռերի միջև խտրականությունը արմատապես վերացնելու և հասարակական ու քաղաքական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացուցչության համար տարվող գիծը⁷⁹: Այդ հարցերի պատասխանատվությունն ընկած է Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի ղեկավար կոմիտեի վրա (ԿՏՀՂԿ/CDEG), որը նախապատրաստում է նախարարների համաժողովներ, կազմակերպում սեմինարներ, կատարում վերլուծություններ և ուսումնասիրություններ, մշակում ռազմավարություններ ու իրավական նյութեր:

78 **Մարդու իրավունքների առաջին սերունդ**՝ մարդու բնական իրավունքներ, որոնք անօտարելի են մարդուց. մտքի, խղճի, կրոնի ազատություն, անհատի կյանքի, ազատության, անվտանգության իրավունքներ, հավասարություն և մարդկային արժանապատվության հարգում: Այդ իրավունքները ձևակերպվեցին բուրժուական հեղափոխությունների դարաշրջանում:

Երկրորդ սերունդ՝ մարդու հիմնական իրավունքներ. աշխատանքի, աշխատատեղի ազատ ընտրության, սոցալապահովման, կրթության ու առողջապահության իրավունքները և այլն: Դրանց իրականացումը նախատեսում է պետության միջամտություն հատուկ սոցիալական ծրագրերի, երաշխիքների համակարգի ու անհատի պաշտպանության մեխանիզմների ստեղծման նպատակով:

79 Տե՛ս Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն: Միջազգային իրավական փաստաթղթերի և ՀՀ օրենքների ժողովածու: Եր., 2006, էջ 141- 298:

Պեկինի խորհրդատուական կազմակերպությունը՝ 1994 թ. Վիեննայում կայացած խորհրդակցությունում, որը նվիրված էր Եվրոպայի կանանց դրության քննությանը, Եվրոպայի խորհրդի կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի ղեկավար կոմիտեն և Մարդու իրավունքների բաժանմունքը ներկայացրին իրենց մշակած «*գուգակշռված ժողովրդավարություն*» հայեցակարգը, որում տեղ էին գտել այդ տարիներին արևմտակարգ կանանց կազմակերպություններում լայնորեն քննարկվող գաղափարներ: Վերջիններս իրենց կառավարություններից և ղեկավար մարմիններից պահանջում էին կանանց իրական իրավահավասարություն իշխանության մարմիններում: Այդ ժամանակների հիմնական կարգախոսն էր՝ «Զուգակշռություն, իշխանության կառույցներում կանանց և տղամարդկանց «50/50»-ի ներկայացուցչություն»: Զուգակշռված ժողովրդավարության կողմնակիցների համոզմամբ, դա իրական հիմք է *հասարակության կայուն զարգացման համար*: Այնուամենայնիվ, Պեկինի խորհրդատուական կազմակերպիչները քննարկման շրջանին այս հայեցակարգը՝ համարելով ժամանակից առաջ ընկած, թեպետ քննարկվող հիմնախնդիրների շարքում առանցքային տեղ էր գրավում որոշումների ընդունման գործընթացին կանանց մասնակցության հարցը: Ավելին, հանձնարարականների մեջ նշվում էր անհրաժեշտության դեպքում քվոտավորման նպատակահարմարությունը:

Այսպես թե այնպես, մի շարք երկրներ լրջորեն արձագանքեցին այս առաջարկներին և օրենսդրական ու գործնական վճռական քայլեր ձեռնարկեցին: Ֆրանսիայում, օրինակ, 2000 թվականին ընդունվեց «Կանանց և տղամարդկանց զուգակշռության մասին» օրենքը՝ նպատակաուղղված բոլոր ընտրովի պաշտոններում կանանց և տղամարդկանց զուգակշռված, այսինքն՝ 50/50-ի հարաբերակցությամբ ներկայության ապահովմանը:

Մեռերի իրավահավասարության խնդրի լուծման որոնումների մի նոր փուլ նշանավորեց 1998 թ. Եվրոպայի խորհրդի հրապարակած «**Gender mainstreaming**» զեկույցը, որ հայերեն հայտնի է «**Համալիր մոտեցում կանանց և տղամարդկանց իրավահավասարության խնդիրներին**» անվամբ⁸⁰: Իրականում «համալիր մոտեցման» գաղափարները երևան էին

80 Որոշ մասնագետներ, իրավացիորեն նշելով, որ «համալիր մոտեցումը» համարժեք չէ տվյալ անգլերեն հասկացությանը, առաջարկում են «զենդերային չափման ինտեգրում» տերմինը (տե՛ս Օսիպով Վ., Gender mainstreaming. տեսություն և պրակտիկա: «Գենդերային հետազոտություններ, պր. 5» գրքում: Եր., 2001, էջ 77), ոմանք՝ «զենդերային ներառում»:

եկել շատ ավելի վաղ՝ սկսած 1970-ական թվականներից, մշակվել զարգացման հարցերով զբաղվող կազմակերպությունների շրջանականերում (ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն, Համաշխարհային բանկ, Աշխատանքի միջազգային կազմակերպություն և այլն): Միջազգային փաստաթղթերում այն սկսեց երևան գալ կանանց հարցերին նվիրված Նայրոբիի համաշխարհային խորհրդաժողովից հետո, իսկ Պեկինի խորհրդաժողովում հավանության արժանացավ և տեղ գտավ Գործողությունների ծրագրում, սակայն համընդհանուր և սևեռուն ուշադրության կիզակետում հայտնվեց միայն հիշյալ գեկույցի հրապարակումից հետո: Ըստ այդ գեկույցի. **«Համալիր մոտեցման էությունը գլխավորապես քաղաքականության իրականացման մեջ ներքաշված անչանց կողմից որոշումների ընդունման գործընթացների կազմակերպելը (վերականգնակերպելը), բարելավելը, կատարելագործելն ու գնահատելն է այն նկատառումով, որ կանանց ու տղամարդկանց հավասարության հիմնախնդիրները ներառվեն բոլոր բնագավառներում ու մակարդակներում»** (ընդգծումը մերն է): Այս փաստաթղթի կարևոր արժանիքն այն է, որ հստակ սահմանվեցին համալիր մոտեցման քաղաքականության նպատակը, գործընթացը, առարկան և ակտիվ դերակատարները: Մյուս կարևոր ընդգծումն այն է, որ համալիր մոտեցման հայեցակարգը, ըստ էության, սեռերի իրավահավասարության հասնելու նոր ռազմավարություն է, բայց չի գալիս փոխարինելու այդ նպատակով իրագործվող «ավանդական» քաղաքականությանը, առկա մեխանիզմներին ու ծրագրերին: Խոսքը լրացնելու մասին է: **«Երկու մոտեցումն էլ (ավանդականն ու համալիրը) պետք է կիրառվեն զուգահեռաբար, համենայն դեպս, մինչև այն պահը, երբ հասարակության մեջ գեներացիան հավասարակշռության նկատմամբ սկսի ուրվագծվել բարենպաստ ընդհանուր հայտարարք»:**

Համալիր մոտեցման կարևոր տարրերն են՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ, ժողովրդավարական ներկայացուցչություն, տնտեսական անկախություն և կրթության մատչելիություն, սոցիալական անհամամասնությունների շտկում՝ ըստ պատասխանատվության բաժանման: Եվս մի կարևոր հանգամանք. համալիր մոտեցումը հակադրվում է ոչ թե կանանց և տղամարդկանց օբյեկտիվ տարբերություններին, այլ անհավասարությանը: Ըստ այդմ, այդ տարբերությունները չպետք է բացասաբար անդրադառնան երկու սեռերի կենսապայմանների վրա և հանգեցնեն խտրականության, այլ պետք է հաշվի առնվեն տնտե-

սական, սոցիալական ու քաղաքական հնարավորությունների հավասար բաշխման մեջ:

2000թ. Միավորված ազգերի կազմակերպությունը ընդունեց «Հազարամյակի հռչակագիրը»՝ այդպիսով հրապարակելով XXI դարում աշխարհի զարգացման ուղենիշները: Այստեղ նույնպես վերահաստատվեց անխտրականության սկզբունքը, իսկ մնալուն արժեքների շարքում (ազատություն, հավասարություն, համերաշխություն, հանդուրժողություն, հարգանք բնության նկատմամբ, ընդհանուր պատասխանատվություն) ընդգծվեց, որ **«տղամարդիկ և կանայք իրավունք ունեն ապրելու և արժանապարտվորեն մեծացնելու իրենց երեխաներին՝ զերծ սովից, բռնության, ճնշման ու անարդարության վախից»:** Այս իրավունքների լավագույն երաշխիք դիտվեց Ժողովրդի կամքի վրա հիմնված ժողովրդավարական և մասնակցային կառավարումը: Հավաստիացվեց, որ **«ոչ մի անհայր և ոչ մի ազգ չպետք է զրկվի զարգացումից օգտվելու հնարավորությունից: Տղամարդկանց ու կանանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները պետք է ապահովված լինեն»:**

Զարգացման և աղքատության վերացման ուղենիշներում շարունակ նշվում է, որ բոլոր ձեռնարկումները հավասարապես պետք է վերաբերեն երկու սեռերին, որպեսզի բարեկեցիկ կյանքով ապրելու հավասար պայմաններ ստեղծվեն, միաժամանակ շեշտվում է, որ Միավորված ազգերի կազմակերպությունը այսուհետև էլ շարունակելու է **«առաջ քաշել գեներալային հավասարության և կանանց զորացման հարցը՝ որպես աղքատության, սովի, հիվանդությունների հաղթահարման և կայուն զարգացմանը նպաստող իրոք ազդեցիկ միջոց»:** Վերջապես, մարդու իրավունքների, ժողովրդավարության և պատշաճ կառավարման բաժնում վերստին հատուկ նշվում է, որ Միավորված ազգերի կազմակերպությունը վճռականորեն որոշել է **«պայքարել կանանց հանդեպ բռնության բոլոր ձևերի դեմ՝ ի կապար ածելով Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան...»:** Այնուհետև ընդունվեցին Հազարամյակի ութ հիմնական նպատակները, որոնցից 3-րդը կանանց զարգացումն է:

Այսպիսով, միջազգային հանրությունը հանգեց երկու կարևոր եզրահանգման. *սեռերի իրավունքների փաստացի հավասարության հասնելու համար անհրաժեշտ է, որ այդ մոտեցումը արթուն լինի հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում ու հայեցակետերում, և երկրորդ՝ այդ նպատակին հասնելու գործում պետք է ներգրավվի ամբողջ*

հասարակությունը: Այստեղից էլ երրորդ կարևոր նախապայմանը. այդ գործում ներգրավվելու համար հասարակությունը պետք է խորապես ըմբռնի խնդրի կարևորությունը, այսինքն՝ պետք է փոխվի հասարակական գիտակցությունը: Կանանց իրավունքների կամ սեռերի հավասարության գրեթե բոլոր քննարկումներում, բոլոր փաստաթղթերում մշտապես շեշտվում է մի կարևոր խոչընդոտ՝ հանրության նախապաշարումներն ու կարծրատիպերը սեռերի դերերի վերաբերյալ, որոնց վերացումը դժվարին ու տևական գործընթաց է: Դրա համար անհրաժեշտ է, որ հասարակությունը զինվի անհրաժեշտ գիտելիքով ու տեղեկություններով: Ահա ինչու վերոհիշյալ փաստաթղթերում ու խորհրդաժողովներում առանցքային դեր է հատկացվում զանգվածային լրատվամիջոցներին, անփոխարինելի նշանակություն տրվում զանգվածային լրատվամիջոցներում գեներալային խնդիրների լայն լուսաբանմանը:

3.2. ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի հանձնարարականները ՉԼՄ-ներում հասարակության գեներային հիմնախնդիրների լուսաբանման մասին

Չանգվածային լրատվամիջոցներում գեներային հիմնախնդիրների լուսաբանմանն ուղղված հանձնարարականները Նայրոբիի հեռանկարային ռազմավարություններում, Պեկինի գործողությունների ծրագրում, Եվրոպայի խորհրդի «Չանգվածային լրատվամիջոցներում կնոջ կերպարի մասին» և այլ հանձնարարականներում:

Չանգվածային լրատվամիջոցներին կարևոր դեր ու տեղ հատկացվեց Կանանց դրության բարելավման Նայրոբիի հեռանկարային ռազմավարություններում. **«Հարկ է առաջնահերթ ուշադրություն հարկացնել Չանգվածային լրատվամիջոցներում կանանց կերպարի արտացոլման շոշափելի և մշտական բարելավմանը: Բոլոր ջանքերը պետք է ուղղվեն այնպիսի նյութերի պատրաստմանը և այնպիսի կարծիքի ձևավորմանը, որ օգնեն ավելի հստակ տեսնել մտավոր աշխատանքի և ուրիշ ոլորտներում կանանց դերի ու կարգավիճակի դրական կողմերը, ինչպես նաև սեռերի իրավահավասար հարաբերությունները: ...Այդ կատակցությամբ հարկ է բոլոր միջոցները ձեռնարկել, որ կանայք ակտիվորեն մասնակցեն Չանգվածային լրատվամիջոցների համապատասխան խորհուրդներին և վերահսկող մարմիններին (ներառյալ գովազդը), ինչպես նաև այդ մարմինների որոշումների կատարմանը»** (85-րդ կետ): Նայրոբիի հեռանկարային ռազմավարությունները առանձնհատուկ են նրանով, որ առաջին անգամ որոշակի գործողությունների և ոլորտների շարքում, զբաղվածության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի և արդյունաբերության, սոցիալական ծառայությունների ու շրջակա միջավայրի կողքին տեղ գտան Չանգվածային լրատվամիջոցները: Արդ, այդ ոլորտում ռազմավարության ուղղություններից մեկը որոշումների ընդունման մակարդակում կանանց ընդգրկումն է: Խոսքը վերաբերում է Չանգվածային լրատվամիջոցների թե՛ պետական համակարգին, թե՛ հանրային տեղեկատվության այլընտրանքային ձևերին, թե՛ գովազդին: Նկատի առնելով այն հանգամանքը, որ **«կնոջ դերի մասին հնացած պատկերացումներ սերմանող Չանգվածային լրատվամիջոցների, ինչպես նաև գովազդային արդյունաբերության սպառումը կարող է չափազանց բացասաբար անդրադառնալ**

կանանց նկատմամբ վերաբերմունքի և հենց իրենց՝ կանանց միջև հարաբերությունների վրա», այս ռազմավարությունների կողմնակիցները համոզված են, որ կանայք պետք է ամենաամիջական մասնակցություն ունենան լրատվական ծրագրերի մշակմանը, իրականացմանը և վերահսկմանը: Նպատակահարմար է դիտվում այն կանանց ֆինանսական աջակցությունը, որոնք լրատվամիջոցներում կանանց և տղամարդկանց ավանդական կերպարների փոփոխման ծրագրեր են մշակում: Ուշադրություն է հրավիրվում նաև միջազգային փորձի յուրացման և ազգային լրատվամիջոցներում այլ երկրների դրական փորձի ներդրման կարևորության վրա:

Նայոքիի ռազմավարությունների այս մոտեցումն իր հետագա զարգացումն ունեցավ Պեկինի խորհրդաժողովում: «*Վերջին 20 տարիներին աշխարհում կապի ոլորտի շեշտակի վերելք է նկատվում: Համակարգչային տեխնիկայի, արբանյակային և կաբելային հեռուստատեսության կապարելագործման պայմաններում տեղեկատվության համընդհանուր մատչելիությունը շարունակում է աճել ու ընդլայնվել՝ նոր հնարավորություններ ստեղծելով հաղորդակցությանը և զանգվածային լրատվության միջոցներին կանանց մասնակցության և կանանց մասին տեղեկատվության տարածման համար: Միաժամանակ գլոբալ հաղորդակցական ցանցերը օգտագործվել են նաև նեղ առևտրային և սպառողական նպատակներով՝ կանանց մասին կարծրատիպային և նրանց արժանապատվությունը նվաստացնող պատկերացումների տարածման համար: Քանի դեռ կանայք հավասար հիմունքներով չեն մասնակցի հաղորդակցությունների ու զանգվածային տեղեկատվության, նաև արվեստի տեխնիկական ապահովմանը, այդ ոլորտների ղեկավարմանը, նախկինի պես կատարելով են խեղաթյուրված, իսկ կանանց իրական կյանքի ճանաչողությունը նախկինի պես կբացակայի: Չանգվածային լրատվության միջոցները մեծապես կարող են աջակցել կանանց դրության բարելավմանը և տղամարդկանց ու կանանց հավասարության ապահովմանը կանանց և տղամարդկանց ոչ կարծրատիպային, բազմազան և հավասարակշիռ պատկերման միջոցով՝ հիմնված մարդկային անհատի արժանապատվության ու արժեքների հարգման վրա»*, - ասվում է Պեկինի գործողությունների ծրագրի 2-րդ գլխում («Գլոբալ համատեքստը»):

Ահավասիկ, Պեկինի համաժողովում առանձնացվեցին 12 խնդրահարույց ոլորտներ, որոնցից մեկը համարվեց «Կանանց կարծրատիպային կերպարների ստեղծումը հաղորդակցության բոլոր համակարգերում և

հատկապես զանգվածային լրատվության միջոցներում, կանանց համար դրանց մատչելիության և այդ համակարգերի գործունեությանը նրանց մասնակցության անհավասարությունը»։ Ըստ այդմ առանձնացվեցին 12 առաջնահերթ ոլորտներ և ուղղություններ⁸¹, որոնցից «Կանայք և զանգվածային լրատվամիջոցները» ոլորտի համար նախատեսվեց երկու ռազմավարական նպատակ.

1. *Կարծիքների արտահայտմանը և զանգվածային լրատվամիջոցներում ու հաղորդակցության նոր տեխնոլոգիական միջոցներում որոշումների կայացմանն առնչվող հնարավորությունների և դրանց մատչելիության ընդլայնում կանանց համար, ինչպես նաև այդ միջոցների օգնությամբ:*
2. *Օժանդակություն կանանց հավասարակշռված և ոչ կարծրատիպային կերպարի ստեղծմանը զանգվածային լրատվամիջոցներում:*

Առաջին նպատակը վերաբերում է լրատվամիջոցների կազմակերպական խնդիրներին. բոլոր մակարդակների մատչելիության ընդլայնմանը կանանց համար, կանանց լիակատար և իրավահավասար մասնակցությանը զանգվածային լրատվության միջոցների գործունեությանը, խոսքի ազատության սահմաններում կանանց համար և կանանց կողմից ծրագրերի թվի մեծացմանը, կանանց զանգվածային լրատվության ցանցերի խրախուսմանը, կանանց ընդգրկմանը լրագրողական վարքականոցների մշակման գործում, զանգվածային լրատվամիջոցներում դիտորդական խմբերի ստեղծմանը, կանանց շրջանում տեղեկատվական տեխնիկայից օգտվելու հմտությունների զարգացմանը և այլն:

Երկրորդ նպատակի 15 կետերն առավելապես վերաբերում են լրատվամիջոցների արտադրանքին: Այսպես, հորդորել զանգվածային լրատվամիջոցներին, որպեսզի դրանք ձեռնպահ մնան կանանց՝ որպես անլիարժեք մարդկանց պատկերելուց և չօգտագործեն նրանց որպես սեքսուալ պահանջմունքների բավարարման օբյեկտ, այլ ներկայացնեն որպես ստեղծագործ անհատներ, զարգացման գործընթացի առանցքային մասնակից-

81 Կանայք և աղքատությունը, կանանց կրթությունը և մասնագիտական պատրաստությունը, կանայք և առողջապահությունը, բռնություն կանանց նկատմամբ, կանայք և զինված հակամարտությունները, կանայք և տնտեսությունը, կանանց մասնակցությունը ղեկավար մարմինների աշխատանքին և որոշումների կայացման գործընթացին, կանանց դրության բարելավման ինստիտուցիոնալ մեխանիզմները, կանանց մարդու իրավունքները, կանայք և շրջակա միջավայրը, կանայք և զանգվածային լրատվամիջոցները, աղջիկներ:

ներ, որոնք իրենց ավանդն են մուծում և օգտվում են դրա բարիքներից: Գաղափարներ տարածել այն մասին, որ զանգվածային լրատվության միջոցներով ներկայացվող կանանց բացասական կարծրատիպային կերպարները բնութքով խտրական են և արժանապատվությունը նվաստացնող, վիրավորական: Արդյունավետ միջոցներ ձեռնարկել, ներառյալ համապատասխան օրենսդրության ընդունումը, որոնք ուղղված լինեն պոռնոգրաֆիայի և կանանց ու երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարին: Կամավոր մասնագիտական վարքականոններ և ինքնակարգավորման այլ ձևեր ստեղծել կանանց ոչ կարծրատիպային կերպարների մատուցման համար: Պատրաստել և զանգվածային լրատվամիջոցներում զետեղել նյութեր ղեկավար կանանց մասին, որոնք իրենց հարուստ կենսափորձն են բերում տվյալ ոլորտ և կարողանում են խելամիտ կերպով համադրել աշխատանքային և ընտանեկան պարտականությունները, պրոֆեսիոնալ, բարեխիղճ և հաջողակ ձեռնարկատեր կանանց կերպարներ՝ որպես օրինակ երիտասարդ աղջիկների համար: Աջակցել նոր, այլընտրանքային լրատվամիջոցներին և օգտագործել հաղորդակցության բոլոր միջոցները կանանց շրջանում և կանանց մասին տեղեկություններ տարածելու համար: Գեներային հիմնախնդիրները ներառել համայնքների, սպառողների և քաղաքացիական հասարակության մտահոգությունը հարուցող հարցերի լուծման համատեքստում և այլն:

Պեկինի խորհրդատուներից 5 տարի անց «Պեկին +5» համաժողովի⁸² «Եզրափակիչ փաստաթղթում» արձանագրվեց, որ տեղական, ազգային և միջազգային մակարդակով կանանց հիմնախնդիրներին նվիրված լրատվամիջոցների ստեղծումը համընդհանուր մասշտաբով նպաստել է տեղեկատվության տարածմանը, կարծիքների փոխանակմանը և զանգվածային լրատվամիջոցներում գործող կանանց խմբերի գործունեության օժանդակմանը: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների, հատկապես ինտերնետի զարգացումը հնարավորություն է ստեղծել, որ ավելի մեծ թվով կանայք մասնակցեն գիտելիքների և տեղեկությունների փոխանակմանը: Չանգվածային լրատվամիջոցներում մեծացել է կանանց կազմակերպությունների և ծրագրերի թիվը, մի բան, որ նպաստում է լրատվամիջոցներում կանանց դրական ներկայացմանը: Մասնագիտական վարքա-

82 ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 23-րդ հատուկ նստաշրջան «Կանայք 2000 թվականին. տղամարդկանց և կանանց հավասարություն, զարգացում և խաղաղություն XXI դարում», Նյու Յորք, 2000թ., 5-9 հունիսի:

կանոնների մշակման և ընդունման շնորհիվ հնարավոր է դարձել կանանց հիմնախնդիրների անկողմնակալ լուսաբանումը և կանանց նկատմամբ անխտրական լեզվի կիրառումը զանգվածային լրատվամիջոցներում: Այսուհանդերձ, դեռևս առանձին դեպքերում նկատվում է կանանց մասին քացասական և իրականությանը չհամապատասխանող պատկերացումների տարածումը, ներառյալ պոռնոգրաֆիան և կարծրատիպային կերպարները, դեռևս պահպանվում է կանխակալ վերաբերմունքը կանանց նկատմամբ:

Չանգվածային լրատվամիջոցների դերն ու նշանակությունը լավագույնս ձևակերպված են «Համալիր մոտեցում կանանց և տղամարդկանց հիմնախնդիրներին» փաստաթղթում, որտեղ դրանք ներկայացված են հնարավոր դերակատարների շարքում. **«Վերջապես, կարևոր է նշել, որ զանգվածային լրատվամիջոցները կարող են ազդել քաղաքական գործունեության ծրագրերի ձևավորման վրա: Նրանք իրազեկում են հասարակայնությանը և արդացրում հասարակական կարծիքը: Իր հերթին կարևոր է ՉԼՄ-ների ազդեցությունը հասարակայնության ու որոշումներ ընդունող անձանց վրա, դրանք մարդկանց գիտակցության վրա ազդող կարևոր միջոց են: Խիստ էական է նաև ՉԼՄ-ների դերը մի շարք արժեքների ու նորմերի հասարակման գործում: Մրանով է պայմանավորված այն ռազմավարական տեղը, որ զբաղեցնում են զանգվածային լրատվամիջոցները սեռերի հարաբերությունների դիտարկման, ինչպես նաև սեռերի հավասարության հիմնախնդրի համալիր մոտեցման հայեցակարգի փարածման գործում»:**

Չանգվածային լրատվամիջոցների վերաբերյալ ուշագրավ հանձնարարականներ են բովանդակում Եվրոպայի խորհրդի մի շարք փաստաթղթեր⁸³:

83 Տե՛ս «Կանանց և տղամարդկանց հավասարության՝ որպես ժողովրդավարության հիմնական չափանիշի մասին հռչակագիր» (ընդունված 1997 թ. Ստամբուլում կայացած Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի նախարարների 4-րդ եվրոպական խորհրդաժողովում), ԵԽ Նախարարների կոմիտեի (2000)11 **«Սեռական շահագործման նպաստակով մարդկանց թրաֆիքինգի դեմ ձեռնարկվելիք քայլերի մասին»**, (2002)5 **«Բռնություններից կանանց պաշտպանության մասին»**, (2003)3 **«Քաղաքական և պեղական որոշումների կայացման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին»**, ԵԽ Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի 148 (2004) **«Տեղական և փարածաշրջանային մակարդակում կանանց և տղամարդկանց հավասարության համալիր մոտեցման մասին. քաղաքներում և փարածաշրջաններում կանանց և տղամարդկանց հավասարության աջակցության ռազմավարություն»**, ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի 1676 (2004) **«Ընդդրություններին կանանց մասնակցության մասին»**, 1489 (2006) **«Որոշումների կայացման գործընթացին կանանց մասնակցությունը երաշխավորող մեխանիզմների մասին»** հանձնարարականները:

Խնդրո առարկայի տեսանկյունից առանձնանում է Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1555 (2002)¹ «**Չանգվածային լրապր-վամիջոցներում կնոջ կերպարի մասին**» հանձնարարականը, որն ստեղծվել է կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության սկզբունքի խրախուսման, վերահսկողության հաստատման մեխանիզմ մշակելու և լրատվամիջոցներին իրավահավասարության քարոզչություն ծավալելու կոչ անելու նկատառումով: «**Վեհաժողովը նշում է,- ասվում է հանձնարարականի 2-րդ կետում,- որ չնայած նկատելի առաջընթացին, Եվրոպայի մի շարք երկրներում կնոջ կերպարը զանգվածային լրապր-վամիջոցներում դեռևս հաճախ բացասական է ներկայացվում և նախ-կինի պես պայմանավորված է կարծրաբերությամբ ու նրա նկատմամբ քամահրական վերաբերմունքով: Կնոջը վերապահվում է սոսկ անչնա-կան կյանքը, փունն ու ընկալիչը: Չանգվածային լրապրվամիջոցները հաճախ են կանանց պարկերում որպես սեռական հետաքրքրության օբյեկտ: Ամբողջ աշխարհում սրբնթաց փոփոխություններ են կատար-վել, մինչդեռ կնոջ կերպարը զանգվածային լրապրվամիջոցներում զգա-լի փոփոխություններ չի կրել**»: Արձանագրվում է, որ Պեկինի խորհրդա-ժողովից հետո կառավարությունները և զանգվածային լրատվամիջոց-ներն այս ուղղությամբ ըստ էության նկատելի աշխատանք չեն տարել: Մատնանշվում են հատկապես Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների լրատվամիջոցները, որոնց մեջ տղամարդկանց վերագրվում է լայն հա-սարակական դեր, կանանց՝ սահմանափակ: Այդ իրավիճակը բացատր-վում է տվյալ երկրների սոցիալ-մշակութային ավանդույթներով, ինչպես նաև ժողովրդավարության փորձի պակասով և զարգացման գործընթա-ցում հանդիպող դժվարություններով. «**Կանանց կերպարները, որոնք հայտնվում են այդ երկրների զանգվածային լրապրվամիջոցներում, վկայում են կանանց իրավունքներին առնչվող դժվարությունները: Թե՛ կանանց իրական հիմնախնդիրներին, թե՛ կանանց իրավունքների հա-մար պայքարող շարժումներին ուշադրություն չի հատկացվում**»: Նշվում է նաև կառավարությունների ֆինանսական միջոցների սղությունը՝ լրատվամիջոցների ղեկավարների ինքնակարգավորման մեխանիզմ-ներ ստեղծելու համար, լրագրողների և լրատվամիջոցների տնօրենների անբավարար մասնագիտական մակարդակը, կանանց սակավությունը լրատվամիջոցների ղեկավար պաշտոններում, ինչը հնարավորություն չի տալիս էապես ներգործելու լրատվամիջոցների վարած քաղաքականութ-յան վրա: ԵԽ Խորհրդարանական վեհաժողովը հատկապես մտահոգված

է այն իրողությամբ, որ երեխաներն ավելի ու ավելի են ենթարկվում «սեռական շովինիզմի» գաղափարների ազդեցությանը: Այդ տեսական ազդեցության հետևանքով առաջացած տրամադրությունները խիստ տագնապ են առաջացնում:

Վեհաժողովը կոչ է անում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կառավարություններին լրատվամիջոցներում կանանց քանահրական և կարծրատիպային կերպարների, պատկերացումների և պատկերումների անթույլատրելիության քաղաքականություն վարել: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ վեհաժողովը խնդրում է անդամ պետությունների կառավարություններին, որպեսզի իրենց օրենսդրության մեջ կիրառեն «սեռական շովինիզմ» հասկացությունը (որ նշանակում է կանանց և տղամարդկանց հավասարության ժխտում նրանց սեռական պատկանելության հիման վրա) և դատապարտեն այն նույն չափով, ինչ «ռասիզմը», զանգվածային լրատվամիջոցների ընկերակցություններին դատական մարմիններ դիմելու իրավունք ընձեռեն մարդու իրավունքների խախտումների կապակցությամբ, դրական խտրականության կամ քվոտավորման միջոցներ կիրառեն այն նկատառումով, որ երաշխավորվի կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներակայացուցչությունը որոշումների ընդունման յուրաքանչյուր մակարդակում, միջոցներ հատկացնեն կանանց գիտելիքների ձեռքբերման հնարավորություններն ընդլայնելու համար, հատկապես հաղորդակցական նոր տեխնոլոգիաների ոլորտում և այլն:

3.3. Գենդերայնորեն զգայուն լրագրությունը որպես խոսքի ազատության հիմնախնդիր

Գենդերային զգայունության ապահովումը լրագրության երկու գործառնությունների՝ Ծանաչողական և հանրային հաղորդակցության ապահովման տեսանկյունից: Գենդերային գրաքննություն:

Ինչպես տեսանք, արդեն ավելի քան քառորդ դար է, ինչ միջազգային հանրությունը գործնական ջանքեր է գործադրում լրատվամիջոցների՝ սեռերի իրավահավասարության շահախնդրությունը կամ այսպես ասած՝ գենդերային զգայունությունը մեծացնելու և նրանց ի նպաստ այդ խնդրի լուծման ծառայեցնելու համար: Բայց համաժողովից համաժողով, քննարկումից քննարկում, փաստաթղթից փաստաթուղթ ստիպված է լինում արձանագրել, որ առաջընթացն այս ոլորտում, մեղմ ասած, գոհացուցիչ չէ: Սեռերի իրավահավասարությամբ զբաղվող ատյաններն ու կազմակերպությունները համակողմանի գործնական քայլերի շրջանակ են գծում, կետ առ կետ մանրամասնում անելիքները, սակայն իրականությունը հեռու է մնում ցանկալիից մի պարզ պատճառով. սա այն դեպքը չէ, երբ որոշողն էլ, իրականացնողն էլ նույն դերակատարներն են: Ուստի, եթե ուշադրություն դարձնենք, ապա վերը նշված փաստաթղթերում շարունակ կրկնվում են «*առաջարկել*», «*խրախուսել*», «*հորդորել*», «*նպաստել*» բառերով սկսվող արտահայտությունները: Ավելին հնարավոր չէ նախատեսել մի ոլորտի առնչությամբ, որի հենքը խոսքի և մամուլի ազատության իրավունքն է: Եվ դա նույնքան հարգելի է, որքան կանանց իրավունքները, որքան մարդու մնացած բոլոր իրավունքները:

Յուրաքանչյուր լրատվամիջոց, յուրաքանչյուր լրագրող ազատ է՝ արձագանքելու կամ չարձագանքելու այս կամ այն հորդորին: Դա կախված է տվյալ լրատվամիջոցի վարած քաղաքականությունից և լրագրողի սոցիալական դիրքորոշումից: Գերխնդիր է դառնում, ուրեմն, լրատվամիջոցների կամքն ու ըմբռնումը: Այս է, որ կարող են երաշխավորել միջազգային կառույցները անդամ պետություններին և նույն շրջանակներում էլ պահանջներ դնել նրանց առաջ: Ահա նշված բառերի «ազատական» բովանդակությունը հուշում է նաև, որ խոսք չի կարող լինել պետության միջամտության կամ վարչաիրամայական մեթոդների մասին: Գոնե նախկին Խորհրդային Միության և սոցիալիստական ճամբարի երկրների հասարակությունները քաջ գիտեն, թե ինչ տխուր հետևանքների կարող է հասցնել նման փորձը:

Լրագրությունը փաստորեն հայտնվում է ազատության ու պատասխանատվության սահմանագծում: Չի կարող լինել անսահման ազատություն՝ առանց պատասխանատվության: Տվյալ ոլորտի առաքելության հաջողության և արտադրանքի որակի ապահովման երաշխիքը մասնապատասխանատվությունն է, ընդամին նույնքան, որքան ազատությունը: Հետևաբար հենց սկզբից պետք է բացառել լրագրության շրջանում տարածված այն թյուր կարծիքը կամ մտավախությունը, թե կանանց իրավունքների համար պայքարող կառույցներն առաջարկում են կամ հորդորում են գեներային իրավահավասարության քարոզություն տանել: Խոսքը լրատվամիջոցի և լրագրողի մասնագիտական ու բարոյական պատասխանատվության մասին է. *որքանով են նրանք ապահովում ամբողջ հասարակության խոսքի ու տեղեկատվության ազատությունը*: Այդ դիտակետից էլ տեսնենք՝ շահո՞ւմ, թե՞ կորցնում են նրանք, երբ իրենց էջերից կամ հաղորդումներից դուրս են թողնում կանանց ու նրանց առնչվող խնդիրները:

Խնդիրը դիտարկենք լրատվամիջոցների երկու գործառույթի տեսանկյունից:

Ճանաչողական գործառույթ⁸⁴: ՉԼՄ-ներն արագ և լիարժեք տեղեկություններ են տալիս մեր շուրջը տեղի ունեցող իրադարձությունների մասին: Նրանք որոնում, վերլուծում, մեկնաբանում և շրջանառության մեջ են դնում այդ տեղեկատվությունը: Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում նրանք աչալուրջ հետևում են իշխանության երեք թեկնի գործունեությանը և գնահատում դրանց արածն ու չարածը: Այսպիսով, ուզեն թե չուզեն, կատարում են այսպես կոչված «պահապան շների» կամ ընդդիմադիրի դեր: Վերջապես, գիտելիք են տալիս աշխարհի տարբեր տարածաշրջանների անցուդարձի և իրողությունների, մշակութային ժա-

84 Լրագրության տեսության մեջ լրատվամիջոցների գործառույթների մեկ միասնական տեսակետ չկա: Հետխորհրդային երկրների տեսաբաններն, օրինակ, թվարկում են կազմակերպական, գաղափարախոսական, մշակութալուսավորական, տեղեկատվական և ռեկրեատիվ (զվարճանքի կամ լիցքաթափման) գործառույթները, ուրիշներն առանձնացնում են մասնաճյուղ-գաղափարախոսական, տեղեկատվական-հաղորդակցական, կարգավորող, արտադրատնտեսական, կանխատեսման, էվրիստիկական, ոմանք էլ՝ մասնաշխարհայացքային, քննադատական, սոցիոլոգիական, փորձագիտական, արտիկուլյացիայի և ինտեգրացման, իննովացիոն, սոցիալականացման, համախմբման և մշակութաբանական գործառույթները (Տե՛ս Ворошилов В.В., Журналистика. Учебник.- Санкт-Петербург, 2002, стр. 296-304. Прохоров Е.П., Введение в теорию журналистики.- М., 2003, стр. 52- 82. Моисеев Б., Журналистика и журналисты.- Киев, 2002, стр. 51- 59):

ռանգության, ազգային ինքնությունը բնորոշող ավանդույթների ու արժեքների, անցյալի, ներկայի և ապագայի մասին:

Վերն արդեն տեսանք՝ միջազգային կառույցների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամբողջ աշխարհում, չնայած որոշ առաջընթացին, լրատվամիջոցների հրապարակումները հեռու են իրական կյանքում կանանց կերպարների և նրանց հիմնախնդիրների զարգացումները համարժեք արտացոլելուց: Ըստ հետխորհրդային ռուսական մամուլի դիտարկումների՝ 1995-96 թվականներին «բոլոր թերթերի էջերի ընդամենը 1%-ն է հատկացվել կանանց մասին նյութերի՝ անկախ նրանց ով լինելուց»: Հետագա տարիներին «առաջընթաց» է նկատվել, «կանանց մասին գրվել է ազգային մամուլի բոլոր թերթերի էջերի 1,5%-ում»⁸⁵: Նույն իրավիճակն է հետխորհրդային մյուս երկրներում: Այսպես. «Ներկայումս Բելառուսը «գենդերային բում» է ապրում, ինչը դրսևորվում է նախ գիտական, գիտապրակտիկ և ակտիվիստական խորհրդաժողովներով ու սեմինարներով, որոնց անվանումներում առկա է «գենդեր» բառը: Սակայն հասարակական գիտակցության մակարդակում դա որևէ ազդեցություն չի ունենում: Լրագրական տեքստերը շարունակում են ստեղծել ու բազմացնել կարծրատիպային պատկերացումներ...»⁸⁶: Կամ. «Մոնիտորինգը ցույց տվեց, որ ՁԼՄ-ներում կանանց հարցերին նվիրվել է նյութերի 6,2%-ը, գրում են վրացի փորձագետները,- դրանց կեսից ավելին եղել են նյութեր արտասահմանյան կինոյի, էլիտայի և շոու բիզնեսի ներկայացուցիչների մասին: Փաստորեն իսպառ բացակայել են ընտանիքի, դրա կառուցվածքի և ընտանիքում կնոջ դերի մասին նյութերը: Չափազանց սակավաթիվ էին կանանց տնտեսական ակտիվության, կանանց իրավունքների

Այս դասակարգումների հիմքում տարբեր սկզբունքներ են ընկած՝ ըստ լրագրական արտադրանքի ներգործության, ըստ լրագրության սուբյեկտների և այլն: Բայց, ըստ էության, տարբեր անվանումներով ու դասակարգումներով, բոլորն էլ հիմնականում միևնույն գործառույթներն են մատնանշում: Տվյալ դեպքում «ճանաչողական» պայմանական անվան տակ առաջարկվում է նկատի ունենալ այն գործառույթները, որոնք Կ.-Ժ. Բերտրանը անվանում է «հետևել միջավայրին», «պատկերացում տալ աշխարհի մասին» և «փոխանցել մշակութային ավանդույթները» (տե՛ս Բերտրան Կ.-Ժ. Մամուլի ազատության պաշտպանության երաշխիքներ: Լրատվական էթիկայի և պատասխանատվության համակարգեր.- Եր., 2000, էջ 20-21):

85 Աժգիխինա Ն., Գենդերային ստերեոտիպերը ժամանակակից լրատվամիջոցներում // Գենդերային հետազոտություններ, պր. 6.- Եր., 2001, էջ 125:

86 Кулинка Н., Гендерные стереотипы в белорусской печати // Гендерная цензура как элемент культуры.- М., 2003, стр.41.

պաշտպանության, ինչպես նաև կանանց կազմակերպությունների մասին նյութերը»⁸⁷:

Հայաստանի իրավիճակն այս առումով առանձնապես չի տարբերվում: «Ասե՛ք, թե փրկագիր լրատվամիջոցները բնավ չեն արչագանքում կանանց հիմնախնդիրներին, անշուշտ, միշտ չի լինի, - գրել է փորձագետը 1999 թ.: - Այլ հարց է, թե որքանով են նպաստում դրանց լուծմանը կամ ինչ կարծիք են փորձում ձևավորել: Իրականությունն այն է, որ գործը հպանցիկ փեղեկափոխությունից և առիթից առիթ մի քանի (հիմնականում նույն) կազմակերպությունների առաջին դեմքերի հետ հարցազրույցներից առաջ չի գնում: Լրագրողների գրիչը շարունակում է սահել մակերեսի վրայով»⁸⁸: Հայկական մի շարք լրատվամիջոցների մոնիտորինգի արդյունքները⁸⁹ ցույց են տվել. «Գիտարկված բոլոր թերթերին բնորոշ է այն, որ նրանք իրենց էջերում կանանց ներկայության բացը փորձում են լրացնել հայրնի կանանց (գլխավորապես օտարերկրացի) մասին արտափոխություններով: Կանանց առնչվող հրատարակումների զգալի մասը մշակույթի ոլորտի կանանց մասին է: ...Որպես կանանց մերօրյա գերխնդիր՝ բոլոր թերթերն արչանագրել են մարմնավաճառության ահազնացող չափերը...»⁹⁰:

Այս իրավիճակը լրագրողական աշխարհը փորձում է արդարացնել այն հանգամանքով, որ գեներալային խնդիրները հասարակության մեջ առաջնահերթ չեն համարվում: «Եթե գեներալային հավասարակշռության հարցը քննարկվի պերական մակարդակով, ապա անպարճառ արչագանք կգտնի մամուլում, բայց եթե հասարակության մեջ կարծես միայն Նորա Հակոբյանն⁹¹ է այդ մասին խոսում, ոչ ոք չի փորձում երկխոսության մեջ մտնել, բնական է, որ մամուլն էլ մեկ անգամ կգրի այդ մասին և կմոռանա»,- ասել է խնդրո առարկային նվիրված կլոր սեղանի ընթացքում Երևանի մամուլի ակումբի նախագահ Բ. Նավասարդյանը: «Ինչպիսին կյանքն է, այդպիսին էլ արտացոլվում է թերթերում,- ավելացրել է «Ռեսպուբլիկա Ար-

87 Хомерики Л., Джавахишвили Н., Анализ гендерного измерения СМИ Грузии // Гендерная политика и масмедия.- Тбилиси, б.г., стр. 23.

88 Հարությունյան Ա., Կանայք զանգվածային լրատվության միջոցներում //Ձեկույց կանանց իրավիճակի մասին: Անցումային շրջանի ազդեցությունը: Հայաստան 1999 / ՄԱԶԾ.- Եր., 1999, էջ 99:

89 2002 թ. մայիս-օգոստոս ժամանակահատվածում:

90 Ղուլինյան Ի., Կանայք ամենօր տաք թեմա են, բայց ՁԼՄ-ներում «սառչում» են // Հայաստանի Հանրապետություն, 2002, 6,8 դեկտ.:

91 Կանանց հանրապետական խորհրդի նախագահը:

մենիա» թերթի գլխավոր խմբագիր Վարդան Ալոյանը: *Եթե լինեն ոչ թե 7 կին պարզամտություններ, այլ 70, բնական է նրանք տասն անգամ ավելի շար կներկայացվեն մամուլում: Եթե հասարակության մեջ համամասնությունն այդ է, թերթում այլ չի կարող լինել: Կարծում եմ, այդպեղ մեզանից շար քիչ բան է կախված»:* Մյուս լրատվամիջոցների ղեկավարները պնդել են, որ իրենք ոչ թե պետք է հասարակական կազմակերպությունների պես շարժումներ ձևավորեն, այլ պարզապես արձագանքեն դրանց⁹²:

Ինչպես գիտենք, լրագրության խնդիրը միայն այն չէ, որ ցույց տա կյանքի անցողարձը, այլ հասարակության ուշադրությունը հրավիրի այն հարցերի վրա, ինչի մասին արժե մտածել: Ստորև կտեսնենք, որ հասարակության տարբեր ոլորտներում, մասնավորապես քաղաքականության և տնտեսության մեջ լուծման կարոտ լուրջ գեղեցիկ խնդիրներ կան, որոնք էապես կարող են կասկածի տակ դնել երկրի ժողովրդավարական և կայուն զարգացման գործընթացները: Ո՞վ և որտե՞ղ պիտի հասարակության ուշադրությունը հրավիրի դրանց վրա: Երկրորդ, եթե նկատի ունենանք լրագրողների պահապան շան դերը, ապա հարկ է հիշել, որ Հայաստանը վերը հիշատակված միջազգային կառույցների անդամ է. միացել, վավերացրել կամ ստորագրել է վերը քննարկված իրավական փաստաթղթերը, փաստորեն դրանք երկրի օրենսդրության և քաղաքականության մասն են կազմում, հետևաբար այն ամենը, ինչ շարադրված է դրանց մեջ, վերաբերում է նաև Հայաստանին: Դրանք պարտավորություններ են, որոնք ստանձնել է մեր պետությունը: Ո՞վ պետք է հետաքննի և վերլուծի, թե որքանով են իշխանությունները հավատարիմ իրենց ընտրված ուղղությանը և որքանով են կատարում ստանձնած պարտավորությունները: Լրագրողն իրավացիորեն արձանագրում է, որ Հայաստանում 70-ի փոխարեն ընդամենը 7 կին պարզամտոր կա, բայց փաստի արձանագրումով նրա անելիքը չի ավարտվում, սկսվում է: Նա պիտի փորձի պարզել նաև, թե ինչու է այդպես, որոնք են տվյալ իրավիճակը պայմանավորող պատճառները:

Գոնե այսքանով լրատվամիջոցները էապես թերանում են և կասկածի տակ դնում իրենց արտադրանքի որակը: Փոխարենը տարածվում է ապատեղեկատվություն, թե գեղեցիկ խնդիրները հետաքրքրում են սոսկ մի քանի կանանց կազմակերպությունների և հասարակության համար առաջնահերթ չեն: Ի՞նչ տեղեկատվության, ի՞նչ փաստերի վրա է հիմնվում այս կարծիքը, երբեք չի պարզաբանվում, որ ենթադրել է տալիս, թե նշված պատճառաբանությունները փաստարկներ չեն, այլ ընդամենը սեփական անգործության ար-

92 Մինասյան Թ., Գեղեցիկ խնդիրների հիմնախնդիրների արտացոլումը լրատվամիջոցներում // Ազգ, 2004, 20 ապրիլի:

դարացում, որը, սակայն, արմատացող կարծրատիպի ուժ է ձեռք բերել: Օրինակ, ինչպես տեսանք, լրագրողական ընկերակցության ներկայացուցիչը հայտարարում է, որ գեներային հարցերը պետական մակարդակով չեն քննարկվում, մինչդեռ հենց նշված կյոթ սեղանից առաջ, բառացիորեն 12 օր առաջ ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը», որին նախորդել էին մեկ-երկու տարվա տքնաջան աշխատանք և քննարկումներ՝ կառավարական մակարդակով:

Այդ ծրագիրն, ի դեպ, զանգվածային լրատվամիջոցներին նվիրված հատուկ բաժին ունի (7-րդ բաժին, «ՉԼՄ-ների և մշակութային հաստատությունների դերը կանանց հիմնահարցերի լուսաբանման և կնոջ ընդօրինակելի կերպարի ձևավորման գործում»), որում հստակ շարադրված են այս ոլորտում երկրի առջև ծառայած հիմնախնդիրները, այն է՝ ՉԼՄ-ների ոչ բավարար և արդյունավետ մասնակցությունը կանանց հիմնահարցերի լուսաբանմանը, կնոջ և տղամարդու արժանապատիվ, ընդօրինակելի կերպարների ստեղծման ուղղությամբ ՉԼՄ-ների և մշակութային հաստատությունների անարդյունավետ գործունեությունը, կնոջ արժանապատվությունը վիրավորող տեղեկատվության անարգել տարածումը: Ուրվագծված են նաև այդ հիմնախնդիրների լուծման ռազմավարությունն ու միջոցառումները: Հիմնականում նախատեսվում է լրագրողների համար կրթական ծրագրերի իրականացում, անհրաժեշտ գիտելիքների հաղորդում նաև համապատասխան գրականության հրատարակման միջոցով, ինչպես նաև ՉԼՄ-ների հրապարակումների և հաղորդումների մոնիտորինգ՝ կնոջ հասարակայնորեն անցանկալի և նսեմացնող կերպարը ներկայացնելու միտումը հաղթահարելու համար:

Հայաստանում գեներային ուշագրավ հետազոտություններ են կատարվել, տարբեր ոլորտների մասնագետներ հետաքրքիր արդյունքների են հասել, հսկայական գիտական գրականություն է ստեղծվել, որոնց, սակայն, հասարակությունն անտեղյակ է մնում: Եվս մի թերացում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սեռերի համերաշխության, սեռերի հավասարության, կանանց հարցի առաջնդման առումով Հայաստանը բավական հետաքրքիր երկիր է, քանի որ այդ առումով հարուստ ավանդույթներ ունի: Այս մասին ևս մամուլը տեղեկատվություն չի մատուցում՝ փոխարենը գործածության մեջ պահելով կնոջ դերի մասին վաղուց ի վեր մաշված կարծրատիպերը:

Դրանց դեռ մանրամասն կանդրադառնանք հաջորդ բաժնում, այստեղ միայն նշենք, որ մամուլում ստեղծված իրավիճակը մեծապես պայմանավորված է վերը նշված կարծրատիպով, ըստ որի՝ սեռերի հիմնախնդիրները հա-

սարակության մեջ հետաքրքրություն չեն հարուցում: Այս մտայնության հիմքում, անշուշտ, ոչ միայն գիտելիքի պակասն է ընկած, այլև շուկայի թելադրանքը: Չմոռանանք, որ լրագրությունը նաև բիզնես է, լրատվամիջոցները մշտապես մտահոգված են իրենց արտադրանքը վաճառելու, հետևաբար և հասարակությանն ու գովազդատուներին գայթակղող, սպառվող նյութ մատուցելու խնդրով: Բայց համաշխարհային լրագրության փորձը ցույց է տվել, որ շուկան չի կարող որակյալ հաղորդակցության լավագույն երաշխավոր լինել: «Լավագույն դեպքում այն բնակչության մեծամասնությանն արտահայտվելու հնարավորություն է ընձեռում: Վատագույն դեպքում լրատվամիջոցները, մի կողմից, վերածվում են հարուստ փոքրամասնության խոնարհ ծառաների, մյուս կողմից՝ մարդկային անդեմ զանգվածի համար նախատեսված և նվազագույն տհաճություն պատճառելու կոչված տեղեկատվության աղբյուրի»⁹³: Եվ պատահական չէ, որ Հայաստանի 18 լրատվամիջոցների ընդունված վարքականոցներում հստակ նշված է. «**Խուսափել մարդկանց նկատմամբ կանխակալ վերաբերմունքից նրանց ռասայական, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արարների, արտաքին կամ սոցիալական կարգավիճակի պատճառով: Ոչ մի դեպքում չբորբոքել ազգային, կրոնական թշնամանք ու անհանդուրժողություն, խորականություն չդրսևորել քաղաքական, սեռային և լեզվի հատկանիշներով**» (5.1 և 5.2 կետեր):

Սա, անշուշտ, լավատեսություն ներշնչող իրողություն է, քանի որ նշված կարծրատիպից ընդամենը մի քայլ է մինչև այն անցանկալի երևույթը, որի մասին մասնագետները վաղուց են ահազանգում: Խոսքն այսպես կոչված գենդերային գրաքննության մասին է: «**Գենդերային գրաքննությունն ընկած է մի շարք հասարակական մեխանիզմների հիմքում, որոնք խլացնում են կանանց ձայնը, հերքում են կանանց փորձի իրավասությունը և կանանց օրարում քաղաքական բանավեճերից: Նման գրաքննության նպատակն է բողոքել կանանց կյանքի իրական պայմաններն ու անհավասարությունը, որոնք ընկած են հայրիշխանական գենդերային հարաբերությունների հիմքում, և թույլ չտալ գրող կանանց խախտել լռությունը: Ընդ որում, այն կանանց, որոնք «մոռանում են իրենց տեղը», թիրախ են դարձնում, որպեսզի վախեցնեն մյուսներին**»⁹⁴:

93 Բերտրան Կ.-Ժ., Մամուլի ազատության պաշտպանության երաշխիքներ: Լրատվական էթիկայի և պատասխանատվության համակարգեր.- Ե., 2000, էջ 27:

94 Тэкс М., Сила слова. Культура, цензура и свобода слова.- М., 1997, с 15.

Վերջապես, հարկ է հիշեցնել նաև մի կարևոր հանգամանք. լրատվամիջոցների ամենալուջ թերացումը համարվում է ոչ այնքան անստույգ տեղեկատվությունը, որքան դրա բացակայությունը: Ըստ արևմտյան որոշ տեսաբանների, «**ՉԼՄ-ները կարող են «լռության շրջապտույտ» ստեղծել, որի միջոցով որոշակի դեպքեր, մարդիկ, գաղափարներ անհետանում են հասարակական գիտակցությունից**»⁹⁵: Անշուշտ, սա մերժելի է յուրաքանչյուր մարդու կամ գաղափարի համար, առավել ևս, երբ դա վերաբերում է բնակչության մի կեսին և նրա խնդիրներին:

Ինչպես տեսնում ենք, որ կողմից էլ նայենք, իրավիճակը բնավ լրատվամիջոցների որակի օգտին չի խոսում: Մեռերի իրավահավասարության առումով արդի լրատվամիջոցները բավական թերի են կատարում իրենց գործառույթները: Բայց խնդրո առարկան շատ ավելի խորքային է և ընկած է ոչ միայն լրագրության խնդիրների ու որակի տիրույթում, այլև մարդու իրավունքների: Դա բացահայտվում է լրատվամիջոցների մյուս կարևոր գործառույթի դիտարկմամբ:

Հանրային հաղորդակցության ապահովում: Սա լրագրության ելակետային գործառույթն է: Պատահական չէ, որ լրագրությունը հաճախ անվանում են «զանգվածային հաղորդակցության միջոց» կամ mass media: Ընդ որում, հաղորդակցություն թե՛ ուղղահայաց, թե՛ հորիզոնական: Մամուլի և լրատվության այլ միջոցների շնորհիվ է, որ լրատվության սուբյեկտները կապ են հաստատում միմյանց հետ և համատեղ քննարկումների հնարավորություն ստանում: Լրատվամիջոցը կապող օղակ է դառնում անհատի և լրագրողի, անհատի և սոցիալական հաստատությունների, պետական կառավարման կառույցների, հասարակության տարբեր խմբերի միջև, նաև միևնույն խմբի ներկայացուցիչների միջև: Այս գործառույթի շնորհիվ է, որ իրականանում է հաղորդակցության իրավունքը: Երբ խոսվում է արտահայտման իրավունքի մասին, հաճախ դրա ընդգրկումը ներառում են՝ ընկալելով միայն ՉԼՄ-ների իրավունք: Այնինչ, դա նախ և առաջ լրատվությունը սպառողի կամ անհատի իրավունքն է:

Թե ինչ իրավիճակ է աշխարհում այս առումով, արդեն գաղափար կազմեցինք վերը բերված միջազգային փաստաթղթերից: Եվ առանձին երկրների փորձի ուսումնասիրությունը միայն գալիս է հաստատելու այդ փաստաթղթերում արված ընդհանրացումները: ՉԼՄ-ներում կանանց և տղամարդկանց ներկայության հարաբերակցությունը լավագույն դեպքում հավասար է 1/10-ի: **«Կանանց մուտքը ՉԼՄ-ներ՝ իրենց կարծիքը և հեղափոխությունները արտահայտելու համար, չափազանց դժվար է,-** գրում է ռուս փորձագետը:**- Որ**

95 Բերտրան Կ.-Շ., նշվ. աշխ., էջ 37:

պես կանոն, իբրև կանանց շահերի արդարադատ իրավունք էն գալիս փրկամարդիկ շատ են սիրում հարցնել նրանց, թե որն է կնոջ երջանկությունը, և նրանք վաստակաբար պատասխանում են՝ «փրկամարդիկ»։ Այն կանայք, որոնք կարողանում են ինչ-որ բան ասել ՁԼՄ-ներում, սովորաբար երկու ծայրահեղություն են ներկայացնում. կամ այն կանայք են, որոնք շեշտում են իրենց կանացի յուրահասկությունը (կարևոր չէ՝ մայրեր են, թե հեղինակներ), կամ նրանք, ովքեր խուսափում են կանացի երևալուց»⁹⁶:

Գրեթե նույն պատկերն է նաև Հայաստանում: Ըստ 2004 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կատարված ուսումնասիրության արդյունքների՝ «Հայկական ժամանակ» և «Հայաստանի Հանրապետություն» թերթերում ներքին քաղաքականությունը մեկնաբանողների թվում կանայք կազմել են 4-5%, կրթության ոլորտի պարագայում՝ 27%, այն դեպքում, երբ, օրինակ, միջնակարգ կրթության ոլորտում կանանց զբաղվածությունը կազմում է 83%⁹⁷: Տվյալ մոնիտորինգն, ի դեպ, իրականացվել է հետխորհրդային 8 երկրների հետ համատեղ, և պարզվել է, որ մամուլի էջերում կանանց փորձագիտական կարծիքի ներկայացման առումով Հայաստանն ամենավերջին տեղերից մեկն է գրավում:

ՈՒԻԵՄԻ-ն ի՞նչ է ստացվում: Եթե հիշենք, որ կանայք բնակչության ավելի քան կեսն են, ապա նրանց 90%-ը գրեթե օտարված է ՁԼՄ-ներից, հետևաբար նրանց հաղորդակցական իրավունքը չի իրականանում: Այս իրավիճակը ստեղծվում է երկու պատճառով: Նախ, ճիշտ չէ մտածել, թե ՁԼՄ-ները հատուկ խտրական քաղաքականություն են վարում կանանց նկատմամբ: Այնպիսի երկրներում, որտեղ հասարակությունը բևեռացված է, իսկ լրատվամիջոցները՝ խիստ քաղաքականացված, խախտվում է նաև տղամարդկանց մի մեծ հատվածի՝ լրատվամիջոցներով հանդես գալու և սեփական կարծիքը հայտնելու իրավունքը: **«Լրատվամիջոցներով հանդես գալու իրավունքը, այսինքն՝ լրատվամիջոցներով հրապարակային ելույթ ունենալու իրավասությունը կենտրոնացած է սակավաթիվ մարդկանց՝ խմբագիրների ու լրագրողների ձեռքում, որոնք, այս կամ այն անհատին կամ խմբին ընդհանրում, նրան նման առավելություն են ընձեռում: Լրատվամիջոցները սովորաբար նախապատվությունը փալիս են այսպես կոչված «արդունյալ խունակներին» (քաղաքական գործիչներ, ձեռներեցներ, հեղինակավոր անձինք, մասնագետներ), այնինչ սովորական մարդիկ լուրերի մեջ հայտն-**

96 Воронина О.А., Гендерная экспертиза законодательства Российской Федерации о средствах массовой информации.- М., 1998, с. 32.

97 Овнатанян Т., Закарян Л., Кривое зеркало СМИ // Женское мнение в СМИ.- Тбилиси, 2005, с. 8.

վում են միայն այն ժամանակ, երբ վթարի գոհ են դառնում»⁹⁸: Ինչպես ցույց են տալիս վերը բերված տվյալները, կանայք էապես ավելի մեծ թվով ու ավելի հաճախ են հանդես գալիս «վթարի գոհի» դերում:

Եթե մասնույում հիմնականում երևում են մշակույթի մի քանի նշանավոր կին գործիչներ և մարմնավաճառներ, ինչպես հավաստում են լրատվամիջոցների մոնիտորինգ կատարողները, ապա ստացվում է, որ մեր բնակչության ճիշտ կեսը ներկայացնող կանանց մի հսկա բանակ, որը կենսագործունեության տարբեր ոլորտներում լծված է հանրօգուտ աշխատանքի և նշանակալի ավանդ ունի երկրի բարօրության գործում, ոչ միայն անհետանում է հասարակական գիտակցությունից, այլև գրկվում է խոսքի ազատության իրավունքից:

Մեռերի իրավահավասարության խնդրի հանդեպ զգայուն լրագրությունն, այսպիսով, նախ և առաջ խոսքի ազատության հիմնահարց է: Հետևաբար, դժվար է չհամաձայնել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հետ: Ելնելով երկարամյա դիտարկումների ու հետազոտությունների արդյունքներից՝ նա իր զեկույցում հայտարարել է, որ «հստակ կապ է նկատվում ՉԼՄ-ներում կանանց դերի նվազեցման և առահասարակ ՉԼՄ-ների ազատության աստիճանի միջև»:

Նոր հասկացություններ

Գեներայիս գրաքննություն - գրաքննության տեսակ, որի նպատակն է թաքցնել կանանց իրական վիճակը հասարակությունում, քողարկել հայրիշխանական հարաբերությունների հետևանքները: *‘Իս կանանց վրա յուրահատուկ ճնշման չե է, երբ, օրինակ, ծնողները չեն ցանկանում գումար ծախսել դուստրերի կրթության վրա, ուսուցիչները խորհուրդ են տալիս աշակերտուհիներին չափազանց պատվախնդիր չլինել և մտածել միայն ամուսնության մասին, խմբագիրները հրաժարվում են հրատարակել կանանց հիմնախնդիրներին վերաբերող սուր հոդվածներ՝ պատճառաբանելով, որ դրանք չեն հետաքրքրում հասարակությանը: ‘Իս հանգեցնում է գրաքննության մի այլ ձևի՝ կանանց ինքնագրաքննության, երբ կանայք չեն հանդգնում բարչրաչայնել կամ գրել իրենց հուզող հիմնախնդիրների մասին:*

Գլխում ներկայացված հիմնական հասկացությունները

միջազգային կոնվենցիա, կանանց իրավունքներ, մարդու իրավունքների սերունդներ, «սեռական շովինիզմ», գեներայիտրեն զգայուն լրագրություն, գեներայիս գրաքննություն, «լռության շրջապտույտ»:

98 Յակուբովիչ Բ., Լրատվամիջոցները և ժողովրդավարությունը // Մամուլը և ժողովրդավարությունը.- Եր., 2001, էջ 28:

Կլոր սեղան - բանավեճ հետևյալ հարցերի շուրջ

1. Կարելի՞ է արդյոք ՁԼՄ-ներում գենդերային հիմնախնդիրների ներկայացման մակարդակը դիտել որպես ՁԼՄ-ների ազատության չափանիշ:
2. Ինչպե՞ս խուսափել գենդերային գրաքննությունից:

Տնային առաջադրանք. «Գենդերային կարծրատիպերի հայտնաբերում մամուլում»:

Ինտերակտիվ պարապմունք. «Կանանց քաղաքի» և «Տղամարդկանց քաղաքի» ստեղծում թերթի լուսանկարների միջոցով:

Ինտերակտիվ պարապմունք. «Իմ իրավական իրազեկության աստիճանը»:

Ինտերակտիվ պարապմունք. «Չանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ օրենքի գենդերային վերլուծություն»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աժգիխինա Ն., Գենդերային ստերեոտիպերը ժամանակակից լրատվամիջոցներում // Գենդերային հետազոտություններ, պր. 6.- Եր., 2001, էջ 108 – 128:
2. Բերտրան Կ.-Ժ., Մամուլի ազատության պաշտպանության երաշխիքներ: Լրատվական էթիկայի և պատասխանատվության համակարգեր / Երևանի մամուլի ակումբ.- եր., 2000.- 210 էջ:
3. Եվրոպայի ուղին դեպի տեղեկատվական հասարակություն: Եվրոմիության և Եվրոխորհրդի նախաձեռնություններին վերաբերող զեկույցների, ուսումնասիրությունների, հանձնարարականների և այլ նյութերի ժողովածու / Երևան մամուլի ակումբ.- Եր., 2000.- 267 էջ:
4. Չանգվածային տեղեկատվության բնագավառը Եվրոպայի խորհրդի փաստաթղթերում (Երկրորդ լրացված հրատարակություն) / Երևանի մամուլի ակումբ.- Եր., 2003.-258 էջ:
5. Ժուռնալիստիկա: Պրոֆեսիոնալ ժուռնալիստիկայի հիմունքները.- ա.տ և ա.թ.
6. Ինքնակարգավորում: Միջազգային փորձն ու հեռանկարները Հայաստանում / Երևանի մամուլի ակումբ.- Եր., 2004.- 84 էջ:
7. Իրավական թեմաները լուսաբանող լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնագիրք.- Եր., 2002.- 52 էջ:
8. Խաչատրյան Մ., Խաչատրյան Գ., Գատական լրագրողի ուղեցույց.- եր., 2003.- 48 էջ:

9. Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն: Միջազգային իրավական փաստաթղթերի, ՀՀ օրենքների ժողովածու և իրավական ակտերի ժողովածու / Կազմ.՝ Ա. Հարությունյան, Գ. Հովհաննիսյան: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա.- Եր., 2006.- 348 էջ:
10. Հարությունյան Ա., Կանայք զանգվածային լրատվության միջոցներում // Չեկույց կանանց իրավիճակի մասին: Անցումային շրջանի ազդեցությունը / ՄԱԶԾ.- Հայաստան 1999, էջ 97-101:
11. Մամուլը և ժողովրդավարությունը / Երևանի մամուլի ակումբ.- Եր., 2001.- 264 էջ:
12. Օսիպով Վ., Gender mainstreaming. տեսություն և պրակտիկա: // Գեներրային հետազոտություններ, պր. 5: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Եր., 2001, էջ 74-94:
13. Воронина О.А., Гендерная экспертиза законодательства Российской Федерации о средствах массовой информации. М., 1998.- 76 с.
14. Ворошилов В.В., Журналистика. Учебник. Санкт-Петербург, 2002.- 656 с.
15. Гармонизация законодательств стран Южного Кавказа в области ЦМИ с европейскими стандартами.- Б., 2004.- 470 с.
16. Гендерная цензура как элемент культуры / Ассоциация журналисток.- М., 2003.- 104 с.
17. Женщина и визуальные знаки / Под ред. А. Альчук.-м., 2000.- 262 с.
18. Женщины: свобода слова и свобода творчества. Сборник статей.- М., 2001.- 198 с.
19. Журналистам от журналистов. Пособие для журналистов / Британский совет, ПРООН.- б.м., 2007.- 104 с.
20. Моиесеев Б., Журналистика и журналисты. Киев, 2002.- 403 с.
21. Овнатанян Т., Закарян Л., Кривое зеркало СМИ // Женское мнение в СМИ. Тбилиси, 2005.-с. 5-23.
22. Прохоров Е.П., Введение в теорию журналистики. М., 2003.- 368 с.
23. Сила слова-2. Новый Европейский порядок: права человека, положение женщин и гендерная цензура.- М., 200.- 80 с.
24. Тэкс М., Сила слова. Культура, цензура и свобода слова.- М., 1997.- 32 с.



ԳԼՈՒԽ IV

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՉԼՄՆԵՐՈՒՄ

- 4.1. Քաղաքականություն, իշխանություն և գեներ
- 4.2. Քաղաքական մասնակցության գեներալային հիմնախնդիրները
- 4.3. Քաղաքականության գեներալային հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում
- 4.4. Գեներալային հիմնախնդիրների լուսաբանումը կանանց և տղամարդկանց պարբերականներում
- 4.5. Գեներալային հիմնախնդիրների լուսաբանումը արդի հասարակական-քաղաքական ՉԼՄ-ներում
- 4.6. Կանանց հասարակական շարժման արտացոլումը ՉԼՄ-ներում. պարունակություն և արդիականություն

4.1. Քաղաքականություն, իշխանություն և գեներ

«Քաղաքականություն» հասկացությունը: Քաղաքականության բովանդակության հարստացումը հետմոդեռնիզմի ազդեցությամբ: Քաղաքականության և իշխանության ընթռնման փոփոխությունը ֆեմինիզմի ներգործությամբ: Գեներալային մշակույթ, գեներալային քաղաքականության տեսակները: Չուգակշռված ժողովրդավարություն:

«Քաղաքականություն» կամ «politic» հասկացությունը հին հունարենի ծագում ունի և բառացիորեն նշանակում է պետություն, պոլիս (քաղաք-պետություն): Պատահական չէ, որ այն երկար ժամանակ բնորոշվում էր որպես պետության իրական ձգտումների և դրանց իրագործմանն ուղղված միջոցների ամբողջություն: XVII-XIX դարերում քաղաքականության բովանդակությունը աստիճանաբար ընդլայնվեց՝ ներառելով պետության և քաղաքացիական հասարակության փոխազդեցությունները: Հետագայում այն սկսեց դիտվել դասակարգային պայքարի տեսանկյունից, «քաղաքականություն» հասկացությունը ներառեց իշխանության բաշխումը մարդկանց առանձին խմբերի միջև: Քաղաքական կյանքը աստիճանաբար սկսեց դիտվել որպես սուբյեկտների⁹⁹ վարքի և հարաբերությունների ամբողջություն: Հետմոդեռնիստական հարացույցն ընդհանրապես արմատապես փոխեց պատկերացումները քաղաքականության վերաբերյալ՝ առաջ բերելով խմբային արժեքների դերը: Քաղաքականության ըմբռնումը տարբեր շարժումների և գաղափարախոսությունների ազդեցությամբ սկսեց փոփոխվել: Այսպես, ֆեմինիզմի ազդեցությամբ քաղաքականության մեջ ընդգրկվեցին մասնավոր ոլորտի հիմնախնդիրները՝ վերարտադրության գործառույթը, ամուսնական հարաբերությունները, աբորտը, կանանց նկատմամբ բռնությունը, սեռական ոտնձգությունները աշխատանքի վայրում և այլն: Որպես քաղաքական մասնակցության երևույթ՝ ուսումնասիրվեց կանանց հասարակական շարժումը: Գենդերային դերերը ընտանիքում և հասարակության մեջ համարվեցին քաղաքականության օբյեկտ: Վերջապես, վերանայվեց **իշխանության** ըմբռնումը: Եթե ավանդաբար իշխանությունը դիտվում էր որպես մարդկանց վարքագծի և գործունեության վրա որևէ միջոցով (կամք, հեղինակություն, իրավունք, բռնություն) որոշակիորեն ազդելու ընդունակություն ու հնարավորություն, ապա կանանց քաղաքական փորձի կուտակման և ժողովրդավարության խորացման ընթացքում առաջադրվեց այլընտրանքային մոտեցում, որը իշխանությունը սկսեց դիտել որպես կարևոր և գործնական միջոց սոցիալական անարդարության վերացման և քաղաքական համակարգերի վերակառուցման համար: Եթե նախկինում իշխանությունը համարվում էր ուժ և անհատների հավակնությունները բավարարելու միջոց, ապա այժմ նաև՝ պատասխանատվություն և հասարակությանը

99 Ընդ որում, կանայք երկար ժամանակ դիտվել են քաղաքականության օբյեկտ և ոչ թե սուբյեկտ:

ծառայելու ավելի մեծ հնարավորություններ ընձեռող միջոց: Ընդ որում, առաջին դեպքում ձևավորվում է այնպիսի աշխարհընկալում, որի հիմքում իշխանության և ենթակայության հարաբերություններն են: Մյուս դեպքում իշխանությունը հասարակությանը ծառայելու, ժողովրդավարություն և արդարություն ապահովելու միջոց է: Պատահական չէ, որ իշխանության գենդերային կազմը համարվում է ժողովրդավարացման մակարդակի գնահատման ցուցանիշ:

Գենդերի և քաղաքականության կապը հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթանալ «գենդերային մշակույթ» հասկացությանը: **Գենդերային մշակույթը** քաղաքական մշակույթ է, որը ցույց է տալիս, թե որքանով է գենդերային գործոնը ընդգրկված քաղաքական ինստիտուտների բնութագրերի և պետության քաղաքականության մեջ, այսինքն՝ որքանով է գենդերային գործոնն առկա քաղաքականության կառուցվածքային տարրերում՝ ճանաչողական մակարդակում (քաղաքական գիտելիքներ, քաղաքական մտածողություն, կրթություն), բարոյաարժեքային ոլորտում (ավանդույթներ, արժեքներ, իդեալներ, համոզմունքներ), քաղաքական վարքի տիպերում, ձևերում, ոճում, հասարակական-քաղաքական գործունեության օրինակներում:

Գենդերային մշակույթի համար կարևոր նշանակություն ունի հասարակության պատմությունը, ազգային գաղափարախոսությունը, սոցիալական կառուցվածքը: Կարևոր է նաև տվյալ հասարակության մեջ ֆեմինիզմի ավանդույթների առկայությունը կամ բացակայությունը, կանանց շարժման զարգացման աստիճանը, երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը:

Գենդերային մշակույթի տեսանկյունից կարևորվում է նաև իշխանությունների վարած քաղաքականությունը, որը լինում է երեք տեսակ՝ խտրական, չեզոք և զգայուն: **Գենդերային խտրական քաղաքականության** դեպքում քաղաքականությունից իսպառ դուրս է մղվում այս կամ այն սեռը: Մինչինդուստրիալ հասարակություններում, որպես կանոն, կանայք քաղաքանությունից օտարված էին. շատ երկրներում կանայք քաղաքականության սուբյեկտ ճանաչվեցին միայն XX դարի սկզբից:

Գենդերային չեզոք քաղաքականության դեպքում սեռերի նկատմամբ որևէ հատուկ մոտեցում չի ցուցաբերվում: Իրավական առումով սեռերի հավասարությունը հաստատվել և ամրագրվել է շատ պետությունների օրենսդրության մեջ: Գենդերային չեզոք քաղաքականությունը սկսեց գերիշխել XX դարի 20-ական թվականներից, որի արդյունքում տարբեր

երկրների խորհրդարաններում կանայք կազմեցին պատգամավորների 5-10%-ը: Որոշակի փուլում սա համարվում էր առաջադեմ և ոչ խտրական, այսինքն՝ հավասարություն ապահովող քաղաքականություն: Սակայն այդ քաղաքականությունն անտեսում է կանանց և տղամարդկանց կենսափորձի և ֆիզիկական, սոցիալական, տնտեսական բնութագրերի տարբերությունը: Բնական է, որ այդ «հավասարության» պարագայում առաջանում են տարբեր արդյունքներ, քանի որ տարբեր են կանանց և տղամարդկանց հնարավորությունները:

Ժողովրդավարության խորացմանը զուգահեռ փոփոխվում էր նաև սոցիալական արդարության և հավասարության ըմբռնումը: Որոշ երկրներում անցումը չեզոք քաղաքականությունից **գենդերային զգայուն քաղաքականության** սկսվեց 1960-ական թվականներին, կանանց շարժման նոր ալիքի ազդեցությամբ, որն ստիպեց կանանց դիտել որպես քաղաքականության մեջ արժանի դեր ունեցող մասնակիցների: Գենդերային զգայուն քաղաքականությունը պետք է կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններ ապահովեր, որի համար արդյունավետ միջոց դարձան գենդերային քվոտաները (դրանք դիտվում են **պոզիտիվ խտրականություն** և ժամանակավոր միջոց կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընձեռնման համար): Հնարավոր են գենդերային քվոտաների մի քանի տարբերակներ: Օրինակ՝ 50/50 սկզբունքով, երբ կուսակցական համամասնական ընտրացուցակներում կանայք և տղամարդիկ հաջորդում են միմյանց (կին, տղամարդ, կին, տղամարդ ...): Մեկ այլ տարբերակ. օրենսդրությամբ ամրագրվում է, որ որևէ սեռ չպետք է 40%-ից պակաս ներկայացված լինի և այլն:

Գենդերային քվոտաները գրեթե բոլոր երկրներում լուրջ բանավեճ հարուցեցին: Ոմանք դա համարում էին նահանջ ազատականությունից և մասնակցության ժողովրդավարությունից (տղամարդկանց նկատմամբ խտրականություն) և մտավախություն ունեին, որ դա կհանգեցնի քաղաքական գործիչների մակարդակի անկման: Տարածված կարծիք կար, որ հավասար իրավունքների դեպքում խտրականությունը բացառված է: Շատ երկրներում կանանց շարժման բացատրական արշավների շնորհիվ միայն հասարակությունը սկսեց հասկանալ խտրականության էությունը և ընդունեց դրա հաղթահարման անհրաժեշտությունը: Օրինակ՝ սկանդինավյան երկրներում կուսակցություններին խորհուրդ տրվեց տարբեր մակարդակների ընտրությունների ժամանակ ընտրացուցակներում գենդերային հավասարակշռություն ապահովելու համար կիրառել գենդերա-

յին քվոտաների համակարգը: Թեև դա պարտադիր չէր, և կուսակցությունները «չէին պատժվում» դրանք չկիրառելու համար, Ֆինլանդիայում և Շվեդիայում գենդերային քվոտաները լայնորեն կիրառվեցին: Նորվեգիայում գենդերային քվոտաները պարտադիր դարձան: Գենդերային զգայուն քաղաքականությունը եվրոպական մի շարք երկրներում գործունե կերպով կիրառվեց հատկապես XX դարի 80-ական թվականներին, որի շնորհիվ կանայք սկսեցին մեծ դեր խաղալ որոշումների ընդունման մակարդակում: Իսկ 1995 թ. արդեն Պեկինի կանանց դրությամբ նվիրված համաժողովում առաջ քաշվեց «**զուգակշռված ժողովրդավարության**» գաղափարը և առաջադրվեց որոշումների ընդունման մակարդակում գենդերային հավասարակշռության ապահովման չափանիշը: Ընդ որում, բացի քվոտաներից մեծ կարևորություն է տրվում նաև մի շարք այլ աջակցող գործողությունների:

Այս ամենի շնորհիվ սկանդինավյան և հյուսիսեվրոպական մի շարք երկրներում պատկառելի դրական փորձ կուտակվեց: 1990-ական թթ. Շվեդիան, Նորվեգիան, Ֆինլանդիան, Դանիան, Նիդեռլանդները, Կանադան գենդերային զգայուն քաղաքականության արդյունքների տեսանկյունից օրինակելի երկրներ դարձան: Սկանդինավյան երկրներում կանանց ներկայությունը խորհրդարաններում կազմեց 33-43%¹⁰⁰: Շվեդիայի կառավարության կազմում կանայք կազմեցին 50%, Ֆինլանդիայում, Դանիայում, Նորվեգիայում՝ 1/3-ից ավելին: Այդ երկրներում մշակվեց գենդերային զգայուն քաղաքականության հայեցակարգ, որի համաձայն՝ կանայք և տղամարդիկ պետք է համաչափ ներկայացված լինեն որոշումների ընդունման բոլոր մակարդակներում: Կանանց փորձն ու գիտելիքները նույնպես պետք է արտահայտված լինեն պետական քաղաքականության մեջ: Հենց այդ երկրների փորձի ուսումնասիրությունն է հնարավորություն տալիս պնդելու, որ կանայք, քաղաքական կառույցներում հասնելով «**կրիտիկական զանգվածի**»՝ 30%-ի, փոխում են քաղաքականության ըմբռնումը, որոշումների ընդունման մշակույթը, հետևաբար և՛ կյանքի որակը: Սակայն փորձը ցույց է տալիս նաև, որ միայն քվոտաներով հնարավոր չէ լուծել այդ հիմնախնդիրները, անհրաժեշտ են նաև **աջակցող գործողություններ**: Դրանցից են՝

1. օրենսդրության վերանայում գենդերային զգայուն քաղաքականու-

100 Гендерная реконструкция политических систем, Санкт-Петербург, 2004г., стр. 975.

թյան տեսանկյունից՝ ներառելով դրական միջոցառումներ իրավիճակը փոխելու համար,

2. կուսակցությունների ֆինանսավորման լծակների օգտագործում,
3. հետևել, որ նշանակովի պաշտոններում կանայք և տղամարդիկ ներկայացված լինեն հավասարապես,
4. կանանց և տղամարդկանց «տվյալների բանկի» ստեղծում,
5. գենդերային դասընթացների խրախուսում ուսուցման բոլոր մակարդակներում,
6. հատուկ արշավների անցկացում քաղաքականության մեջ կանանց նկատմամբ նպաստավոր հասարակական կարծիքի ձևավորման համար,
7. կանանց և տղամարդկանց հավասար ներկայացուցչություն ՁԼՄ-ների ղեկավար մարմիններում,
8. մոնիտորինգների անցկացում և այլն:

Շատ երկրներում հաջողությամբ են կիրառվում վերոհիշյալ միջոցառումները: Այսպես, Ֆրանսիայում ընտրությունների ժամանակ համամասնական ցուցակներում գենդերային հավասարակշռություն ապահովելու համար կիրառվում է կուսակցությունների ֆինանսավորման լծակը: Իսլանդիայում, 1995թ. սկսած, ընտրություններից մեկ ամիս առաջ անցկացվում է «Քվեարկեք կանանց օգտին» քարոզարշավը, Շվեդիայում պաշտոնյաների համար գենդերային սեմինարներ են կազմակերպվում և այլն: Այդ երկրներում գենդերապես զգայուն քաղաքականությունը նպաստեց նաև **կանանց քաղաքական մասնակցության** վերելքին: Տվյալ երևույթն ըմբռնելու համար խորամուխ լինենք նաև այդ հասկացությա-

4.2. Քաղաքական մասնակցության գեներային հիմնախնդիրները

«Քաղաքական մասնակցություն» հասկացության բովանդակությունը: Քաղաքական մասնակցության տեսակները: Կուսակցությունների գործունեության գեներային տեսանկյունները:

Քաղաքական մասնակցությունը քաղաքացիների որևէ կամավոր գործունեությունն է քաղաքական համակարգի տարբեր մակարդակներում ընդունվող որոշումների վրա որևէ միջոցով ազդելու նպատակով: Մինչև XX դարի 50-ական թթ. քաղաքական մասնակցություն ասելով՝ հասկանում էին մասնակցությունը ընտրություններին և պետական կառավարմանը: XX դարի երկրորդ կեսին այդ հասկացողությունն զգալիորեն ընդլայնվեց, ըստ այդմ՝ քաղաքական մասնակցությունը ընկալվում է որպես *հասարակության անդամների ներգրավվածություն գոյություն ունեցող քաղաքական հարաբերություններում և իշխանության կառույցներում, ինչպես նաև գիտակցված քաղաքական գործունեություն այս կամ այն նպատակի իրագործման համար*: Ընդ որում, տարանջատում են քաղաքական գործունեության հետևյալ մակարդակները և մասնակցության տեսակները.

1. վերաբերմունք (դրական կամ բացասական) պետական համակարգի և նրա ինստիտուտների նկատմամբ,
2. մասնակցություն ընտրական գործընթացներին,
3. մասնակցություն հասարակական-քաղաքական կազմակերպությունների՝ կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, հասարակական շարժումների, արհմիությունների, ճնշման զանազան խմբերի գործունեությանը,
4. քաղաքական գործառույթների իրականացում պետական ինստիտուտների սահմաններում,
5. մասնագիտական գաղափարաքաղաքական գործունեություն,
6. մասնակցություն ներքաղաքական շարժումներին և ակցիաներին, որոնք ուղղված են քաղաքական համակարգի արմատական վերակառուցմանը:

Տարբերում են քաղաքական մասնակցության ակտիվ (մասնակցություն ընտրություններին ընտրվողի կարգավիճակում, լոբբիստական գործունեություն, անդամակցություն կուսակցություններին և այլ հասարակական-քաղաքական կազմակերպությունների, մասնակցություն քաղաքական տարբեր ակցիաների և այլն) և պասիվ (մասնակցություն քվեարկությանը կամ ընտրություններին չմասնակցելը) ձևեր:

Իհարկե, քաղաքական մասնակցության մակարդակը կախված է տվյալ հասարակության քաղաքական խաղի կանոնների ավանդույթներից, ձևավորված քաղաքական մշակույթից, քաղաքական վարչակարգի բնույթից: Որքան ժողովրդավարական է հասարակությունը, այնքան լայն է այդ մասնակցությունը՝ թե՛ քաղաքական հարցերի շրջանակների, թե՛ քաղաքականության մեջ ներգրավված մասնակիցների առումով: Սա ենթադրում է նաև հասարակական տարբեր խմբերի միջև այնպիսի ռեսուրսների հավասարաչափ բաշխում, ինչպիսիք են ֆինանսները, կրթությունը, որոշումների ընդունման մեխանիզմների իմացությունը, ազատ ժամանցը, ՁԼՄ-ների մատչելիությունը: Որքան մեծ է տարբեր սոցիալական խավերի շահերի հաշվառումը պետական քաղաքականության մեջ, այնքան ավելի լեգիտիմ է իշխանությունը և բարձր է քաղաքական մասնակցության մակարդակը:

Ինչպես վերը նշվեց, ժողովրդավարությունն անհնար է պատկերացնել առանց կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության քաղաքականությանը: Այս կապակցությամբ տեղին է հիշատակել երկու փաստաթուղթ, որոնք ընդունվել են Եվրոպայի խորհրդի կողմից. «Հռչակագիր կանանց և տղամարդկանց հավասարության՝ որպես ժողովրդավարության հիմնական չափանիշի մասին» և «Սեռերի հավասարություն, հասարակությունների առանցքային հարց փոփոխությունների փուլում»: Տարբեր երկրներում կուտակված գործնական փորձը վկայում է, որ **կանանց քաղաքական մասնակցության** աստիճանը տղամարդկանցից ավելի ցածր է: Քաղաքական վերանախավում հիմնականում տղամարդիկ են: Այս իրավիճակը հատուկ է նաև Հայաստանին: Ընդ որում, որքան ավանդապահ է հասարակությունը, այնքան ավելի ցածր է կանանց քաղաքական մասնակցությունը: Նման հասարակություններում գերակշռում են կանանց և տղամարդկանց դերերի մասին ավանդական պատկերացումները. որպես կանոն, կնոջը վերապահում են միայն նրա բնական գործառույթի հետ կապված գործունեության ոլորտներ: Դեր չի խաղում անգամ կանանց կրթական բարձր մակարդակը, քանի որ գեներացիան կարծրատիպերի բերումով նրանք դուրս են մնում քաղաքական ոլորտից: Դրա պատճառները վերն արդեն թվարկվել են. *կենսաբանական դեպրեմիսիզմ, փիլիսոփայական-քաղաքական մտքի մեջ կանանց անընտան կամ նրանց նկատմամբ խորականություն, ազատության և քաղաքացիական իրավունքների ընդունում միայն հանրային ոլորտում, որտեղ կանայք դարձնակ թացակայել են:* Կանայք հանրային ոլորտում չընդունվեցին անգամ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունների շրջանում. Ազատության ու Հավասարության կարգախոսների կողքին

միշտ առկա էր Եղբայրությունը, որը կարծես ի սկզբանե բացառում էր ազատության և հավասարության տարածումը կանանց վրա:

Կանանց քաղաքական ցածր մասնակցություն է նկատվում հատկապես սոցիալ-տնտեսական զարգացման առումով հետ մնացող երկրներում, որտեղ կանայք այնքան են ծանրաբեռնված տնային հոգսերով, որ քաղաքական ակտիվության համար ուղղակի ժամանակ չի մնում: Բացի այդ, կանանց քաղաքական մասնակցությունն այդպիսի հասարակություններում արդյունքների տեսանկյունից այնքան էլ տպավորիչ չէ:

Գրեթե բոլոր երկրներում կանանց մուտքը քաղաքականություն խիստ դժվար է եղել: Այսպես, Մեծ Բրիտանիայում կանայք ընտրություններին մասնակցելու իրավունք ստացան 1919թ., սակայն գենդերային խտրականությունը պահպանվեց, քանի որ տղամարդիկ ընտրություններին մասնակցում էին 21 տարեկանից, կանայք՝ 30: Մեծ Բրիտանիայում այդ խտրականությունը վերացվեց միայն 1928թ., ֆեմինիստական շարժման հետևողական պայքարի շնորհիվ: Նույնը տեղի ունեցավ եվրոպական մյուս երկրներում:

Ակնհայտ դարձավ, որ քաղաքականության մեջ ներգրավվելու ամենաարդյունավետ ուղին քաղաքական կուսակցություններում ներգրավվելն է: Կանանց ներհուսքը կուսակցություններ սկսվեց XX դարի սկզբին և կապված էր ընտրական իրավունքի ձեռքբերման հետ: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ կուսակցություններն առաջացել են պայքարի պայմաններում (դասակարգային կամ ազգային-ազատագրական), այն շրջանում, երբ կանայք օտարված էին քաղաքական կյանքից, դա իր կնիքն է թողել կուսակցությունների մեծ մասի վրա. դրանք ի սկզբանե ձևավորվել են որպես «տղամարդկային» կառույցներ: Այնպես որ, այստեղ նույնպես կանայք հանդիպում էին և հանդիպում են մեծ դժվարությունների:

Շատ կուսակցություններում ստեղծվեցին կանանց մասնաճյուղեր, որոնք նրանց ինքնահաստատվելու, բարդությունները թոթափելու և իրենց դիրքորոշումը հստակեցնելու հնարավորություն էին տալիս: Կանանց շարժման և մի քանի կին քաղաքական գործիչների դրական օրինակների շնորհիվ էր նաև, որ հասարակությունը Արևմուտքում սկսեց ձերբազատվել «քաղաքականությունը կանանց գործ չէ» կարծրատիպից:

Այսպիսով, քաղաքականության գենդերային չափման տեսանկյունից կարևորվում է երկու հիմնահարց. պետության գենդերային քաղաքականության բնույթը և քաղաքական մասնակցության գենդերային հայեցակետերը:

4.3. Քաղաքականության գեներային հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներից հավասար հնարավորությունների անցման անհրաժեշտության հիմնավորումը:

ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածում նշված է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, և խտրականությունը՝ կախված սեռից, արգելվում է: Հայտնի է, որ կանանց և տղամարդկանց մեկնարկային հնարավորությունները տարբեր են, սակայն հավասար հնարավորությունների դրույթը ՀՀ Սահմանադրությունում չի ամրագրվել: Ճիշտ է, ինչպես վերը նշվեց, ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը», սակայն այն գեներային հավասարության հստակ մեխանիզմներ չի նախատեսում:

Ժամանակակից քաղաքական ինստիտուտները ձևավորվել են հայրիշխանության մշակույթի համակարգում, որն ունի իր լեզուն, ոճը, ավանդույթները: Կանայք կարող են փոփոխություն մտցնել այդ մշակույթում իշխանության մեջ որոշակի քանակ ապահովելուց հետո: Առայժմ նրանք պետք է հարմարվեն «տղամարդկային խաղի» կանոններին, իսկ դա քչերին է հաջողվում: Կանանց համար առավել մեծ նշանակություն ունի դեկավարման հմտությունը, քաղաքական գիտելիքների մակարդակը, մարդկանց հետ շփվելու կարողությունը, կազմակերպչական ջիղը, խոսքի մշակույթը, հագնվելու և նույնիսկ շպարվելու ճաշակը: Ընտրություններում մեծ դեր են խաղում ֆինանսական և կազմակերպչական ռեսուրսները, «ոչ ֆորմալ» մեթոդները, որոնցից օգտվելու հնարավորությունները կանանց համար խիստ սահմանափակ են: Դրան չի նպաստում նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը. կանայք չափազանց ծանրաբեռնված են կենցաղային հոգսերով:

Հայաստանում չկան ֆեմինիստական ավանդույթներ, կանանց շարժումը վերջնականապես ձևավորված չէ և դեռ չի վերածվել ճնշման հզոր միջոցի: Կանանց քաղաքական ակտիվության հարցում, ինչպես նշվեց վերը, չափազանց մեծ դեր ունեն կուսակցությունները: Այդ պարագայում էական նշանակություն ունի ներկուսակցական ժողովրդավարության և գեներային զգայունության առկայությունը:

Հայաստանում, չնայած կանայք կուսակցություններում ստվարաթիվ են, ղեկավար կազմում փոքր տոկոս են կազմում: Ի դեպ, նկատվում է մի ուշագրավ օրինակափոփոխություն. որքան կուսակցությունը մոտ է իշխանությանը, այնքան կանանց տոկոսը ղեկավարման օղակում փոքր է, և հակառակը: Կուսակցական ծրագրերում, որպես կանոն, չկան կանանց քաղաքական մասնակցության բարձրացմանը նպաստող դրույթներ, ընդհակառակը, ծրագրերի մեծ մասում կնոջ տեղը սահմանափակվում է ընտանիքով (մոր և դաստիարակի գործառույթով), ընդգծվում է կնոջ և տղամարդու ֆիզիոլոգիական տարբերությունը (մասնավորապես վերարտադրողական գործառույթը) և նշվում, որ սոցիալական քաղաքականությունը պետք է համապատասխանի այդ տարբերությանը: Կնոջ և տղամարդու փաստացի հավասարության հարցադրումը վերաբերում է միայն տնտեսական և սոցիալական կյանքին:

Անկախացումից հետո ՀՀ-ում ազատական առաջին ալիքի ազդեցությամբ վերացվեցին խորհրդային քվտաները: Այն նվազագույն 5%-ի քվտան, որը հաստատվեց համամասնական ցուցակներում, կանանց համար պարզապես նվաստացուցիչ էր: Փաստորեն տեղի ունեցավ իշխանության ապաֆեմինացում թե՛ ընտրովի, թե՛ գործադիր պաշտոններում:

Հայաստանում կանայք բնակչության կեսից ավելին են, միջին մասնագիտական կրթություն ունեցողների՝ 58,6%-ը, բարձրագույն կրթություն ունեցողների՝ 52,1%-ը¹⁰¹: Եվ չնայած սեռերի իրավաբանորեն ամրագրված հավասարությանը, կանայք և տղամարդիկ հավասար պայմաններում չեն: Տղամարդկանց հնարավորություններն անհամեմատ ավելի մեծ են հատկապես քաղաքականության և ձեռնարկատիրության ոլորտներում: ՀՀ ԱԺ 2007 թ. ընտրություններից հետո կանայք կազմեցին պատգամավորների ընդամենը 9,2%-ը (131-ից ընդամենը 12 պատգամավոր), 2009 թ. տվյալներով կար ընդամենը երկու կին նախարար, մեկ կին մարզպետ (11-ից), տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների թվում կանայք կազմում են ընդամենը 2,1%, ընդ որում բացառապես գյուղական համայնքներում, չկա ոչ մի կին քաղաքապետ¹⁰²: 65 փոխնախա-

101 Ըստ «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկի (Եր., 2006):

102 Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2002-2007 թթ., Այլընտրանքային զեկույց / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա.- Եր., 2007, էջ 44-45:

րարներից ընդամենը երկուսն են կին, 21 փոխմարզպետներից՝ մեկը, 10 մարզպետարանների աշխատակազմերի ղեկավարներից՝ երկուսը¹⁰³: Համեմատությունների այս շարքը կարելի է անվերջ շարունակել, բայց բերված օրինակներն էլ բավական են հասկանալու համար, որ հայ հասարակությունում լուրջ գեներային հիմնախնդիրներ կան: Ստեղծված իրավիճակը նույնիսկ կարելի է գնահատել որպես ժողովրդավարության ճեղքվածք և հանրապետության կառավարման համակարգում մարդկային ռեսուրսների չափազանց անարդյունավետ օգտագործման վկայություն: Կանանց ունակությունների, ստեղծագործական եռանդի ու գիտելիքների ոչ լիարժեք օգտագործումը աններելի շռայլություն է հայ հասարակության համար:

Այս հիմնախնդիրների լուծումը նախատեսում է ժողովրդավարության զարգացում, գեներային կարծրատիպերի հաղթահարում: Դա բավական բարդ հիմնախնդիր է, որի լուծումը տևական գործընթաց է ենթադրում, քանի որ կապված է մշակութային վերափոխումների հետ: Եվ այդ գործընթացում չափազանց մեծ է ՁԼՄ-ների դերը:

1995, 1999, 2003 թթ. համամասնական ընտրությունների ցուցակների գեներային վերլուծությունը ցույց է տալիս, որ կանայք, որպես կանոն, ներկայացվում են ոչ անցողիկ տեղերում և կազմել են միջին հաշվով մոտ 14%, իսկ մեծամասնական կարգով ընտրություններում կանանց թիվը նվազելով հասել է 4%-ի¹⁰⁴: 2007 թ. ՀՀ ԱԺ ընտրություններում կուսակցությունների համամասնական ցուցակներում կանանց նվազագույն քվոտան բարձրացվեց 15%-ի, ինչի շնորհիվ մի փոքր դրական տեղաշարժ նկատվեց: Համամասնական ցուցակներում կանանց միջին ներկայացվածությունը հասավ 22,6%-ի: Դրա հետ մեկտեղ ՀՀ ԱԺ-ի կազմում դեռևս հստակ երևում է գեներային անհավասարակշռությունը, որը խախտում է ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքները (տե՛ս աղյուսակ 1):

103 Տե՛ս «ՀՀ գեներային քաղաքականության հայեցակարգը և իրականացման ռազմավարությունը», նախագիծ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ», Երևան, 2009, հոկտեմբեր, էջ 6:

104 Տե՛ս Չաքարյան Լ., Գեներային գիտելիքների հիմունքներ: Միջառարկայական դասընթաց.- եր., 2003, էջ 103-110:

Աղյուսակ 1. ՀՀ Ազգային ժողովում կանանց և տղամարդկանց ներկայացուցչության շարժընթացը

Տարի	Տոկոսներով	
	Կանայք	Տղամարդիկ
1995	6,3 %	93,7 %
1999	3,1 %	96,9 %
2003	5,3 %	94,7 %
2007	9,2 %	90,8 %

2007թ. նախընտրական կուսակցական ցուցակները, ըստ գենդերային կազմի, կարելի էր բաժանել 3 խմբի¹⁰⁵.

1. կուսակցական ցուցակներ, որտեղ կանայք կազմում են 27-43,4%,
2. կուսակցական ցուցակներ, որտեղ կանայք կազմում են 20-25%,
3. կուսակցական ցուցակներ, որտեղ կանայք կազմում են 15-18%:

Կանանց առավել քիչ տեղ էին հատկացրել հենց այն կուսակցությունները, որոնք ԱԺ մտնելու ավելի մեծ հավանականություն ունեին: Որքան այդ հավանականությունը փոքր էր, այնքան կուսակցությունն ավելի շուրջ էր կանանց նկատմամբ:

2007 թ. կանանց բացարձակ թվաքանակը համամասնական ցուցակներում 2003 թ. համեմատությամբ աճեց 1,9 անգամ: Սա ի դերն հանեց այն քաղաքական առասպելներից մեկը, թե հայ կանայք չեն ուզում զբաղվել քաղաքականությամբ: Քանի որ այդ առասպելը տարեցտարի մերժվում է, առաջ է քաշվում մեկ այլ առասպել, թե հայ հասարակությունը և առաջին հերթին հենց իրենք՝ կանայք, չեն ցանկանում ընտրել կանանց: Պատճառները հստակեցվում են՝ կապվելով ավանդույթի և քաղաքական գործելաոճերի հետ: Սակայն հարկ է հիշել, որ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի (a) կետում նշվում է, որ մասնակից պետությունները պարտավորվում են «օրենսդրության ու այլ համապատասխան միջոցների օգնությամբ ապահովել» տղամարդկանց ու կանանց իրավահավասարության սկզբունքի «գործնական իրականացումը»: Իսկ ըստ 4-րդ հոդվածի 1-ին մասի՝ առաջին անգամ օրինական համարվեցին ոչ միայն

105 Овнатанян Т., По Конституции РА мужчины и женщины равны. Но мужчины все-таки “равнее // Новое время, 2007, 8 марта.

քվոտաները, այլև «աջակցության գործողությունները»: Մասնակից պետությունները, այդ թվում կոնվենցիան վավերացրած Հայաստանը, պարտավորվել են ձեռնարկել բոլոր միջոցները՝ «փոխելու կամ վերացնելու համար այն գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, **սովորույթներն ու գործելաոճը**, որոնք բովանդակում են խտրականություն կանանց նկատմամբ»: Այսինքն, եթե կանայք Հայաստանում «պասիվ են և չեն ուզում» քաղաքական ակտիվություն դրսևորել, կամ ընտրողները նրանց չեն ընտրում, նշանակում է իշխանությունները բավականաչափ ջանք չեն գործադրում սովորույթներն ու գործելաոճը փոխելու համար:

Վերջին շրջանում որոշ դրական տեղաշարժեր են նկատվում ՀՀ իշխանությունների աշխատանքում: Այսպես, Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի Կամընտիր արձանագրությունը: 2007 թ. ՀՀ Ազգային ժողովի պատմության մեջ առաջին անգամ փոխնախագահի պաշտոնում ընտրվեց կին, իսկ 2008 թվականին՝ խմբակցություններից մեկի ղեկավարը դարձավ կին: ՀՀ կառավարության գործունեության 2008-2012 թթ. միջոցառումների ծրագրում գենդերային հավասարության ապահովումը ճանաչվել է քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ «Գենդերային հիմնահարցեր» բաղադրիչը ներառել են քաղաքացիական ծառայողների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների ծրագրում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի պատվերով նախապատրաստվել են «ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգի և իրականացման ռազմավարության» և «Կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծերը, որոնք ուժի մեջ կարող են մտնել ՀՀ ԱԺ վավերացումից հետո:

4.4. Գենդերային հիմնախնդիրների լուսաբանումը կանանց և տղամարդկանց պարբերականներում

Կանանց պարբերականներ: Թվում է, թե կանանց հասցեագրված մամուլը պետք է գենդերայնորեն խիստ զգայուն լինի: Սակայն իրականությունը հերքում է այդ ենթադրությունը:

Խորհրդային Միության փլուզումից հետո թե՛ Ռուսաստանում, թե՛ անկախացած նախկին հանրապետություններում կանանց և տղամարդկանց հանդեսների ալիք բարձրացավ: Դրանց մի մասը արևմուտքում վաղուց ի վեր տարածում գտած հանդեսների կրկնօրինակումներ էին: Ռուսաստանում խորհրդային ժամանակների կանանց հանդեսները՝ «Ռաբոտնիցան» և «Կրեստյանկան», փոխեցին իրենց դիմագիծը՝ դառնալով տնային տնտեսուհիների համար նախատեսված ժամանցային հանդեսներ: Դրանք աշխատավոր կանանց դիմանկարներ տալու փոխարեն սկսեցին մատուցել սեքսի, դիմահարդարման, խոհանոցի, ժողովրդական բժշկության խորհուրդներ: Այդ հանդեսների էջերում հարվածային աշխատանքով աչքի ընկած կթվորուհիների փոխարեն հայտնվեցին գեղեցկության մրցույթների մասնակից կանանց ու աղջիկների բարեմասնությունները ցուցադրող լուսանկարներ: Ասպարեզ իջան «Домашний очаг», «Харперс базар», «Эль», «Лиза» և այլ հրատարակություններ, որոնք ճիշտ և ճիշտ իրենց արևմտյան երկվորյակների ռուսալեզու պատճեններն են և ջանասիրաբար վերակենդանացնում են տասնամյակներ ի վեր մոռացված «կնոջ բնական կոչվածության» գաղափարը: Հետագայում ի հայտ եկավ նաև կանանց անկախ մամուլի այն տեսակը, որը հաջողությամբ է իրականացնում գենդերային լուսավորության, գենդերային գիտելիքների տարածման նպատակը (WE/МЫ, «Посиделки», «Права женщин в России», «Женщина+» և այլն): Ավելի ուշ մասնագետներն արձանագրեցին դրական փոփոխություններ. **«Ամենուրեք հրապարակվում են կանանց հանդեսներ, սրեղծվում են ռադիո- և նույնիսկ հեռուստաժրագրեր (օրինակ՝ Բորու Բասերեն Լիպվայում), ամենուրեք իրապեսական և էգալիտար հայացքը ճամփա է բացում կարծրապիպերի և գաղափարախոսության բեկորնի միջով, ինչպես խոսքը՝ ասֆալտի»**¹⁰⁶:

106 Աժգիխինա Ն., Գենդերային կարծրատիպերը ժամանակակից լրատվամիջոցներում // Գենդերային հետազոտություններ, սյր. 6:- Եր., 2001, էջ 128:

Հայաստանի անկախացումից հետո մի քանի տարի իր գոյությունը շարունակեց «Հայաստանի աշխատավորուհի» ամսագիրը, որը, ի վերջո, չդիմացավ շուկան հեղեղած ռուսալեզու այլազան պարբերականների մրցակցությանը: Նոր ժամանակները նոր պահանջներ էին թելադրում, որոնց հանդեսը պատրաստ չէր: Նախկին ՀԽՍՀ կոմկուսի Կենտրոնական կոմիտեի ամսագիրը, զրկվելով պետական ֆինանսավորումից, գոյատևում էր հովանավորների տրամադրած սուղ միջոցներով: Նվազել էին համապատասխան աշխատուժ ունենալու, հեղինակներին վարձատրելու և տպագրական ծախսերը հոգալու միջոցները: Բացի այն, որ ամսագրի բովանդակությունն այլևս համահունչ չէր նոր ժամանակներին, տպագրվում էր ցածր որակով, անշուք ու անհրապույր տեսքով:

Լուրջ հայտ էր «Առագաստ» կանանց շաբաթաթերթի հիմնադրումը (հիմնադիր՝ Կանանց հանրապետական խորհուրդ, հովանավոր՝ Հայ օգնության միություն. սկսեց լույս տեսնել 1991 թ. հունվարից հայերեն և ռուսերեն, 3-5 հազար տպաքանակով), որը, կարելի է ասել, լինելության փուլ չունեցավ: Հրատարակ իջավ վստահ քայլերով, միանգամից ճանաչում գտավ և տեղ գրավեց ժամանակի պարբերականների խճանկարում: Մա վկայում է, որ շաբաթաթերթը հիմնադրվեց ի պատասխան հասարակական պահանջմունքի, կանանց հիմնահարցերը արծարծելու, այդ ասպարեզում հասարակական կարծիք ձևավորելու, կնոջ դիրքը բարձրացնելու, նրա հոգսերին արձագանքելու, ձգտումներին աջակցելու, առհասարակ նրա հետ և նրա մասին անկեղծ զրույց վարելու նպատակով: Թերթն իր առաքելությունն էր համարում *«միշտ լինել զրկանքի ու փորձության մեջ գտնվողի կողքին, սպեղանի դառնալ վիրավորի վերքերին, գեթ մեկ վայրկյանով թեկուզ պոկել նրան մռայլ իրականությունից, համոզել ու հույս ներշնչել»*: Կարելի է ասել, որ այս խնդիրները հիմնականում հաջողությամբ էին լուծվում: Եթե փորձենք գաղափար կազմել, թե ինչ իրավիճակում էր հայ կինը 1991-1994 թթ., ինչ դժվարությունների ու ոգորումների մեջ էր, սպա քավական է թերթել «Առագաստը»:

Հատկանշական է, որ չընկրկելով ժամանակի պարտադրած դրամական դժվարությունների առջև՝ այս զանգվածային սպառում ունեցող թերթը միակն էր, որ շարունակում էր տարածվել ցածր գնով, որպեսզի, հրատարակիչների հավաստմամբ, «այդ անկարելի պայմաններում չզկեինք թերթում գոնե մեկ հատիկ հանգստացնող միտք որոնող ընթերցողին»:

Այսուհանդերձ, խմբագրակազմից միանգամայն անկախ պատճառներով ընթերցողը գրկվեց «Առագաստից»: Շաբաթաթերթը փակվեց 1994 թ. դեկտեմբերի 29-ին ՀՀ նախագահի հրամանագրով, որով փակվեցին նաև Հայ հեղափոխական դաշնակցության բոլոր հրատարակությունները: Վերջիններիս շարքում «Առագաստի» հայտնվելու պատճառը սուկայն էր, որ խմբագիրը՝ գրող, հրապարակախոս Ալվարդ Պետրոսյանը, նույն այդ կուսակցության անդամ էր, թեպետ պարբերականը հասարակական կազմակերպության՝ Կանանց հանրապետական խորհրդի նախագիծն էր և երբևէ կուսակցական թեքում չէր ունեցել:

Այս կամայականությունը, սակայն, կանանց շահերը ներկայացնող հասարակայնության դիմադրությանը չհանդիպեց, իսկ իշխանափոխությունից և ՀՅԴ-ի վերականգնվելուց հետո օրինականությունը հաստատելու փորձեր չեղան: «Առագաստը»՝ նոր ժամանակների կանանց մամուլի այդ հաջողված օրինակը, այլևս պատմության սեփականությունն էր:

«Առագաստի» տարածքը լրացնելու փորձ արվեց 1997 թ. և դարձյալ Կանանց հանրապետական խորհրդի նախաձեռնությամբ: Խոսքը «Նովյե վրեմյա» թերթի «Դամի ի գոսպոդա» ներդիրի մասին է, որի էջերում լուրջ խոսակցություն էր ծավալվում կնոջ կարգավիճակի, նրա կերպարի ու հոգսերի, կանանց կազմակերպությունների գործունեության, միջազգային համաժողովների ու իրավական փաստաթղթերի, կառավարության պարտավորությունների ու այլ հարցերի մասին: Բայց սա էլ երկու տարվա կյանք ունեցավ: «Դամի ի գոսպոդան» լույս էր տեսնում «Եվրագիա» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ և դադարեց լույս տեսնելուց, երբ տվյալ դրամաշնորհային ծրագիրն ավարտվեց:

Կանանց լսարանին հասցեագրված մյուս պարբերականը 2001 թվականից ասպարեզ իջած «Ջարուհի» շաբաթաթերթն է, որ լույս է տեսնում իբրև «Իրավունք» թերթի հատուկ թողարկում: Այս պարբերականը զարգացման հետաքրքիր ճանապարհ անցավ: Նրա առաջին համարները լուրջ մտահոգություն առաջացրին, քանի որ ակնհայտ էր, որ հրատարակիչները այդ թերթով կանանց դերի ու կերպարի, կանանց հասարակական-քաղաքական գործունեության, կանանց շարժումների մասին բավական թերի ու հակասական գիտելիքների ու պատկերացումների պատճառով հրապարակ են բերում հին ու նոր կարծրատիպեր. ***Ֆեմինիզմը չարիք է, հայ կինը կորցրել է իր հմայքն ու նազանքը, հայ կնոջ ողբերգությունը սուկ այն է, որ նրան արդեն չի շփացնում ասպե-***

դասկան սերը և այլն¹⁰⁷: Հետագայում համարից համար հրատարակիչներն սկսեցին սրբագրել իրենց մոտեցումները և գրույցի հրավիրելով տարբեր ոլորտների մասնագետների, կանանց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների՝ քննարկման առարկա դարձրին իրոք հրատապ հիմնախնդիրներ: Այսուհանդերձ, «Ջարուհին» չհաղթահարեց ընթերցողական լայն լսարան շահելու գայթակղությունը: Ելնելով պարբերականի նյութերի մեծ մասը կազմող ժամանցային նյութերից (պատմություններ աստղերի կյանքից, ուտեստների բաղադրատոմսեր, դիմահարդարման խորհուրդներ և այլն)՝ կարելի է ասել, որ այն ավելի շատ հակված էր լրացնելու արտասահմանյան տիպի կանանց մամուլի շարքը, որն արդեն իսկ առկա էր հանրապետությունում «Նե» ամսագրի գոյությամբ:

Թե՛ «Ջարուհին», թե՛ «Նե» ամսագիրը, որոնք ակնհայտորեն փորձում էին մրցակցել շուկան ողողած «Լիզա», «Օնա», «Էլ» և այլ հանդեսների հետ, ինչպես նաև տարբեր հեռուստաալիքներով հեռարձակվող մի շարք հաղորդումներ («Հայուհի», «Կնոջ օրը», «Կինը և բիզնեսը», «Միայն կանանց համար» և այլն), ավելի շատ տուրք էին ժամանակի մոդային: Սրանք երևան հանեցին մի կարծրատիպ, ըստ որի, եթե կանանց համար հանդես է տպագրվում կամ հաղորդում հեռարձակվում, ապա անհրաժեշտ է մատուցել թարգմանված նյութեր «աստղերի» անձնական կյանքի գաղտնիքների մասին, նորաձևություն, բախտացույց, խոհանոցային բաղադրատոմսեր և դիմահարդարման խորհուրդներ, զանազան թեստեր և այլն: Իսկ առաջին էջերն անպայման զարդարում էին «միսս Հայաստանի» մեծադիր լուսանկարները՝ ավետելով նոր ժամանակների կնոջ իդեալի գալուստը¹⁰⁸:

Այս ուղղությամբ որոնումները դեռ շարունակվում են, երևան են գալիս նոր հրատարակություններ, ինչպես օրինակ՝ «Եվա» (2005), «Արմյան-

107 Մանրամասն տե՛ս Հարությունյան Ա., Հոնքը սարքելու տեղը // Գեներային հետազոտություններ, պր. 6.- Եր., 2001, էջ 102-107:

108 Ի դեպ, «Իրավունք» թերթի հիմնադրի՝ Մահմանադրական իրավունք միության պառակտման պատճառով «Ջարուհու» հրատարակումն ընդհատվել է: Նրա խմբագիրը՝ Փիրուզա Մելիքսեթյանը, ստանձնել է «Իրավունքի» խմբագրի պարտականությունները, իսկ «Ջարուհու» հրատարակման իրավունքն անցել է խմբագրությունից անջատված մասի և նոր՝ «Իսկական իրավունքի» ձեռքը: Ամենայն հավանականությամբ, նոր ժամանակների այս ամենաերկարակյաց կանանց պարբերականն էլ հետագա կյանք չի ունենա և կդառնա պատմության սեփականությունը:

կա» (2006), «Քո Մարի», «Լինա», «Նանե» (2007), որոնք որևէ նորություն չեն բերում: Դատելով մեծ մասի առաջին համարներում գետեղված խմբագրականներից, հայ կնոջ միակ առաքելությունը գեղեցիկ և սիրված լինելն է: Դա հրատարակիչների կարծիքով դժվարին «աշխատանք» է, և ահա իրենք գալիս են սովորեցնելու կանանց՝ ինչպես հմայիչ լինել, հագնվել, նիհարել, օժանելիք օգտագործել, եվրոպական որ երկրներում շրջագայել, ինչպես պահպանել մաշկի թարմությունն ու մարմնի սլացիկությունը, տարբերակել տղամարդկանց բնավորությունները և այլն: Որ արտասահմանյան կանանց ամսագրերին հետևելը բնավ նպատակահարմար ճանապարհ չէ և կարող է հասցնել փակուղու, ներկայացնել մի իրականություն, որը հեռու է իրական կյանքից այնքան, որքան ավոկադոն հայկական հողի պարզևած պտուղներից, բավական պատկերավոր է ցույց տալիս այդ ամսագրերի քննադատը: Եվ որքան էլ խտացված լինեն գույները, հնարավոր չէ չհամաձայնել, որ դրանք կարող են «պարապ վախտի խաղալիք» դառնալ միայն հասարակության մի չնչին հատվածի՝ նորահարուստների կանանց կամ այդպիսին դառնալ երագող դեռատի աղջիկների համար (ընդ որում, այս ենթադրությունն էլ բավական տարակուսելի է), բայց կանանց ավելի քան 90 տոկոսի ամենօրյա կյանքի ու ոգորումների հետ դրանք որևէ առնչություն չունեն¹⁰⁹: Այդ օտարալեզու ամսագրերին նմանակող հայկական ամսագրերը («Նե», «Ճիչ», «Երկուսով», «Բարեկամ» և այլն), սակայն, ըստ մի այլ դիտարկողի, որոշակի ճանաչողական արժեք ունեն և հասարակության մի հատվածի պահանջարկի արդյունք են¹¹⁰:

Այսպես թե այնպես, կանանց համար շքեղ ու փայլուն կամ, այսպես կոչված, «գլամուրային» հայկական ամսագրերի մի մասը թիթեռի կյանք է ունենում, և անհետացած անունների փոխարեն շուկա են մտնում նորերը: ՌԻստի կարելի է ասել, որ կանանց հասցեագրված արտասահմանյան տիպի ժամանցային շքեղ պարբերականներն այլևս հայ մշակույթի անքակտելի բաղկացուցիչն են:

Այսպիսով, ներկայումս բացակայում է այն դաշտը, որը պիտի լրացնեին, ասենք, երբեմնի «Ծաղիկի», «Հայ կինի» կամ ժամանակակից ռուսաստանյան «Վի ի միի», «Ժենձինա պլյուսի» բնույթի պարբերականներ:

109 Բարսեղյան Վ., Մեքսի, ճոխության, ավոկադոյով սալաթի և այլ կարևորագույն բաների մասին // Հայոց աշխարհ, 2002:

110 Բարսեղյան Մ., Ծչա, բայց կամաց // Առավոտ, 2003, 23 հուլիսի:

րը: Անմշակ է կանանց դիրքը բարձրացնելուն ուղղված, կանանց քաղաքական ու սոցիալական ակտիվությունը խթանող, կանանց հիմնախնդիրների ուսումնասիրություններին վերաբերող տեղեկատվությունը խորությամբ արծարծող մամուլի անդաստանը:

Այդ բացը մասամբ լրացնում են «Կինը և քաղաքականությունը» ամսաթերթը¹¹¹, «Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուն¹¹² և «Խաղաղություն ամենեցուն» հանդեսը¹¹³: Մասամբը վերաբերում է այս պարբերականների տարածման շառավղին, որ բավական սահմանափակ է մակերեսի ու պարբերականության առումով, եթե խոսքը վերաբերում է «Կինը և քաղաքականությունը» թերթին (հասկանալի է, որ 4-էջանոց և ամիսը մեկ անգամ լույս տեսնող թերթը հնարավորություն չունի արագորեն արձագանքելու ընթացիկ իրադարձություններին ու հիմնախնդիրներին), կամ ընթերցողների շրջանակների առումով, եթե խոսքը վերաբերում է նշված հանդեսներին, քանի որ դրանք հիմնականում տարածվում են մի քանի հասարակական կազմակերպությունների անդամների շրջանում: Ինչ վերաբերում է բովանդակությանը, ապա սրանք հենց այն պարբերականներն են, որոնք փորձում են վեր հանել հանրապետության կյանքի գեներային պատկերը, այն հիմնախնդիրները, որոնք դուրս են մնում այլ պարբերականների տեսադաշտից:

Տղամարդկանց պարբերականներ: Կարևոր է ուշադրություն դարձնել մի հանգամանքի վրա. հայ մամուլի պատմության մեջ տղամարդկանց պարբերականի ստեղծման ընդամենը մեկ փորձ է եղել, որն ավարտվել է մեկ համարի լույսընծայմամբ¹¹⁴: Խոսքը «Մոսի» թերթի մասին է, որը նախատեսված էր իբրև տարբեր պարբերականների նյութերի վերատպություններ ամփոփող շաբաթաթերթ: Դատելով խմբագրի մտադրություններից (Համլետ Մոսինյան)՝ խմբագրությունը նպատակ չի ունեցել ստեղծելու «Փլեյբոյի» հայկական տարբերակը, այլ մեկտեղե-

111 Լույս է տեսնում 2007 թվականից «Պրոմեդիա-գեներ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ և միջազգային կառույցների ֆինանսական աջակցությամբ որպես հայերեն և ռուսերեն հասարակական-քաղաքական թերթերի անվճար հավելված:

112 Լույս է ընծայում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան 1997 թվականից ի վեր:

113 Լույս է ընծայել ՀԿ-ների «Խաղաղության կոալիցիան» (2003 թ.):

114 Հնարավոր է, որ այն լույս տեսած լինի մի քանի համար, համենայն դեպս, Հայաստանի ազգային գրադարանում առկա է միայն այդ եզակի համարը:

լու օտարերկրյա հրատարակությունների այն հրապարակումները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում հատկապես տղամարդկանց լսարանի համար: Այսուհանդերձ, թե՛ թերթի առաջին և վերջին էջերի լուսանկարները (գեղեցիկ, երիտասարդ կիսամերկ կին), թե՛ սեքսի գաղտնիքների ու վարպետության վերաբերյալ նյութերին տրված նախապատվությունը ցույց են տալիս, որ թերթը հավակնել է դառնալու հենց հայկական «Փլեյբոյ»: Ամենայն հավանականությամբ, նյութական դժվարությունների պատճառով այս փորձը ձախողվել է: Եվ փաստը մնում է փաստ, որ հայ իրականությունում թե՛ դրանից առաջ, թե՛ դրանից հետո տղամարդկանց հետ առանձին զրույց վարելու անհրաժեշտություն չի առաջացել:

4.5. Գեներային հիմնախնդիրների լուսաբանումը արդի հասարակական-քաղաքական ՁԼՄ-ներում

Գեներային քաղաքականության երեք տեսակն էլ՝ խտրական, չեզոք և զգայուն, բնորոշ են ժամանակակից հայ լրատվամիջոցներին: Եվ եթե ընդհանուր գնահատական տալու լինենք վերջին տասնհինգ տարվա ճանապարհին, ապա պիտի ասենք, որ զարգացման ընթացքը վերընթաց է՝ որոշակի դրական միտումներով: Հայ մամուլը 1990-ականների սկզբներին ավելի շատ խտրական էր, քան չեզոք, և գրեթե զգայուն չէր, այժմ ավելի շատ չեզոք է, քան խտրական և նախկինի համեմատությամբ շատ ավելի զգայուն է:

Հարցն այն է, սակայն, որ հնարավոր չէ ասել, թե մամուլի շնորհիվ տեղի են ունեցել հասարակական գիտակցության էական փոփոխություններ: Դրական առաջընթաց կա, սակայն չափազանց դանդաղ և ոչ այնքան համաքայլ հասարակության մեջ առկա տեղաշարժերին ու գիտության ձեռքբերումներին:

Ինչի՞ շնորհիվ է ուրեմն այդ դանդաղ առաջընթացը: Այն մասնագետները, որոնք արդի հայ մամուլի մոնիտորինգ են իրականացնում, վեր հանում գեներային մոտեցումների զարգացման միտումները և դրական առաջընթաց արձանագրում, մատնանշում են առանձին լրագրողների, ոչ թե այս կամ այն պարբերականը: «Մեր դիտարկման ժամանակաշրջանում՝ 1999-2000 թթ. մամուլը կտրուկ փոխել է վերաբերմունքը՝ չափազանց բարեհաճ գզմվելով կանանց նկատմամբ: ... Կարող ենք ասել, որ լրագրողների մի խումբ բավականաչափ մեծ հեղափոխություն է ցուցաբերում այս վերլուծության մեջ փեղ գրած թեմաների նկատմամբ»: Կամ. «2001 թվականի հունվար-հունիս ամիսներին մամուլն անդրադարձել է գրեթե այն բոլոր խնդիրներին, որոնք այսօր հուզում են մեր հասարակությանը: Լրագրողների սրվար մի խումբ իր մշտական ուշադրության կենտրոնում է պահում կանանց հիմնախնդիրները, ուղիներ է որոնում դրանց լուծման ճանապարհին, վեր է հանում օրախնդիր երևույթները»¹¹⁵: Իրոք, ասպարեզ են եկել լրագրողներ, որոնք բավականին խորացել են գեներային հիմնախնդիրների

115 Կանայք և մամուլը; 1998-2007 թթ. Հայաստանում հրատարակված հոդվածների հավաքածու: Եր., ա.թ., էջ 11, 17, 25:

ուսումնասիրության գործում և հետևողականորեն առաջ են տանում դրանց վրա հանրության ուշադրությունը հրավիրելու գիծը: Օրինակ՝ վերջին տարիներին «Ազգ» թերթում այդ խնդիրը հաջողությամբ էր լուծում Սառա Պետրոսյանը, «Իրավունքում»՝ Լիլիթ Գրիգորյանը, «Հայաստանի Հանրապետությունում»՝ Անահիտ Հայթայանը, «Հայոց աշխարհում»՝ Անահիտ Եսայանը, «Նովոյե վրեմյա»-ում՝ Թամարա Հովնաթանյանը և այլն: Բայց հաճախ «զգայուն» լրագրողի հեռանալու հետ կտրուկ նվազում է նաև տվյալ լրատվամիջոցի գեներալային «զգայունությունը»:

Այսպիսով, արդի հայ մամուլի առանձնահատկություններից մեկն այն է, որ հնարավոր չէ հրատարակությունները բաղդատել ըստ գեներալային քաղաքականության: Դրանցից **յուրաքանչյուրի մեջ հավասարապես կարելի է հայտնաբերել թե՛ խորական, թե՛ չեզոք, թե՛ զգայուն նյութեր**: Այս իրողությունը խոսում է այն մասին, որ արդի ՉԼՄ-ներից ոչ մեկն առայժմ գեներալային որոշակի հայեցակարգ չունի:

Խոսքն, անշուշտ, տարբեր մոտեցում ունեցող անհատների կամ հասարակության խմբերի կարծիքները ներկայացնելու մասին չէ: Իհարկե, մամուլը պետք է կարծիք արտահայտելու հնարավորություն ընձեռի հարցի և՛ թեր, և՛ դեմ կողմերին ու վեր հանի հասարակության տրամադրությունների ողջ ներկայակնը: Խոսքն այս կամ այն պարբերականի սեփական կարծիքի և նպատակադրման մասին է, ասենք՝ հրապարակախոսական հոդվածների, խմբագրականների կամ լրագրողական հետաքննությունների, որոնք բացահայտում են տվյալ պարբերականի մոտեցումը:

Մամուլում քաղաքական մասնակցության գեներալային հայեցակետի արժարժումը հիմնականում սահմանափակվում է այս կամ այն քննարկման, ասուլիսի, գիտաժողովի վերաբերյալ ռեպորտաժներով և տվյալ հարցերով զբաղվող գործիչների (հիմնականում նույն դեմքերի) հետ հարցազրույցներով: Լրագրողական հետաքննություններ գրեթե չեն հանդիպում, իսկ հրապարակախոսական սակավաթիվ նյութերը հիմնականում հրապարակվում են ամեն տարի կանանց հայտնի տոների՝ մարտի 8-ի և ապրիլի 7-ի օրերին կամ էլ գեներալային հիմնախնդիրներին նվիրված լավագույն հրապարակման մրցույթների կապակցությամբ, որոնք կազմակերպում են միջազգային ու տեղական հասարակական կազմակերպությունները: Այդ նյութերը, որոնց շարքում նաև հաջողված օրինակներ կարելի է գտնել (տե՛ս Ներդիր 1), ըստ էության, ի վիճակի չեն ազդելու հա-

սարակության գիտակցության վրա, քանի որ ի հայտ են գալիս չափազանց մեծ դադարներով, դեպքից դեպք և արագ մոռացվում են՝ նստվածք չթողնելով:

Երբեմն միևնույն թերթում կարելի է տեսնել միանգամայն իրարամերժ կարծիքներ: Այդ երևույթը ցայտուն է հատկապես «Հայոց աշխարհ» թերթում: Այստեղ տպագրված **«Ֆեմինիզացման հայկական մոդելը»** (28.03.2003, հեղ.՝ Կիմա Եղիազարյան) հոդվածում անողորք քննադատության են ենթարկվում քաղաքական ակտիվ դիրքորոշում դրսևորող կանայք. **«Իրավահավասարության այն բոցը, որ ճառագել է հայոց ուիհիներին հոգում, միտքինգային այն հզոր քափը, որ մեր արմատական ուիհիներն են առաջադրել, իսկական գենդերային փոն է, որը չգվում է ահա արդեն մեկ ամիս: Եվ դեռ հարց է, ընդհանրապես հայ կինն այլևս կկամենա՞ փողոցից վերադառնալ փոն, վերստին փարվել օջախի գաղափարին: Ոչ մի դեպքում, մերոնց համար Մարենադարանի հարթակը, նախագահական նստավայրը, դատախազությունը, դեսպանատների բակերն ու ԿԸՀ-ի շենքն է արդեն այն հիմնական օջախը, ուր փորձում են առօրյան հեղափոխություն, կյանքը իմաստալից դարձնել: Թքած փանը թողած մեծ լվացքի, կեղտոտ ամանեղենի և չփաթաթած փոլմայի վրա, այսուհետ արմատական հայուիները, բացի քաղաքականից, այլ կյանքով չեն ապրելու»:** Բանը հասնում է այնտեղ, որ հայտարարվում է, թե **«Ֆեմինիզմն արդեն սպառնում է ազգային անվտանգությանը»:** Մի քանի ամիս անց նույն թերթում հրատարակվում է **«Բարի գալուստ, ֆեմինիզմ»** ծավալուն հոդվածը (19.09.2003), որում հեղինակը (Ե. Առաքելյան) բավականաչափ հանգամանորեն և խորությամբ ներկայացնում է թե՛ համաշխարհային ֆեմինիստական շարժումներին հուզող, թե՛ Հայաստանում առկա գենդերային և մասնավորապես կանանց քաղաքական մասնակցության խնդիրները. **«Ինչպես կարևոր է մեներիկյան ֆեմինիստուիները. «Փոքր ժամանակ փոլային ասում են, որ երբ հասակ առնի, օրերից մի օր կարող է դառնալ նախագահ, իսկ աղջկան, որ երբ մեծանա, մի օր կարող է դառնալ նախագահի կին»:** Մանուկ հասակում աղջկան կողմնորոշում են, որ նա «երկրորդ սեռի» ներկայացուցիչ է: Դա ամբաստան է նաև սովորույթների համակարգում: Օրինակ, մեզանում շատ դեպքերում ծննդաբանը բուժաշխարհից էր ինքն փոլայի համար ավելի մեծ «մադարիչ» են փալիս, քան աղջկա: Ավանդապահ չինացին ի պատասխան այն հարցին, թե քանի զավակ ունի, նշում է միայն որդիների թիվը: Ուսումնասիրությունները հաս-

դատում են. դպրոցում, անկախ աշխարհագրական դիրքից ու երկրի արևմտական վիճակից, ուսուցիչներն ավելի շատ ուշադրություն են հատկացնում Կրթությանը: Իսկ հաշվեք, թե քանի՞ կին կա սկսված քաղաքականության մեջ Հայաստանում: Ընդամենը մի քանի պատգամավոր և մեկ կիսանախարար. ահա և չեզ ողջ թվաքանակությունը: Ըստ որում հեղափոխություն է, որ հայրենի կին քաղաքական գործիչները գործնականում չեն հեղափոխվում կանանց խնդիրներով: Իրենց չզգալով կին ընտրողների ներկայացուցիչներ՝ նրանք պատրաստ չեն ներկայացնել ու պաշտպանել վերջիններին շահերը: Հենց դա էլ նրանց կոպիտ սխալն է. չէ՞ որ կանանց ընտրագանգվածը Հայաստանում նկատելիորեն ավելի մեծաթիվ է, քան Կրթությանը: Այս փոխադարձ անարդարությունը ցավալի է այն պատճառով, որ կին քաղաքական գործիչների շրջանում անցկացրած հարույն ուսումնասիրությունները հասարակում են. կանայք արամադրված են «մարտի» քաղաքականության իրականացման, նրանց համար գերակա է ոչ թե իշխանության նվաճումը, այլ քաղաքացիների կյանքի բարելավման համար դրա կիրառումը: Եվ բնավ պատահական չէ, որ սկանդինավյան երկրներում, ուր խորհրդարաններում 40 տոկոսը կանայք են, քաղաքականությունը նվազ ազդեցիկ է, փոխարենը՝ կառուցողական, նրանում գերակա են դարձել մարդու իրավունքների պաշտպանությունը, սոցիալական բարեկեցության և ռազմական բախումներից խուսափելու քաղաքականությունը»:

Այսպիսի հակասությունների ցայտուն օրինակ է տալիս նաև «Ազգ» թերթը, որ գենդերային քաղաքականության տեսանկյունից արդի առավել զգայուն պարբերականներից մեկն է (և միակը մասնավոր պարբերականների շարքում, որ աչալրջորեն հետևում է գենդերային քաղաքականության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների և ազգային ծրագրերի իրականացման ընթացքին), սակայն կարող է և այնպիսի նյութ տպագրել, որը արժանի է առաջնության դասին շահելու բոլոր ՁԼՄ-ներում հանդիպած խտրական հրապարակումների շարքում (տե՛ս Ներդիր 2):

Եվ խնդիրը սույն նյութերի սակավությունը և հակասականությունը չէ, այլև ոչ ճիշտ կամ ոչ նպատակահարմար շեշտադրումներն ու հարցադրումները: Կարելի է հարցի նկատմամբ շատ զգայուն լինել, այն հետևողականորեն առաջ տանելու նախանձախնդրություն ունենալ, սակայն արմատացած կարծրատիպերը կոտրելու փոխարեն ավելի ամրապնդել

դրանք և դեռ նույնիսկ նոր կարծրատիպեր մեջտեղ բերել: Օրինակ՝ նույն «Հայոց աշխարհ» թերթը շարունակ գրույցի է հրավիրում այն հարցի շուրջ, թե **«պե՞տք է արդյոք կինը գրադվի քաղաքականությամբ»**: Լրագրողի մտայնությունը կասկած չի հարուցում, նա իր գրուցակիցներից առավելապես դրական պատասխան է ակնկալում, և ստացած պատասխանները գալիս են արդարացնելու ակնկալիքները: Բայց հարցադրումն ինքնին ցույց է տալիս, որ լրագրողն ինքը ձեռքբազատված չէ կարծրատիպերից: Տվյալ հարցադրման հիմքում ընկած է այն թյուրըմբռնումը, թե հայկական մտածելակերպին բնորոշ չէ կնոջ քաղաքական և հասարակական գործունեությունը, թե հայ հասարակությունը մինչև օրս չի հաղթահարել այդ երկրնտրանքը: Մինչդեռ, ինչպես նախորդ գլուխներում տեսանք, պատմական փաստերը ցույց են տալիս, որ այդ հարցը հայ հասարակությունն առաջադրել և դրականորեն է լուծել դեռևս նախանցյալ դարի կեսերին: Այսպիսի հարցադրումը փակուղի է տանում, ստիպում ջանքեր վատնել վաղուց ի վեր հայտնի ճշմարտությունների ապացուցման վրա և շեղում երկրում ստեղծված ոչ բնական իրավիճակի պատճառների որոնումներից: Այս տեսանկյունից շատ ավելի շահեկան ուղու վրա է, օրինակ, «Օրրանը», երբ իր գրուցակիցներին հետևյալ հարցով է դիմում. **«Հայաստանում փոքր թվով կանայք են ընդգրկված ԱԺ-ում, պե՞տական բարձր պաշտոններում, կուսակցությունների ղեկավար մարմիններում: Ինչո՞վ եք դա բացատրում»** (29.01.2003):

Ուրեմն կարծրատիպերը կոտրելու նախաձախնդրությունը անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ ցանկալի հասարակական կարծիք ձևավորելու համար, հարկ է, որ այդ շահագրգռությունը խարսխված լինի հիմնավոր գիտելիքի վրա:

Սակայն կարծրատիպերին տուրք տալը պամանավորված է ոչ միայն գիտելիքի պակասով, այլև մամուլի չափից ավելի քաղաքականացմամբ, այս կամ այն հարցը սոսկ սեփական քաղաքական ճամբարի դիտանկյունից մեկնաբանելու գալթակոթյամբ: Դա չափազանց լավ է երևում, օրինակ, կանանց հրապարակային ընդվզման ելույթների, հանրահավաքների և ուրիշ քաղաքական գործողությունների մասնակցելու իրավունքի գնահատման դեպքում: Եթե ընդդիմադիր թերթ է, ապա կանանց ցույցերը դրական լույսի տակ կամ առնվազն չեզոք են լուսաբանվում, եթե իշխանամետ թերթ է, ապա գործի են դրվում այլազան պիտակներ ու նորանոր կարծատիպեր: Այսպես օրինակ, «Հայոց աշխարհ» թերթի ջանքերով է,

որ մշտապես արթուն է պահվում «**բե-տե-էն կանանց**» կարծրատիպը, որն սկիզբ է առել դեռևս 1988 թվականից: «ՀՀԸ-ի բե-տե-էն կանայք», «ՀՀԸ-ի մատյան գունդ» պիտակներով սովորաբար բնորոշվում էին հանրահավաքներին մշտապես ներկա աղմկարար կանայք: Բայց դրանց հեզմական բնույթը մերժողական երանգներ ձեռք բերեց հատկապես 1988 թ. Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հրանտ Ոսկանյանի հետ պատահած հայտնի դեպքի առնչությամբ: Լուրեր տարածվեցին, թե մի խումբ կին ցուցարարներ ներխուժել են Գերագույն խորհրդի շենք և լուրջ մարմնական վնասվածք հասցրել Հրանտ Ոսկանյանին: Լուրը տարածվեց, սակայն որևէ լրատվամիջոց չփորձեց հետաքննել և հաստատել կամ ժխտել այդ միջադեպի հետ կապված մանրամասները: Ճշմարտությունը սպրդեց ակամա, երբ տարիներ անց, ծավալուն հարցազրույց վարելով Հրանտ Ոսկանյանի հետ նրա անցած ուղու մասին, լրագրողը (Վահան Վարդանյան) հիշել է նաև այդ տհաճ միջադեպը (տե՛ս Ներդիր 3): Պարզվում է, որ ջարդարարները ոչ միայն կանայք չեն եղել, այլև հենց միակ կինն է կանխել հետագա արյունահեղությունը: Դժվար է ասել՝ արդյոք առասպելը հյուսվել է միտումնավոր, որպեսզի որպես գործի՞ք գործածվի հասարակության կեսը կազմող կանանց հատվածի քաղաքական ակտիվությունը կանխելու և առհասարակ ժողովրդական շարժումը վարկաբեկելու նպատակով: Հնարավոր չէ վստահաբար ասել նաև, թե ենթագիտակցորեն գործել է **քաղաքականությունը կնոջ գործը չէ** կարծրատիպը: Բայց փաստ է, որ արդյունքը հենց այդպիսին է: Բավական է նշված պիտակները գործածել քաղաքացիական ու քաղաքական ակտիվություն ցուցաբերող այս կամ այն խմբին բնորոշելու համար, որպեսզի միանգամից ապահովվի հասարակության ժխտողական վերաբերմունքը թե՛ տվյալ խմբերի, թե՛ նրանց բարձրացրած հարցերի նկատմամբ, քանի որ «**բե-տե-էն**»-ները հասարակության գիտակցության մեջ զուգորդվում են սանձարձակ, ճղճղան, նույնիսկ ճանկռտող, այս կամ այն քաղաքական ուժի ձեռքին գործիք ծառայող, քրեական հակումներով կանանց հետ:

Ասվածի լավագույն ապացույցը «բե-տե-էն»-ների կարծրատիպի կենսունակությունն է հատկապես իշխանամետ մամուլում: Նաև այն հանգամանքը, որ ճշմարտությունը բացահայտվելուց հետո էլ գրեթե ոչ ոք ուշադրություն չդարձրեց դրան: Ուշագրավ է, որ այն չտեսնելու տվեց անգամ «Հայոց աշխարհը», որի էջերում է հենց ջրի երես եկել բուն իրողությունը, և որը հիշյալ կաղապարի ամենաջանասեր գործածողներից մեկն է: Բա-

վական է միայն թվարկել այդ թերթի մի շարք հրապարակումների վերնագրեր. «Ո՞Ւմ և ինչու է պետք «բե-տե-էռ»-ների լծակը» (2001), «ԲՏՈ-ների երթուղիները» (2001), «Բետեռներն անվերահսկելի են» (2003), «Կամավոր են գրվել բետեռները» (2004), «Չի կարելի կանանց տալ միայն բետեռնի կարգավիճակ» (2006) և այլն:

Ընդ որում, եթե հանրահավաքներում ակտիվություն դրսևորող կանայք հանդես են գալիս ընդդիմության դեմ, ապա դառնում են խեղճ, անպաշտպան կանայք: Օրինակ՝ 2004 թ. Գյումրիում տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ, երբ մի խումբ կանայք ձվեր նետեցին ընդդիմադիրների վրա, ոչ միայն չարժանացան «Հայոց աշխարհի» որակումներին, այլև բազմիցս համակրական և կարեկցական խոսքեր հնչեցին նրանց հասցեին: Սակայն նույն թերթը լռեց, երբ 2004 թ. ապրիլի 12-ի ցույցի մասնակից կանայք զանգվածային բռնությունների ենթարկվեցին իրավապահ մարմինների կողմից: Ընդդիմադիր թերթերն ընդհակառակը՝ բավական մանրակրկիտ հետաքննեցին այս նյութը՝ մեկ առ մեկ ներկայացնելով իրավապահների կողմից բռնությունների ենթարկված կանանց: Այս տեսանկյունից բավական շահեկան է «Առավոտի» դիրքորոշումը (տե՛ս Ներդիր 4):

Այսպիսով, գեներային կարծրատիպերի կենսունակությունը մամուլում պայմանավորված է ոչ միայն լրատվամիջոցների հայեցակարգային դիրքորոշման բացակայությամբ և գեներային գիտելիքների թերի պաշարով, այլև դրանց կողմից վարվող քաղաքական գծով: Գեներային կարծրատիպերը ոչ միայն հաղթահարելու փորձեր չեն արվում, այլև քաղաքական հակառակ ճամբարին պարտության մատնելու նպատակով վերակենդանացվում են մոռացված կարծրատիպեր կամ կյանքի են կոչվում նորերը: Անընդհատ շրջանառության մեջ է դրվում այն կարծրատիպը, թե քաղաքականությամբ զբաղվում են անձնական կյանքում անհաջողակ կամ սեռական կյանքում չբավարարված կանայք: Այս կարծրատիպը հատուկ է նաև մտավորականությանը, ինչը ցույց են տալիս լրագրողների կատարած հարցումները. «...**Քայց նաև կան կանայք, որ սեռական կյանքից չբավարարված՝ իրենց ճղելով նեղվում են քաղաքական ասպարեզ**» (Հենրիկ Իգիթյան, արվեստաբան, «Հայոց աշխարհ», 28.11.2003): «**Եթե կինը շատ է ուզում զբաղվել քաղաքականությամբ, պետք է զբաղվի, որովհետև կնոջը ինչ-որ բան արգելելը ընդհանրապես հղի է վրանգավոր հետևանքներով: Այնուհանդերձ, իմ համոզմամբ, կինը ստեղծված է սիրո համար, և դա է նրա հիմնական զբաղմունքը**»

(Հանրային հեռուստաընկերության խորհրդի նախագահ, «Հայոց աշխարհ», 2002; Ընդգծումները մերն են): Այս կարծես իմիջիայլոց, ոտքի վրա ասված խոսքերի մեջ մի քանի կարծրատիպ կա. կինը ստեղծված է միայն սիրո համար, այսինքն՝ կամ սիրո առարկա է, կամ սուբյեկտ, դրանից դուրս նրա ցանկացած գործունեություն շեղում է, անբնական երևույթ, ավելին՝ «*հղի է վրանգավոր հեղևակներով*», իր սիրային զգացումներին հագուրդ տալու անկարողության կամ ընտանիքում համապատասխան վերաբերմունքի չարժանանալու դեպքում նա կարող է դառնալ անկանխատեսելի, ընդհուպ հրապարակային ելույթները կամ քաղաքական կյանք ներխուժելը: Մի խոսքով, քաղաքականության ասպարեզում կինը անցանկալի և մերժելի է, առհասարակ բացասական երևույթ:

Աշխուժորեն շրջանառվում է ևս մեկ կարծրատիպ. կինը երբեք առաջին պլան չպիտի մղվի: «*Այո, ասել եմ, որ կինը մի քայլ միշտ պիտի հետ լինի կանգնած պրամարդուց, քայց դա չի նշանակում, թե ինքն այդ քայլով իրեն նսեմացնում է: Նա թիկունքում պիտի լինի, ավելի չերևացող, քայց՝ գործունյա*» («Հայոց աշխարհ», 2002): Չգայուն լրագրողը պիտի փորձեր բացել փակագծերը. ի՞նչ է նշանակում մի քայլ հետ մնալ կամ թիկունքում լինել, և ո՞րտեղ, ընտանիքում, թե՞ հասարակական-քաղաքական գործունեության մեջ: Եվ ինչու՞ է առհասարակ սեփական ընտրությունը վերագրվում բոլորին՝ բոլոր կանանց: Մինչդեռ լրագրողները ոչ միայն չեն փորձում ուշադրություն հրավիրել այս խնդիրների վրա, այլև վերարտադրում են այս կարծրատիպը ու էլ ավելի նպաստում դրա ամրապնդմանը: Ահավասիկ. «*...Այդուհանդերձ, եթե փորձենք գուշակել, թե այսօր ինչ պայմանների դեպքում քաղաքական գործչի կինը կարող է ժողովրդի համակրանքը շահել, պետք է սկսել այնպետեղից, որ Հայաստանում ամենայն հավանականությամբ նրա համար կարևորը համեստությունն է և իր տեղն իմանալը: Այսինքն հիշել, որ ինքը ամուսնու ենթակայության տակ է, և ոչ թե հակառակը: Համենայն դեպս, այդպես է պահանջում հասարակությունը*»¹¹⁶:

Այսօր մամուլում լայնորեն շրջանառվում են նաև հետևյալ կարծրատիպերը. «*կանանց առաջնային գործառույթը երեխա ծնելն է, մեծացնելը և ընդհանրի հոգսը քաշելը. մնացած ամեն ինչ երկրորդական է*»,

116 Գրիգորյան Լ., «Առաջին տիկին». ճակատագիր, կարգավիճակ.- Իրավունք, 1998, թիվ 12, 22 մարտի-2 ապրիլի:

«ոչ որ չի խանգարում կանանց մտնել քաղաքական դաշտ, կանայք իրենք չեն ուզում», *«կանայք կանանց չեն ընկրում, առհասարակ կանայք կանանց չեն սիրում»*, *«քաղաքական ոլորտում կանայք պրոֆեսիոնալ չեն»*, *«կանանց համար քվոտաները խորհրդարանում արհեստական և անհարկի միջամտություն են»*, *«Հայաստանում կանանց նկատմամբ խտրականություն գոյություն չունի, մի քանի կանանց կազմակերպություններ են միայն այս օրարածին գաղափարները ներմուծում իրենց գոյությունն արդարացնելու համար»* և այլն: Այս ամենի հիմքում ընկած է այն ըմբռնումը, թե կինը երկրորդ տեսակի մարդ է, ուրիշ, անլիարժեքության չափ ուրույն: Սա է պատճառը, որ երբեմն մամուլ է սպրդում այնպիսի կարծրատիպ, որ թվում էր, թե մնացել է միջին դարերում. **«կինը մարդու բարեկամն է»**: Լրագրողը հարցազրույց է վարում քաղաքական գործչի հետ խորհրդարանում կանանց քվոտաների սահմանման, առհասարակ տղամարդկանց շոփնիզմի մասին: Ջրուցակիցը դրական է արտահայտվում քվոտաների վերաբերյալ, խոսքի մեջ շեշտելով. *«Գիտական առումով ընդունում են, որ տղամարդն ու կինը, տեխնիկական ցուցանիշներով բացարձակապես տարբեր լինելով, հավասարազոր են սրեղծված բնության կամ Աստծո կողմից»*: Բայց զրույցի ավարտին, գալով այն եզրակացության, որ իրավիճակն էապես կփոխվի, եթե լուծվեն սոցիալական խնդիրները, զրուցակիցն արդեն ասում է. *«Որովհետև հոգսերն են կաշկանդում մարդու ազատությունը և դրանց նվազման հետ այդ ազատության աստիճանը ավելի է մեծանում, այդ թվում կնոջ համար, որը մարդու լավագույն բարեկամն է»* (Վարդանյան Վ. Հավի և ձվի պատմությունը: «Հայոց աշխարհ», 2005, 8 մարտի, ընդգծումը մերն է): Իրապես զգայուն լրագրողը հազիվ թե նման վրիպում թույլ տար և զրուցակցի հետ համաձայնության չգար ընդգծված արտահայտությունը հանելու կապակցությամբ:

Նույն գիտակցությունն է գործում, երբ որևէ կին քաղաքացու այս կամ այն արտահայտությունը կամ արարքը վերագրվում է առհասարակ բոլոր կանանց, որոնք լրագրողների լեզվով ներկայանում են իբրև «թույլ սեռ», «գեղեցիկ սեռ», «Եվայի ցեղ», «տիկնայք փափկասունք» «կանայք հայոց աշխարհի» և այլն: Եթե կանանց որևէ քաղաքական կուսակցություն կամ հասարակական կազմակերպություն, որևէ պաշտոնատար կին բացասական օրինակ է ցույց տալիս, ապա այդ անհաջողությունը վերագրվում է առհասարակ կանանց՝ առիթ ծառայելով նրանց քաղաքական անկարողության մասին եզրահանգումների համար: Այդպես օրինակ,

Ժամանակին «Շամիրամ» կանանց կուսակցության անհաջող փորձը¹¹⁷ վերագրվեց բոլոր կանանց: Կամ մշակույթի և երիտասարդության հարցերի նախկին նախարար Թամար Պողոսյանը քավության նոխազ դարձավ «Օրինաց երկիր» կուսակցության կադրային քաղաքականության քննադատության արդյունքում: Թեպետ այդ կուսակցության մյուս նշանակումները ոչնչով ավելի հաջող չեին, «Հայոց աշխարհ» թերթի ջանքերով հենց մշակույթի կին նախարարը հայտնվեց մամուլի և հասարակության ուշադրության կենտրոնում: Այս առումով շատ ավելի շահեկան էր «Առավոտի» դիրքորոշումը: Հենց նա ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ քննադատության թիրախ է ընտրվել հատկապես թույլ կամ խոցելի օղակը՝ կինը (տե՛ս Ներդիր 5):

117 Հասարակության վերաբերմունքն այս կուսակցության հանդեպ բավական հակասական էր. գերակշռող կարծիքն այն էր, որ այն «գրպանային» կուսակցություն է, քանի որ ստեղծվել է ժամանակի ՆԳ նախարար Վանո Սիրադեղյանի նախաձեռնությամբ:

4.6. Կանանց հասարակական շարժման արտացոլումը ՉԼՄ-ներում. պատմություն և արդիականություն

Արդի լրատվամիջոցների ամենալուրջ թերություններից մեկն էլ այն է, որ գրեթե չեն երևում կանանց հասարակական կազմակերպությունները, մինչդեռ սա այն ոլորտն է, որտեղ կանայք ամենից շատ են ընդգրկված և առավել չափով են կարողանում ինքնադրսևորվել: Այդ կազմակերպությունների մի մասի անվանումները մամուլում հնչում են իրենց իսկ կազմակերպած մամուլ ասուլիսների կամ քննարկումների առիթով: Այդքանը: Սակայն, եթե փորձենք պարզել, թե քանի կանանց կազմակերպություն է այժմ գործում Հայաստանում, և ինչ գործունեություն են ծավալում, հնարավոր չէ ՉԼՄ-ների հրապարակումներով վեր հանել: Փաստորեն քաղաքացիական հասարակության մի ամբողջ հատված բավական թերի է արտացոլվում մամուլում:

Այս հարցում, ի դեպ, էական դեր են խաղում ոչ միայն գեներային, այլև առհասարակ հասարակական սեկտորին վերագրվող բացասական կարծրատիպերը, ըստ որոնց, դրանց մի ստվար մասի ստեղծվելու համար առհասարակ հասարակական պահանջումը չի եղել. ներկայիս գրանցված հասարակական կազմակերպությունների ընդամենը 10-15 տոկոսն է իրականում լիարժեք գործում. մի մասը սերտաճել է իշխանություններին, մյուս մասը զբաղված է դրամաշնորհներ հայթայթելով, ուրիշներն էլ՝ միայն սեմինարներ կազմակերպելով և շքեղ զբոսայգիներ հրատարակելով, որոնք որևէ նպաստ չեն բերում հասարակությանը և այլն: Այս վերաբերմունքը, ի դեպ, ձևավորվել է և շարունակվում է ամրապնդվել նաև մամուլի ջանքերով¹¹⁸, սակայն հիմնված է ոչ թե լուրջ ուսումնասիրությունների, այլ տպավորության վրա. փաստեր չեն բերվում:

Որոշ մասնագետների հավաստմամբ, սակայն, նման առասպելների տարածումն ու հասարակական կարծիքի ձևավորումը բնավ թյուրըմբռնման հետևանք չէ, այլ միանգամայն «միտումնավոր, գիտակցված և գրավիչ տակտիկա»: Այդ առասպելները հասարակություն են նետում քաղաքական գործիչները, որոնց մեծապես նպաստում են ՉԼՄ-ները. **«ՀԿ-ներն ավելի շատ վնաս են հասցնում, քան օգուտ՝ հաճախ ծառայելով իբրև**

118 Տես օրինակ՝ Դանիելյան Կ., Ինչով է զբաղվում հասարակական կազմակերպությունների բանակը Հայաստանում // Ազգ, 2004, 16 հոկտ.: Չիմնավորված վախ // Առավոտ, 2005, 8 մարտի:

«հիմնգերորդ շարասյուն» և արտաքին ազդեցության ներթափանցման խողովակ, հեղափոխում են եսասիրական շահեր և փոխանակ աշխատելու հանուն հասարակության բարօրության՝ անվերահսկելի կերպով փնտրվում են նշանակալի միջոցներ, որոնք տրվում են դոնորների կողմից: Ցավոք, այս գաղափարներն ու փրամադրությունները մեր հասարակության մեջ աշխուժորեն արմատ են գցում մի շարք քաղաքական գործիչների և ՁԼՄ-ների ջանքերով»¹¹⁹: Քաղաքական վերնախավի այս տակտիկան, եթե ոչ արդարացնել, ապա բացատրել կարելի է, սակայն որևէ կերպ հնարավոր չէ արդարացնել ու բացատրել լրատվամիջոցների դիրքորոշումը: Հասարակություն նետվող առասպելներին ակամա տուրք չտալու համար նախ պետք է համարժեք ըմբռնում ունենալ, հստակ պատկերացնել, որ առանց հասարակության լայն շերտերի քաղաքական ու քաղաքացիական մասնակցության չի կարող ժողովրդավարություն լինել, իսկ մասնակցության հիմնական հարթակներից մեկը հասարակական կազմակերպություններն են՝ այսպես կոչված երրորդ սեկտորը: ՁԼՄ-ներն, անշուշտ, պետք է շրջանառության մեջ դնեն քաղաքական գործիչների կարծիքը, դա պատշաճ է նրանց խոսքի ազատության իրավունքը հարգելու տեսանկյունից, սակայն չի կարելի բավարարվել դրանով և արտահայտվելու հնարավորություն չտալ նաև մյուս կողմին կամ կրկնել այդ կարծիքը և հասարակությանը մատուցել իբրև անվիճելի ճշմարտություն: Այլ խոսքով, ՁԼՄ-ներն իրենց կարծիքը պետք է փաստարկեն որոշակի օրինակներով, լրագրողական լուրջ հետաքննության արդյունքներով: Այդ դեպքում է, որ երևան է գալիս իսկական ճշմարտությունը, և, ինչպես ասում են, թացը չորի հետ չի խառնվում:

Այսպիսով, զանգվածային լրատվամիջոցները թերանում են առհասարակ երրորդ սեկտորի ըստ արժանվույն ներկայացման հարցում, ուրեմն ինչո՞ւ ենք ծանրանում հատկապես կանանց կազմակերպությունների խնդրի վրա: Այն պարզ պատճառով, որ այս դեպքում գործում են երկակի կարծրատիպեր, հասարակական կազմակերպությունների հետ կապված հասարակական կարծիքին գումարվում է գենդերային գործոնը, քանի որ բացի վերը նշված առասպելներից, մշտապես կենսունակ է նաև այն կարծրատիպը, թե «մեզանում կանանց հիմնախնդիրներ իրականում

119 Օսիպով Վ Վ., Քաղաքական մասնակցությունը և ժողովրդավարացումը. ՀԿ-ների դերը անցումային փուլի հասարակությունում: // Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. գենդերային հավասարության չափումը: Եր., 2006, էջ 73-74:

չկան, և կանանց կազմակերպությունները բազմաճյուղ են այն պատճառով, որ կանանց հիմնախնդիրներն առաջնահերթ են միջազգային հանրության, հետևաբար և դոնոր կազմակերպությունների համար, ուստի կանանց կազմակերպություն հիմնադրելու դեպքում բավական մեծ են դրամաշնորհներ ստանալու հնարավորությունները»։ Այսպիսով, կանանց կազմակերպություններն իբրև թե զբաղվում են սուտ, շինծու խնդիրներով, ուստի նրանց մասին կարծիքներ հայտնելիս ոչ համակրական վերաբերմունքին հաճախ գումարվում են նաև քամահրական երանգներ։

Այստեղ հարկ է անդրադառնալ ևս մի առասպելի կամ թյուրըմբռնման, որ բավական տարածված է լրագրողական շրջանում։ Երբ խոսք է լինում լրատվամիջոցներում հասարակական կազմակերպություններին ավելի մեծ տեղ հատկացնելու մասին, լրագրողները դա ըմբռնում են որպես քարոզչության կամ PR անելու պահանջ։ Խոսքը բնավ քարոզչության մասին չէ, այլ քաղաքացիական հասարակության այդ հատվածը նույնպես սևեռուն ուշադրության կենտրոնում պահելու՝ հավասարապես երևան հանելով թե՛ բացասական, թե՛ դրական իրողությունները։ Խոսքը պարբերական և անաչառ լրատվության մասին է։ Ընդամենը։ Ստուգված իրողություն է. սովերի տակ մնալը հաճախ լճացման տանող անգործության է մատնում, ուշադրության կիզակետում լինելը՝ որոնումների։ Եվ եթե այսօր շատ հասարակական կազմակերպություններ ցանկալի բարձրության վրա չեն, արդարությունը պահանջում է ասել, որ այդ խնդրում մեղքի որոշ բաժին ունեն նաև զանգվածային լրատվամիջոցները։

Հասարակական կազմակերպությունների գործունեության պարբերական լուսաբանումը ոչ միայն կնպաստեր հասարակության իրազեկմանը, հնարավորություն կտար գնահատելու այս գործով զբաղված գործիչների ավանդը, այլև մեծապես կխթաներ ոլորտի զարգացումը։ Բացի այդ, դժվար է ասել՝ ինչը կարող է առավել նպաստել կանանց քաղաքական գործունեությանն առնչվող կարծրատիպերի հաղթահարմանը. շարունակ նրանց առջև ծառայած խոչընդոտները մատնանշե՞լը, թե՞ նրանց քաղաքական գործունեության թելուզ հազվագյուտ հաջող օրինակները հաճախակի երևան հանելը։ Հասարակական ոլորտում կանանց գործունեությունը հենց այն երակն է, որի վրա պետք է լինի մամուլի ձեռքը, դա ոչ միայն թարմ արյուն կհաղորդի ՁԼՄ-ներին, այլև մեծապես կխթանի քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու կանանց քաղաքական առաջխաղացմանը։

Ասվածը հիմնավորելու համար բնավ հարկ չկա հեռուն գնալ և վկայա-

կոչել արդի համաշխարհային լրագրությունը: Բավական է վերստին մտաբերել մեր անցյալի մամուլի բացառիկ փորձը: Վերն արդեն տեսանք, թե ինչպես XIX դարի հայ մամուլը նախապատրաստեց հայ կանանց մուտքը հասարակական ասպարեզ և բառիս բուն իմաստով «հրահրեց» կանանց կազմակերպությունների ծնունդը:

Ներկայիս մասնագետներն անթաքույց խանդով են անդրադառնում և հիանում անցյալի կանանց կազմակերպությունների ժողովրդավարական ու թափանցիկ գործելակերպով, կազմակերպչական հմտությունների բարձր մակարդակով ու բեղուն գործունեությամբ: Բայց երբ թերթում ես մամուլը, գալիս ես այն եզրակացության, որ լրագրողների այդպիսի սկեռուն հայացքի տակ հավանաբար այլ իրականություն հնարավոր չէր: Ուստի ավելորդ չէ կրկին վերադառնալ անցյալ և հետևել, թե ինչպես էր մամուլը խթանում հասարակական շարժումը:

Անշուշտ, կանանց կազմակերպությունները սպասված ու պահանջված էին, և հասարակությունը անսքող գոհունակությամբ էր ընդունում կանանց յուրաքանչյուր կազմակերպության ծնունդը: **«Եթե գրությունը երկրիս երեսեն իսպառ հալածի, րակավիին կանանց կուրծքին րակ սպասարանարան պիտի գրանե... ուսրի ոչ նվազ բերկրությամբ կլսենք, թե րասնհինգ օրե ի վեր Օրթագյուղի մեջ բարեսեր րիկնայք ընկերություն մը կազմեր են գյուղին մեջ գրնված աղբարները իսնամելու ագնիվ նպարակով»**¹²⁰: Այսպիսի «բերկրանքով լսեցինք»-ով սկսվող բազում ծանուցումներ կարելի է գտնել ժամանակի մամուլում, որոնք մրցակցության ու նորանոր ձեռնարկումների խանդ էին բորբոքում. **«...Իճարիեի «Տրիկնանց ընկերության» անդամուհիները, ուրիշներե եր մնալ չուզելով, իրենց թաղին աղջկանց ուսումնարանը բարեկարգելու չեռք գարկեր են: Թող իրենց հեպնողներն ու չեռնրունները շարման, ո՞վ կրնա ըսել այն սրեն, թե հայերն ալ սպագա մը չունին»**¹²¹: Կամ. **«Խնամակալ րիկնանց ընկերության նպարակն է Ս. Խաչ թաղի աղջկանց վարժարանին նպասպել՝ հսկելով աղջկանց կրթության և ուսման, օրինակ առնելով Օրթագյուղի և Խասգյուղի Հայ րիկնանց բարի ընթացքը՝ աղջկանց դասրիարակության սպարելու գործին մեջ»**¹²²: Բայց սկզբնական զգայական խանդավառությանը հետևում էր ամենօրյա խստապա-

120 «Մասիս», 1864, 4 ապրիլի:

121 Նույն տեղում, 1806, թիվ 744:

122 «Ժամանակ», 1867, էջ 132:

հանջ հսկողությունը: Գործող կազմակերպությունների յուրաքանչյուր ձեռնարկում կամ իրադարձություն մամուլի ուշադրությանն էր արժանանում, առավել ևս չէին կարող անուշադրության մատնվել անգործությունը կամ մերժելի գործելակերպը: Գործող կազմակերպությունների յուրաքանչյուր որոշում մամուլում լայն քննարկման առարկա էր դառնում: Եվ այդ հրապարակումներում իսպառ բացակայում էին զգացական կամ դրվատական մակդիրները. ամենուրեք նկատվում էին զուսպ ու շահագրգիռ հայացք, անկողմնակալ գնահատական ու առողջ, խթանող քննադատություն: Օրինակ. «**Հայուհիների գործունեությունը մենք կարող ենք այսպես սահմանել՝ փոքրածավալ, հասարակույն և հարապր: Այս հարկություններն աչքի են ընկնում համեմատությամբ. մինչ Կովկասյան բարեգործական ընկերությունը մի անսահման ու լայնածավալ ծրագիր ունի, Հայուհյաց ընկերության ծրագիրը անչափ նեղ է, մինչ նրա դրամագլուխը չէ աճում կամ պակասում, սրանք հարապրե աճում է, մինչ նրա անդամների թիվը փարեցփարի նվազում է, սրանք աննշմարելի չափով ավելանում է, մինչ նրա գործերից և ոչ մի աչքի ընկնող հարապր գործ չէ երևում, սրանք միշտ աչքի առաջ է և որոշ շոշափելի օգույրներ է փալիս: Եռանդը հարապրության մեջ է, գործի օգույրն էլ՝ հասարակության մեջ: Արդեն հասել է ժամանակը, որ Հայուհյաց ընկերությունն ընդլայնե յուր սահմանները: Այս ընդլայնումը երկու պիտի լինի, ընդլայնում բարեգործության և ընդլայնում գործերի շրջանի...»¹²³:**

Հասարակական կազմակերպությունների գործունեության արտացոլման խնդիրները հիմնականում լուծվում էին համառոտ լրատվությամբ ու ռեպորտաժներով: Պարբերականների թղթակիցները պարտադիր ներկա էին կանանց կազմակերպությունների բոլոր հանդիսություններին, բոլոր ձեռնարկումներին ու ժողովներին և հանգամանորեն ներկայացնում էին այդ միջոցառումները:

Ներկայիս լրագրողական խոհանոցին քաջատեղյակ մարդու համար (երբ թղթակիցները ասուլիսից ասուլիս են վազում՝ ամեն տեղ հասցնելով ներկա գտնվել ընդամենը 10-15 բուպե, հետևաբար չխորանալով արծարծվող հարցերի մեջ և հաճախ մակերեսային արտադրանք տալով) դժվար է պատկերացնել, որ մի ժամանակ թղթակիցը կարող էր ժամեր շարունակ մասնակցել որևէ կազմակերպության տարեկան ընդհանուր ժողովին, ինչ է թե պարզի՝ անաչառ է եղել արդյոք կազմակերպության ղեկավարության

123 Հայուհյաց բարեգործական ընկերությունը // Արձագանք, 1894, թիվ 46:

վերընտրությունը. «*Հուսկ հեպո ջեռնարկեցին ընտրական գործին, որի համար կայացել էր ժողովը և որը փենց ամբողջ հինգ ժամ: ... Եթե ուրիշ ժողովներում աչառություն, անկանոնություն եղել է, գեթ այս երեկո շար կանոնավոր էր: ... Ուղիղ կեսգիշեր էր, որ սրբ. նախագահը «պահպանիչով» վերջ փվեց ժողովին՝ մաղթելով ազգօգուտ ընկերության արեշարություն և բարգավաճումն ի մխիթարություն ազգի»¹²⁴. Եթե պարբերականը հնարավորություն չէր ունենում թղթակից ուղարկելու, ապա կազմակերպությունից խնդրում էր ժողովի արձանագրությունը կամ տարեկան տեղեկագիրը և ընդարձակ քաղվածքներ տպագրում դրանցից: Այնպես որ, ընթերցողը լիարժեք տեղեկանում էր տվյալ ընկերության բոլոր ձեռնարկումներին, արդյունքներին, քննարկված հարցերին, ընդունված որոշումներին, ղեկավարության և մնացած անդամների փոփոխություններին, տնօրինած դրամական միջոցներին և ծախսերին՝ հողված առ հողված, կոպեկ առ կոպեկ: Այս ամենից հետո բնավ զարմանալի չեն թվում ժամանակի կազմակերպությունների փութեռանդությունն ու բեղմնավորությունը, ժողովրդավարությունն ու հրապարակայնությունը:*

Ակնհայտ է, որ ներկայիս հայ մամուլն այս կորսված ավանդույթը վերականգնելու կարիք ունի, որը ժողովրդավարացման ու արդյունավետության առումով մեծապես կնպաստի ոչ միայն հասարակական սեկտորի, այլև զանգվածային լրատվամիջոցների բարենորոգմանը:

Նոր հասկացություններ.

գենդերային մշակույթ, գենդերային խորրական քաղաքականություն, գենդերային չեզոք քաղաքականություն, գենդերային զգայուն քաղաքականություն, պոզիտիվ խորրականություն, զուգակշռված ժողովրդավարություն, «կրիտիկական զանգված», աջակցող գործողություններ:

Հարցեր քննարկման համար

1. Ի՞նչ է կորցնում հայ հասարակությունը քաղաքականության մեջ որոշումների ընդունման մակարդակում կանանց անբավարար ներկայացվածության պատճառով:
2. Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության ի՞նչ խոչընդոտներ կան:

124 Թիֆլիսի Հայուիյաց բարեգործական ընկերության ընդհանուր ժողովը // Արձագանք, 1894, թիվ 51: Ստորգր.՝ Չափավոր:

3. Ի՞նչ արժանիքներով պետք է օժտված լինեն հաջողակ կին քաղաքական գործիչը և տղամարդ քաղաքական գործիչը:

Ինտերակտիվ պարապմունք. «Կինը՝ երկրի նախագահ»:

Ինտերակտիվ պարապմունք. «Հարցազրույց քաղաքական գործիչի հետ»:

Ինտերակտիվ պարապմունք. «Ի՞նչը պետք է բացառվի քաղաքականության մեջ, որպեսզի ապահովվի զուգակշռությունը»:

Էսսե. «Քաղաքական առաջնորդ կնոջ/տղամարդու իմ իդեալը»

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աժգիխինա Ն., Գենդերային կարծրատիպերը ժամանակակից լրատվամիջոցներում // Գենդերային հետազոտություններ, պր. 6:- Եր., 2001, էջ 108-128:
2. **Քաբայան Ս.**, Գենդերը և խտրականությունը: Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2002.-136 էջ:
3. Գենդերային իրավիճակը Հայաստանում / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա.- Եր., 2005:
4. Ժամանակակից հասարակության գենդերային դինամիկան: Հայաստանի կանայք XXI դարում: Խորհրդաժողովի նյութեր / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2000.- 304 էջ:
5. Կանայք և ընտրությունները 2002-2003 / Կանանց հանրապետական խորհուրդ.- Եր., 2003.- 72 էջ:
6. Կանայք և մամուլը: 1998-2001թթ. Հայաստանում հրատարակված հոդվածների հավաքածու / Կանանց հանրապետական խորհուրդ.- Եր., ա.թ., 84 էջ:
7. Կանայք զարգացման մեջ: Ժամանակակից հասարակության գենդերային հիմնահարցեր: (Ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքների) / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 1999.- 307 էջ:
8. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մա-

- սին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2002-2007 թթ.: Այլընտրանքային զեկույց / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2007.- 74 էջ:
9. Կանանց շարժումը Հայաստանում. նախապատվություններ և զարգացման հեռանկարներ / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա.- Եր., 2002.- 300 էջ:
 10. Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին: Վերլուծական տեսություն / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2007.- 124 էջ:
 11. Հայաստանի Հանրապետությունում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն, Հայաստանի հասարակական կազմակերպությունների «Հանուն խաղաղության» կոալիցիա.- Եր., 2006.- 237 էջ:
 12. Հարությունյան Ա., Հոնքը սարքելու տեղը // Գենդերային հետազոտություններ, պր. 6.- Եր., 2001, էջ 102-108:
 13. Սոցիալական քաղաքականության գենդերացումը / Խմբ.՝ Սոֆի Ռիոթսոն, Լեալի Դոյալ.- Եր.: ԳԱԼԼ, 2003.-304 էջ:
 14. Վարդանյան Ե., Գենդերային հետազոտությունների ներածություն / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2002.- 150 էջ:
 15. Փոխակերպվող հասարակության կանանց հիմնախնդիրները և իրավունքները. իրականություն և հեռանկարներ: Առաջին միջազգային խորհրդաժողովի նյութեր / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա.- Ե., 1997.- 204 էջ:
 16. Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. գենդերային հավասարության չափումը / Խմբ.՝ Ջ. Հասարթյան, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2006.- 214 էջ:
 17. Ֆեմինիզմի տեսություն և պատմություն (ուսումնական ձեռնարկ) / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 1999:

18. Ажгихина Н.И., Правнучки викингов у себя дома.- М.,1999.- 112 с.
19. Айвазова С., Гендерное равенство в контексте прав человека. Пособие. Библио- Центр сайта OWL.- М., 2001.
20. Гендер как интрига познания (сборник статей) / Московский государственный лингвистический университет, Лаборатория гендерных исследований.- М., 2000.
21. Гендерная политика и масмедия.- Тбилиси, 2002.- 48 с.
22. Гендерная реконструкция политических систем / Ред.: Н.М.Степанова, Е.В.Кочкина.- Санкт-Петербург, 2004.
23. Гендерная цензура как элемент культуры / Сост.: Н.Ажгихина; Ассоциация журналисток.- М., 2003.
24. Женщина в обществе: мифы и реалии (сборник статей).- М.,2001.
25. Женщина и визуальные знаки /Под ред. А.Альчук.- М., 2000.- 208 с.
26. Женщины: Свобода слова и свобода творчества. Сборник статей / Сост.: С.В. Василенко.- М.: Эслан, 2001.- 200 с.
27. Здравомыслова О., Кигаи Н., Женская тема в средствах массовой информации / Ассоциация журналисток.- М., 2002.- 83 с.
28. Кавказия / международная коалиция гендерных журналистов, №1,2,3,4,5,6
29. Кривое зеркало СМИ (мониторинг газет «Айастани Анрапетутюн» и «Айкакан жаманак») // Женское мнение в СМИ (мониторинг национальных газет) / «ГендерМедиаКавказ».- Тбилиси, 2005.

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՆԵՐԳԻՐ 1. Զգայուն մոտեցման օրինակ

Ասում են, որ կնոջ դիրքը և վիճակը հասարակության մասին եզրակացություններ անելու լուրջ հիմքեր է պալիս: Եվ քանի որ մարդի 8-ից ապրիլի 7-ը Հայաստանում համարվում է կանանց ամիս, փորձենք վերլուծել, թե ինչպիսին է հայ կինը 20-րդ դարի վերջին: Եզրակացությունը կարող եմ միակամից ասել՝ անմխիթար:

Բավական հաճախ կարելի է լսել, թե հայ կանայք չեն ցանկանում զբաղվել քաղաքականությամբ և ղեկավար պաշտոններ զբաղեցնել: Ինձ թվում էր, որ այս եզրակացությունը ձևավորվել էր ոչ բանիմաց մարդկանց երևակայությունում: Սակայն, վերջերս, գրուցելով իմ կարծիքով բավական քաղաքակիրթ և ազատամիտ մի քաղաքական գործչի հետ, ի զարմանս, նույն կարծիքը լսեցի: Ավելին, ես պարզեցի նաև, թե ինչու մեր կանայք չեն ցանկանում զբաղվել քաղաքականությամբ: Պարզվեց, որ նրանք պարզապես նախընտրում են զբաղվել իրենց ընտանիքի կենցաղային հարցերով: Պատասխանը չէր, որ ինձ զարմացրեց: Ինձ զարմացրեց այն, որ, իմ կարծիքով, այս սխալ տեսակետը կիսում են նույնիսկ շատ զարգացած անձնավորություններ, և ես եզրակացրի՝ անգամ ամենաազատամիտ և քաղաքակիրթ տղամարդու ազատամտությունն ավարտվում է այնտեղ, ուր խոսքը գնում է կնոջ իրավունքների և ազատությունների մասին: Իմ խորին համոզմունքով, հայ կանանց «ապաքաղաքականությունը» կապված է ոչ թե նրանց քաղաքականությամբ զբաղվել չցանկանալու հետ, այլ այն հանգամանքի, որ երբ նրանք հայտնվում են այս ոլորտում, նրանց, ինչպես օտար մարմին, անպայման ցանկանում են դուրս նետել: Հիշենք, թե ինչ տեղի ունեցավ վերջերս, երբ մի տիկին իր թեկնածությունն առաջարկեց խորհրդարանական ընտրություններին մասնակցելու նպատակով: Պատգամավորությունը տևելու էր ընդամենը մի քանի ամիս: Հետո թող մասնակցեր՝ պարտադիր չէ, որ հենց նա ընտրվեի ժողովրդի կողմից: Նրանից ազատվեցին, կարելի է ասել, բավական հմտորեն, և ինձ մոտ ստեղծվեց այն տպավորությունը, որ «կին» ասելուն պես ինչ-ինչ մարդկանց գլխում միանգամից զսպանակ է աշխատում, որը նրանց զրկում է մտածելու հնարավորությունից: Հիշենք, որ մեր կանայք բավական լուրջ էին ընդունվում ԽՍՀՄ-ի վերջին խորհրդարանում, և մենք ազգովի հպարտանում էինք, երբ նրանք քաջորեն և մատչելի ներկայացնում էին խնդիրները: Կանանց սակավությունը խորհրդարանում միայն Հայաստանի Հանրապետության պորբլեմը չէ և կապված չէ ազգային մտածելակերպի հետ: Գրեթե նույն վիճակն է նաև ԱՊՀ-

ի հանրապետություններում, ասենք՝ Ռուսաստանում: Ճիշտ է, մենք կարող ենք փառք տալ Աստծուն, որ մեր խորհրդարանում հայտնված կանայք չարժանացան Ստարովիտովայի ճակատագրին, սակայն դա տեղի չի ունենում ոչ թե այն պատճառով, որ մենք ավելի հանդուրժողական ենք կին պատգամավորների նկատմամբ, այլ պարզապես, կին պատգամավորները, լավ հասկանալով, թե ինչ կարող է լինել, չեն ցանկանում «գլուխ դնել» և գնալ առճակատման: Իսկ կանայք անհրաժեշտ են խորհրդարանում: Նախևառաջ, այնտեղ ավելի բարվոք մթնոլորտ կստեղծվի, և երկրորդ՝ մենք ձգտում ենք աշխարհի հետ խոսել քաղաքակիրթ լեզվով, ուզում ենք, որ մեզ հասկանան: Յուրաքանչյուր պետություն ունի խնդիրներ, որոնք ավելի նպատակահարմար է՝ ներկայացվեն և լուծվեն կանանց կողմից: Վերջիվերջո, կինը ոչ թե «տղամարդու բարեկամն» է, այլ հասարակության լիիրավ անդամը: Ժամանակն է, որ դա գիտակցվի:

Գալստյան Մ., Կինը և քաղաքականությունը // Առավոտ, 1999, 20 մարտի

[Այս հրապարակումը ուշագրավ է նրանով, որ ուշադրություն է հրավիրում ոչ միայն հիմնախնդրի, այլև դրա պատճառների հիմքում ընկած հիմնական կարծրատիպերից մեկի վրա]:

ՆԵՐԳԻՐ 2. Խտրական մոտեցման օրինակ

Աստված իմ, այս ի՛նչ դառան մեր կանայք՝ մեր մայրերը, մեր տատերը, կանայք, քույրերը, աղջիկները: Քաղաքական գործիչներ են դարձել: Իրենց երեխաների ճաշը եփելու, իրենց թոռանը հեքիաթ պատմելու, իրենց ամուսնուն սիրելու փոխարեն երկրի ճաշն են եփում, հասարակական-քաղաքական կազմակերպություններ են ստեղծում, իրենց գրագիտությունը ցուցանելու համար ոչ թե Տերյանի բանաստեղծությունն են հիշում, այլ պարսպ ականջ են գտնում և հարավամերիկյան տարածաշրջանի մասին ինչ-որ ֆիլիպինցի խափշիկի արտասանած ճառն են պատմում: ՈՒ հպարտանում են իրենց այս դրությամբ, ո՛րն են հպարտանում: Ես հասկանում եմ ծախու կնոջը (տանել չեմ կարող, բայց և չեմ դատում. դրա իրավունքը չունեմ), ես հասկանում եմ ազնվական կնոջը (հիանում եմ այդպիսի կնոջով), հազարավոր փնթի կանանց եմ տեսնում, որոնց, պարզ է, ոչ մի տղամարդ չի սիրում (նույնիսկ՝ փնթի տղամարդը), կանացի ամեն մի բամբասանք (եթե անգամ բամբասողը տղամարդ է) ընդունում եմ հավուր պատշաճի (շնորհակալություն, անարժեք մարդուն ոչ ոք չի բամբասի)... Ամեն տեսակ կնոջը հասկանում եմ: Բայց, ձեր չարը տանեմ, չեմ կարողանում հասկանալ քա-

ղաքականությամբ տառապող կանանց: Եթե որոշ կանայք (հատուկենտ ընտրյալներ) զբաղվում են քաղաքականությամբ (և պետք է, որ զբաղվեն), ապա քաղաքական մտքեր արտահայտելու մոլագարությունը պարզապես շճեցնում է: Ինչ կուզեք ասեք, կնոջ այդ տեսակին չեմ հասկանում: Հրաշալի կանայք կան, որ կարող էին չքնաղ բանաստեղծություններ գրել, համեղ կերակուրներ պատրաստել, բանջարանոցում սամիթ աճեցնել... Բայց, ահա, եկել ու առավոտվա ժամը 5:18-ից մինչև 23:41-ը խոսում են քաղաքականությունից: Բա ե՞րբ են հասցնում իրենց երեխայի շորը լվանալ, իրենց ամուսնուն սիրել, տո, գրողը տանի, երբեմն հեռվից-հեռու հիանալ ուրիշ տղամարդկանցով... Խոսում են, գրում են, խոսում են, գրում են, նախագահներ, վարչապետներ, նախարարներ են առնում, ցած դնում: Կանանց էմանսիպացիա են ասում... Այսինքն՝ ումի՞ց եք ազատագրվում, ինչի՞ց... Չեր չարը տանեմ, ազատ եք, էլի, հարյուր հազար տարի ազատ եք: ...Նստել են, ահա, ու ասում են. «Վաղուց պետք էր ձերբազատվել այն թյուր կարծիքից, որ կնոջ տեղը խոհանոցն է ու կնոջ դերը հասարակության վերափոխումներից հեռու մնալը»: Ազատվել ենք այդ «թյուր կարծիքից», ազատվել ենք: Շատ ու շատ տղամարդիկ արդեն դարձել են վերմիշել խաշելու վարպետներ: ՈՒ դուք, սիրելի կանայք, ձեր ընկերուհիների հետ եք գնում դեպանատների ընդունելությունների, որտեղ 70 առ 100-ը կանայք են: Նստել են, ահա, ու ասում են. «Գործարար աշխարհում մեծ թիվ են կազմում ժամանակակից շուկայական հարաբերությունների նրբություններին տիրապետող, գործունյա, հմուտ կանայք»... Հպարտանալու բա՞ն եք գտել... Աստված իմ, այս ի՞նչ դարձրինք մեր կանանց: Մենք, որ պիտի ասպետ մնայինք, մենք, որ երկրներ պիտի կառավարեինք, այնքան կնամեժար դարձանք, որ կանայք արդեն խղճում են մեր գոյությունը և... հասարակական 428-րդ կազմակերպությունն ստեղծում, համաժողովներ, վեհաժողովներ ու գազաթաժողովներ գումարում: Մեկ-երկու տարի հետո, հավանաբար, տղամարդկանց էմանսիպացիայի հարցեր կքննարկեն: Արժե սոցիոլոգիական ուսումնասիրություն կատարել և պարզել, թե քանի՞ քաղաքական գործիչ կին կա, քանի՞ կին է խոսում հեռուստատեսությամբ քաղաքական թեմաներով: ՈՒ նաև պարզել, թե Հայաստանում քանի՞ երեխա է ծնվում մեկ տարվա ընթացքում կամ քանի՞ կին է լիթիկական բանաստեղծություն գրում: Ես հասկանում եմ քաղաքականությամբ զբաղվող այն կանանց, որոնք դեռ ամուսնացած չեն կամ արդեն ամուսնալուծվել են: Բայց նրանք, ովքեր ամուսնացած են, ամուսնու, երեխայի տե՞ր... Չզիտեմ, թե ի՞նչ տեսք կունենան այսպիսի կանանց ամուսիններն ու երեխաները: Հավանաբար՝ ճմռթված:

Գալոյան Ա., Տղամարդն ու կինը. Ոչ ըստ Կլոդ Լեյուշի // Ազգ, 1999:

ՆԵՐԳԻՐ 3. Չեզոք մոտեցման օրինակ

- Հասկանում եմ, որ դժվար է Չեզ համար այդ մասին խոսելը, բայց ինչպե՞ս Չեզ վրա կատարվեց հայտնի հարձակումը. ասում էին, որ մի խումբ կանայք են եղել:

- 1989-ի գարնանն էր: Դեպքի օրն ընդունել էի Շամշադինի բնակիչների մի խմբի, որոնք խնդրում էին ազատել սահմանային բախումների ժամանակ ադրբեջանցիների մոտ գերի ընկած մեր մի խումբ բնակիչների: Նրանք գտնվում էին Ադրբեջանի բանտերում: Ես խոսեցի ԽՍՀՄ գլխավոր դատախազի հետ, որ այդ մարդկանց կյանքը վտանգի տակ է և պետք է միջոցներ ձեռնարկել: Նա խոստացավ այդ հարցը լուծել՝ նրանց Ռոստով տեղափոխելով: Շամշադինցիները՝ գոհ, որ հարցը մասամբ լուծվել է, գնացին: Բայց քիչ անց եկավ ԳԽ-ի գործերի կառավարիչը և ասաց, որ ԳԽ-ի առջև հավաքվել է մարդկանց մի խումբ և թույլ չեն տալիս, որ շամշադինցիները գնան: Նրանց ներկայությունը դարձրին պատրվակ, թե մեր հայրենակիցներին այնտեղ սպանում են, ոչ ոք ուշադրության չի արժանացնում: Աստիճանաբար ամբոխ սկսեց հավաքվել: Ես զանգահարեցի կենտկոմի 1-ին քարտուղարին՝ այն ժամանակ արդեն Վլադիմիր Մովսիսյանն էր, ՆԳ նախարարին և ասացի, որ ԳԽ-ի վրա կարող է հարձակում լինել՝ միջոցներ ձեռնարկեք: Եկավ ՆԳ նախարարի տեղակալը և ասաց, որ դրսում ժողովուրդ է հավաքված, անվտանգության միջոցառումներ ձեռնարկել չեն կարող՝ հակազդեցություն կլինի: Առաջարկեց, որ ինձ շտապ օգնության մեքենայով փախցնեն: Բայց ես շատ վիրավորական համարեցի մնան առաջարկությունը և մնացի շենքում:

Այդ ժամանակ էլ ամբոխը ներխուժեց ներս, իսկ ներսում միայն երկու միլիցիոներ կար: Միլիցիայի սպան ասաց, որ ինքը կարող է գենք գործադրել, եթե կարգադրեն: Բայց ես կտրուկ արգելեցի, մտածելով, թող գան, տեսնենք ինչ են ուզում: Այդ ժամանակ ներս լցվեցին 60-70 երիտասարդներ՝ թերթերի մեջ փաթաթած երկաթե ձողերով: Սկսեցին հայհոյել, ինչ-որ բաներ գոռալ և աջ ու ձախ ջարդուփշուր անել: Հենց դրանցից մեկն էլ ձողով հարվածեց ինձ, երբ փորձեցի կարգի հրավիրել: Արյունահոսությունը տեսնելով՝ այդ խմբի մեջ գտնվող միակ ակտիվիստ կինը կանխեց հետագա հարվածները:

- Բայց ինչ-որ մարդիկ ձերբակալվեցի՞ն, պատասխանատվության հարց դրվե՞ց տեղի ունեցածի համար:

- Ձերբակալել էին մի քանի պատանիների: Մեծ մասամբ միայն մոր խնամքի տակ մեծացած ջահելներ էին, իսկապես անտեր երեխեք, որոնց վրա այդ գործը «ջարդելը» հանցագործություն կլիներ: Ես նման բան թույլ տալ չէի կարող: Ռեդակի պահանջեցի բոլորին բաց թողնել:

- Ինչո՞ւ չփորձեցիք հայտնաբերել իրական ջարդարարներին:

- Նախ՝ հայտնաբերման հարցով պարտավոր էին զբաղվել համապատասխան մարմինները: Իսկ կազմակերպիչները ենթադրվում էին, կամ գուցե հայտնի էին: Եթե երկրի պետական բարձրագույն մարմնի վրա կարող է մնան հարձակում լինել և իրավապահները «ի վիճակի չեն լինում» կանխել դա, նշանակում է կազմակերպված սադրանք է, ուրիշ ոչինչ: Դա վերջին կաթիլն էր: Համոզվեցի, որ իշխանության տերը այսուհետ ՀՀՇ-ն է՝ բնականաբար, կոմկուսի ղեկավարության ակամա համաձայնությամբ: 1990թ. ամռանը մեկնեցի Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԽ նստաշրջանին մասնակցելու:

Վարդանյան Վ., Կոմունիստ լինես, ռամկավար թե դաշնակցական, դու այս ժողովրդի փոքրիկ մասնիկն ես (Հարցազրույց Հրանդ Ռականյանի հետ, քաղվածք) // Հայոց աշխարհ, 2000:

ՆԵՐԳԻՐ 4. Չգայուն մոտեցման օրինակ

Երեկ, անդրադառնալով Գյումրիում ընդհարմանը, ԱԺ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանն «Ազատություն» ռ/կ-ին ասաց. «Այն, ինչ տեսել եմ հեռուստացույցով, ուղղակի խայտառակություն էր..... Միտինգ վարողների պաշտպան թիկնեղ քաղաքացիներն աստիճաններից նետում էին կանանց, ջարդում նրանց ցուցապաստառները, հայիոյում և խփում»։ Նաև հավելեց. «Նրանք չեն հանդուրժել, որ միտինգում կարող էր հնչել կամ պլակատի ձևով երևալ այլ կարծիք»։ Թղթակցի հարցին, թե Ռոբերտ Քոչարյանի քարոզարշավի ժամանակ, եթե ընդդեմ նրա կարգախոսներ լինեին, ի՞նչ կլիներ, պրն Հովհաննիսյանը պատասխանեց. «Չեմ կարծում, թե մենք կանանց աստիճաններից նետեինք ներքև: Մենք մնան բան չէինք անի»: Հիշեցնենք, որ Շենգավիթում Քոչարյանի ընտրարշավային հանդիպման ժամանակ ոստիկանները ծեծելով ուշագնացության հասցրին ՀԺԿ-ից Քնարիկ անունով մի կնոջ՝ ընդամենը Ստեփան Դեմիրճյանի նկարը պահելու համար:

Իսկ դուք հանդուրժե՞լ եք // Առավոտ, 2004, 30 մարտի:

ՆԵՐԳԻՐ 5. Չգայուն մոտեցման օրինակ

Դաշնակցային կառավարության ամենախոցելի թիրախը, պարզվեց, կին է: «Օրինաց երկրի» ներկայացուցիչ, մշակույթի նոր նախարար Թամարա

Պողոսյանը, որին անցած շաբաթ չքննադատեցին թերևս ամենածույլերը: Խոսք չկա, կիրառական մաթեմատիկայի մասնագետին մշակույթի ոլորտը վստահելը իրոք տարակուսանք է առաջացնում: Թեկուզ հենց «լիրիկների» և «ֆիզիկների» միջև փոխըմբռնման բացակայության պատճառով: Համարվում է, որ նուրբ երևույթների, որպիսին և մշակույթն է, ըմբռնումն այնքան էլ հեշտ գործ չէ: Ասենք, սա վիճելի հարց է, և օդի մեջ կանխատեսումներ անել, թե միակ կին նախարարը մշակույթից գլուխ չի հանի, գուցե ճիշտ չէ: Ինչ վերաբերում է նրա՝ ղեկավարելու փորձ չունենալուն, ևս սխալ հարցադրում չէ, բայց թե՛ նախորդ, թե՛ նոր կառավարությունում սա եզակի դեպք չէ: Ավելի ստույգ, օրինաչափություն է: Վերցնենք թեկուզ հենց վարչապետ Անդրանիկ Մարգարյանին, որը, կարծես թե, վարչապետ չի ծնվել: Ավելին, իր կյանքի մեծ մասը ոչ մի պետական պաշտոն չի զբաղեցրել:

Կռալիցիոն կառավարության մյուս տղամարդ նախարարները վերոնշյալ չափանիշներից ևս շատ հեռու են: Պատկերացրեք, թե ի՞նչ հերոսություններ պիտի անի սոցիալական ոլորտում բանասեր, գրող Ադվան Վարդանյանը, քանի որ, հայտնի է, թե պոետները որքան հեռու են կյանքի կենցաղային մանրուքներից: Կամ էլ մասնագիտությամբ լրագրող Սերգո Երիցյանը, որին վստահել են գիտության և կրթության ոլորտը, շա՞տ է նա հասկանում իր ստանձնած ոլորտներից, որ կարողանա դրական արդյունքների հասնել՝ առանց այդ էլ մի կերպ շնչող կրթությունն ու գիտությունը չկործանելու փոխարեն: Մյուս նորանշանակ նախարար Դավիթ Լոքյանը թեև մասնագիտական առումով քիչ, թե շատ մոտ է իրեն վստահված գյուղատնտեսության ոլորտին (կենսաբան է), սակայն մինչ այդ զբաղվում էր քաղաքաշինությամբ: Իսկ գյուղն ու քաղաքը համարյա նույնն են, ինչ լիրիկան ու ֆիզիկան:

Սա ասում ենք՝ ընդգծելու համար, որ նոր նշանակումներն այնքան էլ հաջող չեն: Եվ դրանք ոչ պակաս տարակուսանք են առաջացնում, որքան Թամարա Պողոսյանին մշակույթի նախարար նշանակելը: Պատշաճ չէ կառավարության ողջ կազմից միայն նրան թիրախ ընտրելը: Թեկուզ հենց այն պատճառով, որ նա կառավարությունում միակ կին նախարարն է, ու նրա նշանակումը թերևս հենց այդ չափանիշներով դիտարկելու դեպքում դրական քայլ է: Ինչ վերաբերում է՝ կկարողանա՞ նա ղեկավարել մշակույթի ոլորտը, ապա շատ ավելի լավ կլիներ, որ այդ ոլորտն ընդհանրապես չղեկավարեին ո՛չ կանայք, ո՛չ տղամարդիկ: Մշակույթի նախարարություն չլինելու դեպքում մեր մշակույթը միայն կշահեր:

Կնոջը թիրախ չդարձնենք // Առավոտ, 2003, 7 նոյեմբ.

ՆԵՐՂԻՐ 6. Խտրական մոտեցման օրինակ

Պարզելուց հետո, որ հայ կանայք ծեծում են իրենց ամուսիններին՝ հայկական ընտանիքների 5 տոկոսում, սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանը որոշել էր, որ մենք պետք է մեծացնենք այդ ռեսուրսները: Ասել է, թե՝ պայքարենք, որ հայ կանայք ավելի շատ ծեծեն իրենց ամուսիններին: Փոխարենը, Ահարոն Ադիբեկյանը խիստ ցավազին էր ընդունում բռնությունը կանանց նկատմամբ:

Հիմա էլ հայ կանանց իրավունքները որոշել է պաշտպանել մշակույթի փոխնախարար Ալիս Ադամյանը: Բայց այս անգամ խոսքը ծեծ ու ջարդին չի վերաբերում: Մշակույթի փոխնախարարը որոշել է պայքարել, որ այսուհետ հայ կանայք ավելի շատ պաշտոններ գրավեն, նրանց կարծիքի հետ հաշվի նստեն քաղաքական որոշումներ ընդունելիս և այլն: Տիկին Ադամյանը ցնցվել էր՝ պարզելուց հետո, որ Իրանի խորհրդարանում պատգամավորների 40 տոկոսը կանայք են: ՈՒ հիմա այդ ցուցանիշերը նա ցանկանում է ներմուծել նաև Հայաստան: Իհարկե, բավական դժվար է պատկերացնել, թե ինչպես է տիկին Ադամյանը հասնելու այդ արդյունքներին, և ինչպես են ավանդապաշտ հայ տղամարդիկ հանդուրժելու այդ ոտնձգությունը հայկական աղաթների հանդեպ: Բայց Ալիս Ադամյանն արդեն ուղիղ տասը ծրագիր է ուղարկել կառավարություն: Իսկ դեռ ոչ հեռավոր անցյալում Երևանում շրջում էր հետևյալ հայտնի անեկդոտը. «Почему армянские женщины не носят мини юбки. Потому что они носят макси трусики»: Իհարկե, նրանք արդեն սկսել են կարճ ու սուպեր-կարճ շրջագետներ հագնել, բայց իշխել տղամարդկանց վրա ու քաղաքական որոշումներ կայացնել, հաստատ «չերեզյուր» կլինի հայ տղամարդկանց համար:

Մշակույթի փոխնախարարի որոշումը բավական լուրջ է այն առումով, որ նա որոշել է համագործակցել համաշխարհային կազմակերպությունների հետ ու գրանտներ բերել՝ իր ծրագրերն իրականացնելու համար: Իսկ այս ազդեցության տակ տիկին Ադամյանն ընկել է այն բանից հետո, երբ մասնակցել է Թայլանդի Պիցանուոլկ քաղաքում կայացած կին պետական բարձրաստիճան պաշտոնյաների, քաղաքապետերի և տեղական ինքնակառավարման մարմինների համաշխարհային առաջին գագաթնաժողովին: Երբ գագաթնաժողովի ժամանակ բոլոր կին պաշտոնյաները սկսել են ներկայացնել, թե իրենց երկրներում կանանց քանի տոկոսն է բարձր պաշտոններ զբաղեցնում, իսկ տիկին Ադամյանը ներկայացրել է, որ Հայաստանում կա ընդամենը 5 կին փոխնախարար (այն էլ միայն վերջին շրջանում), Ազգային ժողովում ընդամենը 4 պատգամավոր, մեկ կին գյուղապետ և ոչ մի քաղաքապետ, Հայաստանի

հանդեպ բավական տարօրինակ մթնոլորտ է ձևավորվել: Ամփոփված արդյունքներով, Հայաստանը, բնականաբար, հայտնվել է վերջին տեղում: Ճիշտ է, վերջում Ալիս Ադամյանը կարողացել է մի փոքր չեզոքացնել այդ վերաբերմունքը ու «մեր կանանց վիճակը դարձնել ավելի ընդունելի»՝ ասիացի կանանց տեղեկացնելով, որ հայ կանայք շատ բարձր կրթական ցենզ ունեն, մշակույթի գործիչների 70 տոկոսը կանայք են և այլն, բայց դրանով մեզ չի փրկել անպատվաբեր վերջին տեղից: Տիկին Ադամյանը բավական վատ էր զգացել նաև, երբ պարզել էր, որ Կամբոջայի, Մոնղոլիայի, Պոլինեզիայի, Ինդոնեզիայի, Մալազիայի և ասիական այլ երկրների կանայք չեն իմացել նույնիսկ Հայաստանի տեղն ու, բնականաբար, գաղափար անգամ չեն ունեցել Հայաստանի մասին: Բայց տիկին Ադամյանը նրանց ցույց է տվել Հայաստանի քարտեզն ու Հայաստանի տեղը: Վերջում Հայաստանն ընդգրկվել է ասիացի կանանց ծրագրերի մեջ: Մի քիչ անհարմար զգալով՝ տիկին Ադամյանն ասաց նաև, որ այդ կանայք իրենց երկրներում պայքարում են կառավարությունում պաշտոնների 50-50 հարաբերակցության համար: «Նրանք պահանջում էին զբաղվածության արդարացի բաշխում: Եվ նրանք դրան հասնելու եղանակներ ու ճանապարհներ ունեն», - ասաց Ալիս Ադամյանը: Մնում է, որ մենք ունենանք: Իսկ վերջերս հայ կանայք բավական զվարճացել էին, որ պարսկական թատրոն էր ժամանել Հայաստան, ու չադրաներով Թեննեսի Վիլյամս էին խաղում:

Գագաթնաժողովի վերջում ասիական 24 երկրների պաշտոնյա կանայք դեկլարացիա են ընդունել, որով դիմում են բոլոր պետություններին, որպեսզի կանանց մասնակցությունը քաղաքականության մեջ և այլ պաշտոններում գենդերային հավասարությամբ լինի:

Ի դեպ, մեր մշակույթի փոխնախարարին հաջողվել է հենց Թայլանդում մշակութային մի ծրագիր գրել, որը կիրականացվի 2002 թվականին: Ծրագրվել է կանանց մասնակցությամբ մշակութային փառատոների մի շարք Երևանում, Բանգկոգում, Չինաստանում, Ճապոնիայում, Նյու Յորքում: Իսկ մեր գյումրեցի ու վանաձորցի կանայք այսուհետ հնարավորություն կունենան ինտերնետի միջոցով հաղորդակցվել արտասահմանցի կանանց հետ: «Ես այնտեղ որոշեցի, որ գամ, այստեղ պահանջեմ, թե մեր տարածաշրջանի գումարներն ո՞ր եմ, ներդրումներն ո՞ր եմ, և ինչո՞ւ չենք մենք էլ մասնակցում այդ ծրագրերին: Օրինակ, ինչո՞ւ Հայաստանում էլ չպիտի մի այդպիսի գիտաժողով լինի», - ամփոփեց մշակույթի փոխնախարարը:

Ամենահետաքրքիրն այն է, որ տիկին Ադամյանը գտնում է, թե մեր կառավարությունը պետք է աջակցի այդ ծրագրերին:

Խմբ. կողմից- Որ մեր երկրում բարձրաստիճան կանայք քիչ են, դա մեզնից չէ, այլ կանանցից: Թող կանայք էլ ԱԺ պատգամավորի կամ նախագահի թեկնածու առաջադրվեն ու հաղթեն: Ոչ ոք սրան դեմ չէ, մեր Սահմանադրության համաձայն բոլորը հավասար են: Բայց Ա. Ադամյանի դեղատոմսերը երբեմն հիշեցնում են ԽՍՀՄ-ը, երբ Գերագույն խորհրդի կեսը առաջադեմ կրթությունի- ներով էր համալրվում: Այնպես որ, Իրանի օրինակը մեզ համար դժվար թե ուսանելի լինի:

Բարսեղյան Լ., Հայ կանայք վերջին տեղում են: Թախլանդում էլ խայտառակ եղանք // Հայկական ժամանակ, 2001:

ՆԵՐԳԻՐ 7. Չեզոք մոտեցման օրինակ՝ խտրական ենթատեսուով

Երեկ 150 հասարակականապես ակտիվ կին խորհրդարան էր եկել՝ մինչև խորհրդարանի կողմից ՄԱԿ-ի «Կանանց քաղաքական իրավունքների մասին» կոնվենցիան վավերացնելը կոնվենցիայի կիրարկումն ապահովող օրենսդրական բարեփոխումներ առաջարկելու համար:

Հենց սկզբից Կանանց հանրապետական խորհրդի նախագահ Նորա Հակոբյանը բողոքեց լրատվամիջոցներից, որոնք ծաղրի և հեզմանքի են ենթարկում հասարակականապես ակտիվ կանանց՝ նրանց համարելով պարապ ու անմարդ. «Ո՛չ, մենք ամուսին էլ ունենք, տան հոգս էլ ունենք»,-տեղեկացրեց տիկին Հակոբյանն ու լուրջ ուլտիմատում ներկայացրեց պատգամավորներին՝ եթե պատգամավորներն «Ընտրական օրենսգրքի» 100-րդ հոդվածում, որտեղ նախատեսվում է կուսակցական ցուցակներում 5 տոկոս կին պատգամավորների առկայությունն ապահովել, այդ թիվը չդարձնեն 25 տոկոս, ապա, ինչպես ասաց տիկին Հակոբյանը, «մենք լրջագույն լոբբինգ կտանենք այն կուսակցությունների դեմ, որոնք չեն համաձայնի այդ փոփոխության հետ»: Ի դեպ, տիկին Հակոբյանը և մնացած հռետոր կանայք պահանջեցին, որ կանայք կուսակցական ցուցակներում լինեն ոչ թե վերջին, այլ առաջնային, անցողիկ տեղերում: ՀՅԴ խմբակցության ղեկավար Աղվան Վարդանյանը միանգամից տեղեկացրեց, որ առաջիկա ընտրություններում իրենց ընտրական ցուցակներում իրենք պատրաստ են կանանց քվտաների թիվը հասցնել 25 տոկոսի: Դաշնակցության սույն կնամեծարությունը նիստը վարող Վիկտոր Դալլաքյանը լրջմիտ չհամարեց. «Ես չեմ ուզում, որ այստեղ մենք սկսենք կանանց զգացմունքների վրա խաղալ, թե 25, կամ 100 տոկոս տեղ կտանք նրանց ընտրական ցուցակներում, որ կանայք էլ մտածեն՝ ինչ լավ տղաներ են մնան բա-

ներ առաջարկողները. այս հարցին պետք է մոտենալ ամենայն լրջությամբ»:

Կանանց հասարակական կազմակերպությունները խորհրդարանին ներկայացրեցին նաև սահմանադրական փոփոխության առաջարկ՝ հատուկ հոդվածով ֆիքսել կանանց և տղամարդկանց ազատությունների և իրավունքների հավասարությունը և պայմաններ ստեղծել դրանց կիրառման համար: Չնայած գործող Սահմանադրությունն արդեն իսկ նշում է մարդկանց հավասարությունն առանց սեռային խտրականության, սակայն, ըստ ԿՀԽ-ի նախագահի՝ «Մեր տեսակի երկրում անպայման անհրաժեշտ է ընդունել սահմանադրական հատուկ նորմ, որը կապահովի կանանց իրավունքների պաշտպանության պետական երաշխիքներ»: Տիկին Հակոբյանը նաև պատգամավորներին կոչ արեց. «Տղամարդուն՝ երջանիկ լինելու համար իր կողքին անհատականություն է անհրաժեշտ, ոչ թե ճորտ. այդ հակումներին վերջ տվեք»:

Թերևս, տիկին Հակոբյանի կոչն էր ոգևորողը, որ Վիկտոր Դալլաքյանն առաջարկեց Զրեական նոր օրենսգրքում հոդված ավելացնել, որը կարգելի կանանց առք ու վաճառքը և պոռնկության դրդումը:

Իհարկե, խորհրդարանական լսումներին մասնակցող 150 կանանցից ոչ բոլորն էին հասկանում, թե ինչո՞ւ են եկել և ի՞նչ պիտի ասեն. օրինակ, նրանցից մեկը խորհրդարանին առաջարկեց ընդունել օրենք՝ խոսքի մեկնած տղամարդկանց բերման ենթարկելու մասին, իսկ քննարկմանը ներկա մի քանի տղամարդ պատգամավոր էլ, տեսնելով, որ կանայք երկխոսում են հիմնականում Վիկտոր Դալլաքյանի հետ, խռովեցին ու գնացին. այդուհանդերձ, որոշվեց կանանց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից և պատգամավորներից ստեղծել խմբագրական խորհուրդ՝ կանանց կողմից առաջարկված օրենսդրական և սահմանադրական փոփոխությունները քննարկելու համար:

Չոհրաբյան Ն., Ամուսին էլ ունենք, գրուն էլ: Կանայք պահանջում են 25 տոկոս // Հայկական ժամանակ, 2002:

[Այս օրինակը հետաքրքրական է նրանով, որ սովորական ռեպորտաժով անգամ, որում լրագրողի կարծիք չի արտահայտվում, որոշակի քամահրական հնչերանգի, ներկայացվող քննարկման ընթացքում արտահայտված կարծիքներից ոչ այնքան նպաստավորները կամ ժպիտ շարժողները մեջբերելու հետևանքով ընթերցողի մեջ կարող է բացասական վերբերմունք ձևավորվել տվյալ հիմնախնդրի նկատմամբ]:



ԳԼՈՒԽ V

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՉԼՄ-ՆԵՐՈՒՄ

- 5.1. Գեղերային խտրականությունը և խտրազարումը աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում
- 5.2. Աշխատանքի ոչ ֆորմալ ոլորտը, տնային տնտեսությունը և կրկնակի ծանրաբեռնվածությունը
- 5.3. Սոցիալ-տնտեսական ոլորտի գեղերային հիմնախնդիրների լուսաբանումը մամուլում

5.1. Գեղերային խտրականությունը և խտրազատումը աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում

Տնտեսական ոլորտի գեղերային հիմնախնդիրները: Գործազրկության գեղերային տեսանկյունները: Խտրականությունը աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում: Խտրականության տեսակները: Խտրազարում հասկացությունը: Խտրազարման տեսակները: Ինտեգրացիա: «Ապակե առաստաղ» և «իշխանության գեղերային բուրգ» հասկացությունները:

Նախորդ գլուխներում մենք արդեն ծանոթացել ենք քաղաքականության ոլորտի գեղերային հիմնախնդիրներին և խտրականություն հաս-

կացությանը: Այժմ անդրադառնանք սոցիալ-տնտեսական ոլորտի հիմնախնդիրներին, մասնավորապես «խտրականություն» և «խտրագատում» հասկացություններին, որոնք առավել ցայտուն երևում են աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում:

Սոցիալ-տնտեսական ոլորտի ամենատուր և հասարակությանը հուզող հիմնախնդիրներից է **գործազրկությունը**: Այն մեծ չարիք է դարձել հայ հասարակության համար, որի հետևանքներն են աղքատությունը, միգրացիան, ընտանիքների քայքայումը, կյանքի ցածր որակը և այլն: Այն չարիք է ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար: Սակայն գործազրկության գեղերային վերլուծությունը բացահայտում է հետևյալ պատկերը: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ կանայք կազմում են պաշտոնապես գրանցված գործազուրկների 71,2%-ը: Փաստորեն միևնույն խնդիրը կարող է տարբեր կերպ անդրադառնալ կանանց և տղամարդկանց վրա: Կանանց գործազրկության բարձր տոկոսը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ վերջին շրջանում զարգանում են հատկապես տնտեսության այն ճյուղերը, որոնք ավանդաբար համարվում են «տղամարդկային գործունեության ոլորտներ», օրինակ՝ շինարարությունը, տրանսպորտը, կապը, հանքահանությունը, մետաղամշակությունը և այլն:

Լուրջ հիմնախնդիրներից է նաև **խտրականությունը**, որը կարող է դրսևորվել ամենատարբեր ոլորտներում: Ըստ բնույթի՝ տարբերում են խտրականության մի քանի տեսակներ. ռասայական, ազգային, կրոնական, սոցիալ-դասակարգային, տարիքային և այլն: Խտրականության տարածված ձևերից է սեռի սկզբունքով խտրականությունը, երբ այն կարող է կանանց կամ տղամարդկանց հանդեպ դրսևորվել միայն այն պատճառով, որ նրանք պատկանում են տվյալ սեռին:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածում կանանց նկատմամբ խտրականությունը ձևակերպվում է որպես «*սեռի հատկանիշով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում տրամադրված և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը*»:

Գոյություն ունեն խտրականության մի քանի տեսակներ: Օրինակ՝

նախասիրությունների մակարդակում խտրականության դեպքում գործատուն գիտակցաբար խտրականություն է դրսևորում կանանց կամ տղամարդկանց նկատմամբ: Արտադրողականության մույն բնութագրերն ունեցող աշխատողների նկատմամբ աշխատանքի ընդունման, կրճատման, առաջխաղացման, որակավորման բարձրացման դեպքում տարբեր մոտեցումներ են ցուցաբերվում՝ կախված նրանց սեռային պատկանելությունից: Որքան շատ է գործատուն հակված դրան, այնքան մեծ է նրա դեկավարած հիմնարկում կանանց և տղամարդկանց աշխատավարձի տարբերությունը¹²⁵: Ընդ որում, գործնական փորձը ցույց է տալիս, որ խտրականության այս ձևից հատկապես տուժում են կանայք: Ի դեպ, գործատուն կարող է համոզված լինել, որ կանայք ավելի պարտաճանաչ և լավ աշխատող են, բայց նրանց աշխատավարձն ավելի ցածր սահմանել այն պատճառաբանությամբ, որ կանայք պահանջկոտ չեն:

Խտրականություն կարող է դրսևորվել նաև սպառողի կողմից: Օրինակ՝ սպառողը կարող է ցանկանալ, որ իրեն սպասարկեն գեղեցիկ արտաքինով և երիտասարդ աղջիկներ: Պատահական չէ, որ աշխատանքային թափուր տեղերի համար հաճախ հանդիպում ենք նման հայտարարությունների. «Պահանջվում են մինչև 25 տարեկան բարետես աղջիկներ»: Այս դեպքում սեռի սկզբունքով խտրականությունը գումարվում է տարիքային խտրականությունը: Բարդ իրավիճակ է ստեղծվել հատկապես 50 տարեկանից բարձր կանանց աշխատանքի տեղավորման հարցում, քանի որ նրանք երկարատև գործազրկության հետևանքով կորցրել են որակավորումը և աշխատանքի տեղավորվելու համար ոչ միայն մասնագիտական ուսուցման, այլև հաճախ բարոյական և հոգեբանական աջակցության ու վերականգնման կարիք ունեն:

Խտրականություն կարող է դրսևորվել աշխատողի կողմից. օրինակ՝ երբ տղամարդը հրաժարվում է աշխատել այն հիմնարկում, որի դեկավարը կին է:

Կա նաև վիճակագրական խտրականություն, որի դեպքում գործատուն ընդունվող աշխատողի արտադրողականությունը որոշում է անուղղակի հատկանիշների հիման վրա (կրթության, փորձի, տարիքի, սեռի և այլն): Եթե գործատուն գտնում է, որ կանայք ավելի վատ աշխատողներ

125 Այստեղ խոսքը բնավ բյուջետային հիմնարկների մասին չէ, որտեղ ՀՀ աշխատանքային օրենսդրությունը, որով սեռի սկզբունքով խտրականությունը արգելված է, ավելի խստորեն է պահպանվում: Մասնավոր դրությամբ առավել ճկուն հաստիքային համակարգի շնորհիվ շատ ավելի հեշտ է խուսափել օրենքի պահանջներից:

են, նա աշխատանքի ընդունելիս միշտ առավելություն կտա տղամարդկանց՝ հաշվի չառնելով անհատական հատկանիշները կամ թեկնածուի ընտանեկան դրությունը: Հասարակության մեջ տարածված այն կարծիքը, որ տղամարդու և կնոջ ընդունակությունների տարբերություն կա, նպաստում է վիճակագրական խտրականության գոյատևմանը: Այս դեպքում հատկապես տուժում են ակտիվ վերարտադրողական տարիքի կանայք: Կանանց հետ հիմնականում կարճաժամկետ պայմանագրեր են կնքվում, նրանք զբաղված են ոչ լրիվ աշխատանքային օրով, ավելի հաճախ են տեղավորվում ժամանակավոր աշխատանքի, նրանց առաջին հերթին են ազատում աշխատանքից կամ կրճատում, մեծ մասամբ առանց որոշակի պատճառի:

Գործազրկության բարձր մակարդակը նպաստում է խտրականության տարածմանը: Գործատուները, օգտվելով ստեղծված իրավիճակից, աշխատանքի ընդունվողներին ներկայացնում են մասնագիտական պատրաստվածության մակարդակի չափազանց բարձր, տնտեսապես չարդարացված պահանջներ, ավելի մեծ ուշադրություն է դարձվում մասնագետի ավարտած բուհի վարկանիշին, օտար լեզվի իմացությանը, համակարգչային հմտություններին, տարիքին և նույնիսկ արտաքինին:

Աշխատանքի շուկայում կանանց մրցունակ չլինելու և խտրականության ենթարկվելու պատճառներից են ֆինանսական, վարկային, գույքային ինստիտուտների, սեփականության, հողի ոչ բավարար մատչելիությունը, գործնականում նրանց օտարումը սեփականաշնորհման արդյունքներից, կանանց դուրսմղումը տնտեսության համեմատաբար եկամտաբեր ճյուղերից, սոցիալական և իրավական անպաշտպանությունը և այլն:

Տնտեսագիտության գեներային հիմնախնդիրները հասկանալու համար ծանոթանանք ևս մեկ հասկացության՝ գեներային սեգրեգացիային կամ խտրագատմանը: **Գեներային մասնագիտական խտրագատումը** կանանց և տղամարդկանց խիստ որոշակի մասնագիտություններում, ճյուղերում, պաշտոններում աշխատանքի տեղավորման կայուն միտում է: Մասնագիտական խտրագատումն ունի երկու մակարդակ՝ հորիզոնական և ուղղահայաց: **Հորիզոնական խտրագատումն** արտահայտվում է տնտեսության ճյուղերում և մասնագիտություններում տղամարդկանց և կանանց անհամաչափ բաշխմամբ: Հորիզոնական խտրագատման դեպքում տարբերվում են «կանանց» և «տղամարդկանց» մասնագիտություններ կամ ոլորտներ: Օրինակ՝ կրթության ոլորտում աշխատողների 81,2%-ը, առողջապահության՝ 83,2%-ը կանայք են (և դրանք համարվում են «կանանց»

ուղորտներ), մշակող արդյունաբերության ոլորտում՝ 36,8%-ը, շինարարության՝ 2,6%-ը (համարվում են «տղամարդկանց» ոլորտներ)¹²⁶ և այլն: Սեգրեգացիայի հականիշը **ինտեգրացիան** է, որի դեպքում տվյալ ոլորտում տղամարդկանց և կանանց թվաքանակի հարաբերակցությունը համապատասխանում է բնակչության թվաքանակի մեջ ունեցած հարաբերակցությանը (օրինակ՝ առևտրի և հանրային սննդի ոլորտներում՝ 50-50%): Սակայն սեգրեգացիան ավելի հաճախ է հանդիպում, քան ինտեգրացիան:

Հորիզոնական սեգրեգացիան լինում է.

1. Ճյուղային (սեռերի բաշխումը տնտեսության ճյուղերի միջև): Հայտնի է, որ կանանց ներկայացվածությունը բարձր է տնտեսության այն ճյուղերում, որտեղ աշխատավարձը ցածր է,
2. մասնագիտական (բաշխումն ըստ մասնագիտությունների),
3. միջֆիրմային (սեռերի բաշխումը տարբեր կարգավիճակի և չափի ֆիրմաների միջև),
4. միջուղորտային (սեռերի բաշխումը տնտեսության մասնավոր և պետական ոլորտների միջև):

Ռիդդահայաց խտրագատումը երևում է պաշտոնների հիերարխիայում կամ աստիճանակարգում: Ռիդդահայաց սեգրեգացիայի դեպքում հաճախ օգտագործվում են «**ապակե առաստաղ**» և «**իշխանության գեղերային բուրգ**» արտահայտությունները: Կանանց առաջխաղացմանը խանգարում են որոշ «անտեսանելի» խոչընդոտներ, որոնք էլ կոչվում են «**ապակե առաստաղ**»: Հաճախ տղամարդ գործընկերների համեմատությամբ հավասար կամ նույնիսկ գերազանցող մասնագիտական տվյալներ ունեցող կանայք «կանգ են առնում» մասնագիտական առաջխաղացման որոշակի փուլում, մնում են շարքային կատարողների կամ, լավագույն դեպքում, տեղակալի պաշտոնում: Այդ խոչընդոտները պայմանավորված են գեղերային կարծրատիպերով, ինչպես նաև «հաջողության սարսափով» կամ «ինքնախտրականությանը», որով «տառապում են» շատ կանայք: **Իշխանության գեղերային բուրգը** գեղերային տեսակյունից բնութագրում է տարբեր ոլորտների պաշտոնների հիերարխիան: Ընդ որում, նկատվում է հետևյալ օրինաչափությունը. որքան ավելի ցածր է պաշտոնը, հետևապես և աշխատավարձը, այնքան մեծ է կանանց թիվը: Կանանց թիվը սկսում է նվազել պաշտոնի բարձրացման, ուստի և այդ պաշտոնից ակնկալվող եկամուտների ու ազդեցության ոլորտի մեծացմանը զուգահեռ: Այսպիսով, պաշտոնների

126 Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ.- Եր., 2009, էջ 84:

հիերարխիան ստանում է բուրգի տեսք, որի հիմքում կանայք են, իսկ գազաթում՝ տղամարդիկ: Օրինակ՝ քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոններում կանայք կազմում են 62%, առաջատար պաշտոններում՝ 31%, գլխավոր պաշտոններում՝ 21,3%, բարձրագույն պաշտոններում՝ 8,3%:

Գեներային սեգրեգացիայի առաջացման և պահպանման պատճառները մի քանիսն են: Օրինակ՝ գեներային նախասիրությունների տարբերություններ գործունեության տեսակի ընտրության հարցում, բայց, որպես կանոն, այդ նախասիրությունները պայմանավորված են գեներային սոցիալականացմամբ: Գեներային սոցիալականացման արդյունքում է, որ աղջիկը ընտրում է, ասենք, բանասիրության ոլորտը, տղան՝ ծրագրավորման:

Ընդ որում, ժամանակի ընթացքում կարող է տղամարդկանց և կանանց վերաբաշխում լինել տարբեր մասնագիտություններում, ճյուղերում և այլն: Դրա հիմքում կարող են լինել գաղափարամշակութային, սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական պատճառներ: Օրինակ՝ Հայրենական պատերազմի տարիներին (1941-1945 թթ.) կանայք ներգրավվեցին մինչ այդ «տղամարդկային» համարվող ծանր արդյունաբերության ոլորտում: Կամ՝ 2003թ. բանկային և ապահովագրության ոլորտում զբաղված կանանց տեսակարար կշիռը 1990թ. համեմատությամբ կրճատվեց 2 անգամ¹²⁷: Եթե առաջին դեպքում պատճառը սոցիալ-քաղաքական էր, ապա երկրորդ դեպքում՝ այդ ոլորտում եկամուտների բարձրացումը, այսինքն՝ սոցիալ-տնտեսական:

Շատերը կարծում են, որ գեներային սեգրեգացիայի պատճառը տղամարդկանց և կանանց նախասիրությունների տարբերություններն են, և նպատակահարմար չէ դա վերացնել, քանի որ այդ դեպքում մարդկային ռեսուրսներն ավելի արդյունավետ են օգտագործվում: Գուցեն կարելի էր համաձայնել այդ պնդմանը, եթե աշխատանքային ոլորտի ընտրության հարցում դեր չխաղային գեներային կարծրատիպերն ու սոցիալականացումը, և «կանանց» ու «տղամարդկանց» գործունեության ոլորտներում աշխատավարձի չափերը խիստ չտարբերվեին ի վնաս առաջինների: Այդ տարբերություններն են, որ հնարավորություն են տալիս պնդելու, թե այնուամենայնիվ այդ գատումը խտրական է (այստեղից էլ խտրագատում բառը), և այն պետք է վերացնել կամ կրճատել:

ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքը: ՀՀ «Աշխատանքի վարձատրության մասին» օրենքում (2001 թ.) աշխատավարձի ոլորտում դե յուրե

127 Գեներային իրավիճակը Հայաստանում.- Եր., 2005, էջ 20:

խտրականությունն արգելված է: Սակայն աշխատանքի շուկայում ուղղահայաց և հորիզոնական խտրագատության հետևանքով դե ֆակտո աշխատող կնոջ միջին ամսական աշխատավարձը 2006 թվականին կազմել է տղամարդու աշխատավարձի 56%-ը¹²⁸: Դա չի նշանակում, որ միևնույն աշխատանքի դիմաց կանայք ավելի ցածր աշխատավարձ են ստանում, ոչ, պարզապես նրանք աշխատում են ավելի ցածր վարձատրվող ոլորտներում կամ նույն ոլորտի ավելի ցածր պաշտոններում: Բարձր վարձատրվող ճյուղերում, ինչպիսին է, օրինակ, բանկային գործը, որտեղ աշխատավարձը 3,3 անգամ գերազանցում է ամբողջ տնտեսության միջին ցուցանիշը, կանանց միջին ամսական աշխատավարձը տղամարդկանց աշխատավարձի կեսից էլ ցածր է՝ 47%: Հայաստանում աշխատանքի վարձատրության գենդերային տարբերությունները մի փոքր մեղմվում են կանանց կրթվածության բարձր մակարդակով, որը նպաստում է խզման կրճատմանը:

Պատահական չէ, որ գենդերային խտրագատությունը կախված է նաև սեփականության ձևից: Այսպես, պետական ոլորտում, որտեղ աշխատավարձը ցածր է, ավելի շատ կին է զբաղված, քան տղամարդ:

Խտրագատումը և խտրականությունը սերտորեն շաղկապված են: Խտրագատումը արտացոլում է հասարակության մեջ գերակշռող գենդերային կարծրատիպերը տղամարդկանց և կանանց սոցիալական դերերի մասին, որոնք բացասաբար են ազդում տնտեսության կառուցվածքի վրա, գենդերային անհավասարակշռություն են առաջացնում և ամրապնդում թաքնված խտրականությունը:

Երբեմն խտրագատումն առաջանում է թերի տեղեկատվության հետևանքով, երբ գործատուները աշխատանքի ընդունելիս խտրականություն են դրսևորում կանանց հանդեպ, քանի որ կարծիք կա, թե կանայք ավելի վատ աշխատողներ են, քան տղամարդիկ, կամ, եթե գտնում են, որ տվյալ մասնագիտությունը «տղամարդկային» է: Պետությունը կարող է և կոչված է¹²⁹ ներգործել սեգրեգացիայի կրճատման վրա: Օրինակ՝ հատուկ կրթական ծրագրեր իրականացնելով՝ նպաստել որևէ սեռի համար ոչ ավանդական ճյուղում այդ սեռի ներկայացուցիչներին ներգրավելուն: Դա հնարավորություն կտա փոփոխել կարծրատիպերը և վերանայել կարծիքը տվյալ սեռի հնարավորությունների մասին:

128 Հայաստանի կանայք և տղամարդիկ, վիճակագրական գրքույկ.- Եր., 2006, էջ 82:

129 Տե՛ս Կանանց և տղամարդկանց հավասարության՝ որպես ժողովրդավարության հիմնական չափանիշի մասին հռչակագիրը (Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի նախարարների 4-րդ եվրոպական խորհրդաժողով), կետ Բ՝ «Հավասարությունը տնտեսական և մասնագիտական կյանքում»:

5.2. Աշխատանքի ոչ ֆորմալ ոլորտը, տնային տնտեսությունը և կրկնակի ծանրաբեռնվածությունը

Տնտեսության ոչ ֆորմալ ոլորտի բնութագրումը և ոլորտները՝ տնային տնտեսություն և սրվերային տնտեսություն:

1970-80-ական թթ. «երրորդ աշխարհի» երկրների տնտեսության մեջ, հետագայում նաև հետսոցիալիստական երկրներում ծագեցին հարցեր, որոնց պատասխանը «դասական» տնտեսագիտությունը չէր կարող տալ: Պարզվեց, որ բնակչության զգալի հատվածը գոյատևում է ոչ ֆորմալ տնտեսության շնորհիվ: Տնտեսության այս ոլորտի մեծացման պատճառներից մեկն արագորեն աճող գործազրկությունն էր:

«Ոչ ֆորմալ տնտեսություն» տերմինն առաջին անգամ օգտագործեց Աշխատանքի միջազգային կազմակերպության /ԱՄԿ/ պատվերով հետազոտություններ կատարող Քիթ Հարթը: Ոչ ֆորմալ տնտեսության բնորոշ կողմերն են.

1. ուղղվածությունը գոյատևմանը և ոչ թե կապիտալի կուտակմանը,
2. աշխատանքի անպաշտպանվածությունը,
3. ուղղվածությունը զբաղվածության ապահովմանը, ոչ թե եկամտի մեծացմանը,
4. աշխատանքի մատչելիությունը և տեղական ու ընտանեկան ռեսուրսների օգտագործման հնարավորությունը,
5. ընտանեկան և ոչ թե վարձու աշխատանքը,
6. փոխօգնությունն ու վարկավորումը՝ հիմնված վստահության, բարեկամության, ոչ թե պաշտոնական պայմանագրերի վրա,
7. տնտեսական գործունեության կապն այնպիսի սոցիալական հարաբերությունների հետ, ինչպիսիք են ազգակցությունը, հարևանությունը, նույն էթնիկական ծագումը և ծննդավայրը,
8. չգրանցված ձեռնարկատիրությունը,
9. օրինական, ոչ օրինական, հանցագործ գործունեության ձևերի ինտեգրացիան՝ ուղղված աղքատ շերտերի գոյատևմանը,
10. «աղքատության մշակույթի» շրջանակներում ձևավորված կենցաղը:

Ոչ ֆորմալ տնտեսության մեջ գոյություն ունի երկու ոլորտ.

1. տնային տնտեսություն, որը հիմնված է ավանդույթի, կոոպերացիայի, համերաշխության վրա,

2. ստվերային տնտեսությանը նմանվող մի ոլորտ, որը միավորում է անօրինական տնտեսությունը, այսինքն՝ օրենքով արգելված գործունեության ձևերը (թմրամոլություն, մարմնավաճառություն և այլն), չգրանցված տնտեսության ձևերը (հարկերից խուսափող), չհաշվարկված տնտեսությունը (վիճակագրական հաշվառման խախտումներով):

Տնային տնտեսությունը բնորոշվում է որպես արտադրության մի ոլորտ, որտեղ իրականացվում է ոչ ապրանքային արտադրություն (ինքնաապահովում) և գործունեություն՝ ուղղված ընտանիքի տնօրինած բարիքների գործաձական վիճակի պահպանմանը (վերանորոգում, բնակարանի մաքրում և այլն): Տնային տնտեսությունում է իրականացվում նաև ընտանիքի անդամների կենցաղային սպասարկումը («ֆիզիկական վերարտադրությունը») և վերարտադրողական գործառույթը («մարդկային կյանքի վերարտադրությունը»): Տնային տնտեսության ծավալը և աշխատանքի բնույթը տարբեր երկրներում ու նույնիսկ նույն երկրի տարբեր սոցիալական խավերում տարբեր են:

Փաստորեն տնային արտադրությունը ներառում է գործունեության չվարձատրվող տեսակները, որոնք իրականացնում են տնային տնտեսության անդամները՝ իրենց կարիքները հոգալու համար: Գործունեության այդ տեսակները կարող են փոխարինվել շուկայական ապրանքներով կամ վճարովի ծառայություններով, եթե հանգամանքները (եկամտի չափը, շուկայի պայմանները, անհատական նախասիրությունները) ընձեռում են այդ հնարավորությունը: Օրինակ՝ Հայաստանում կանայք տնային պայմաններում պահածոներ են պատրաստում, որովհետև ընտանիքի համար դա ավելի մատչելի է, բայց ընտանիքի եկամուտների աճի դեպքում այդ պահածոները հնարավոր է գնել: Միևնույն ժամանակ հնարավոր է, որ ընտանիքն ի վիճակի լինի գնելու դրանք, բայց ընտանիքի անդամների նախասիրությունների պատճառով («տան սարքածը միշտ ավելի համեղ է»), միևնույն է, պատրաստվեն տանը:

Տնային աշխատանքի արժեքը հաշվարկվում է ըստ այդ նույն աշխատանքի շուկայական արժեքի: Օրինակ՝ բնակարանի մաքրումը տնային տնտեսուհու կողմից արժե այնքան, որքան որ ընտանիքը կվճարեր այդ աշխատանքի համար վարձված անձին:

Եվս մեկ առանձնահատկություն. տնային աշխատանքն ամբողջ ժամանակը լրացնելու հատկություն ունի:

Տնային աշխատանքը, որը գործունեության ոչ շուկայական տեսակ է (երեխաների խնամք, տնային տնտեսություն) նույնպես եռանդ ու ժամանակ է պահանջում: Քանի որ դրանով հիմնականում զբաղվում են կանայք, նրանք

ստիպված են կան հրաժարվել հասարակական ոլորտում աշխատանքից, կան ընտրել ոչ լրիվ զբաղվածությամբ գրաֆիկ: Վերջինիս դեպքում կինը պետք է ընտրի գործունեության այնպիսի ոլորտ, որտեղ աշխատանքի ընդհատումները լուրջ հետևանքներ չունենան: Սոցիոլոգիական հարցումների տվյալները վկայում են, որ կանանց 26%-ը և տղամարդկանց 16%-ը կրկնակի զբաղվածությունը համարում են կանանց քաղաքական և մասնագիտական կարիերան խոչընդոտող հիմնական գործոնը¹³⁰: Փաստորեն, մի կողմից, շատ դեպքերում կինը իր մասնագիտական առաջընթացը զոհաբերում է ընտանիքին, մյուս կողմից, քանի որ տնային աշխատանքը, ինչպես վերը նշվեց, շուկայական արժեք չի ստեղծում, այնքան էլ չի գնահատվում:

Մինչև վերջին ժամանակներս **կանանց տնային աշխատանքը** քանակական գնահատական չէր ստանում՝ չէր արտացոլվում ազգային վիճակագրական տվյալներում: Մինչդեռ աշխատանքի վրա ծախսվող ժամանակի կառուցվածքի ուսումնասիրությունը շատ կարևոր է զբաղվածության հավասար բաշխման, երկրի տնտեսական և հասարակական կյանքում տղամարդկանց և կանանց ավանդի գնահատման, տնային պարտականությունների և երեխաների խնամքի հետ կապված պարտականությունների հավասար բաշխման հարցում:

Վերջին ժամանակներս որոշ դրական տեղաշարժեր են նկատվում զբաղվածության և տնային աշխատանքի գնահատման գեներային հայեցակետերի ուսումնասիրման գործում: 2005 թ. Ազգային վիճակագրական ծառայությունը Միջազգային զարգացման շվեդական գործակալության ֆինանսական աջակցությամբ իրականացրեց Հայաստանում ժամանակի բյուջեի հետազոտում: Ռեսուրսները ներկայացրեց վարձատրվող և չվարձատրվող (տնային) աշխատանքի վրա տղամարդկանց և կանանց ծախսած ժամանակի մանրամասն պատկերը և բացահայտեց, որ կանայք 5 անգամ ավելի շատ ժամանակ են ծախսում տնային աշխատանքի վրա, քան տղամարդիկ: Տղամարդկանց և կանանց աշխատանքի բաշխման կառուցվածքի տվյալ ուսումնասիրությունը առաջին քայլն էր միջազգային փաստաթղթերի, այդ թվում և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի այն հանձնարարականների իրականացման գործում, որոնք արվել են կանանց և տղամարդկանց աշխատանքային և ընտանեկան պարտականությունների հաշվեկշռված բաշխմանը

130 Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. գեներային հավասարության չափումը / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա.- Եր., 2006:

նպաստելու կապակցությամբ: Փորձագետներն իրենց եզրահանգումներում առանձնացնում են ոչ միայն ժամանակի ընդհանուր բյուջեում կանանց տնային աշխատանքի գնահատման խնդիրը, այլև պետական մակարդակում, մասնավորապես կանանց կենսաթոշակային ապահովման հարցում դրանց հաշվառմանն ուղղված որոշակի միջոցների անհրաժեշտությունը:

Տնտեսության ոչ ֆորմալ ոլորտի երկրորդ տեսակը, որը նմանվում է **ստվերային տնտեսությանը**, գոյություն է ունեցել նաև խորհրդային շրջանում, բայց կողմնակի դեր ուներ, գալիս էր լրացնելու հիմնական զբաղվածությունից ստացվող եկամուտը: Անցումային տնտեսության պայմաններում հաճախ ոչ ֆորմալ ոլորտը ընտանիքի բյուջեի հիմնական աղբյուրն է: Հայաստանում ոչ ֆորմալ ոլորտի աշխատողները մեծ մասամբ նախկին բարձր որակավորում ունեցող կադրերն են և բարձրագույն կրթություն ունեցողները, որոնք քաղաքական և տնտեսական փոխակերպումների հետևանքով զրկվել են իրենց աշխատանքից և նախկին դիրքից: Կանայք ավելի արագ հարմարվեցին ոչ ֆորմալ ոլորտին, որի կարգավիճակն ավելի ցածր է: Հայաստանում ոչ ֆորմալ ոլորտում գերակշռում են առևտուրն ու սպասարկման ծառայությունները (տների մաքրում, երեխաների և ծերերի խնամք և այլն): Անգամ այստեղ է զգացնել տալիս գենդերային սեգրեգացիան: Որպես կանոն, համեմատաբար բարձր եկամտաբերություն ունեցող ոլորտներում (օրինակ՝ բնակարանների վերանորոգում) աշխատում են տղամարդիկ, ցածրում (օրինակ՝ բնակարանների մաքրում)՝ կանայք: Միջին եկամտաբերության ոլորտներում կանանց և տղամարդկանց զբաղվածության աստիճանը գրեթե հավասար է (օրինակ՝ դասուսույցների մասնավոր պարապմունքները): Զրեածին ոլորտները, որոնք բավական եկամտաբեր են, «տղամարդկային» են (օրինակ՝ թմրանյութերի վաճառքը): Կանայք կարող են զբաղեցնել քրեական հիերարխիայի ստորին հարկերը (օրինակ՝ մարմնավաճառությունը): Բացի սեռից, ոչ ֆորմալ ոլորտի մասնակազմությունում (սեգմենտացիայում) կարևոր գործոններ են տարիքը և կրթությունը:

Դժվար է անվերապահորեն գնահատել ոչ ֆորմալ ոլորտի այս տեսակը: Մի կողմից՝ այն գոյատևելու հնարավորություն է տալիս բնակչության այն հատվածին, որի մասին չեն կարողանում հոգ տանել պետությունը և օրինական բիզնեսը, մյուս կողմից՝ այն մշտապես վերարտադրում է հանցագործ և կիսահանցագործ տնտեսական հարաբերություններ, չափազանց ծանր աշխատանքային պայմաններ՝ աշխատանքային օրենսդրության խախտմամբ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց դեպքում:

5.3. Սոցիալ-տնտեսական ոլորտի գեներային հիմնախնդիրների լուսաբանումը մամուլում

Հասարակությանն առավել հուզող սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուսաբանումը ժամանակակից մամուլում, դրանց գեներային վերլուծությունը:

Մամուլի խիստ քաղաքականացման հետևանքով սոցիալ-տնտեսական հիմնահարցերը և դրանց գեներային հայեցակետերը բավական համեստ են ներկայացված: Այդ նյութերը միակողմանի են և սահմանափակ: Ելնելով մամուլի հրապարակումներից՝ կարելի է ասել, որ հասարակությանն ամենից շատ մտահոգում են մարմնավաճառությունն ու թրաֆիկինգը և կանանց դեմ բռնության խնդիրները: Ընդ որում, հասարակությունն ընդունում է, որ գոյություն ունի մարմնավաճառության ու թրաֆիկինգի հիմնախնդիրը, և չափազանց ցավագին է ընդունում այն՝ դրան վերագրելով շատ ավելի մեծ ծավալներ, քան իրականում կա: Մինչդեռ կանանց նկատմամբ բռնության հիմնախնդրի վերհանման փորձերի մեծ մասը վրդովմունքի ալիք է բարձրացնում հասարակության մեջ, քանի որ արմատացած է այն կարծիքը, թե դա բնորոշ չէ հայ իրականությանը, կեղծ, շինծու հիմնախնդիր է և ներմուծված է դրսից:

Մարմնավաճառության և թրաֆիկինգի նկատմամբ մամուլի մեծ հետաքրքրությունը բացատրվում է այն հանգամանքով, որ նախկինում դրանք արգելված թեմաներ էին և, ըստ այդմ, մշտապես բորբոքել են հասարակության հետաքրքրությունը: Բացի դրանից, մարմնավաճառության ներկայիս ծավալները և թրաֆիկինգը նորահայտ երևույթներ են, որոնք վեր են հանում հասարակության մեջ առաջացած սոցիալական խոցերը: Բնական է, որ դա չի կարող չհուզել և ողբերգականորեն չընդունվել հասարակության կողմից: Մամուլում լուսաբանվում է կավատների դեմ հարուցված գործերի յուրաքանչյուր հետաքննություն ու դատավարություն, մանրակրկիտ ներկայացվում է հայտնի դարձած յուրաքանչյուր պատմություն, վիճակագրություն կամ օրենսդրական նախաձեռնություն: Այս ամենն, անշուշտ, չի կարող կանխարգելող ազդեցություն չթողնել և իրազեկելու շնորհիվ որոշ քայլերից հետ չպահել այդ երևույթների հնարավոր զոհերին: Բայց մի կարևոր բացթողում կա, որի վրա չի կարելի ուշադրություն չհրավիրել: Թե՛ թրաֆիկինգի մեղավորները՝ կավատները, թե՛ զոհերը երբեմն մամուլում հիշատակվում են իրենց իսկական անուններով,

որ մարդու իրավունքների կոպիտ խախտում է: Այսպիսով, կանխվում է ոչ միայն նոր դեպքերի հայտնաբերումը, այլև հայտնաբերվածների հետագա ինտեգրումը հասարակության մեջ: Բացահայտված անձինք մերժվում են հասարակության կողմից, որով փակվում է հետագայում բնականոն կյանք վերադառնալու ճանապարհը: Լրագրողի թիրախ պիտի դառնան ոչ թե անհատները, այլ երևույթներն ու դրանք ծնող պատճառները:

Ինչ վերաբերում է կանանց նկատմամբ բռնության թեմային, ապա հիմնականում այն մամուլում երևում է առանձին կազմակերպությունների շնորհիվ, որոնք սոցիոլոգիական հարցում են անցկացնում, դեպքեր հայտնաբերում և իրենց մամուլ ասուլիսներում ներկայացնում հանրությանը: Այդ տեղեկությունները, սակայն, մեծ մասամբ ընթերցողին են փոխանցվում միջնորդավորված, լրագրողի կանխակալ վերաբերմունքով հանդերձ, որ լրագրության տեսանկյունից մերժելի մեթոդ է: Եթե տեղեկություն է տրվում, ապա պետք է ներկայացնել չոր փաստերը, այն, ինչ մատուցվում է մամուլ ասուլիսում կամ նորընձա պարբերականում: Բայց եթե այդ փաստերը տարակուսանք են առաջացնում, ապա լրագրողը պետք է իր սեփական հետաքննությունն անի և սեփական փաստերը ներկայացնի: Լրագրողն իրավունք չունի պահի ազդեցության տակ հարցեր տալ և զգայական, փաստարկներից զուրկ պատասխաններ գտնել (համեմատիր 8-րդ և 9-րդ ներդիրները): Աշխատավայրերում կատարված մի սոցիոլոգիական հետազոտության տվյալներն ընդլվզման ալիք բարձրացրին լրագրողական շրջանում: Անհավատալի էր թվում, որ կանանց մեծ մասի նկատմամբ սեռական ոտնձգություն է կատարվում կամ նման փորձ է արվում: Եվ ահա «Ազգի» թղթակիցը հարկ է համարել իր տպավորություններն ու բացասական վերաբերմունքը հայտնել հետազոտող կազմակերպության տվյալների միասին: Իսկ «Առավոտի» թղթակիցը նախ համապատասխան լրատվություն է զետեղել, այնուհետև որոշել է զնալ այդ տվյալների հետքերով և ծանոթանալ հարցվածների պատասխաններին: Երկրորդ նյութը, որ նվիրված է դրանց, գալիս է ապացուցելու, որ, այնուամենայնիվ, ճիշտ չէ սվիններով ընդունել ներկայացված տվյալները, ավելին, երկրորդ հրապարակումից պարզ է դառնում, թե ինչպես են կանայք փորձում դիմակայել այդ ոտնձգություններին: Ընդ որում, երկրորդ հրապարակման մեջ էլ լրագրողը հարկ չի համարել հայտնել իր նկատառումները, այլ ընդամենը փաստեր է ներկայացրել: Անշուշտ, լրագրողական տեսանկյունից շատ ավելի գրագետ ու շահեկան է երկրորդ մոտեցումը:

Առհասարակ հարկ է հիշել, որ լրագրողի համար անհեռանկար զբաղմունք է այս կամ այն կարծիքն անվերապահորեն ճիշտ կամ սխալ համարելը, այն բացարձականացնելն ու մշտապես դրան հետևելը, առավել ևս սեփական կարծիքն անբեկանելի ճշմարտություն համարելն ու այն ընթերցողին պարտադրելը: Դա կործանարար է լրագրության համար, քանի որ հանգեցնում է միակողմանիության: Լրագրողի առաջին խնդիրը կարծիքների բազմազանությունը ներկայացնելն է: Բայց նա, անշուշտ, չի կարող բացարձակապես չեզոք կամ դիտորդի դերում մնալ և սեփական սկզբունքները չունենալ: Լավագույն ճանապարհն, ուրեմն, ուրիշի կարծիքի հանդեպ հանդուրժող լինելն է և շարունակ սեփական դիրքորոշումն արդարացնող նորանոր փաստեր որոնելը: Այդ առումով դարձյալ կարելի է օրինակ բերել «Առավոտի» փորձը (տե՛ս Ներդիր 10):

Արդի մամուլում առավել արժարժվող թեմաներից են նաև կանանց վերարտադրողական առողջությունը (մասնավանդ, երբ այն առնչվում է ժողովրդագրության հիմնախնդիրներին և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածմանը), ընտանիքի հիմնախնդիրները, հատկապես փաստացի չամուսնալուծված, բայց ամուսինների միգրացիայի պատճառով կիսված ընտանիքները, գյուղի կանանց սոցիալական ծանր կացությունը: Իսկ կանանց աշխատանքի և զբաղվածության հիմնախնդիրները, որոնք, թվում է, առաջին տեղում պիտի լինեին, լրագրողական հետաքննության առարկաների թվում վերջին տեղերից մեկն են բռնում:

Բացի այն, որ, ի տարբերություն կանանց քաղաքական մասնակցության հարցերի, կանանց զբաղվածության և մասնագիտական առաջխաղացման հետ կապված հիմնախնդիրների պարզաբանման համար լրագրողները չափազանց հազվադեպ են գրույցի հրավիրում փորձագետներին, բնավ չեն հանդիպում այնպիսի հրապարակախոսական նյութեր և լրագրողական հետաքննություններ, որոնք վեր հանեն այդ հիմնախնդիրների ողջ սրությունը, բորբոք պահեն հասարակության մտահոգությունը դրանց առնչությամբ և կենդանի, ցայտուն օրինակներ մատուցեն: Վերջին տարիներին նման հազվագյուտ օրինակներ էր տալիս Լուսինե Մարգարյանը «Առավոտ» թերթում (տե՛ս Ներդիր 11), «Ազգում»՝ Արա Մարտիրոսյանը՝ փորձելով սեփական դիտարկումների հիման վրա ներկայացնել կնոջ և տղամարդու մասնագիտական առաջխաղացման խնդիրների տարբերությունները, զբաղվածության և հանգստի կազմակերպման պայմանների ու հնարավորությունների ահռելի անջրպետը, սահմանամերձ գյուղերի կանանց անուրախ առօրյան, վարձվող աշխատողների

տաժանակիր կյանքն ու չնչին վաստակը¹³¹: Երբեմն-երբեմն, իհարկե, մամուլ են սպրդում աշխատանքի ոլորտի խտրազատության որոշակի օրինակներ (տե՛ս Ներդիր 12), սակայն դրանք ավելի շուտ բացառություններ են՝ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների մի մեծ խումբ թողնելով վարագույրի հետևում: Լրագրողները բարեխղճորեն ընթերցողին են հասցնում այն մտահոգությունները, որ հայտնում են հասարակական կազմակերպությունները և համապատասխան մասնագետները, սակայն շատ դեպքերում իրենք իսկ անհաղորդ են մնում՝ չփորձելով խորանալ իրերի դրության մեջ: Ասվածի ցայտուն օրինակ է «ՉԼՄ-ները և գենդերային հավասարությունը» ռեպորտաժը, որի հեղինակը, մասնակցելով «Գենդերային հավասարությունը աշխատանքի ոլորտում. ՉԼՄ-ների դերը» քննարկմանը և վերապատմելով տեսածն ու լսածը, վերջում հայտնում է իր վերաբերմունքն այդ ամենի հանդեպ՝ ցույց տալով, որ ոչինչ չի հասկացել, ավելի շուտ՝ չի փորձել հասկանալ: Ահավասիկ. **«Ի վերջո, գործազրկությունը, ինչի մասին բազմիցս ակնարկվեց, համընդհանուր երևույթ է, և Կոմունիստական գործազրկությունն առավել մեծ ողբերգություն է ոչ միայն սոցիալական, այլև բարոյական փեսակերից: Իսկ դահլիճում հավաքվածների գերակշռող մեծամասնությունը՝ կանայք, արդեն իսկ իրենց ներկայությամբ ու ակտիվությամբ կասկածելի էին դարձնում երկրում գենդերային խնդիրների հրապարակության հարցը: Այնպես չկար մեկը, որ խոստովաներ, թե իր մաշկի վրա է զգացել սեռային խտրականության հեղուկները: Կնշանակի՝ մենք չափազանցում ենք խնդրի կարևորությունը: Այս հարցին թերևս սոցիոլոգները պարասխանեն, եթե, իհարկե, նման վերլուծություններ կատարել են:**

Իսկ հայ կնոջը, կարծում ենք, պարզապես պետք է թույլ տալ ընկերություն կատարել: Ի՞նչն է գերադասում՝ հոգաբար մայր ու սիրող կին լինե՞լը, թե՞ քաղաքական կարիերայի ասպիճաններով դեպի «վեր» բարձրանալը՝ որպես գենդերային հավասարության վառ վկայություն»¹³²: Յուրաքանչյուր լրագրող պետք է գիտակցի, որ եթե խոսքը մարդու իրավունքների մասին է (տվյալ դեպքում մասնագիտական առաջխա-

131 Մարգարյան Լ., Կանայք աշխատում են... Կանայք էլ՝ որոնում // Առավոտ, 2001, 9 մարտի: Նույնի՝ Կանացի գրույցներ // Առավոտ, 1999, ... Մարտիրոսյան Ա., Ստրկական աշխատանք հիշեցնող դաժան շահագործումը զանգվածային երևույթ է Հայաստանում // Ազգ, 2004, 2 հունիսի:

132 Մամվելյան Ա., ՉԼՄ-ները և գենդերային հավասարությունը // Հայաստանի Հանրապետություն, 2005, 9 փետրվ.:

դացման, աշխատանք գտնելու և համարժեք վարձատրություն ստանալու), ապա վիճակագրության մասին խոսք լինել չի կարող, յուրաքանչյուր եզակի դեպք մարդու իրավունքների տեսանկյունից լուրջ հիմնախնդիր է: Ուստի, եթե տվյալ հարցերի մասին խոսում են արտաքուստ մի քանի բարեկեցիկ կանայք, որոնք իրենց մաշկի վրա չեն զգացել բարձրացվող հարցերի ողբերգությունը, դա դեռ չի նշանակում, թե երկրի հարյուրհազարավոր քաղաքացիները նույն վիճակում են: Բավական էր, որ լրագրողն իր տարակուսանքները փարատելու համար այցելեր մեկ-երկու ձեռնարկություն կամ տարածքային զբաղվածության կենտրոն, որպեսզի բարձրացված հիմնահարցերի արժանահավատությունն ապացուցող և հրապարակման արժանի տասնյակ օրինակներ գտներ: Լրագրողը ծուլացել է՝ գերադասելով ընթացք տալ իր տպավորություններին և տրվել հռետորական հարցեր տալու գայթակղությանը: Եթե լրագրողի մեջ հարց է ծագում (տվյալ դեպքում՝ կան արդյոք սոցիոլոգիական ուսումնասիրություններ), ապա հաշվի առնելով, որ նման հարց կարող է առաջանալ նաև ընթերցողի մեջ, պետք է հենց տեղում պարզի այն՝ դիմելով քննարկման բանախոսներին: Բայց համապատասխան գիտելիք ունեցող լրագրողը կարող էր դիմել թեկուզ վիճակագրական տվյալներին, չէ՞ որ Հայաստանում արդեն մի քանի տարի է՝ լույս է տեսնում «Հայաստանի տղամարդիկ և կանայք» վիճակագրական գրքույկը, որի մեջ գետեղված տվյալները, կարելի է ասել, ուղղակի աղաղակում են տվյալ քննարկման ընթացքում բարձրացված հիմնախնդիրների մասին: Պարզապես պետք է կարողանալ «կարդալ» վիճակագրական տվյալները, մի բան, որ անհրաժեշտ հմտություն է յուրաքանչյուր լրագրողի համար:

Սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների անբավարար լուսաբանումը, թերևս, արդի մամուլի ամենալուրջ թերացումն է, դրանց գեներային տեսանկյունը՝ առավել ևս:

Հարցեր բանավեճի համար

1. Մամուլի նյութերի վերլուծության հիման վրա քննարկել գեներային խտրականությունը և խտրազատումը աշխատանքի շուկայում:
2. Սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին նվիրված հաղորդումներ նախապատրաստելիս ո՞ր գեներային հիմնախնդիրներին արժե ուշադրություն դարձնել:

Վարժանք. «Մասնագիտական առաջխաղացման գեներային տեսանկյունները»:

Վարժանք. «Կանանց և տղամարդկանց մասնագիտական կողմնորոշումը»:

Ինտերակտիվ պարապմունք. «Աշխատաշուկայի գենդերային տեսանկյունները»

Ինտերակտիվ պարապմունք. Կնոջ տնային աշխատանքի «արժեքի» հաշվարկում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաբայան Ս., Գենդերը և խտրականությունը: Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2002.-136 էջ:
2. Գենդերային իրավիճակը Հայաստանում / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա.- Եր., 2005:
3. Ժամանակակից հասարակության գենդերային դիմամիկան: Հայաստանի կանայք XXI դարում: Խորհրդաժողովի նյութեր / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2000.- 304 էջ:
4. Կանայք և զարգացումը. իրավունքներ և հնարավորություններ: Երկրորդ միջազգային խորհրդաժողովի նյութեր / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա.- Եր., 1997.- 86 էջ:
5. Կանայք և մամուլը: 1998-2001թթ. Հայաստանում հրատարակված հոդվածների հավաքածու / Կանանց հանրապետական խորհուրդ.- Եր., ա.թ., 84 էջ:
6. Կանայք զարգացման մեջ: Ժամանակակից հասարակության գենդերային հիմնահարցեր: (Ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքների) / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 1999.- 307 էջ:
7. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2002-2007 թթ.: Այլընտրանքային զեկույց / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2007.- 74 էջ:
8. Կինը և հասարակությունը: Գենդերային իրավահավասարությունը ժողովրդավարության զարգացման հեռանկարում: Երրորդ միջազգային

- խորհրդաժողովի նյութեր / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա.- Եր., 1999.- 375 էջ:
9. Կյուրեղյան Ա., Գենդեր և տնտեսություն: Իրավական հայեցակետեր: Հատուկ դասընթաց / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2002.-102 էջ:
 10. Հայաստանի Հանրապետությունում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն, Հայաստանի հասարակական կազմակերպությունների «Հանուն խաղաղության» կոալիցիա.- Եր., 2006.- 237 էջ:
 11. Հովհաննիսյան Գ., Գենդերը և տնտեսագիտությունը: Ուսումնական ձեռնարկ / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն.- Եր., 2004.- 200 էջ:
 12. Փոխակերպվող հասարակության կանանց հիմնախնդիրները և իրավունքները. իրականություն և հեռանկարներ: Առաջին միջազգային խորհրդաժողովի նյութեր / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա.- Եր., 1997.- 204 էջ:
 13. Баскакова М., Равные возможности и гендерные стереотипы на рынке труда. Проект гендерная экспертиза / МЦГИ.- М.,1998.
 14. Гендерная политика и масмедия.- Тбилиси, 2002.- 48 с.
 15. Женщины на рынке труда в зеркале СМИ (Сборник материалов и выступлений).- М.,2002.- 83 с.
 16. Женщины: Свобода слова и свобода творчества. Сборник статей / Сост.: С.В. Василенко.- М.: Эслан, 2001.- 200 с.
 17. Здравомыслова О., Кигаи Н., Женская тема в средствах массовой информации / Ассоциация журналисток.- М., 2002.
 18. Кавказия / Международная коалиция гендерных журналистов, №1,2,3,4,5,6
 19. Кривое зеркало СМИ (мониторинг газет «Айастанի Анрапетутյոն» и «Айкакан жаманак») // Женское мнение в СМИ (мониторинг национальных газет) / «ГендерМедиаКавказ».- Тбилиси, 2005.
 20. Неоконченная повесть: женщины в средствах массовой информации. Гендерный анализ трудовых ресурсов .Сборник.- М.,1997.- 116 с.

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՆԵՐԳԻՐ 8

Մի օր աչքներս բացեցինք ու տեղեկացանք, որ ապրում ենք 3-րդ աշխարհի՝ զարգացող երկրում: Արդեն զարգացած երկրներն էլ ունևոր առաջադեմի դիրքից մատ թափ տվեցին ու հասկացրին, որ եթե չենք ուզում մեկուսացած ապրել և անգամ մեր իսկ յուրում տապակվելու հնարը չունենալ, ապա պետք է ձգտենք համապատասխանել միջազգային՝ եվրոպական չափանիշներին: Մեր ձգտումը տեսնելով՝ արդեն ժպտադեմ հայտնեցին օգնելու իրենց պատրաստակամությունը, և երկուստեք լծվեցինք գործի: «Միջազգայնացման» այս ընթացքում Հայաստան ներմուծվեցին նոր հասկացություններ, հներին տրվեցին նոր անվանումներ և եղած ու չեղած արատների անընդհատ բարձրաձայնումներով սկսեցին փորձեր արվել դրանք հասարակության մտածողությունում ամրապնդելու: Եվ դրանցից մեկը՝ գենդերային կոչված երևույթն ամրապնդվեց, թե՛ ոչ, հայտնի չէ, բայց որ հայտնի դարձավ մեր հասարակությանը և ընկալվեց իմաստը՝ հաստատ է: Դե քանի որ խնդիրը կա, դրանցով զբաղվող կազմակերպություններ էլ ստեղծվեցին և գործում են բավականին ջանադիր:

Եվ այսպես, համադրելով «Կանանց ֆորում» ՀԿ-ի «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոնի կողմից և «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության ու ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության միջոցներով կատարված սոցիոլոգիական հարցման արդյունքները, կարելի է եզրահանգել, որ կանանց հանդեպ սեռական ոտնձգությունները խոչընդոտում են ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, քանի որ, ըստ հարցման արդյունքների, սեռական ոտնձգությունները կատարվում են աշխատանքի ընդունվելիս կամ ընթացքում: Իսկ գոհ են դառնում 31-40 տարեկան բարձրագույն կրթությամբ, բարեկեցության որոշակի մակարդակ ունեցող կանայք՝ անկախ ամուսնական վիճակից:

Համաձայն հարցման հեղինակների ձևակերպման, մինչամուսնական տարիքի կանայք սեռական ոտնձգության անհաջող փորձերի օբյեկտ են: Հետաքրքիր է, ի՞նչ է ենթադրվում սեռական ոտնձգություն ասելիս և ո՞րն է հայաստանաբնակ կնոջ մինչամուսնական տարիքը: Եթե հիմք ընդունենք օրենքով սահմանվածը, ապա Հայաստանում ամուսնական տարիքը համարվում է 17 տարեկանը: Այստեղից պետք է ենթադրել, որ մինչամուսնականը սկսվում է, ասենք, 15 տարեկանից: Հիմա պատկերացնենք ոչ հիվանդ հոգեբանության

տեր հայ տղամարդու, որը պատրաստ է սեռական ոտնձգության ենթարկել մինչամուսնական տարիքում գտնվող կնոջը: Եվ փորձենք նաև մոտավոր հաշվել նրանց հնարավոր քանակը: Անկեղծ ասած՝ ինքս ուղղակի չեմ պատկերացնում ոչ այդ տղամարդուն, ոչ էլ, առավել ևս, նրանց շատ լինելը:

Նույն հարցման արդյունքով պարզվել է, որ ոչ պակաս վտանգված են նաև ուսանողուհիները, որոնք նույնպես սեռական ոտնձգության քիչ անհաջող փորձերի չեն արժանանում: Ասենք, որ Երևանի 10 համայնքներում ու հանրապետության 4 մարզերում հարցվել են 500 կին և 100 տղամարդ: Պարզվել է, որ հարցվածների 63 և 64 տոկոսը ենթարկվել է սեռական ոտնձգության: Ըստ այդ տվյալների, Հայաստանի յուրաքանչյուր 600 բնակչից 384-ը ենթարկվում է սեռական ոտնձգության: Ստացվում է, որ հարցվածները, բաժանված 2 խմբի, զբաղված են ոտնձգելով և ոտնձգվելով: Հարցման մյուս տվյալների համաձայն, կանանց 78 տոկոսն իրեն համարում է ճնշված, ոտնահարված ու բռնության ենթարկված: Հնարավոր է պարզել, այդ կարգավիճակում չգտնվելու համար կինն անելիք ունի՞, թե՞ ոչ: Նշված հարցումը դա չի պարզել, բայց պարզել է, որ կանանց 2/3-ը, իսկ տղամարդկանց 1/10-ն է հավատում սեռական ոտնձգությունների դեմ արդյունավետ պայքարի հնարավորությանը: Եվ որպես հարցման եզրակացություն՝ հեղինակներն այս տվյալների հիման վրա փոփոխման ենթակա են համարում տղամարդկանց մտածողությունը և ընդգծում, որ նրանք որոշումներ են ընդունում հասարակության բոլոր մակարդակներում: Ենթադրության տողատակում ընկալեցինք հետևյալը՝ որ կանայք պետք է ծանրակշիռ դեր ստանձնեն իշխանության մարմիններում: Ահա թե Հայաստանում ուր հասան սեռական ոտնձգությունների չափը, «տեղն ու դերը» ուսումնասիրելիս: Բայց, ի վերջո, առանց այս ամենի էլ արդեն երկրում փթթում է գեներային քաղաքականությունը, տրոփում կնոջ լիակատար ազատության գաղափարը, դրանք ամրապնդելու կոչված շքեղ ձեռնարկների տարածումը: Հնարավոր է՝ մի օր էլ արթնանանք ու տեսնենք, որ փորձում են մեր մտածողության մեջ ամրապնդել կնոջ առաջնայնության գաղափարը: Կարիք կա՞ հիշեցնելու, որ հակառակն ավանդվում է Արարչի կողմից: Եվ վերջին հարցը՝ գուցե միջազգայնացման այս ընթացքում չփորձենք սեփականել նաև «միջազգային» արատները:

Հ.Գ. Ներկայացրինք՝ գերծ մնալով բացառման գաղափարից:

Պեպրոսյան Ն., Հիմքերը քանդելու փո՞րձ, թե՞ արդարացի սոցիոլոգիական հարցում // Ազգ, 2004:

ՆԵՐՂԻՐ 9

Սեռական ոտնձգությունների զոհերը սովորաբար չեն դիմում իրավապահներին: Անցած շաբաթավերջին «Կանանց ֆորում» հասարակական կազմակերպությունը և «Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոնը հրապարակեցին «Աշխատավայրերում կանանց նկատմամբ սեքսուալ ոտնձգությունները» հետազոտության արդյունքները («Առավոտ», 30 հունվարի): Պարզելու համար, թե ինչպես են հայ կանայք հակազդում սեռական հետապնդումներին, դիմեցինք «Սոցիոմետրին»՝ հետազոտության հարցաթերթիկներին ծանոթանալու խնդրանքով:

Ոտնձգությունների նկատմամբ կանանց վերաբերմունքը արտացոլվում է «ինչպե՞ս եք վարվել սեքսուալ ոտնձգության դեպքում» հարցի պատասխանով: Պատասխանը կախված է այս կամ այն խմբին պատկանելությունից: Օրինակ, առանձին թեմա են ամուսնալուծված կանայք: Ըստ հարցաթերթիկների, գրեթե բոլոր ամուսնալուծված կանայք ոտնձգությունների թիրախ են դառնում: Վերջիններիս վերաբերմունքը տարբեր է. մեկը հետապնդողին բացատրել է, որ «բաժանված չի նշանակում անբարոյական», մյուսը՝ «ով չի հետաքրքրել՝ մերժել եմ», երրորդն էլ՝ «նայած ժամանակ, նայած ով» ձևով է վերաբերվում սեքսուալ ոտնձգություններին:

Կարելի է առանձնացնել մաս կրթական համակարգը: Մի աղջկա դասախոսն է հրավիրել տուն՝ «պարապելու նպատակով, բայց իրականում այլ ծրագրեր ուներ: Ես մերժեցի, թեև տեսա, որ սիրահարված է»: Մեկ ուրիշ ուսանողուհի դասախոսին մերժելուց հետո նկատել է, որ վերջինս ուրիշ ուսանողուհու է հետապնդում: Երրորդն էլ՝ «ձայնս գլուխս եմ զցել, փորձը ձախողվել է և եղ մարդը հիմա բանտում է»: «Ինքը բիճա դասատու էր մեր դպրոցում, մերժեցի, հետո էլ իրան գործից հանեցին»,- տեղեկացրել է մի աշակերտուհի: Սա արդեն լուրջ մտահոգության առիթ է: Երևույթի լրջությունը չթերագնահատելով հանդերձ, արձանագրենք, որ հարցված կանանց որոշ պատասխաններ երկիմաստ ու մասն կավեշտական են: Եվ այսպես. «Դուք կամ ձեր ծանոթը ինչպե՞ս է վարվել սեքսուալ ոտնձգության դեպքում»: Պատասխաններ՝ «անհարմար վիճակի մեջ եմ զցել», «ասեն ինչ բարեհաջող անցավ», «հիասթափվել եմ», «շատ խիստ վիրավորվել եմ», «զգացնել տվեցի, որ իրենց համար չեմ», «ոմանց հարցերը ես եմ լուծել, ոմանց էլ՝ ում պետք է, դիմել եմ», «ով ոնց կարա, թող տակից դուրս գա», «ասել եմ, որ ես եմ որոշում իմ անելիքը»:

Բոլոր այն կանայք, ովքեր հարցը լուծել են «գեղական կարգով» (ամուս-

նու կամ ծանոթի միջոցով, ֆիզիկական ուժով), իրենց արարքը նույն կերպ են ձևակերպել. «Գլուխը ջարդել եմ տվել»: Սեքսուալ ոտնձգությանը խիստ յուրօրինակ է պատասխանել միջին տարիքի մի կին «սպառնացել եմ, որ կպատմեն կնոջը»: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, հարցման է ենթարկվել 500 կին, որից 350-ը սեքսուալ ոտնձգության ենթարկվել է: Սակայն միայն 8 հոգի է դիմել իրավապահներին: Սա թերևս իրավապահների նկատմամբ վստահության պակասի դրսևորում է, առավել ևս, եթե հաշվի առնենք հարցվածներից մեկի պատասխանը. «Ոտնձգությունից հետո լռել եմ, հետո դիմել օրենքի ներկայացուցչին: Վերջինս ինքն էլ է սկսել հետապնդել»:

Չաքարյան Ա., Ինչպես են հայ կանայք մերժում սիրահետողներին // Առավոտ, 2004, 4 փետրվ.

ՆԵՐԳԻՐ 10

Մինչև 1985 թվականը մենք անընդհատ լսում էինք՝ «միակ ճիշտ ուսմունքը» արտահայտությունը, որը վերաբերում էր այն ժամանակվա պաշտոնական գաղափարախոսությանը: 85-ից հետո ի հայտ եկավ «այլուրալիզմ» հասկացությունը, որը շատ արագ մարեց և իր տեղը կրկին զիջեց «միակ ճշտին»: Այս անգամ այդ միակ ճիշտը «ազգայինն է»: Մարդիկ կան, որոնք մեզ ասում են. «Մենք գիտենք, թե որոնք են ազգային շահերը, իսկ նրանք, ովքեր չեն կիսում մեր հայացքները, ում դուր չեն գալիս մեր ազգաշահ ձեռնարկները՝ նրանք թուրք են, թշնամի են և դավաճան: Գուցե նաև՝ լրտես»: Այսինքն՝ ի սկզբանե բացառվում է այն տարբերակը, որ կարող են լինել մարդկանց տարբեր խմբեր, որոնցից յուրաքանչյուրն իր ձևով է պատկերացնում ազգային խնդիրները և դրանց լուծման ճանապարհները:

Խոսքը, ինչպես հեշտությամբ կռահեցիք, Մարտի 8-ի մասին է: Ավելի ճիշտ՝ կանանց իրավունքների մասին: Հիշո՞ւմ եք, մի քանի տարի առաջ, երբ գործում էր «Ընտանիքի պլանավորում» ծրագիրը, այն որքան ընդդիմախոսներ ուներ: Ասում էին, թե այդ ամբողջ ծրագիրը անբարոյականություն է, դրսից է ներմուծված, ուղղված է մեր գեներոֆոնդի դեմ և հարիր չէ մեր ազգին: Հավանաբար, այդ մարդիկ կարծում են, որ մեր ազգին ավելի հարիր է ամիսը մի անգամ արթոտ անելը, քան իմանալը, թե ինչպես պաշտպանվել անցանկալի հղիությունից: Գործնականում այդ «բարոյական խրատները» հենց դա էին նշանակում:

Մեր թերթում ժամանակ առ ժամանակ տպագրվում են սահմուկեցուցիչ

պատմություններ կանանց դեմ բռնությունների մասին: Օրինակ՝ թե ինչպես է սկեսուրը, խանդելով իր տղային («ես իմ ձեռով մեծացնեմ իմ բալին ու տամ էս լրբի՞ն»), ստիպում հարսին վիժել: Արդեն առիթ եմ ունեցել գրելու, որ կանանց դեմ բռնությունների «հեղինակները» հիմնականում կա՛մ անմիջապես կանայք են, կա՛մ էլ միջնորդավորված՝ իրենց տղաներին սխալ դաստիարակություն տված մայրերը: Էլ չեմ խոսում մեկ այլ զարհուրելի դեպքի մասին, երբ մի փոխգնդապետ (մեր հայ սպան, ոչ թե Ռամիլ Սաֆարովը) կացնահարել է իր կնոջը, երբ վերջինս քնած էր: Նա էլ էր, հավանաբար, առաջնորդվում «միակ ճշտի» կանխավարկածով:

Իրականում մարդկանց (այդ թվում՝ կանանց) իրավունքների խնդրի լուծման դեղատոմսը շատ պարզ է՝ մարդկանց պետք է տալ ընտրության հնարավորություն՝ չփաթաթելով նրանց վզին սեփական «միակ ճիշտը»: Դ-ո՞ւր է գալիս կնոջը «կարմիր խնձորի» աղաթը՝ պետք չէ նրան ծաղրել, ընդհակառակը՝ հարկավոր է հարգանքով վերաբերվել նրա համոզմունքներին: Բայց եթե կինը մերժում է այդ ավանդույթը, պետք չէ նրան անբարոյական հանել: ՌԻգո՞ւմ է կինը նվիրվել միայն ընտանիքին, ոչ ոք իրավունք չունի նրան «հետամնաց» համարել: ՌԻգո՞ւմ է համատեղել ընտանիքն ու աշխատանքը, պետք է ստեղծել նրա համար այդ հնարավորությունը: Չի՞ ուզում ընդհանրապես ընտանիք ունենալ՝ դա էլ է նրա իրավունքը և ամենևին դատապարտելի չէ: Չկա ոչ մի գերագույն ատյան, որը կորոշի, թե սա «հարիր է մեր ազգին», իսկ սա «հարիր չէ»: Չկա «միակ ճիշտը»:

Աբրահամյան Ա., «Միակ ճիշտը» // Առավոտ, 2006, 8 մարտի:

ՆԵՐՂԻՐ 11

Եդեմական այգուց տղամարդն ու կինը դուրս եկան լրիվ հավասար պայմաններում՝ մորեմերկ, սակայն կյանքը մեզ դարձրեց այնպիսին, ինչպիսին կանք: Հիմա ամբողջ աշխարհում (ու հատկապես՝ Հայաստանում) թվում է, թե տղամարդը հասել է ամեն ինչի, կինը՝ գրեթե ոչնչի: Չեմ կարծում, թե այս հարցի շուրջ տղամարդիկ երբևէ մտածել են, բայց համաձայնեք, որ հենց տղամարդիկ են կանանց ուղարկել խոհանոց՝ բացարձակ ցանկություն չունենալով իրավիճակը պատկերել ֆեմինիստի (մանավանդ որ, հաստատ ֆեմինիստ չեմ) տեսանկյունից, պարզապես ներկայացնեմ, թե կարիերայի մեկնարկային պահից ինչպիսի հնարավորություններ են ունենում կինն ու տղամարդը և, ի վերջո, ինչի է հասնում նրանցից յուրաքանչյուրը: Կինն ու

տղամարդը միասին կյանք են մտնում միևնույն դիպլոմներով, երկուսն էլ էներգիայով ու էնտուզիազմով լի: Մեկնարկի պահին տղամարդն ու կինը գործնականում հավասար են: 2-3 տարի հետո տղամարդն արդեն բավականին առաջ է անցնում կնոջից: Աշխատանքի ընդունելիս ղեկավարները թերևս և՛ կնոջը, և՛ տղամարդուն ուղղում են միևնույն «ամուսնացած եք» հարցը: Սակայն եթե տղամարդու դրական պատասխանը նոր դռներ է բացում իր կարիերայի համար, ապա կնոջ ամուսնացած լինելու հանգամանքն ավելի շատ խանգարում է նրա առաջընթացին: Նման մոտեցումը շատ պարզ բացատրություն ունի. յուրաքանչյուր ղեկավար լավ գիտակցում է, որ ամուսնացած կինը, որքան էլ իբրև մասնագետ բարձր որակ ապահովի, միևնույն է, հենց կնոջ ուսերին են ծառայած ընտանիքի հոգսերը, ու ամուսնացած կինը չի կարող օր ու գիշեր նվիրվել աշխատանքին: Ծիշտ հակառակ տրամաբանությունն է գործում ամուսնացած տղամարդու դեպքում: Եթե նույնիսկ մասնագիտական գիտելիքներով ամուսնացած տղամարդը զիջում է ամուսնացած կնոջը, միևնույն է՝ աշխատանքը նա է ստանում: Ամուսնացած տղամարդը երկու առավելություն ունի՝ նախ, արդեն սեփական կին ունի և չամուսնացածների մման այդքան չի վազում կանանց հետևից: Երկրորդ՝ սեփական կինը հոգում է ընտանիքի ողջ հոգսերը և ամուսնացած տղամարդն ազատ է ինչպես թռչունը՝ հաջող կարիերա անելու և աշխատավայրում անվերջ գտնվելու համար: Համոզվելու համար բերեն հենց մեր հարազատ կառավարության օրինակը. նախորդ կառավարությունը որքան էլ երիտասարդ՝ միևնույն է, 95 տոկոսով ամուսնացած էր. միակ ամուրին, իհարկե, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանն էր: Ի տարբերություն նախորդի, այս կառավարությունում հիմա արդեն վարչապետի կողքին հայտնվեց ևս մեկ ամուրի: Թվում է, թե վերը նշած սկզբունքը խախտվում է, բայց ուշադրություն դարձրեք, որ իր վերջին հարցազրույցներից մեկում Վազգեն Սարգսյանը հայտարարեց, թե վարչապետի պաշտոնն ավելի է պարտավորեցնում, որպեսզի ինքը արագացնի ամուսնության գործընթացը (իսկ պաշտպանության նախարարը գուցե իսկապես պետք է զենքի հետ ամուսնացած լինի): Չգիտեմ, ամուսնացածներին առաջնություն տալու սկզբունքից ելնելով, թե՞ մասնագիտական պրոֆեսիոնալիզմը չապահովելու համար ամուրի վարչապետը տառացիորեն չորս օր առաջ պաշտոնից հեռացրեց ևս մի ամուրիի՝ պետության գլխավոր գանձապետ Արամ Դարիբյանին: Իմիջիայրոց, ասում են, թե հենց այս ամուրիի ամուսնության հարցով բավականին մտահոգված են եղել նախորդ կառավարության որոշ անդամներ: Ինչևէ, թեման շարունակելով ասեն, որ թե-

պետ ամուրի լինելու դեպքում առաջնությունը տրվում է կնոջը, այդուհանդերձ, դեկավարները նախընտրում են «բանակցությունները» վարել տղամարդու լեզվով: Սա է հիմնական բացատրությունն այն «գաղտնիքի», որ խիստ հավասար պայմանների դեպքում անգամ, տղամարդը առավել արագ և հաջող կարիերա է անում: Սովորաբար, տղամարդիկ ընտրում են արագընթաց վերելքը. նրանք դեպի իրենց նպատակ են գնում ուղիղ գծով՝ ճանապարհին չնկատելով ոչինչ ու ոչ ոքի: Կանայք ևս տղամարդկանց նման իրենց նպատակը շատ լավ են տեսնում, սակայն, ի տարբերություն տղամարդկանց, կանայք նպատակը տանող ճանապարհին բազմաթիվ խոչընդոտներ են տեսնում: Բացի այդ, կանայք ստիպված են հաղթահարել երկու մրցակցություն՝ եթե տղամարդիկ կանանց մրցակից չեն համարում, ապա կանայք ստիպված են հաղթահարել մրցակցությունը և՛ կանանց, և՛ տղամարդկանց շրջանում: Այս կրկնակի մրցակցությունը, բնականաբար, ավելորդ լարված ու նյարդային իրավիճակ է առաջացնում: Սակայն հենց այս կրկնակի մրցակցությունն էլ կարող է կանանց համար առավելություն դառնալ: Որոշակի իրավիճակներում, երբ տղամարդիկ դեռ իրար հետ հարբերություններ են պարզում՝ կինը օգտագործելով «տղամարդու զենքը», տոնում է հաղթանակը: Սակայն, եթե կինը որոշի գնալ ավելի բարձր պաշտոնների, պետք է տիրապետի տղամարդու բազմաթիվ հնարքներին: Հայտնագործություն արած չեմ լինի, եթե ասեմ, որ աշխատանքում, կարիերայում հաջողած կանայք, որպես կանոն, կամ ամուսնացած չեն, կամ ամուսնալուծված են: Բնականաբար, կինը ֆիզիկապես չի կարող հավասարաչափ տրվել և ընտանիքին, և աշխատանքին: Դրանցից որևէ մեկին նախապատվություն տալու դեպքում անպայման տուժում է մյուսը: Այս խնդիրը երբեք որևէ տղամարդու առջև չի ծառանում: Նա կարող է և չափազանց կարիերա անել, և ունենալ երջանիկ ընտանիք, չե՞ որ վերջինիս ապահովումը կնոջ ուսերի վրա է: Այսքանով հանդերձ, գոնե մեր պետությունում, չամուսնացած և մասնագիտական բարձր պրոֆեսիոնալիզմով կնոջը դեռևս չի հաջողվում հասնել ամենաբարձր պաշտոնների: Հերթական կառավարությունը ձևավորվեց՝ դարձյալ տեղ չհատկացնելով որևէ կնոջ: Ազգային ժողովի ընտրությունների պատկերը հաղթահարեց ընդամենը չորս կին: Սա այն դեպքում, երբ ուսանողական մատարանից սկսած (նույնիսկ՝ աշակերտական) մինչև աշխատանքի միջին օղակները, ամենաակտիվը կանայք են: Այդ վերին օղակին հասնելուն ինչն է խոչընդոտում կանանց. կորցնում են մասնագիտական պրոֆեսիոնալիզմը, նախընտրում են մնալ ընտանիքին նվիրված տնտեսուհիներ, թե՞ իսկապես տղամարդիկ թույլ չեն տալիս

հասնել վերևին՝ պարզ չէ: Գուցե կա այս հարցի չորրորդ, հինգերորդ... տարբերակը, մի բան ակնհայտ է, որ ամենաբարձր պաշտոնի հասած մեր կանայք առանձնապես հաջողությունների չեն հասել՝ հասարակության համար:

Մարգարյան Լ., Կին և տղամարդ // Առավոտ, 1999:

ՆԵՐՊԻՐ 12

Երբ կանանց էմանսիպացիային, ֆեմինիզմին և գեներին վերաբերող միջոցառումներին ներկա լինելով՝ լսում էի, որ հանրապետությունում շատ են տարածված այն դեպքերը, երբ կնոջը թույլ չեն տալիս աշխատել այս կամ այն պաշտոնում միայն նրա համար, որ նա կին է, պարզապես չափազանցություն էի համարում:

Բայց ահա խմբագրություն այցելած կանայք պնդում են, որ իրենք հեռացվել են աշխատանքից, որովհետև համարձակություն են ունեցել լույս աշխարհ գալ որպես իզական սեռի ներկայացուցիչ: Շուրջ 20-25 տարվա աշխատանքային փորձ ունեն միլիցիայի կապիտան Ջուլիետա Գևորգյանը (այժմ սովորում է Մոսկվայի իրավաբանական ինստիտուտում), միլիցիայի ավագ լեյտենանտ Սվետլանա Վարդանյանը (ավարտել է Մագիլյովի միլիցիայի տրանսպորտային դպրոցը), միլիցիայի մայոր Հասմիկ Մարտիրոսյանը: Այդ տարիների ընթացքում աշխատելով ՆԳ և ԱԱ նախարարության տրանսպորտային վարչության «Էրեբունի» օդանավակայանում որպես զննման գոտու ավագ տեսուչներ: Սակայն 3-4 ամիս է, ինչ եկել է վարչության նոր պետը, և անցկացվում է ատեստավորում, ինչը հաջողությամբ անցնում են կանայք, բայց, չզիտես ինչու, առաջին ատեստավորմանը հաջորդում է երկրորդը, որից հետո հայտնվում է, թե նշված անձինք չպետք է աշխատեն տրանսպորտային վարչությունում: Եվ սեպտեմբերի 1-ից կին տեսուչները չեն աշխատում, սակայն չկա նաև աշխատանքից հեռացման հրաման: Հեռացման համար էլ, ինչպես նշում են նրանք, իրական պատճառ էլ չկա: Իսկ այս ամենի հիմքում, ըստ նրանց, իրենց փոխարեն ծանոթ-բարեկամներին աշխատանքի ընդունելն է: Եվ ինչպես նշեցին հարկադիր պարապորդի մեջ գտնվող կանայք, վարչությունից հեռացվում են պրոֆեսիոնալները, նրանց փոխարեն աշխատանքի են ընդունվում գործից անտեղյակ երիտասարդները:

Այս հարցով բազմիցս դիմել են նախարար Սերժ Մարգարյանին ծառայողական քննություն անցկացնելու համար, սակայն ոչ մի պատասխան չի

ստացվել: Ի վերջո, Ս. Սարգսյանի խորհրդական Միքայել Գրիգորյանից հաջողվում է իմանալ, որ ծառայողական քննություն է տարվում, և արդյունքների մասին տեղյակ կպահվի: Իհարկե, պատասխանը հերթական անգամ զարմացնում է առանց այն էլ զարմացած ու զայրացած կանանց. ինչո՞ւ պետք է ծառայողական քննություն տարվի միակողմանիորեն, և իրենց տեղյակ պահվի միայն վերջում:

Վերջում ևս մի զարմանալի դիպված: Խմբագրությանը դիմած կանայք նշեցին, որ «Գոլոս Արմենիի» թերթում այս մասին գրվել է՝ 3 «տուժածների» լուսանկարներով, սակայն նամակի տակ ստորագրել էին միայն 2-ը: Ներքին գործերի աշխատակիցները կանչում են այդ երրորդին, որի ստորագրությունը չկար, նրան խոստանում լավ աշխատանք, եթե վերջինս գրի, որ իր ընկերուհիները առանց իր տեղեկության են օգտագործել իր լուսանկարը:

Կադրային խորհականություն // Իրավունք, 1998: Սյորսագր. Ս.Գ.

ՆԵՐԳԻՐ 13

Ըստ հայկական շարքընտանիքներում ավանդական դարչած մրածելակերպի, եթե ոչ մինչ ամուսնանալը, գոնե ամուսնանալուց հետո ամուսնու որոշմամբ կհինը պետք է զբաղվի միայն րնային րնրեսությունը և երեխաների դաստիարակությամբ:

Տղամարդիկ նման որոշումը պատճառաբանում են խանդի առկայությամբ, շատերն էլ համոզված են, որ եթե կինը աշխատանքի ասպարեզում առաջընթաց ունենա և ավելի շատ գումար վաստակի, քան տան տղամարդը, «լեզուն կերկարի և ժամանակը գալուց երեսով կտա»: Բացի այդ, մտածում են, որ երեխաների դաստիարակությունը թերի կմնա, չեն համատեղի աշխատանքը ընտանեկան կյանքի հետ: Լինում է նաև, որ պարծենում են՝ «խի ես էնքա՞ն չկամ, որ կնգաս կամ աղջկաս ուղարկեմ աշխատելու», ու շրջապատելով նրանց ճոխությամբ՝ դրա դիմաց նրանց զրկում են ազատությունից: Այդ կանանցից մի քանիսը, որոնք համաձայնվել են տղամարդկանց վերը նշված պահանջին, խոստովանում են, որ չեն առարկել իրենց ամուսինների որոշմանը, քանի որ կարծել են, թե դա շատ սիրելուց է, ուշադրություն ու հոգատարություն է իրենց նկատմամբ, սակայն տարիների փորձը, ըստ նրանց, ցույց է տվել, որ այդ որոշումը ոչ թե նպաստել է ընտանիքի կա-

յացմանը, այլ խոչընդոտ է հանդիսացել իրենց երջանկությանը: Վերջիններս հաստատում են, որ տղամարդկանց նախնական խանդը վերածվում է ձանձրության, ինչը բխում է կնոջ միօրինակությունից, ինչից էլ առաջ է գալիս դավաճանությունը ու օտարացումը միմյանցից: Այդ կանանցից շատերը, գիտակցելով իրենց սխալը, անգամ դավաճանության համար չեն մեղադրում տղամարդկանց, քանի որ, ըստ նրանց, նման պայմաններում նույնիսկ իրենք են ձանձրացել իրենցից և կյանքից, ուր մնաց հետաքրքրություն առաջացնեն իրենց ամուսինների մոտ: Ինչ վերաբերում է կնոջ վաստակած գումարը երեսով տալուն, կանայք համոզված են, որ դա բնորոշ է ոչ թե կնոջը, այլ դա մարդու էությունից է, և հաստատում են, որ իրենք էլ քիչ չեն լսել և վիրավորվել՝ «իմ պահածը չե՞ս, աշխատում, հոգում եմ, որ քեզ պահեմ» և այլն: Սրանից էլ ակնհայտ է դառնում, որ տղամարդիկ ոչ թե վախենում են կանանց փող աշխատելուց, այլ փորձում են իշխել կանանց վրա՝ գրկելով նրանց այլընտրանքից: Իսկ ինչ վերաբերում է երեխաների դաստիարակությանը, կանայք հաստատում են, որ միայն մայրական ուշադրությունը և խորհուրդները բավարար չեն, քանի որ հայրերը ծանրաբեռնված են աշխատանքով ու, բավարարելով երեխաների ֆինանսական պահանջները, շատ քիչ ժամանակ են տրամադրում նրանց: Կանայք համոզված են, որ իրենց աշխատելու դեպքում ավելի բովանդակալից կկազմակերպեին իրենց երեխաների դաստիարակությունը, քանի որ այդ դեպքում ֆինանսական միջոցները կբավարարեին երեխաներին դաստիարակել ոչ միայն տանը, այլև ուսումնական հաստատություններում: Այդ դեպքում կթեթևանա ամուսինների ծանրաբեռնվածությունը, երեխաները շրջապատված կլինեին երկկողմանի ուշադրությամբ: Հարկ է նշել, որ տղամարդիկ, ժամանակի ընթացքում գիտակցելով իրենց սխալը, չեն ցանկանում, որ իրենց աղջիկները արժանանան այդ կյանքին: Նրանք իրենց դուստրերին հորդորում են սովորելուն և ուրախանում վերջիններիս հաջողություններով:

Մեսրոպյան Տ., Կնոջ տեղը խոհանոցում է // Հայկական ժամանակ, 2007, 10 հունվ.:

ՆԵՐՂԻՐ 14

Հայաստանի ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոնի դահլիճը երեկ լեցուն էր խնամված, գեղեցիկ և բավական գործարար արտաքին ունեցող կանանցով: Նրանք երեկ մենակ էին՝ առանց տղամարդկանց: Պարզա-

պես ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի նախաձեռնությամբ այնտեղ կանանց ֆորում էր տեղի ունենում և քննարկվում էր կանանց դերը քաղաքականությունում, բիզնեսում, ՉԼՄ-ներում և իրավապահ մարմիններում: Պետք է ասել, որ ի հեճուկս ավանդաբար կրկնվող այն համոզմունքի, որ հայ կանանց դերը մեծ է եղել մեր պատմության կերտման ընթացքում՝ նրանք միշտ աչքի են ընկել իրենց ուժեղ բնավորությամբ, գործունյայնությամբ՝ հասարակական-քաղաքական կյանքում կանանց ներգրավվածությամբ, Հայաստանն այսօր աշխարհում ոչ միայն աչքի չի ընկնում, այլև վերջին հորիզոնականներում է: Եթե աշխարհում երկրներ կան, որտեղ, օրինակ, խորհրդարանում կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը հիսուն-հիսուն է, ապա Հայաստանի ընտրական օրենսգրքով համամասնական ցուցակների միայն 5%-ը պետք է կանայք լինեն: Եվ այնուամենայնիվ, կարծիքներ կան, որ հայ կանայք իրենց պատմական նախնիների նման այսօր էլ շարունակում են հսկայական ներգործություն ունենալ մեր հասարակական-քաղաքական կյանքի վրա, սակայն դա անում են անուղակիորեն: Օրինակ, ԱԺ պատգամավոր Հրանուշ Հակոբյանը համոզված է, որ այն բոլոր որոշումները, որոնց տակ ստորագրում են ՀՀ պետական այրերը, կազմվում են ավելի ցածր օղակներում և հիմնականում կանանց մասնակցությամբ:

Ամբողջ խնդիրը, ըստ Հրանուշ Հակոբյանի, ոչ թե մեր կանանց հնարավորություններն են կամ հասարակական ակտիվության բացակայությունը (վիճակագրական տվյալներով՝ ՀՀ-ում բարձրագույն կրթությամբ մարդկանց 60%-ը կին է, նաև ընտրողների 60%-ն է կին), այլ սոցիալական հոգսերի հետ նաև այն, որ տղամարդիկ Հայաստանում «վայրագ և ոչ ջենթլմեն են»: Տիկին Հակոբյանին, սակայն, ինչպես ինքն էր երեկ պատմում, մի կերպ հաջողվել է խորհրդարանում գտնվող «վայրագ և ոչ ջենթլմեն» մարդկանց համոզել, որ ընդունեն Կանանց նկատմամբ խտրականությունների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան՝ ինչը նրանց հնարավորություն է տվել աշխարհից թաքցնել իրենց իրական դեմքը:

Հայոց բռնություն // Հայկական ժամանակ, 2004, 21 ապրիլի

**Գեներային հասկացությունների
բացատրական բառարան**

Ա

Աշխատանքի վարձատրության գեներային շերտավորումը - Աշխարհի գրեթե բոլոր երկրներում տղամարդկանց աշխատավարձը կանանց աշխատավարձից բարձր է: Դա կարող է ամրագրված լինել օրենքում կամ լինել հորիզոնական և ուղղահայաց **խտրազատման (սեգրեգացիայի)** հետևանք: Օրինակ՝ Հայաստանում կանանց միջին աշխատավարձը, 2005 թ. տվյալներով, կազմում էր տղամարդկանց միջին աշխատավարձի 56%-ը: Իհարկե, դա չի նշանակում, որ միևնույն աշխատանքի դիմաց կանայք ավելի ցածր աշխատավարձ են ստանում, այլ ուղղակի նրանք աշխատում են ավելի ցածր վարձատրվող ոլորտներում կամ նույն ոլորտի ավելի ցածր պաշտոններում:

Անդրոկենտրոնություն - Մշակութային ավանդույթ, որի դեպքում տղամարդկային պատկերացումները և կենսատիպերը ներկայացվում են որպես համընդհանուր միասնական սոցիալական նորմեր և կենսամոդելներ: Անդրոկենտրոնության վերարտադրության գործում հատուկ դեր ունի լեզուն: Այն խորհրդանշաստեղծ մեծ նշանակություն ունի և անընդհատ ամրագրում ու վերարտադրում է աշխարհը տղամարդկային տեսանկյունից: Դա արտահայտվում է հետևյալ կերպ. 1) նույնականացում է մարդ և տղամարդ բառերը, 2) լեզվական նորմը **գեներապես չեզոք** չէ, հիերարխիկ է, **սեքսիզմ** է պարունակում կանանց նկատմամբ, 3) արտահայտելով իրականում գոյություն ունեցող սոցիալական **գեներային ասիմետրիան**, իր հերթին անընդհատ վերարտադրում է այն:

«**Ապակյա առաստաղ**» - Անտեսանելի մի խոչընդոտ, որը հնարավորություն չի տալիս կնոջը բարձրանալու իշխանության սանդղակի որոշակի աստիճանից հետո:

Առնականություն – Պատկերացումների ամբողջություն անհատական որակների և վարքի վերաբերյալ, որը վերագրվում է «իսկական տղամարդուն»:

Բ

Բիսեքսուալություն - Անձի սեռական հետաքրքրություն երկու սեռերի նկատմամբ:

Բռնություն կանանց նկատմամբ - Ազրեսիվության յուրօրինակ տեսակ, որը կարող է արտահայտվել ամենատարբեր ձևերով. հայիոյանքով, անձը նվաստացնող արգելքներով, ֆիզիկական բռնությամբ, բռնաբարությամբ և այլն: Տարածված տեսակ է ներընտանեկան բռնությունը: Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման հարցում մեծ է ՉԼՄ-ների դերը: Դրանք կարող են ստեղծել մշակութային այնպիսի միջավայր, որը կարող է բարենպաստ կամ անբարենպաստ լինել բռնություն գործադրելու համար: Օրինակ՝ ՉԼՄ-ների միջոցով է ստեղծվել այն կարծրատիպը, թե իբր կնոջ մեջ անընդհատ ներքին պայքար է մղվում, և նրա սեքսուալությունն այնպիսին է, որ առավելագույն սեռական հաճույք կարող է զգալ բռնացող տղամարդուն տրվելիս: Որպես կանոն՝ այն տղամարդիկ, որոնք բռնություն են գործադրում կանանց նկատմամբ, հոգեբանական կամ սեռական խնդիրներ ունեն:

Գ

Գենդեր - Սոցիալ-մշակութային նորմերի համակցություն, որոնք հասարակությունը պարտադրում է մարդկանց նրանց սեռին համապատասխան:

Գենդերային ադապտացիա - Գենդերային սոցիալականացման փուլ, որի ընթացքում անձը հարմարվում է հասարակության մեջ տիրապետող գենդերային հարաբերություններին, նորմերին ու դերերին:

Գենդերային անհամաչափություն (ասիմետրիա) - Կյանքի բոլոր ոլորտներում տղամարդկանց և կանանց սոցիալական և մշակութային դերերի (և դրանց մասին պատկերացումների) անհամաչափ ներկայացվածություն:

Գենդերային անհամաչափությունը լեզվում - Լեզուն վերարտադրում է աշխարհի պատկերը տղամարդու տեսանկյունից: Դա արտահայտվում է ձևական (նույնացվում են մարդ և տղամարդ հասկացությունները) և բովանդակային առումով (օրինակ՝ ասում են՝ մարդը հայտնաբերեց կրակը, և անմիջապես պատկերացնում են, որ կրակը հայտնաբերել է տղամարդը, չնայած կարող էր և կինը լինել): Գենդերային ասիմետրիան տարբեր լեզուներում տարբեր կերպ է արտահայտված: Այն հատկապես ուժեղ է այն լեզուներում, որոնք քերականական սեռ ունեն:

Գենդերային անհավասարություն – Հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց՝ որպես առանձին սոցիալական խմբերի կայուն տարբերություններից առաջացող անհավասար հնարավորություններ: Անհավասարությունը ձևավորվում է սոցիալական պրակտիկայի ընթացքում, ընդ

Գենդեր և լրագրություն

որում առնականության սոցիալական կարգավիճակը, որպես կանոն, ավելի բարձր է կանացիության կարգավիճակից: Դրա հետ է կապված նաև կանանց «**ինքնախտրականությունը**»:

Գենդերային կոնֆլիկտ – Հոգեբանական վիճակ, որի հիմքում ընկած է գենդերային արժեքների, հարաբերությունների, դերերի հակասական ըմբռնումից առաջացող շահերի և հետաքրքրությունների բախումը:

Գենդերային գաղափարախոսություն - Տղամարդկանց և կանանց՝ որպես երկու սոցիալական խմբերի փոխհարաբերությունների, հասարակության մեջ նրանց դերի և կարգավիճակի մասին գաղափարների և հայացքների, հասկացությունների և պատկերացումների համակարգ:

Գենդերային գործոնի հաշվառմամբ զարգացման համաթիվ (ԳԳՀԶՀ) - Կյանքի սպասվող տևողության, կրթության մակարդակի և եկամուտների հաշվառումը գենդերային անհավասարության տեսանկյունից:

Գենդերային գրաքննություն ՉԼՄ-ներում - Գրաքննություն, որի նպատակն է թաքցնել կամ քողարկել հասարակության գենդերային հիմնախնդիրները: Գենդերային գրաքննության միջոցով կանանց կարծիքը օտարվում է, չի արտահայտվում ՉԼՄ-ներում: Ընդ որում՝ գենդերային գրաքննությունը կարող է լինել պաշտոնական և ոչ պաշտոնական: Հայաստանում գոյություն ունի ոչ պաշտոնական գենդերային գրաքննություն, երբ ՉԼՄ-ների ղեկավար մարմինները այս կամ այն պատճառով թույլ չեն տալիս այնպիսի նյութերի ներկայացումը մամուլում, որոնք վերաբերում են կանանց հիմնախնդիրներին: Այն առաջացնում է նաև մի երևույթ, որն անվանում են կանանց ինքնագրաքննություն, երբ կանայք չեն համարձակվում խոսել կամ գրել այն հիմնախնդիրների մասին, որոնք նրանց հուզում են: Գենդերային գրաքննության հետևանքով կանայք՝ որպես սոցիալական խումբ, գրկվում են իրենց տեսակետը ՉԼՄ-ներում արտահայտելու հնարավորությունից:

Գենդերային դերեր –Հասարակության կողմից տղամարդկանց և կանանց թելադրվող վարքի տիպեր (արտաքին տեսք, խոսք, հագնվելու ոճ, շարժումն և այլն):

Գենդերային դիսֆորիա - Գենդերային նույնականության խախտում, վիճակ, երբ մարդը չի կարողանում ընդունել իր՝ կնոջ կամ տղամարդու կարգավիճակը և այդ պատճառով խիստ անհանգստություն է զգում:

Գենդերային զգայուն քաղաքականություն – Քաղաքականություն, որը

Գենդերային հասկացությունների բացատրական բառարան

հաշվի է առնում կանանց և տղամարդկանց ֆիզիկական, սոցիալական, տնտեսական բնութագրերի և կյանքի փորձի, ինչպես նաև առանձին խմբերի (օրինակ՝ հաշմանդամների) տարբերությունները՝ տվյալ քաղաքական կուրսի դրական արդյունքների մատչելիության հավասար հնարավորություններ ապահովելու համար:

Գենդերային լուսավորություն - Անհրաժեշտ գործիք է հասարակության գենդերային իրավագիտակցության բարձրացման, հասարակության գենդերային էգալիտար մշակույթի զարգացման, միջազգային ասպարեզում Հայաստանի մրցակցային հնարավորությունների մեծացման, սոցիալական քաղաքականության վրա իշխանության ուշադրության հրավիրման համար: Գենդերային լուսավորության ասպարեզում չափազանց մեծ դեր ունեն ՁԼՄ-ները:

Գենդերային կարծրատիպեր – Մշակույթում ձևավորված համեմատաբար կայուն ընդհանրացված պատկերացումներ կանանց և տղամարդկանց և համապատասխանաբար նրանց վարքի վերաբերյալ: **Գենդերային կարծրատիպերը ՁԼՄ-ներում** տվյալ ժամանակաշրջանում տվյալ հասարակության գենդերային կարծրատիպերի հայելային արտացոլումն են:

Գենդերային համակարգ - Տղամարդկանց և կանանց հարաբերությունների ամբողջություն, որը ներառում է պատկերացումները, ֆորմալ և ոչ ֆորմալ նորմերն ու կանոնները, որոնք որոշվում են հասարակության մեջ տղամարդկանց և կանանց գրաված դիրքին, տեղին, նպատակներին համապատասխան:

Գենդերային հավասարություն – Տղամարդկանց և կանանց համար հասարակական ռեսուրսների հավասար հասանելիություն: Հավասարությունը և նույնությունը տարբեր հասկացություններ են: Կանայք և տղամարդիկ կարող են հասարակության մեջ նույն դերերն ու բնութագրերը չունենալ, բայց հավասար լինել:

Գենդերային մոտեցում - Երկու սեռերի շահերի հաշվառում պետության քաղաքականության մեջ, որը հատուկ է ներկայացուցչական ժողովրդավարությանը:

Գենդերային մշակույթ – Քաղաքական մշակույթ է, որը ցույց է տալիս, թե որքանով է գենդերային գործոնը ընդգրկված քաղաքական ինստիտուտների բնութագրերի և պետության քաղաքականության մեջ, ավանդույթներում, արժեքներում, իդեալներում, համոզմունքներում, քաղաքական վարքի տի-

Գեներև և լրագրություն

պերում, ձևերում, ոճում, հասարակական-քաղաքական գործունեության ոլորտներում:

Գեներային նորմեր – Վարքի որոշակի կանոններ, որոնք պարտադրվում են մարդուն՝ կախված նրա կենսաբանական սեռից:

Գեներային նույնականություն – Սոցիալական նույնականության հիմնականառույց, որը բնութագրում է մարդուն այս կամ այն սեռին պատկանելիության տեսանկյունից և ելնելով այն հանգամանքից, թե ինչպես է իրեն զգում մարդը որպես կին կամ տղամարդ:

Գեներային չեզոք քաղաքականություն - Քաղաքականություն, որն անտեսում է կանանց և տղամարդկանց ֆիզիկական, սոցիալական, տնտեսական բնութագրերի և կյանքի փորձի, ինչպես նաև առանձին խմբերի (օրինակ՝ հաշմանդամների) տարբերությունները: Այսպիսի քաղաքականությունը չի նպաստում գեներային խտրականության վերացմանը:

Գեներային վերլուծություն – Կանանց և տղամարդկանց վրա հասարակության և պետության կյանքի բոլոր ոլորտներում գոյություն ունեցող կամ նախատեսվող ծրագրերի, օրենսդրության, պետական քաղաքական կուրսի տարբեր ազդեցության գնահատման գործընթաց: Գեներային վերլուծության նպատակն է սեռերի համար քաղաքականության հետևանքների լիարժեք բացահայտումն ու կանխատեսումը:

Գեներային վիճակագրություն – Վիճակագրություն կանանց և տղամարդկանց դրության մասին հետևյալ ոլորտներում. ժողովրդագրություն, ընտանիք, առողջապահություն, կրթություն, հաղորդակցություն, զբաղվածություն, մարդու իրավունքներ և քաղաքականություն:

Գեներային տեսափայ (դիսփլեյ) – Տղամարդկանց և կանանց գործողությունների ու փոխհարաբերությունների՝ հասարակության կողմից թելադրված նորմերի հետ կապված դրսևորումների բազմազանությունն է: Մարդու անունը, արտաքին տեսքը, ձայնը, խոսելու և շարժվելու ձևը, զգացմունքների արտահայտման ոճը ներկայացնում են գեներային տեսափայը:

Գեներային քվոտա - Իշխանության մարմիններում կանանց և տղամարդկանց ներկայացվածության օրինականացված մակարդակ: Գեներային քվոտան պոզիտիվ և ժամանակավոր խտրականության միջոց է, նպատակն է ապահովել գոնե կրիտիկական զանգված՝ 30-40% (օրինակ՝ երկրի խորհրդարանում):

Գյուղի կանայք – Կանայք, որոնք մշտապես ապրում են գյուղական վայրերում: Այս եզրույթն ավելի լայն է, քան գեղջկուհին, քանի որ այդ խմբի մեջ մտնում են գյուղի ուսուցչուհիները, բժշկուհիները, տնային տնտեսուհիները և այլն, այսինքն՝ բոլոր կանայք, որոնք, անկախ իրենց աշխատանքից, բնակվում են գյուղում: Գյուղի կանայք առանձնացվում են որպես առանձին սոցիալական խումբ, քանի որ քաղաքի և գյուղի կանանց կենցաղը, կյանքի պայմանները և հնարավորությունները խիստ տարբեր են: Գյուղի կանայք ավելի վատ վիճակում են և գրկված են շատ հնարավորություններից: Դա պայմանավորված է արտաքին և ներքին գործոններով: Արտաքին գործոններից են՝

- Տեղեկատվական մեկուսացվածությունը: Գյուղի բնակիչների մեծ մասը գրկված է հաղորդակցության միջոցներից, հեռախոս չունի, չի կարող դիտել բոլոր հեռուստատեսությունները, հաճախ միակ կապը ռադիոն է: Համակարգիչն ու ինտերնետը շատ դանդաղ են թափանցում հայկական գյուղ:
- Տեղաշարժման ազատության սահմանափակում: Վատ ճանապարհների, տրանսպորտի բացակայության, աղքատության հետևանքով ստեղծվում են այնպիսի պայմաններ, որ գյուղի կանայք ստիպված են ապրել բնատնտեսության պայմաններում: Դա հատկապես վերաբերում է շրջկենտրոններից հեռու ընկած լեռնային և սահմանամերձ գյուղերին:
- Մոցիալական անպաշտպանություն և իրավական անգրագիտություն:
- Կրթություն ստանալու, մասնագիտություն ընտրելու, կարերա անելու ավելի փոքր հնարավորություններ:
- Աշխատանքի ցածր վարձատրություն, աղքատություն:
- Տնային տնտեսությունը վարելու համար անհրաժեշտ ժամանակակից տեխնիկական միջոցների բացակայություն: Կենցաղը հատկապես բարդացավ հետխորհրդային շրջանում, երբ սննդի պատրաստումը, մաքրության ապահովումը, բնակարանի ջեռուցումը ավելի շատ ժամանակ և ջանքեր են պահանջում:
- Հասարակական կարծիքի ավելի ուժեղ ճնշում, անձնական կյանքի սահմանների նեղացում: Ամենափոքր մանրուքն իսկ կարող է ավելի մեծ ուշադրության և համընդհանուր քննարկման արժանանալ:

Ներքին գործոններից են արժեքային կողմնորոշման առանձնահատկությունները: Աշխատանքը շատ ժամանակ է խլում, հանգստի պայմանները բացակայում են, և հաճախ կինը, բացի իր ընտանիքից, այլ հետաքրքրություններ չունի: Դրա պատճառով գյուղի կանայք ավելի շուտ են ծերանում և ավելի շատ հիվանդանում:

Գ

Գրական (պոզիտիվ) խտրականություն - Կանանց համար արտոնությունների համակարգ, որը հնարավորություն է տալիս հավասարեցնելու նրանց և տղամարդկանց մեկնարկային հնարավորությունները:

Զ

Զուգակշռված ժողովրդավարություն - Այս հայեցակարգը մշակել է Եվրոպայի խորհրդի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով ղեկավար կոմիտեն: Այն նախատեսում է տղամարդկանց հետ միասին կանանց լիարժեք մասնակցություն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Զուգակշռման գլխավոր կարգախոսն է՝ իշխանության մարմիններում կանանց և տղամարդկանց ներկայացվածություն՝ 50/50 հարաբերակցությամբ:

Է

Էմանսիպացիա - Կանանց սոցիալական շարժունակության գործընթացներ, որոնք կապված են կանանց՝ որպես առանձին սոցիալական խմբի (նրանց շահերով, որոնք տարբերվում են նրանց ընտանիքի, տոհմի, երեխաների և այլոց շահերից) տարբերակման և հասարակական ոլորտ կանանց մուտքի հետ:

Թ

Թրաֆիքինգ (մարդկանց շահագործում) - Մարդկանց վաճառքի և շահագործման կազմակերպված համակարգ: Թրաֆիքինգի՝ որպես մարդու իրավունքների դեմ ուղղված հանցագործության կանխարգելման գործում մեծ է ՉԼՄ-ների դերը, քանի որ

- ՉԼՄ-ները կարող են տեղեկատվության տարածման միջոցով նպաստել այդ հանցագործության կանխարգելմանը,
- օրենքով պետք է արգելվի ՉԼՄ-ներում սեքսինդուստրիայի գովազդումը:

Ի

Իգականացում (Ֆեմինացում) – Սոցիալական, տնտեսական, քաղաքական գործընթացներում կամ ոլորտներում կանանց քանակի ավելացում, ինչպես նաև կանանց բնորոշ հատկանիշների առաջացում (օրինակ՝ լրագրության ֆեմինացում, կրթության ֆեմինացում, աղքատության ֆեմինացում):

Խ

Խտրազատում (սեգրեգացիա) սեռի հատկանիշով – Որոշակի մասնագիտություններում, ճյուղերում, պաշտոններում կանանց և տղամարդկանց աշխատանքի տեղավորման կայուն միտում: Այն ունի երկու ուղղություն՝ հորիզոնական և ուղղահայաց:

Խտրականություն սեռի հատկանիշով - Սեռի հատկանիշով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որն ուղղված է քաղաքական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում կանանց և տղամարդկանց մարդու իրավունքներից ու հիմնական ազատություններից իրավահավասարության հիման վրա օգտվելու նվազեցմանը կամ ի չիք է դարձնում դրանց ճանաչումը, հարգումը և իրականացումը:

Կ

Կանանց մարզինալացում – Մարզինալացում նշանակում է ոչ լրիվ, մասնակի ներառում որոշակի սոցիալական խմբի կազմի մեջ: Կանանց մարզինալացում եզրույթի հիմքում այն գաղափարն է, որ կանայք չեն համապատասխանում այն «նորմին», որը տղամարդն է կամ մարդն ընդհանրապես:

Կանանց հասարակական շարժում - Կանանց բազմաթիվ կազմակերպությունների ամբողջություն, որոնք ակտիվ գործում են հասարակության մեջ կանանց տարբեր սոցիալական շերտերի շահերի բավարարման, ինչպես նաև պետական քաղաքականության նպատակաուղղման, գեներալին հավասարության ապահովման նպատակով:

Կանանց միջազգային օր – Կանանց միջազգային օրը մարտի 8-ն է, որը, որպես քաղաքական ակցիա, իրականացվեց 1908 թ. մարտի 8-ին Նյու Յորք-

Գեները և լրագրություն

քի գործարաններից մեկում: Կանայք գործադուլ էին կազմակերպել՝ պահանջելով աշխատանքի պայմանների բարելավում: Գործարանատերը փակել էր գործադուլավորներին գործարանում, և պատահական հրդեհի հետևանքով մահացել էր 129 կին: Ռոզա Լյուքսեմբուրգի առաջարկով այդ ողբերգական իրադարձությունը հիշելու համար մարտի 8-ը դարձավ կանանց միջազգային համերաշխության օր: 1910 թ. Կոպենհագենի միջազգային խորհրդաժողովում որոշվեց տոնել Կանանց միջազգային օրը: Այս տոնի ավանդույթը հայ իրականության մեջ այնքան է ամրապնդվել, որ Խորհրդային Միության փլուզումից հետո այն Ապրիլի 7-ով փոխարինելու փորձը անհաջողության մատնվեց:

Կանանց շահերի ինտեգրման ազգային մեխանիզմ – Կանանց շահերը պաշտպանող օբյեկտիվորեն անհրաժեշտ միջոց պետական քաղաքականության մշակաման և իրագործման մեջ:

Կանանց իրավունքներ – Վերաբերում է մարդու իրավունքների այսպես կոչված երրորդ սերնդին՝ հավաքական իրավունքներին, որոնք ճանաչվեցին 1993 թ. Վիեննայում՝ Մարդու իրավունքների երկրորդ համաշխարհային խորհրդաժողովում: *Դրանք են՝ խաղաղության իրավունք, ինքնորոշման իրավունք, առողջ շրջակա միջավայրի իրավունք, սեռի, ազգության կամ տարիքի հատկանիշով խտրականությունից ազատ լինելու իրավունք:* Այսպիսով, ճանաչվեցին կանանց իրավունքները՝ որպես մարդու իրավունքների անքակտելի բաղկացուցիչ:

Կանացիություն - Պատկերացումների ամբողջություն անհատական որակների և վարքի վերաբերյալ, որը վերագրվում է «իսկական կնոջը»:

Կայուն զարգացում – Մարդկության զարգացման հայեցակարգ, որի սկզբունքն է «արդիականության պահանջմունքների բավարարումը՝ առանց ապագա սերունդների պահանջմունքների բավարարման վտանգման»:

«Կայուն հատակ» – Կանանց մեջ գենդերային կարծրատիպերի ազդեցությամբ ձևավորված հոգեբանական արգելքներ, որոնք խոչընդոտում են կանանց առաջխաղացումը:



Հավասար արդյունքների հայեցակարգ - Հավասարության ժամանակակից հայեցակարգի համաձայն՝ կանանց և տղամարդկանց հավասար արդ-

Գենդերային հասկացությունների բացատրական բառարան

յունքներին հասնելու համար անհրաժեշտ է նրանց նկատմամբ տարբեր մոտեցում ցուցաբերել: Դա բացատրվում է նրանով, որ սեռերի կյանքի պայմանները խիստ տարբեր են, և կանանց նկատմամբ խտրականությունը բացառելու համար անհրաժեշտ են հատուկ միջոցներ:

Համալիր մոտեցում սեռերի հավասարության հիմնախնդրին - Այս ռազմավարությունը նախատեսում է գենդերային հավասարության հիմնախնդրի հաշվառում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և մակարդակներում:

Հետերասեքսուալություն - Անձի վարքի և զգացմունքների սեքսուալ կողմնորոշում հակառակ սեռի ներկայացուցիչների նկատմամբ: Այս կողմնորոշումը հիմնականում գնահատվում է որպես բնական:

Համասեռամոլություն - Անձի վարքի և զգացմունքների սեքսուալ կողմնորոշում իր սեռի ներկայացուցիչների նկատմամբ:

Ճ

Ճգնաժամային կենտրոններ – Կենտրոններ, որոնք հոգեբանական և իրավական օգնություն են ցույց տալիս բռնության ենթարկված կանանց:

Մ

Մարդկային զարգացման համաթիվ- Կյանքի սպասվելիք տևողության, անձի հնարավորությունների զարգացման համար անհրաժեշտ կրթական մակարդակի և եկամուտների հաշվառում: Մարդկային զարգացման հայեցակարգը հիմնական նպատակ է հռչակում մարդու կենսամակարդակը: Այս համաթվի համաձայն՝ երկրները բաժանված են տարբեր խմբերի: Մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեն այն երկրները, որոնց ՄՋՀ-ն բարձր է 0.8-ից, միջին մակարդակ՝ 0.5-0.8, ցածր մակարդակ՝ 0.5-ից ցածր: 2007 թ. ՄՋՀ-ով Հայաստանը 84-րդն էր 182 երկրների շարքում:

Մարմնավաճառություն – Կանանց և տղամարդկանց զբաղվածության տեսակ, որը դրսևորվում է սեքսուալ ծառայությունների մատուցմամբ: Որոշ երկրներում (Ավստրալիա, Գերմանիա, Նիդեռլանդներ) մարմնավաճառությունը համարվում է օրինական աշխատանքային գործունեություն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով՝ աշխատանքային պայմանների նորմա-

Գեները և լրագրություն

տիվներով, բժշկական սպասարկմամբ, արհմիություններով, աշխատանքի վարձատրման պայմաններով: Այն երկրներում, որտեղ մարմնավաճառությունը անօրինական է, շատ ավելի քրեականացված է: Իշխանությունները, ձևականորեն արգելելով, ոչինչ չեն անում այն վերացնելու ուղղությամբ: Մարմնավաճառության օրիկանացումը չի հանգեցնում այդ երևույթի նվազեցման: Հայկական ՁԼՄ-ներում այդ թեման գրեթե չի քննարկվում:

Միջազգային խորհրդատուներ կանանց դրության վերաբերյալ – ՄԱԿ-ի 4 միջազգային խորհրդատուներ (1975-1995)՝ նվիրված գեներալային հավասարության հիմնախնդիրներին: Դրանք են.

1. Կանանց դրությանը նվիրված միջազգային առաջին խորհրդատուով Մեխիկոյում (1975 թ.),
2. Կանանց դրությանը նվիրված միջազգային երկրորդ խորհրդատուով Կոպենհագենում (1980 թ.),
3. Կանանց դրությանը նվիրված միջազգային երրորդ խորհրդատուով Նայրոբիում (1985 թ.),
4. Կանանց դրությանը նվիրված միջազգային չորրորդ խորհրդատուով Պեկինում (1995 թ.):

Այդ խորհրդատուների ընթացքում հայեցակարգը փոփոխվեց կանանց դրության բարելավման վերաբերյալ որոշումների ընդունումից մինչև հասարակության մեջ նրանց ունեցած ներդրման ճանաչում և հասարակության բոլոր ոլորտներում նրանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնում:

Ն

Նահապետական ընտանիք – Ընտանիքի կազմակերպման ձևերից, որն ուներ կայուն կազմ, կուռ ղեկավարություն, փոխհարաբերությունները կարգավորող կարգ ու կանոն, որոնք դրսևորվում են ավանդության իրավունքի ձևով: Այն բազմասերունդ ընտանիք է: Մեծ ընտանիքի կամ գերդաստանի նահապետը նրա միանձնյա ղեկավարն էր, իսկ նրա գլխավոր խորհրդատուն և օգնականը՝ կինը: Ընդ որում, նահապետը ղեկավարում էր ընտանիքի արական հատվածը, իսկ մեծ մայրը՝ իգականը: Մեծ մայրը մեծ դեր ուներ գերդաստանի հարաբերությունները հավասարակշռելու գործում, նրա վրա էր դրված կանանց աշխատանքային դաստիարակությունը՝ տվյալ գերդաստանի սովորույթներին համապատասխան:

Պ

Պետական քաղաքականություն կանանց նկատմամբ - Սոցիալական քաղաքականության կարևոր բաղկացուցիչն է, որը վերաբերում է կանանց՝ որպես մեծ սոցիալ-դեմոգրաֆիական խմբի: Չնավորում է նրանց իրավական և սոցիալական կարգավիճակը և կարգավորում հարաբերությունները հասարակության մյուս խմբերի հետ: Կանանց նկատմամբ պետական քաղաքականությունը զարգանում է **գենդերապես չեզոքից** մինչև **գենդերապես զգայուն** և սերտորեն կապված է ժողովրդավարական գործընթացների խորացման հետ:

Ս

Սեգրեգացիա սեռի հատկանիշով տե՛ս **խտրագատում սեռի հատկանիշով**:

Սեռական ոտնձգություն աշխատանքի վայրում –Սեռական առաջարկներ, պահանջներ, հետապնդում, որոնք դրվում են որպես նախապայման մարդուն աշխատանքի ընդունելիս կամ աշխատանքը պահպանելու, մասնագիտական առաջընթացը ապահովելու համար: Սեռական ոտնձգություն նշանակում է իշխանության չարաշահում աշխատանքային դիրքի կամ պաշտոնի օգտագործմամբ:

Ֆ

Ֆեմինիզմ – Սեռերի հավասարության գաղափարախոսություն, որը կանանց ազատագրման շարժման տեսական հիմքն է: Կան ֆեմինիզմի տարբեր ուղղություններ (ազատական, արմատական, սոցիալիստական, գունավոր, հետմոդեռնիստական և այլն):

Ֆեմինացում տե՛ս **իգականացում**:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
Երևանի գենդերային հետազոտությունների կենտրոն

Լիլիթ Չաքարյան
Անահիտ Հարությունյան

ԳԵՆԴԵՐ ԵՎ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ

*«Գենդեր և լրագրություն» ուսումնական շեռնարկը երաշխավորվել է
տպագրության Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի
գենդերային հետազոտությունների կենտրոնի, Հյուսիսային
համալսարանի գիտական խորհրդի և Երևանի պետական
համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի տեսության և
պատմության, ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի
ամբիոնների կողմից:*

*Գրահոս՝ Անահիտ Մենենձյան, բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

*Գլխավոր խմբագիր՝ Չեմմա Հաքարյան
Խմբագիր՝ Կարինե Սաֆրազյան
Չեմմա Վրեյնիստեպանյան՝ Արթուր Բոյախյան*

375010, Երևան, Սարյան 22:
Հեռ. /37410/53-68-02
Ֆաքս /37410/ 53-67-92
E-mail: jemima.hasratyan@gmail.com

Տարածվում է անվճար:

**Armenian Association of Women with University Education
Yerevan Center for Gender Studies**

**Lilit Zakaryan
Anahit Harutiunyan**

GENDER AND JOURNALISM

Textbook

Gender and Journalism textbook was recommended for publication by the *Center for Gender Studies* at Armenian Association of Women with University Education, by Academic Council of Northern University and by *Theory & History of Press and Radio and TV Journalism* Chairs at Yerevan State University Department of Journalism.

Reviewer: Anahit Menemshian, Associate Professor, Ph D in Philology.

Editor-in-chief: **Jemma Hasratian**
Editor: **Karineh Safrazian**
Layout: **Arthur Boyakhchian**

22 Saryan Street, Yerevan, 0010
Tel.: (374-10) 53-68-02
Fax: (374-10) 53-67-92
E-mail: jemma.hasratyan@gmail.com

Distributed for free